ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

## ՀԱՏՈՐ I (2)

ԵՐԵՎԱՆ – 2012

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# CONTEMPORARY EURASIA

## ARAB WORLD

EDITED BY RUBEN SAFRASTYAN

## VOLUME I (2)

YEREVAN – 2012

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

## АРАБСКИЙ МИР

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

**ТОМ I (2)**

ЕРЕВАН– 2012

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆ.
**Ռուբեն Սաֆրաստյան** (գլխավոր խմբագիր)
պ. գ. թ, դոցենտ
**Լիլիթ Հարությունյան**
պ. գ. թ., դոցենտ
**Գոհար Իսկանդարյան**
պ. գ. թ.
**Վահրամ Տեր–Մաթևոսյան**
**Լևոն Հովսեփյան**
**Նազելի Նավասարդյան** (պատասխանատու քարտուղար)

«Ժամանակակից Եվրասիա» ժողովածուի առաջին հատորի երկրորդ համարում քննարկվում են արաբական աշխարհի, հատկապես Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի 2008–2011 թթ., մասնակիորեն նաև 2012 թ. քաղաքական և հասարակական հիմնական գործընթացները: Ներկայացվում են նաև «Արաբական գարնան» համատեսքտում վերոնշյալ երկրներում ընթացող վերափոխումներն ու դրանց ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա:

Նախատեսված է հասարակագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող այլ շրջանների համար:

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

**EDITORIAL BOARD:**

Corresponding Member of NAS RA, (editor in chief)
Prof., Dr., **Ruben Safrastyan**
Assoc. Prof.
**Lilit Harutyunyan** (PhD)
Assoc. Prof.
**Gohar Iskandaryan** (PhD)
**Vahram Ter–Matevosyan** (PhD)
**Levon Hovsepyan**
**Nazeli Navasardyan** (responsible secretary)

The second issue of the first volume of "CONTEMPORARY EURASIA" discusses political and social processes of the Arab world, particularly Lebanon, Syria and Egypt from 2008 to 2011, partly 2012. This issue also presents the transformations that are going on in the mentioned countries in the context of "the Arab Spring" and theirs influence on regional developments.

The publication may be of interest for social scientists, diplomats, students, as well as for other range of readers.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Լիբանանը քաղաքական ճգնաժամերի և
հարաբերական կայունության միջև (2008–2011 թթ.) ..... 9

Լիբանանը 2008–2011 թվականներին. հիմնական
իրադարձությունների ժամանակագրություն ..... 60

**ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
Կառավարվող ժողովրդավարական մոդելի
գործարկումը Եգիպտոսում (2008–2011 թթ.)..... 67

**ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ**
«Արաբական գարունը» Սիրիայում.
պայքար իշխանության համար ..... 88

**ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
Եգիպտոսը և պաղեստինյան խնդիրը (2008–2011 թթ.)..... 114

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Չին–Սիրիական համագործակցության նոր դրսևորումներ .....140

CONTENTS

**LILIT HARUTYUNYAN**
Lebanon between political crises
and relative stability (2008–2011).....9

Lebanon from 2008 to 2011:
chronology of main developments.....60

**GOR GEVORGYAN**
Implementation of managed democratic model in Egypt ..... 67
(2008–2011)

**ARAKS PASHAYAN**
The "Arab spring" in Syria: a struggle for power .....88

**GOR GEVORGYAN**
Egypt and Palestinian problem (2008–2011) ..... 114

**AGHAVNI HARUTYUNYAN**
New manifestations in the sino–syrian cooperation .....140

*ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ԼԻԲԱՆԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ (2008–2011)

2008–2011 թվականների Լիբանանի քաղաքական զարգացումներին կրկին բնորոշ էին պարբերական դարձած ճգնաժամերը և անկայուն իրավիճակը, ինչը հմտորեն փորձում էին օգտագործել մի շարք տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային ուժեր:

2008 թ. մայիսի 6–ին Լիբանանի աշխատավորների համադաշնության կազմակերպած գործադուլը վերաճեց զինված բախումների՝ կառավարության կողմնակիցների և ընդդիմադիր ուժերի՝ հիմնականում շիական «Հիզբալլահ» շարժման զինյալների միջև: Բախումները բռնկվեցին արևմտյան Բեյրութում, ապա ընդգրկեցին հյուսիսային Լիբանանը, Բեքաայի հովիտը և Լեռնալիբանանը: Նշենք, որ ընդդիմությունը շատ արագ իր վերահսկողությունը հաստատեց արևմտյան Բեյրութում և Լեռնալիբանանի որոշ շրջաններում: «Հիզբալլահի» զինված մարտիկները փակեցին նաև Բեյրութի միջազգային օդանավակայան և նավահանգիստ տանող մայրուղիները: Այս ամենին զուգահեռ երկրի կառավարության որոշմամբ պետական, մասնավոր և հասարակական հաստատությունների անվտանգության ապահովումը հանձնվեց բանակի զորամիավորումներին[1]:

Մայիսի 5–ին Առաջադիմական սոցիալիստական կուսակցության (ԱՍԿ) ղեկավար Վալիդ Ջումբլաթը քննադատեց Իրանին, որն օգտագործում էր Լիբանանի միջազգային օդանավակայանը «Հիզբալլահին» զենք և զինամթերք մատակարարելու նպատակով[2]: Նշենք, որ իր վերահսկողությունը սահմանելու ընթաց-

[1] Hussein Abdallah, “Airport Shut, At Least 10 Injured as Mobs Do Battle in Capital”, http://www.dailystar.com.lb, 08.05.2008.

[2] “Myanmar Drags Feet on Letting in Aid Despite up to 65 Dead”, Agence France Presse (AFP), 08.05.2008.

քում երկրի բանակը դրսևորում էր խիստ զգուշություն բախումների մեջ ներքաշվելուց խուսափելու նպատակով: Նույն օրը՝ մայիսի 5–ին, Լիբանանի կառավարությունն ընդունեց երկու որոշում, որոնց համաձայն՝ պաշտոնանկ արվեց Բեյրութի միջազգային օդանավակայանի անվտանգության ծառայության ղեկավարը, ով ներկայացնում էր «Հիզբալլահը», ինչպես նաև վերահսկողություն սահմանվեց «Հիզբալլահի» հաղորդակցային ցանցի նկատմամբ[3]: Վերոնշյալ որոշումների ընդունումն էլ դարձավ զինված բախումների բռնկման պատճառը:

Ոչ պաշտոնական պայմանավորվածության համաձայն՝ թե՛ ընդդիմադիր, թե՛ կառավարամետ քրիստոնեական ուժերը, այդ թվում նաև լիբանանահայ քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Սոցիալ–դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ) և Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), քաղաքացիական բախումների մեջ չներքաշվելու համաձայնության էին եկել:

Մայիսի 9–ին Լիբանանում գործող լիբանանահայ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հանդիպման ընթացքում հակամարտող կողմերից որևէ մեկին չպաշտպանելու և նրանց միջև երկխոսության հաստատմանը նպաստելու վերաբերյալ որոշում ընդունվեց[4]: Համայնքը հավատարիմ մնաց դեռևս 1975 թ. բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի ընթացքում որդեգրած դրական չեզոքության քաղաքականությանը[5]:

Միակ հայկական հաստատությունը, որ տուժեց Լիբանանում 2008 թ. մայիսին տեղի ունեցած բախումների ընթացքում, Բեյրութի «Սևան» ռադիոկայանն էր, որը պատկանում է Արա Սիսեռյանին: Ըստ Լիբանանի խորհրդարանում Հնչակյան կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Եղիկ Ջերեջյանի՝ ռադիոկայանը գործում է Սաադ Հարիրիի գլխավորած «Մուսթակբալ» («Ապագա») շարժման հովանու ներքո, ինչի պատճառով էլ մայիսի կեսերին այն դարձավ ընդդիմադիր «Հիզբալլահ» շարժման զինյալների հարձակման թիրախ, սակայն որոշ ժամանակ անց այն վերականգնեց իր հեռարձակումը[6]:

---

[3] "Government, Opposition Supporters Present Differing Takes on Strike", Agence France Presse (AFP), 08.05.2008.

[4] Լիբանանի խորհրդարանում ՀՅԴ պատգամավոր Հակոբ Բագրատունու հարցազրույցը, «Ազատություն» ռադիոկայան, 12.15.2008:

[5] Այս մասին մանրամասն տես Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, Հ. III, Երևան, 2006, էջ 646–650:

[6] Լիբանանի խորհրդարանում Հնչակյան կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Եղիկ Ջերեջյանի հարցազրույցը, «Ազատություն» ռադիոկայան, 12.15.2008:

Դեռևս 1960–ականների վերջին և 1970–ականներին Լիբանանում տեղի ունեցող ժողովրդագրական փոփոխությունները՝ իսլամադավանների, հատկապես շիաների թվաքանակի կտրուկ աճը, նրանց քաղաքական և սոցիալ–տնտեսական ակտիվությունը, խախտեցին 1943 թ. «Ազգային դաշինքով» ամրագրված փխրուն հավասարակշռությունը: Ուժերի նոր հարաբերակցությունը, որն այսօր առկա է Լիբանանում, իր պատշաճ արտացոլումը դեռևս չի գտել կրոնադավանական համակարգում: Թեև 1989 թ. Տաիֆի համաձայնագրի ստորագրմամբ նրանում, այնուամենայնիվ, որոշ փոփոխություններ արվել էին: Վերջին շրջանում «Հիզբալլահը» փորձում է ձեռնոց նետել «Ազգային դաշինքով» իսլամադավան համայնքների շարքում ամենաազդեցիկը համարվող սուննի համայնքին: Պատահական չէ, որ մի շարք արաբական հեղինակավոր պարբերականներում այդ շրջանում հոդվածներ էին հրապարակվում, որոնցում մտահոգություն էր հայտնվում Լիբանանում ևս «սուննի–շիա» հակամարտության խորացման կապակցությամբ: Մյուս կողմից էլ շիական այս շարժումը հմտորեն օգտագործում էր մարոնիական համայքնում առկա հակասությունները: Դրա վառ ապացույցն է մարոնի գեներալ Միշել Աունի հետ «Հիզբալլահի» ռազմավարական դաշինքը:

Ճգնաժամի բռնկման հենց սկզբից բավական ակտիվացել էին Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) շրջանակներում լիբանանյան ճգնաժամի կարգավարմանն ուղղված ջանքերը: Լիբանանում զինված բախումների խորացումն ու հնարավոր քաղաքացիական պատերազմի բռնկումը կանխելու նպատակով մայիսի 11–ին Կահիրեում ԱՊԼ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստում կազմավորվեց հանձնախումբ, որի ղեկավարումը ստանձնեց Քաթարի վարչապետ և արտաքին գործերի նախարար Համադ բեն Ջասեմ բեն Ջաբար Ալ–Թանիին: Լիբանանի տարբեր քաղաքական ուժերի ղեկավարների հետ երկարատև և լարված բանակցություններից հետո հանձնախմբին հաջողվեց շոշափելի հաջողությունների հասնել[7]:

Մայիսի կեսին վերաբացվեց Բեյրութի միջազգային օդանավակայան տանող երթևեկությունը, օդանավակայանի վերահսկողությունն առժամանակ դրվեց լիբանանյան բանակի վրա, ինչպես նաև վերականգնվեց Բեյրութի նավահանգստի գործունեությունը: Հակամարտող կողմերը համաձայնության եկան զինված

[7] "Hoss Discusses Impasse with Abu al–Gheit", Compiled by Daily Star Staff, http://www.dailystar.com.lb, 08.05.2008.

բախումները դադարեցնելու, ինչպես նաև պայմանավորվեցին ԱՊԼ–ի հովանու ներքո բանակցությունները մայիսի 16–ին Քաթարի մայրաքաղաք Դոհայում շարունակելու վերաբերյալ: Կրակի դադարեցմանը մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ ԱՊԼ–ի հանձնախմբի հորդորով Լիբանանի կառավարությունը չեղյալ հայտարարեց մայիսի 5–ին ընդունած իր որոշումները:

Արդյունքում «Հիզբալլահի» ներկայացուցիչը պահպանեց միջազգային օդանավակայանի անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնը, իսկ «Հիզբալլահի» հաղորդակցային ցանցը կրկին դուրս մնաց կառավարության վերահսկողությունից: «Հիզբալլահը» ոչ միայն չմեկուսացվեց, այլ նաև վերահաստատեց Լիբանանի ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը լինելու իր կարգավիճակը:

Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Սաուդ Ալ–Ֆեյսալը փորձեց ԱՊԼ նիստում ընդունված որոշման տեքստում, որպես ներլիբանանյան անկայունության հիմնական մեղավոր, մատնանշել «Հիզբալլահին» (իրենց համաձայնությունը տվեցին Եգիպտոսը, Հորդանանը, Քուվեյթը, ԱՄԷ–ն, Բահրեյնը և Լիբիան), սակայն դրան դեմ էին Քաթարի և Սիրիայի ներկայացուցիչները: Ի դեպ՝ Սիրիան ներկայացնում էր ԱՊԼ–ում իր մշտական ներկայացուցիչը: Փաստարկվում էր, որ «ընդդիմության գործողությունների դատապարտումը կարող էր խափանել ճգնաժամի քաղաքական կարգավորման հնարավորությունը»[8]:

ԱՊԼ հերթական նիստն ի ցույց դրեց նաև ներարաբական հակասությունները՝ մի կողմից Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի, իսկ մյուս կողմից՝ Սիրիայի միջև: Վերջինս խոչընդոտում էր այնտեղ սաուդական դիրքերի ամրապնդմանը: Վերոնշյալ նիստից անմիջապես հետո Սիրիայի նախագահ Բաշար Ալ–Ասադը հայտարարեց, որ Սիրիան առաջիններից է, որ ողջունում է Լիբանանում տեղի ունեցող դրական տեղաշարժերը և հույս հայտնեց, որ Լիբանանը շուտով կունենա նոր նախագահ:

Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Ալ–Ֆեյսալը մայիսի 13–ի իր ասուլիսում կոչ արեց լիբանանյան բոլոր ուժերին աջակցել ԱՊԼ ջանքերին և գնալ համալիբանանյան քաղաքական երկխոսության ճանապարհով: Ալ–Ֆեյսալը կրկին դիմեց տարածաշրջանային ուժերին (բնականաբար հասցեատերերը Սիրիան և Իրանն էին)՝ կոչ անելով հարգել Լիբանանի

[8] "Fadlallah Calls For "Deep" Arab, Islamic Dialogue", Compiled by Daily Star Staff, http://www.dailystar.com.lb, 23.05.2008.

անկախությունն ու ինքնիշխանությունը, դադարել նրա ներքին գործերին միջամտելուց, հրաժարվել միջհամայնքային հակասություններ հրահրելուց և թույլ տալ Լիբանանին ինքնուրույն լուծել իր խնդիրները[9]:

Ասուլիսի ընթացքում նախարարը նշեց, որ Լիբանանում ընթացող զարգացումները Սաուդյան Արաբիան դիտում է որպես «Հիզբալլահի» կողմից իրականացվող հեղաշրջման փորձ[10]:

Մայիսի 13–ին Լոնդոնում լույս տեսնող «Շարկ ալ աուսատ» սաուդական թերթում լույս տեսավ նաև Սիրիայում Իրանի նախկին դեսպան (1986–1997) Մահմուդ Հասան Ախթարի ««Հիզբալլահ», «Համաս» և «Պաղեստինյան իսլամական ջիհադ»՝ Իրանի իսլամական հեղափոխության որդիներ» հոդվածը, որում Ախթարին չէր թաքցնում, որ «Հիզբալլահի» հոգևոր հայրն ու գաղափարների «շարժիչը» կազմակերպության կազմավորման շրջանում՝ 1982 թ., Դամասկոսում ԻԻՀ դեսպան Ալի Մուխթաշամին էր, իսկ ինքը կազմակերպության «շինարարության անմիջական ղեկավարն» էր հենց Լիբանանում: «Հիզբալլահի» կազմավորումը տեղի էր ունենում մի կողմից՝ Իրանի, Իրաքի հետ պատերազմի, իսկ մյուս կողմից՝ 1982 թ. Իսրայելի Լիբանան ներխուժման պայմաններում[11]:

Մայիսի 21–ին Քաթարի մայրաքաղաքում հայտարարվեց ԱՊԼ–ի հովանու ներքո լիբանանյան «ազգային երկխոսության» «հաջող ավարտի» մասին: «Երկխոսության» մասնակիցներն ընդունեցին «Դոհայի համաձայնագիրը»[12], որի առաջին կետի համաձայն՝ առաջիկա շաբաթվա ընթացքում խորհրդարանի խոսնակը պետք է հրավիրեր նիստ, որում Լիբանանի նախագահ էր ընտրվելու համաձայնեցված թեկնածու Լիբանանի բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Միշել Սուլեյմանը[13]: Խորհրդարանի նիստի գումարման պատասխանատվությունը դրվեց «Ամալ» շարժման ղեկավար և խորհրդարանի խոսնակ Նաբիհ Բերրիի վրա[14]:

---

[9] "Qatar Scores Diplomatic Coup with Lebanon Deal", Agence France Presse (AFP), 23.05.2008.

[10] Նույն տեղում:

[11] Muhammad Hasan Al–Akhtari, "Hizballah, Hamas and Palestinian Islamic Jihad–The Sons of Iranian Islamic Revolution", http://www.asharq–e.com, 13.05.2008.

[12] "Canada Urges Lebanon to Implement Doha Deal", Compiled by Daily Star Staff, http://www.dailystar.com.lb, 23.05.2008.

[13] "Berri Summons MPs to Presidential Election on Sunday", by Hussein Abdallah, http://www.dailystar.com.lb, 23.05.2008.

[14] "Al–Nahar", May 22, 2008.

Համաձայնագրի երկրորդ կետը նախատեսում էր, որ նախագահի ընտրություններից հետո պետք է կազմավորվեր 30 նախարարներից բաղկացած «ազգային միասնության» կառավարություն. 16 նախարարական տեղ կստանար իշխող մեծամասնությունը, 11 տեղ՝ ընդդիմությունը, իսկ երեք նախարար կնշանակեր նախագահը[15]:

Մայիսի 22–ին «Շարկ ալ–աուսատ» պարբերականին տված իր հարցազրույցում Լիբանանի իշխող մեծամասության ղեկավար Սաադ Հարիրին ընդգծեց լիբանանյան ճգնաժամի կարգավորման գործում Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի մեծ ներդրումը: Նա նշեց նաև, որ այսուհետ ևս վերոնշյալ երկրները կարևոր դեր են խաղալու լիբանանյան գործերում[16]: Այս փաստը դժգոհություն առաջացրեց Սիրիայում: 2005 թ. Լիբանանից սիրիական զորամիավորումների դուրս բերումից հետո[17] Դամասկոսը հմտորեն օգտագործում էր Սիրիա–Իրան–«Հիզբալլահ» ռազմավարական համագործակցությունը՝ անուղղակիորեն ազդելով ներլիբանանյան զարգացումների վրա:

Համաձայնագրի երրորդ կետը վերաբերում էր նոր ընտրական օրենքի ընդունմանը, որի մշակումը հանձնարարվեց «Ընտրական օրենքի պատրաստման ազգային հանձնաժողովին»: Այն ղեկավարելու էր իշխող մեծամասնության նախարարներից մեկը[18]: Համաձայնագիրը նախատեսում էր նաև քաղաքական նպատակների իրագործման հարցում հրաժարում զենքի օգտագործումից և պետության դերի ամրապնդում Լիբանանի ներքին կյանքում:

Լիբանանի խորհրդարանը միայն 2008 թ. մայիսի 25–ին 118 կողմ ձայնով նոր նախագահ ընտրեց գեներալ Միշել Սուլեյմանին[19]: Այս պաշտոնը թափուր էր մնացել 2007 թ. նոյեմբերից, երբ Էմիլ Լահուդը լքեց նախագահի պաշտոնը[20], ինչն իր հերթին

[15] "New Electoral Law Sets Stage for Competitive Vote in 2009", by Anthony Elghossain, http://www.dailystar.com.lb, 23.05.2008.

[16] Սաադ Հարիրիի հարցազրույցի տեքստը տես http://www.asharq–e.com/, 22.05.2008.

[17] Այս մասին մանրամասն տես В. Ахмедов, Современная Сирия: история, политика, экономика, М., 2010, с. 192.

[18] "New Electoral Law Sets Stage for Competitive Vote in 2009", by Anthony Elghossain, http://www.dailystar.com.lb, 23.05.2008.

[19] В. Шевченко, Маронитская община Ливана, Ближний Восток и современность, Выпуск 42, М., 2010, с. 240.

[20] 2004 թ. սեպտեմբերին Լիբանանի խորհրդարանը կողմ քվեարկեց նախագահ Էմիլ Լահուդի նախագահության ժամկետը ևս 3 տարով երկարաձգելուն: Սակայն հակասությունների առկայության պայմաններում հնարավոր չեղավ

հանգեցրել էր առկա ճգնաժամի էլ ավելի սրմանը: Մայիսի 28–ին նորընտիր նախագահ Միշել Սուլեյմանը Ֆուադ Սինիորային հանձնարարեց նոր՝ «ազգային միասնության կառավարության» ձևավորումն այն բանից հետո, երբ 127 պատգամավորներից 68–ն առաջադրեց նրա թեկնածությունը:

Այս ամենը հույս էր ներշնչում, որ Լիբանանում կհաստատվեր հարաբերական կայունություն: Կրոնահամայնքային կառավարման համակարգ ունեցող այս երկրում, որտեղ բախվում են տարածաշրջանային և միջազգային ուժերի շահերը, պետական իշխանության թուլության պայմաններում քաղաքական ճգնաժամերը նրա պատմական զարգացման անբաժան մասն են դարձել: Թեև Միշել Սուլեյմանի ընտրությունը վերջ դրեց երկրում 2007 թ. նոյեմբերից շարունակվող նախագահական վակուումին, սակայն վերջինիս դիրքերը բավական խոցելի էին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր նախագահը պետք է խուսանավեր լիբանանյան քաղաքականության տարբեր բևեռների միջև՝ դառնալով յուրահատուկ հավասարակշռող գործոն:

Մայիսին կառավարության կողմնակիցների և «Հիզբալլահի» միջև բախումներում զոհվեց 65 մարդ: Դրանք ամենախոշոր բախումներն էին 1990 թ. երկրորդ քաղաքացիական պատերազմի ավարտից հետո:

Ակնհայտ էր, որ Լիբանանում ընթացող զարգացումները նաև մերձավորարևելյան հակամարտության՝ դեռևս չկարգավորված լինելու հետևանք էին: Փաստենք, որ Իսրայելի և Սիրիայի միջև ցանկացած հնարավոր խաղաղություն (հատկապես այդ շրջանում խոսվում էր Թուրքիայի միջնորդությամբ երկու երկրների միջև ընթացող բանակցությունների մասին) իր ուղղակի անդրադարձն է ունենում մերձավորարևելյան տարածաշրջանի, այդ թվում նաև Լիբանանի վրա: Այդ հանգամանքը ոչ միայն կարող էր թուլացնել Իրանի և Սիրիայի անուղղակի ազդեցությունը լիբանանյան գործերում, այլ նաև կարող էր արագացնել «Հիզբալլահի» ռազմական թևի վերացման և նրա՝ միայն քաղաքական կուսակցության վերակազմավորման գործընթացը:

համաձայնության հասնել նոր նախագահի թեկնածության հարցում և նախագահական ընտրություններն անցկացնել 2007 թ. սեպտեմբերին:

***

2009 թ. հունիսի 7–ին Լիբանանում կայացան խորհրդարանական ընտրություններ: Բնական էր, որ համաշխարհային ԶԼՄ–ն, այդ թվում նաև գերմանական մամուլը, ընտրություններից առաջ հրատարակում էր նյութեր, որոնք վերաբերում էին այդ երկրում քաղաքական հիմնական ուժերի հարաբերակցությանը և մերձավորարևելյան խնդիրների զարգացումներին, որոնց կարգավորման գործընթացում ակտիվորեն ներգրավված էր նաև Գերմանիան: Այդ պատճառով էլ գերմանական ԶԼՄ–ները, նաև Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության կայքը, հատուկ ուշադրություն էր դարձնում լիբանանյան և մերձավորարևելյան զարգացումներին:

Նշենք, որ դեռևս 2006 թ. ամռանը Լիբանանաիսրայելյան հերթական հակամարտության կարգավորման համաձայնագրի ստորագրումից հետո որոշում ընդունվեց Լիբանանի հարավում ՄԱԿ–ի բազմազգ խաղաղապահ ուժեր տեղակայելու մասին, որոնցում ակտիվորեն ներգրավվեց նաև Գերմանիան: Այդ ներգրավվածությունը հաստատվեց Բունդեստագում (Խորհրդարանի ստորին պալատում) 2008 թ. սեպտեմբերի 17–ին և սահմանվեց 1200 գերմանացի զինծառայողների ներկայությունն այս ուժերում: Ելույթ ունենալով երկրի խորհրդարանում՝ արտաքին գործերի նախարար Շտայնմայերն ընդգծեց հատկապես առաջադրանքի ծովային հատվածը՝ ապօրինի զենքի ներթափանցման կանխարգելումը: Գերմանացիները պատասխանել էին լիբանանյան իշխանությունների ավելի քան 18 000 հարցումների, մանրամասն զննել էին ավելի քան 160 նավ (2008 թ. նոյեմբերի տվյալներով հարցումների թիվը 19,632 էր, իսկ զննված նավերի թիվը՝ 168)[21]: Այսպիսով՝ իրականացվել էր շատ կարևոր քայլ. առաջին անգամ Լիբանանն ուներ ծովում իրավիճակի վերաբերյալ սեփական տեղեկատվություն: Զուգահեռաբար իրականացվում էր նաև ցամաքային սահմանների վերահսկում:

Կազմավորված գերմանական ծովային օպերատիվ խումբը սերտորեն համագործակցում էր լիբանանյան ռազմածովային ուժերի հետ զենքի ապօրինի առք ու վաճառքը ծովային ճանապարհով կանխելու նպատակով: Այդ ուժերի համատեղ գործողությունների արդյունքում երաշխավորվում էր նաև Լի-

[21] И. Берг, “Программа немецких обязательств по Ливану и ее выполнение”, http://www.iimes.ru/rus/stat/2009/29–05–09a.htm

բանանի և Իսրայելի առևտրի և նավագնացության անվտանգությունը[22]:

Գերմանիան նաև զգալի աջակցություն է ցույց տալիս Լիբանանին ռազմածովային կադրերի պատրաստման գործում: Մասնավորապես ՄԱԿ–ի խաղաղապահ ուժերում ներգրավվածության շրջանակներում, գերմանական հրթիռակիր արագասլաց S 77 DACHS լաստանավում, վերապատրաստում անցան Լիբանանի ռազմածովային ուժերի կուրսանտները: Այս նպատակով երկու անգամ անցկացվեցին գերմանալիբանանյան զորավարժություններ:

Լիբանանյան պետական համակարգի բարեփոխումների իրականացման շրջանակներում Գերմանիան Լիբանանին օժանդակում էր նաև 2009 թ. հունիսի խորհրդարանական ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացում: Նախընտրական շրջանում Գերմանիայի հատուկ ներկայացուցիչ Իրենա Պլանկը Լիբանանի ներքին գործերի նախարարին՝ Զիյադ Բարրուդին, տրամադրեց սարքավորումներ, որոնք կարող էին նպաստել տեղեկատվության ապահով պահպանմանը, կեղծ փաստաթղթերի հայտնաբերմանը և այլն[23]:

Հունիսի 7–ին Լիբանանում կայացած խորհրդարանական ընտրություններն ունեին զգալի նշանակություն. երկրի քաղաքական կուսակցությունները պետք է գործնականորեն փորձեին իրականացնել Դոհայի համաձայնագիրը:

Հիմնական քաղաքական ուժերն էին՝ Սաադ Հարիրիի գլխավորած իշխող «Ալ–Մուսթակբալ» կամ «Մարտի 14–ի ուժեր» և ընդդիմադիր՝ «Մարտի 8–ի» դաշինքը: «Ալ–Մուսթակբալի» հետ համագործակցում էին «Լիբանանյան ուժերը»՝ Սամիր Ջաջայի գլխավորությամբ, «Քաթաիբ» կուսակցությունը՝ Ամին Ժմայելի ղեկավարությամբ, և հիմնականում դրուզներից կազմված «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցությունը՝ Վալիդ Ջումբլաթի գլխավորությամբ: Ընդդիմադիր ճակատում համախմբվել էին «Հիզբալլահ» և «Ամալ» շիական շարժումները, «Ազատ հայրենասիրական» շարժումը՝ գեներալ Միշել Աունի գլխավորությամբ, և Հայ հեղափոխական դաշնակցությունը:

«Հիզբալլահ» շարժման ղեկավար շեյխ Հասան Նասրալլահը նախընտրական փուլում՝ 2009 թ. մայիսի 15–ին, հանդես եկավ ելույթով[24]: Այն Լիբանանում, ինչպես նաև հարևան արաբական

[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում:
[24] Հասան Նասրալլահի ելույթը տես www.dailystar.com.lb, 15.15.2009

երկրներում ընկալվեց որպես շիական այդ խոշոր կազմակերպության գլխավոր քարտուղարի կոչը, որի հիմնական շեշտադրումը Լիբանանում «Հիզբալլահի պետություն» ստեղծելն էր[25]: «Նա, ով պարտության մատնեց աշխարհի ուժեղագույն բանակներից մեկը (ի նկատի ուներ 2006 թ. «Հիզբալլահ»–Իսրայել զինված հակամարտության ընթացքում իսրայելյան բանակի «պարտությունը» (Լ. Հ), կարող էր կառավարել նաև Լիբանանից մի քանի անգամ մեծ պետություն: Մենք պատրաստ ենք կառավարել մեր երկիրն ու նրա գործերը»,– նշեց «Հիզբալլահի» գլխավոր քարտուղարը[26]: Իհարկե, այդ ելութը պետք է դիտարկել նախընտրական քարոզարշավի համատեքստում:

Ինչ վերաբերում է այդ փուլում Լիբանանի դաշնայնացման մասին շրջանառվող ծրագրերին, ապա շեյխը նշեց, որ դա «Լիբանանի մասնատմանը տանող առաջին քայլն էր»: «Հիզբալլահը» կպայքարի այդ գաղափարի դեմ: Մեր հաղթանակի դեպքում քրիստոնեական համայնքները, որոնք չէին ցանկանում «Հիզբալլահի պետության» ստեղծումը երկրում, կարող են լուրջ խնդիրներ ունենալ»,– նշեց Նասրալլահը: Նա ընդգծեց, որ «Հիզբալլահը» չէր ցանկանում այլևս հաշտվել կառավարությունում աթոռների մեկ երրորդի հետ, այլ ցանկանում էր ամբողջությամբ գրավել նախարարական աթոռները:

Նասրալլահը փորձեց նաև իր կազմակերպության օգտին ծառայեցնել նախընտրական փուլում գերմանական «Դեր Շպիգել» ամսագրում լույս տեսած այն հոդվածը, որում երկրի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության կազմակերպման մեջ մեղադրանքներ էին հնչեցվում նաև «Հիզբալլահի» հասցեին: Այս փաստը շահեկանորեն խաղարկեց ինչպես «Հիզբալլահի» քարոզչամեքենան, այնպես էլ նախագահ Միշել Սուլեյմանը, ով, փորձելով թույլ չտալ արտաքին ազդեցության ներթափանցումն ընտրական գործընթացում, վերոնշյալ հրապարակումն անվանեց «իսրայելյան հատուկ ծառայությունների կազմակերպած կեղծիք»[27]:

Ստեղծված իրավիճակում այս դիրքորոշման հետ հրապարակայնորեն ստիպված էր համաձայնվել նաև Սաադ Հարիրին, քանի որ «Հիզբալլահը» ձգտում էր ապացուցել, որ Հարիրիի ղե-

[25] Г. Косач, “Парламентские выборы в Ливане: дата проведения приближается”, http://www.iimes.ru/rus/stat/2009/02–06–09.htm

[26] Г. Косач, “Речь Шейха Хасана Насраллы: реакция в Ливане и Саудовской Аравии”, http://www.iimes.ru/rus/stat/2009/18–05–09.htm

[27] Նույն տեղում:

կավարած քաղաքական ուժերը ևս օգտվում էին իսրայելյան հատուկ մարմինների «ծառայություններից»:

Նախընտրական փուլում միջազգային հանրությունը բավական ակտիվորեն հետևում էր Լիբանանում ընթացող գործընթացներին: Հատկապես ակտիվ էր Բեյրութում ԱՄՆ դեսպանատունը: Լիբանանում ընտրություններին առնչվող հայտարարություններ արեց նաև ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, ով ընտրությունների նախօրեին այցելեց Լիբանան: Վերջինիս հայտարարություններում հիմնական շեշտադրումը վերաբերում էր խորհրդարանական ընտրությունների թափանցիկությանն ու դրանց ժողովրդավարական չափանիշներին համապատասխանության անհրաժեշտությանը:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը մայիսին Լիբանան այցելության ընթացքում իր մամլո ասուլիսի շրջանակներում հայտարարեց, որ Ռուսաստանը կճանաչի ընտրությունների ցանկացած արդյունքները, որոնք ընդունելի կլինեն լիբանանցիների համար:

«Հիզբալլահի» բարձրագույն ղեկավարությունը նախընտրական փուլում խոսում էր նաև «լիբանանյան պետության պաշտպանունակության» բարձրացման անհրաշետության մասին, որի ուղղությամբ ամենակարևոր քայլը համարում էր բանակի վերազինումը: Այդ հարցում այն իր հիմնական դաշնակից, բնականաբար, նշում էր Իրանին, որը «ի վիճակի էր և պատրաստ» զենք ու զինամթերք տրամադրելու Լիբանանին: Իրանը «իսրայելյան հնարավոր ագրեսիայի» դեպքում համարվում էր նաև Լիբանանի «հիմնական պաշտպանը»[28]:

2008 թ. դեկտեմբերին Բեյրութում Սիրիայի դեսպանատան բացումն ու այդ երկրի առաջին դեսպանի հավատարմագրերի հանձնումը նախագահ Միշել Սուլեյմանին, «Հիզբալլահը» ներկայացնում էր որպես Սիրիայի կողմից Լիբանանի ամբողջականության և անկախության «վերջնական ճանաչում»: Նասրալլահն իր ելույթում Բեյրութում նշանակված սաուդական դեսպանի դիվանագիտական ակտիվությունը (հատկապես Սաադ Հարիրիի ղեկավարած «Մարտի 14–ի» ուժերի ղեկավարների հետ շփումները) որակեց որպես «միակողմանի» և «լիբանանյան պետության քաղաքական ուղեգծին ոչ համապատասխան»[29]: Սաադ Հարիրի ղեկավարած դաշինքն իր նախընտ-

[28] Հասան Նասրալլահի ելույթը տես www.dailystar.com.lb, 15.05.2009
[29] Նույն տեղում:

ական արշավը կառուցել էր Դոհայի համաձայնագրի դրույթների «հենքի» վրա՝ դրանք հարմարեցնելով «Ալ–Մուսթակբալ» շարժման գաղափարախոսությանը:

«Մարտի 14–ի» դաշինքում ներգրավված ԱՍԿ ղեկավար Վալիդ Ջումբլաթը նշեց, որ «միայն երկու բևեռներ էին Լիբանանի ապագայի երաշխիքները. դրանցից առաջինը Սաադ Հարիրին էր, իսկ երկրորդը՝ խորհրդարանի խոսնակ, «Ամալ» շիական կազմակերպության ղեկավար Նաբիհ Բերրին»: Ջումբլաթն իր կողմնակիցներին կոչ արեց քվեարկելու վերոնշյալ երկու գործիչների ղեկավարած ցուցակների օգտին[30]:

Ինչպես Նասրալլահը, այնպես էլ Բերրին դեմ էին արտահայտվում Լիբանանի մասնատմանն ու դաշնայնացմանը[31] և կողմ էին կրոնադավանական սկզբունքի պահպանմանը նաև պետական պաշտոնների նշանակման գործում:

Իհարկե, Հարիրիին մեծապես աջակցում էր հարազատ Սայդայի սուննիական համայնքը: Այդ աջակցությունը պահպանելու համար Հարիրին «ստիպված էր» պահպանել հակասիրիական հռետորականությունը:

Տրիպոլիում նաև էական գործունեություն էին ծավալում գեներալ Միշել Աունի համախոհները, որոնց շարքում հատկապես ակտիվ էին սուննի հայտնի Քարամե ընտանիքի որոշ անդամները:

Ակնհայտ էր, որ ներլիբանանյան հակասությունները, ինչպես միշտ, կարող էին լուծվել միայն փոխզիջման ճանապարհով: Խորհրդարանական ընտրությունների նախաշեմին կարևոր էին ոչ այնքան ընտրությունների արդյունքները, որքան քաղաքական ուժերի կողմից ընտրությունների արդյունքների ճանաչումը:

Նախընտրական փուլում բավական ակտիվություն էին ցուցաբերում նաև արաբական մի շարք պետություններ, որոնք ուղղակի շահեր ունեին Լիբանանում: Մասնավորապես Եգիպտոսն արտահայտվում էր Սաադ Հարիրիի և նրա ղեկավարած դաշինքի պաշտպանությամբ: Նույնիսկ եգիպտական մի քանի պաշտոնատար անձիք հանդես էին գալիս բացահայտ հակահիրանական ելույթներով, որոնցում Իրանը բնորոշվում էր որպես «ագրեսիվ պետություն»: Այդ համատեքստում նաև պետք է դիտարկել ընտրություններից առաջ եգիպտական հատուկ ծառայությունների

[30] Г. Косач, “Парламентские выборы в Ливане: дата проведения приближается”, http://www.iimes.ru/rus/stat/2009/02–06–09.htm

[31] Դեռևս 1970–80–ականներին լիբանանյան աջ ծայրահեղական որոշ շրջանակներ առաջ քաշեցին Շվեյցարիայի օրինակով Լիբանանի կոնտոնիզացիայի ծրագիրը:

այն հայտարարությունը, որ Եգիպտոսի տարածքում հայտնաբերվել էր «Հիզբալլահի» ընդհատակյա ցանց, որի անդամները զբաղվում էին «Համասին» զենք մատակարարելով[32]:

Եգիպտոսում «Հիզբալլահի» ցանցի բացահայտման մասին հրապարակումներն իր նախընտրական արշավում, անկասկած, լավագույնս օգտագործեց նաև Սաադ Հարիրին:

Այդ փուլում «Հիզբալլահը» ձայների մեծամասնություն ուներ Բեքաայի հովտում և Լիբանանի հարավում: Բեյրութում, Սայդայում և Տրիպոլիում ամուր դիրքեր ուներ «Մուսթակբալ» շարժումը: Ձայների համար պայքար էր գնում երկրի քրիստոնեական, մասնակիորեն էլ դրուզական շրջաններում: Ընտրությունների նախօրեին հրապարակվեց «Հիզբալլահի» հայտարարությունը, որում նշվում էր, որ «հաղթանակի դեպքում կազմակերպությունն ուժի մեջ կթողնի 1989 թ. Տաիֆի համաձայնագրով ամրագրված այն դրույթը, որը պարտված կողմին նախարարական աթոռների մեկ երրորդը զբաղեցնելու հնարավորություն էր տալիս»: Լիբանանյան քաղաքական շրջանակները սկսեցին խոսել այն մասին, որ «Հիզբալլահը» հող էր նախապատրաստում իր նահանջի համար: Բացի այդ՝ շարունակվում էին նաև հակասությունները «Ամալի» և Միշել Աունի միջև՝ մի շարք ընտրական շրջաններում միասնական թեկնածուների առաջադրման հարցում[33]:

Ընտրություններից առաջ հակադիր ուժերի հնարավորությունները գրեթե հավասար էին գնահատվում: Նշենք, որ հակամարտող ուժերը երկրի ներսում ունեին ձայների «կարիք»: Դա բացատրվում էր նաև այն հանգամանքով, որ Լիբանանում բնակվում է մոտ 3 մլն մարդ, մինչդեռ արտերկրում՝ տարբեր տվյալներով 4–ից 18 մլն լիբանանցի[34]: Իրավունք ունեն լիբանանցիներն քվեարկությանը մասնակցելու միայն Լիբանանի տարածքում: Քաղաքական երկու հիմնական ուժերն էլ ինքնաթիռներով իրականացնում էին արտերկրից իրենց համախոհների տեղափոխում քվեարկությանը մասնակցելու նպատակով: Միայն Պարսից ծոցի

[32] Е. Кирсанов, “Предвыборная ситуация в Ливане”, http://www.iimes.ru/rus/stat/2009/17–04–09c.htm

[33] Նույն տեղում:

[34] Լիբանանի քաղաքացիություն և քվեարկության իրավունք ունեցողների թվի հարցն առանձին ուսումնասիրության կարիք ունի: Մեզ ամենահավաստին թվում են «Ան–նահար» լիբանանյան պարբերականում 2006 թ. նոյեմբերի 13–ին հրապարակված տվյալները, որոնց համաձայն՝ երկրում քվեարկելու իրավունք ունեցողների թիվն, ըստ պետական հաշվառման գրասենյակների տվյալների, 4 մլն 855 հազար 67 է:

արաբական երկրներից զգալի թվով լիբանանցիներ (հիմնականում Ս. Հարիրիի կողմակիցներ) Բեյրութ ժամանեցին 80 օդանավով: Իսկ «Հիզբալլահը» իր հերթին ընտրություններից երկու շաբաթ առաջ գնեց «Աերոֆլոտի» բոլոր չվերթները՝ Մոսկվա–Բեյրութ ուղղությամբ, և կազմակերպեց իր համախոհների՝ Լիբանան ժամանումը:

Դրա հետ մեկտեղ «Հիզբալլահի» ղեկավարած դաշինքը ձեռնարկեց նախընտրական այլ քայլեր ևս: Դրանցից էր, օրինակ, Միշել Աունի այցը Մոսկվա: Անկասկած այցելությունը նախընտրական արշավի մաս էր կազմում: Այցելության ընթացքում Աունը հանդիպեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի, ինչպես նաև Ռուս ուղղափառ եկեղեցու արտաքին կապերի բաժնի պատասխանատու, եպիսկոպոս Իլլարիոնի հետ[35]: Անկասկած այս երկու հանդիպումները ընտրությունների ընթացքի վրա ազդելու նպատակ էին հետապնդում, քանի որ Լիբանանում ավանդաբար ուշադրություն են դարձնում այդպիսի շփումներին:

Այս ընթացքում Մոսկվա ևս մեկ այցելություն տեղի ունեցավ: ՌԴ այցելեց «Հիզբալլահի» պատվիրակությունը, որն իբրև թե պետք է մասնակցեր Ռուսաստանի ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում կազմակերպվող «Արաբագիտական ուսումնասիրությունների կենտրոնի» համաժողովին: Այդ համաժողովի մասին տեղեկատվություն գրեթե չկար: Սակայն փաստ է, որ «Հիզբալլահի» պատվիրակությունն այցելել էր Մոսկվա և հանդիպումներ ունեցել ռուս խորհրդարանականների հետ: Այս այցելությունն էլ նախընտրական գործընթացների համատեքստում էր[36]:

Ընտրությունների նախաշեմին արծարծվող հիմնական երեք թեմաները հետևյալն էին՝ 1. Իրանի հետ հարաբերությունները և դրանց ազդեցությունը երկրի զարգացումների վրա, 2. Սիրիայի հետ հարաբերությունները և 3. Իսրայելի հետ հարաբերություններն ու Լիբանանում պաղեստինյան փախստականների հիմնախնդիրը:

Նախընտրական փուլում մեծ հետաքրքրություն կար ՀՅԴ ձայների նկատմամբ: Ակտիվ պայքար էր գնում վերջինիս ձայները գրավելու համար: Կուսակցությունը հավակնում էր ընտրություն-

[35] Christian Votes Mattered Less Than Expected in Elections, Analysts Say, by Michael Bluhm, www.dailystar.com.lb, 09.06.2009.

[36] Е. Кирсанов, “Предвыборная ситуация в Ливане”, http://www.iimes.ru/rus/stat/2009/17–04–09c.htm

ների արդյունքում ստանալու 128 պատգամավորական աթոռներից հայ համայնքին հատկացված բոլոր 6 տեղերը: Սակայն սրանք այն ձայներն էին, որոնք կարող էին կշեռքի նժարը փոխել՝ հօգուտ այս կամ այն դաշինքի: Սակայն ՀՅԴ–ն այդպես էլ մնաց ընդդիմության դաշինքում, որի հիմնական հովանավորներն են Իրանն ու Սիրիան:

«Մարտի 14–ի» ուժերի հիմնական «թուլությունը» Սաադ Հարիրիի քաղաքական փորձի պակասն էր: Նախընտրական փուլում Սաադ Հարիրին նշեց, որ ընտրողները պետք է ընտրություն կատարեն «Հիզբալլահի» և երկրի անկախության միջև: «Մեր ուղեգիծն արդարությունն է, անկախությունը, ինքնիշխանությունը և ազգային շահերը: Նրանում տեղ չկա «Հիզբալլահի» գաղափարների համար: Հաղթանակի դեպքում մենք ընդդիմությանը կառաջարկենք կառավարության մաս կազմել: «Հիզբալլահի» զինաթափման հարցը պետք է բարձրացնել միայն իրավահավասար երկխոսության շրջանակներում: Ընտրությունները մեզ թույլ կտան նոր էջ բացել այդ երկխոսության համար»,– նշեց «Ալ–Մուսթակբալ» շարժման ղեկավարը[37]:

Բնական էր, որ գրեթե հավասար ձայների առկայության պայմաններում հաղթանակի դեպքում կողմերը պետք է գնային փոխզիջումների: Բացի այդ՝ չպետք է մոռանալ, որ դեռևս մինչև ընտրություններն ընդդիմությունն արդեն իսկ ի վիճակի էր վետո դնել յուրաքանչյուր պետական որոշման վրա: Չմոռանանք նաև, որ «Հիզբալլահի» ռազմական ներուժը շարունակում էր ամենահզորը լինել երկրում:

«Մարտի 14–ի» ուժերն այս պայմաններում հատուկ ուշադրություն էին դարձնում Սիրիայի գործոնին: Լիբանանասիրիական հարաբերություններում նախընտրական շրջանում նկատվում էր էական առաջընթաց: Այս համատեքստում նաև սկսեց օգտագործվել «երկու երկիր, մեկ ժողովուրդ» կարգախոսը: Նույնիսկ Ռաֆիկ Հարիրիի սպանության հետաքննությամբ զբաղվող միջազգային դատարանի աշխատանքն այդ փուլում չուներ սուր հակասիրիական բնույթ: ԱՍԿ ղեկավար Վալիդ Ջումբլաթն այս կապակցությամբ նշեց. «Լիբանանն այլևս չի կարող թշնամանք տածել Սիրիայի նկատմամբ, քանի որ տեղի են ունեցել արմատական փոփոխություններ: Սիրիան դեպի «Հիզբալլահ» տանող կարևոր «բանալին» է, իսկ ավելի ճիշտ՝ դեպի նրա ռազմական ներուժի թուլացմանը տանող «բանալի»: Եթե սիրիացիները հրաժարվեն

[37] Նույն տեղում:

«Հիզբալլահին» աջակցելուց, վերջինս, փաստորեն, կզրկվի զինամթերքի տարանցիկ կարևոր ուղուց[38]:

Ընտրություններից դեռևս մեկ շաբաթ առաջ արևմտաեվրոպական և ամերիկյան գրեթե բոլոր հեղինակավոր ԶԼՄ–ները վստահորեն կանխատեսում էին «Հիզբալլահի» հաղթանակը՝ խոսելով «իսլամական արմատականության» ուրվականի մասին, որը «շրջում էր Մերձավոր Արևելքում»: Ամերիկյան և եվրոպական ԶԼՄ–ները հեռու չէին իրականությունից: Երկրում ողջ պայքարն ընթանում էր 12 ձայնի համար երկու ընտրատարածքներում:

Հունիսի 7–ին Լիբանանում խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ «Մարտի 14–ի» դաշինքը՝ Սաադ Հարիրիի գլխավորությամբ: 128 պատգամավորական տեղերից այն ստացավ 71–ը: 57 տեղ ստացավ ընդդիմադիր «Մարտի 8–ի» դաշինքը (Միշել Աուն, «Հիզբալլահ», «Ամալ» և ՀՅԴ): Սահմանադրության համաձայն՝ ուժերի այդպիսի հարաբերակցությունը իշխող դաշինքին հնարավորություն էր տալիս ձևավորելու նոր կառավարություն: «Մարտի 14–ի» ուժերը չէին դադարում կրկնել, որ լիբանանցիները կատարել էին պատմական ընտրություն՝ հօգուտ առաջադիմության, քաղաքացիական հասարակության և երկրի միասնականության[39]:

Միշել Աունի կարծիքով, ով իրեն համարում է «լիբանանյան Նապոլեոն», ընտրությունները կեղծվել էին երկու ընտրատարածքում: Այնտեղ աշխատել էին սաուդական նավթադոլարները, որոնք էլ հենց կանխորոշել էին «Մարտի 14–ի» ուժերի հաղթանակը:

Սաուդական նավթադոլարներն, իհարկե, զգալի դեր խաղացին ընտրական գործընթացում: Սակայն Աունը չէր նշում, որ դրանցից բացի՝ աշխատել էին նաև իրանական գումարները՝ հօգուտ «Մարտի 8–ի» դաշինքի: Միջազգային լրատվամիջոցները նշում էին, որ ընտրությունների ընթացքում Լիբանանում ծախսվել էր 750 մլն ԱՄՆ դոլար[40]:

Ընտրություններից մեկ շաբաթ առաջ անկախ պատգամավորների խումբն՝ Մ. Մուրրի գլխավորությամբ իշխող դաշինքի համար խնդրահարույց Բիբլոսի շրջանից պաշտոնապես հրաժարվեց իր «անկախությունից» և իր ձայները տվեց Սաադ Հա-

[38] "World Leaders Laud Lebanese Democracy, Israel Calls for Disarming Hizbullah", by Dalila Mahdawi, www.dailystar.com.lb, 09.06.2009.

[39] Е. Кирсанов, "Ливан: выборы прошли. Что дальше?", http://www.iimes.ru/rus/stat/2009/09–06–09b.htm

[40] "L'Orient–Le Jour", 6–7 June, 2009, No. 12582.

րիրիին: Այսպիսով՝ Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանի անկախ պատգամավորների ինստիտուտ ստեղծելու գաղափարը, որը կարող էր համարվել նախագահի «քվոտա», մերժվեց: Որոշ փորձագետների գնահատմամբ նախագահի այդ գաղափարի իրականացումը դեռ ժամանակավրեպ էր: Առկա պայմաններում, որոշում ընդունվեց նմանատիպ նորարարությունները՝ ուղղված «իրական պառլամենտարիզմի կառուցմանը», հետաձգել:

Ընտրությունների ընթացքում տեղի ունեցավ ևս մեկ անակնկալ: Լիբանանյան քաղաքականության «պատրիարքներից» մեկը՝ «մշտական պատգամավոր» Իլիաս Սկաֆը, ջախջախիչ պարտություն կրեց, ինչի արդյունքում «Մարտի 14–ի» ուժերը ստացան 7 ձայն: Որոշ փորձագետների կարծիքով՝ դա տեղի էր ունեցել Դամասկոսի հետ պայմանավորվածությունների արդյունքում: Սկաֆը հայտնի էր իր սիրիամետ տրամադրություններով: Նշվում էր, որ Սիրիայի հետ իրականացվել էր գործարք. «ընտրությունները՝ որոշակի արտոնությունների փոխարեն», որի մասին կխոսվի ավելի ուշ:

Սաադ Հարիրիի ղեկավարած դաշինքը ջախջախիչ հաղթանակ տարավ Բեյրութի ընտրատարածքներից մեկում, ինչը ևս հինգ ձայն ապահովեց: Ընդդիմությունը սկսեց բարձրաձայնել ներքին գործերի նախարար Զ. Բարրուդի կողմից վարչական ռեսուրսի օգտագործման մասին, ում վրա էր դրված ընտրությունների անցկացման պատասխանատվությունը:

2009 թ. հունիսի 7–ին Լիբանանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին մասնակցեց ընտրողների 60 %–ը[41]: «Մարտի 14–ի» ուժերի հաղթանակը պաշտոնապես ճանաչեց Հասան Նասրալլահը[42]: Վերջինիս հայտարարությունը սկզբունքային նշանակություն ուներ հետընտրական գործընթացում:

Սաադ Հարիրին կարողացավ ընդլայնել իր խորհրդարանական ներկայությունը: «Մարտի 8–ի» ուժերը հաղթանակ չկարողացան տանել լիբանանյան այնպիսի սկզբունքային ընտրական տարածքներում, ինչպիսին են Բեյրութի առաջին, Զահլեի (Բեքաայի հովիտ) և Բատրունի ընտրատարածքները: Միաժամանակ թեև «Մարտի 14–ի» ուժերը չկարողացան ընդլայնել իրենց ներկայությունը Հարավային Լիբանանի ընտրատարածքներում, սակայն այստեղ կրկնեցին 2005 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Սակայն նրանցում ևս որոշակի հաջողություններ գրանցվեցին. Սայդայի ընտրատարածքից «Ալ–Մուսթակբալ»

[41] Г. Косач, “Парламентские выборы в Ливане: итоги и комментарии”, http://www.iimes.ru/rus/frame_stat.html

[42] «Զարթօնք», Հունիսի 11, 2009, հմ. 45 (19776):

շարժումը խորհրդարանում ներկայացնելու էր նախկին վարչապետ Ֆուադ Սինիորան, ինչպես նաև նախկին կառավարության կրթության նախարար Ռաֆիկ Հարիրիի քույր Բահիյա Հարիրին: Սամիր Ջաջայի ղեկավարած «Լիբանանյան ուժերը» կարողացան գրավել երկու մարոնիական տեղեր Բշարե (Լեռնային Լիբանան) ընտրատարածքից, որտեղ ծնվել է Ջաջան: Հարիրիի կողմնակիցների հաջողությունն էական էր նաև հիմնականում սուննի բնակչությամբ Լիբանանի հյուսիսում (Տրիպոլիում և Աքքարում), որտեղ «Մարտի 14–ի» դաշինքը ստացավ 8 պատգամավորական տեղերից 6–ը (ներքին համաձայնությամբ դրանք համարվում են սուննի, ուղղափառ, մարոնի և ալավիական համայնքների տեղերը): Երկու մնացած տեղերը տրվեցին «անկախներին»: Ալ–Կուրայում (Բատրունի և Տրիպոլիի միջև), որտեղ բնակվում են մեծամասամբ հույն ուղղափառներ, «Ալ–Մուսթակբալ» շարժման հաղթանակն ամբողջական էր: Եվ վերջապես մայրաքաղաքի երեք ընտրատարածքները, որտեղ առաջին ընտրատարածքում «Մարտի 14–ի» ուժերը գրավեցին բոլոր հինգ տեղերը (նախատեսված մարոնիների, հույն ուղղափառների, հույն կաթոլիկների և հայ կաթոլիկների համար), երկրորդում՝ չորս տեղից երկուսը, որոնք նախատեսված էին հայ առաքելական համայնքի և սուննի համայքնի համար և երրորդում «Մուսթակբալ» շարժումը ստացավ բոլոր 10 տեղերը (5 սուննիների, մեկական շիաների, դրուզների, հույն ուղղափառների, ասորիների և ղպտիների համար նախատեսված): Բացի այդ՝ «Մարտի 14–ի» դաշինքի հաղթանակը բավական ակնհայտ էր նաև Ռաշիյա ընտրատարածքում՝ Բեքաայի հովտի արևմտյան հատվածը, որտեղ բնակվում են ուղղափառներ, մարոնիներ, դրուզներ, սուննիներ և շիաներ: Այստեղ այն գրավեց բոլոր 6 տեղերը[43]:

«Մարտի 8–ի» դաշինքը հաղթանակ տարավ Բաալբեքի ընտրատարածքում (10 տեղ), որտեղ բնակչության հիմնական մասը շիաներ են, ապրում են նաև հույն կաթոլիկներ և մարոնիներ: «Մարտի 14–ի» ուժերին չհաջողվեց հաջողության հասնել Լեռնային Լիբանանի մի քանի ընտրատարածքներում: Դա վերաբերում էր առաջին հերթին Բաաբդայի ընտրատարածքին (3 տեղ մարոնի, 1՝ դրուզ և 2՝ շիա). այստեղ բացարձակ հաղթանակ տարավ «Մարտի 8–ի» դաշինքը: Ալեյում մարոնիներին պատկանող 2 տեղը ստացավ Սաադ Հարիրիի դաշինքը, մյուս 2 տեղն էլ, որ նախատեսված էր դրուզների համար, կիսեցին «Մարտի 8–ի» և «Մարտի 14–ի» դաշինքները:

[43] Նույն տեղում:

«Մարտի 14–ի» դաշինքը կարողացավ հաղթանակ տանել Շուֆի շրջանում, որտեղ առաջադրվել էր Վալիդ Ջումբլաթը: Հարիրիի ղեկավարած դաշինքը հարաբերական հաջողության հասավ նաև Մեթնի շրջանում, որտեղ բնակչության կազմը հետևյալն է՝ մարոնիներ, ուղղափառներ, հույն կաթոլիկներ և հայ առաքելականներ՝ դաշինք կազմելով «անկախների» հետ:

«Մարտի 8–ի» դաշինքը հաղթանակ տարավ բացարձակ մարոնիական Քեսրուանի շրջանում, որտեղ առաջադրվել էր հենց Միշել Աունը:

Ընդհանուր առմամբ Լիբանանի հարավն իր շիական բնակչությամբ հիմնականում ձայները տվեց «Մարտի 8–ի» դաշինքին: «Հիզբալլահի» ընտրությունը գրեթե համընդհանուր էր Տիրի շրջանում (չորս տեղ, որոնք նախատեսված էին շիաների համար): Իհարկե, Հարիրիի և Սինիորայի հաղթանակը Սայդայում (սուննի համայնքի համար նախատեսված երկու տեղով) մեծապես կանխատեսելի էր: Սակայն «Մարտի 8–ի» դաշինքը հաղթանակ տարավ Նաբաթիայի շրջանում (3 շիա), ինչպես նաև Զահրանի շրջանում (շիաների համար նախատեսված 2 տեղ), որտեղ հաղթանակ տարավ ոչ միայն «Հիզբալլահի» ներկայացուցիչը, այլ նաև «Ամալ» շիական շարժման ղեկավար Նաբիհ Բերրին, ով նախընտրական վերջին փուլում, այնուամենայնիվ, վերջնականապես միացավ «Հիզբալլահի» դաշինքին: Վերջապես Լիբանանի հարավի ընտրատարածքներից վերջինում՝ Մարջայուն–Հասբայայում (հույն ուղղափառ–շիական–դրուզական–սուննիական)՝ 5 տեղ, որից 2–ը նախատեսված է շիաների համար[44], ընտրողների ձայներն ամբողջությամբ բաժանվեցին՝ ելնելով քաղաքական–կրոնադավանական սկզբունքից: Այստեղ «Հիզբալլահը» հաղթանակ տարավ շիական միջավայրում, իսկ «Մարտի 14–ի» դաշինքը՝ հույն ուղղափառ, դրուզական և սուննիական համայնքներում:

Լիբանանի հյուսիսում Հարիրիի կողմնակիցները կարողացան հաջողության հասնել Մինե–Դինիե սուննիական շրջանում (այն ընկած է Զղորթայի, Տրիպոլիի և Աքքարի միջև): Այս շրջանից ընտրվեցին երեք սուննի պատգամավորներ: Սակայն նրանք չկարողացան հաղթանակ տանել մարոնիական Զղորթայում (երեք տեղ, որ հատկացված էր մարոնիական համայնքի համար): Այստեղ հաղթանակ տարավ Սուլեյման Ֆրանժիեն և նրա ղեկավարած «Մարադդա» շարժումը:

Հաղթանակ տանելուց հետո Ս. Ֆրանժիեն, ով «Մարտի 8–ի»

[44] Նույն տեղում:

դաշինքի ղեկավարներից էր, անցյալում սիրիական քաղաքականության ակտիվ աջակիցներից Լիբանանում, հայտարարեց «լիբանանյան համընդհանուր փոխըմբռնման հասնելու և երկրի ներքին կայունության և ժողովրդավարության գործում համագործակցելու անհրաժեշտության մասին», ինչպես նաև «երկրի ներքին գործերին արտաքին միջամտության անթույլատրելիության մասին»: Նաբիհ Բերրին ևս ընտրությունների պաշտոնական արդյունքների հրատարակումից հետո կոչ արեց ընդդիմությանն աջակցելու մեծամասնությանը «Լիբանանում բոլոր կրոնադավանական խմբերի և քաղաքական կուսակցությունների համար միասնական պետություն կառուցելու գործում», ինչպես նաև նոր գումարվելիք խորհրդարանում կոալիցիոն հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության մասին[45]:

***

Ընտրությունների պաշտոնական արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ԱՄՆ նախագահը լիբանանյան ժողովրդին շնորհավորեց «ընտրարշավի խաղաղ ավարտի կապակցությամբ» և հայտարարեց, որ իր երկիրը հետագայում ևս կշարունակի աջակցություն ցուցաբերել Լիբանանին: Նախագահ Մ. Սուլեյմանին ուղղված նամակում Բարաք Օբաման մասնավորապես նշում էր. «Մենք հետագայում ևս կշարունակենք աջակցություն ցուցաբերել ազատ և անկախ Լիբանանին»: Նրանում ԱՄՆ նախագահը հույս էր հայտնում, որ լիբանանյան ապագա կառավարությունը կդառնար ժողովրդի կառավարությունը, որ այն կհիմնվեր համաձայնության վրա, կհարգեր բոլոր համայնքների իրավունքները և կգործեր փոխզիջումների հիմքի վրա, որ այն կվարեր քաղաքական ուղեգիծ, որը հիմնված կլիներ օրինական ինստիտուտների վրա, այլ ոչ թե՝ նեղ համայնքային և կուսակցական շահերի»[46]: Սա անկասկած կարևոր դիրքորոշում էր, որը հաշվի էր առնում այն իրողությունը, որ ընտրությունների արդյունքում լիբանանյան խորհրդարան անցած ուժերից որևէ մեկը չկարողացավ էական մեծամասնություն դառնալ:

Ընտրությունների արդյունքներն ի ցույց դրեցին այն իրողությունը, որ լիբանանյան հասարակությունը բաժանված է երկու

[45] "Hassan Sherbel, Victory and It's Price", http://www.allied–media.com/Arab–American/al_hayat.htm, 09.06.2009.

[46] Randa Takiddi, "Lebanon after the Elections", http://www.allied–media.com/Arab–American/al_hayat.htm, 10.06.2009.

գրեթե հավասար հատվածների: Հետընտրական շրջանում հաղթանակած «Մարտի 14–ի» դաշինքի ղեկավարը նախագահ Միշել Սուլեյմանի հանձնարարությամբ ստանձնեց նոր կառավարության կազմավորման գործընթացը:

Նոր վարչապետի թեկնածության շուրջ առկա էին հակասություններ: Սաադ Հարիրիի թեկնածության հարցում համաձայնություն ձեռք բերված չէր նույնիսկ ԱՄՆ–ի, Ֆրանսիայի և Հարիրիի ավանդական, հիմնական քաղաքական և ֆինանսական հովանավոր Սաուդյան Արաբիայի միջև[47]:

Հունիսի 21–ին խորհրդարանը պետք է հաստատեր վարչապետի թեկնածությունը, ով խորհրդակցություններ էր սկսելու նոր կառավարության կազմավորման նպատակով: Հետընտրական փուլում ԱՄՆ կոնգրեսական Ջ. Քերրին գտնում էր, որ վարչապետի պաշտոնը պետք է զբաղեցներ ոչ Սաադ Հարիրին: Նշենք, որ ամերիկացիները ցանկանում էին նպաստել ամուր «կենտրոնամետ» դաշինքի կազմավորմանը, որում նախատեսում էին տեսնել նաև խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրիին: Որպես փոխզիջումային տարբերակ՝ քննարկվում էր նաև սուննի Նաջիբ Միկաթիի թեկնածությունը: Մի շարք բարձրաստիճան ամերիկացի պաշտոնյաներ (Հ. Քլինթոնը, Դ. Բայդենը) ընտրություններից առաջ Լիբանան իրենց այցելության ընթացքում ոչ միանշանակորեն աջակցություն հայտնեցին «Մարտի 14–ի» դաշինքին: Պատահական չէր, որ ընտրություններից հետո ամերիկյան դիտորդական առաքելության ղեկավար Ջ. Քարթերը հայտարարեց «կոպիտ խախտումների բացակայության մասին»[48]:

ԱՄՆ ակտիվորեն խաղարկում էր «լիբանանյան խաղաքարտը» և մասնակցում էր նոր կառավարության կազմավորմանը: Նրանք այդ հարցում ակտիվորեն աշխատում էին ինչպես սիրիացիների, այնպես էլ իրանցիների հետ (միջնորդավորված):

Սաադ Հարիրին ևս պատրաստ էր զիջումների: Նա հայտարարեց, որ նոր կառավարությունում նախարարական աթոռներից մեկը տրամադրվելու էր Միշել Աունի փեսային: Լիբանանում բոլոր քաղաքական ուժերը հասկանում էին, որ առանց փոխզիջումների հնարավոր չէր լինի նաև խորհրդարանում անցկացնել կարևորագույն օրինագծերը՝ չապահովելով ձայների երկու երրորդը:

Դեռևս հստակեցված չէր, թե ընդդիմությանը որքան նախա-

[47] Е. Кирсанов, “План С. Харири по формированию правительства Ливана”, http://www.iimes.ru/rus/frame_stat.html

[48] “International Observers Praise Lebanon’s “Peaceful” Elections”, by Nicholas Kimbrell, www.dailystar.com.lb, 09.06.2009

րարական պաշտոններ էին տրվելու: Նաբիհ Բերրիի, «Հիզբալլահի» և Միշել Աունի հետ խորհրդակցությունները ցույց տվեցին, որ նրանց հարաբերություններում նկատվում էր որոշակի լարվածություն: Ամենաշահեկան վիճակում Նաբիհ Բերրին էր և նրա ղեկավարած «Ամալ» շարժումը: Վերջինս պահպանում էր խորհրդարանի խոսնակի պաշտոնը, իսկ նրա ղեկավարած շարժումը կարող էր ստանալ երեք նախարարական աթոռ: Հաշվի էր առնվում, որ Բերրիի շարժումը Ջումբլաթի կուսակցության հետ միասին կարևոր դեր էր խաղում «կենտրոնամետ» մարտունակ ուժ ձևավորելու հարցում, առանց որի որևէ լիբանանյան կառավարություն կենսունակ չէր կարող լինել: «Հիզբալլահը» զգալիորեն «չափավոր» դիրքերից էր հանդես գալիս՝ պահանջելով ընդդիմությանը հատկացնել նախարարական տեղերի մեկ երրորդը, այսինքն պահպանել ընտրություններից առաջ իրեն պատկանող աթոռները[49]: «Հիզբալլահի» պահանջներն ավելի իրատեսական էին դառնում՝ կախված Իրանում ընթացող զարգացումներից, որտեղ նախագահական ընտրությունների արդյունքների նկատմամբ առկա էր անվստահություն: Կրճատվել էր «Հիզբալլահին» ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը: Ընտրություններին նախորդած երկու ամիսների ընթացքում կազմակերպությունը Թեհրանից գրեթե որևէ օժանդակություն չէր ստացել: Անկասկած պատճառն իրանական պետական կառույցներում ընթացող փոփոխություններն էին:

«Հիզբալլահի» մյուս կարևոր գործընկերը՝ Սիրիան ևս այդ շրջանում ավելի շատ անհանգստացած էր ԱՄՆ–ի հետ իր հարաբերություններով և Իսրայելի հետ խաղաղ բանակցությունների սկսմամբ, քան Լիբանանում իր դիրքերի վերահաստատմամբ:

Նշենք, որ սիրիացիները չէին խառնվում Լիբանանում նախընտրական զարգացումներին: Այդ շրջանում նրանք զբաղված էին նաև Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացմամբ, ինչն արտահայտվեց սիրիաթուրքական համատեղ զորավարժանքների իրականացմամբ: Վերլուծաբանների կարծիքով՝ Բաշար Ալ–Ասադը Լիբանանում ընտրական գործընթացի շրջանում ձեռնամուխ եղավ ավելի գլոբալ ծրագրերի իրականացմանը՝ Թուրքիայի հետ ռազմավարական միության կազմավորում և Մերձավոր Արևելքում նոր «ուժային կենտրոնի» ստեղծում: Այսպիսի քաղաքական միությունն ուներ նաև տնտեսական շարժա-

[49] "Nasrallah Accepts Election Results, Calls for "Solidarity", by Therese Sfeir, www.dailystar.com.lb, 09.06.2009.

ռիթներ: Ավելի ուշ սիրիացիներն ակնկալում էին նաև այս դաշինքի միջոցով առաջխաղացում Իսրայելի հետ բանակցային գործընթացում: Բացի այդ՝ Բաշար Ալ–Ասադը, ով խոստացել էր սաուդցիներին ակտիվորեն չմիջամտել լիբանանյան իրադարձություններին, հավատարիմ էր իր խոստմանը: Այդ շրջանում եվրոպական իր շրջագայության ընթացքում Բաշար Ալ–Ասադը բազմիցս շեշտեց, որ «անընդունելի էր լիբանանյան գործերին արտաքին որևէ միջամտություն»՝ ի նկատի ունենալով Իրանին[50]: Վերջինիս ավելի ակտիվորեն ներգրավումը հարևան Լիբանանի գործերում նույնիսկ դիրքորոշումների նման լինելու պարագայում այնքան էլ ցանակալի չէր Սիրիայի համար:

Լիբանանյան ֆրանսալեզու "L'Orient–Le Jour" պարբերականը ևս ընտրություններից հետո գրեց, որ նախընտրական արշավի ընթացքում, ինչպես նաև ընտրությունների օրը, Սիրիան «որևէ կերպ չփորձեց աջակցություն ցույց տալ «Մարտի 8–ի» դաշինքին Տրիպոլիում, Աքքարում, ինչպես նաև թույլ չտվեց Լիբանանում հաստատված սիրիացիներին մասնակցել խորհրդարանական ընտրություններին»[51]:

Սաադ Հարիրին նախատեսում էր 15 կան 16 նախարարական աթոռներ տրամադրել իր համախոհներին (նրանցից երկուսն արդեն հատկացվել էին Ջումբլաթի կուսակցությանը), իսկ 9–ը կամ 10–ը հատկացվելու էին ընդդիմությանը (2–3–ը՝ «Ամալին», 1 աթոռ կհատկացվեր դրուզական համայնքում Ջումբլաթի հիմնական հակառակորդ Արսլանին, 1 կամ երկու աթոռ էլ կհատկացվեր «Հիզբալլահին»): Բացի քանակական բաշխումից՝ կարևոր էր նաև, լիբանանյան սահմանադրության համաձայն, բաշխումն՝ ըստ կրոնադավանական պատկանելության:

Այս իրավիճակում Հարիրին նախագահ Միշել Սուլեյմանին առաջարկեց կառավարության իր հինգ տեղերը հատկացնել այսպես կոչված «անկախ» նախարարներին, որի նպատակն էր ուժեղացնել նախագահի դերը՝ որպես կայունության և անկողմնակալության երաշխավորի: Այս քայլի արդյունքում ընդդիմությունը (ավելի ճիշտ Միշել Աունն ու «Հիզբալլահը») զրկվում էր 3–ից 5 աթոռներից: Բացի այդ՝ սահմադրության համաձայն՝ կրոնադավանական հավասարակշռությունը պահելու նպատակով Հարիրին կամ նախագահ Միշել Սուլեյմանը կարող էին նախարարական պաշտոններին առաջադրել «իրենց»

[50] Е. Кирсанов, "Ливан: выборы прошли. Что дальше?", http://www.iimes.ru/rus/stat/2009/09–06–09b.htm

[51] "L'Orient–Le Jour", 10.06.2009.

շիաներին, իսկ քրիստոնյա նախարարներ նշանակել հույն ուղղափառ համայնքից[52]:

Նոր կառավարության առաջնահերթ նպատակներից Հարիրին համարում էր երկրի անկախության ամրապնդումն ու անվտանգության ապահովումը, ինչպես նաև բանակի ուժեղացումը՝ որպես միակ ուժ, որը կարող էր երկիրը հեռու պահել կենտրոնախույս ձգտումներից: Նա լուրջ մտահոգություն ուներ, որ տվյալ փուլում իրանական վերնախավում առկա խնդիրների պայմաններում, Թեհրանը կարող էր «Հիզբալլահին» հրահրել Լիբանանի իշխող դաշինքի հետ զինված հակամարտության: Լիբանանում այդպիսի հնարավոր զարգացումը Հարիրիի գնահատմամբ Իրանի նախագահը կարող էր օգտագործել «արտաքին սպառնալիքների» առջև ազգը համախմբելու նպատակով[53]:

Լիբանանյան բանակի ուժեղացման գործում Սաադ Հարիրին նպատակ ուներ լրջորեն համագործակցելու ԱՄՆ–ի և Ռուսաստանի հետ, թեև ամերիկացիների հետ զենքի տրամադրման բանակցություններն այդ փուլում արդյունավետ չէին: Վաշինգտոնն այնքան էլ հակված չէր նորագույն զինտեխնիկա տրամադրելու Լիբանանին, քանի որ որոշակի երկյուղ ուներ, որ այն կարող էր հայտնվել «Հիզբալլահի» մարտիկների ձեռքում: Այս հարցում էական օգնություն կարող էր ցույց տալ Ռուսաստանը, որի հետ հարաբերությունների արդյունավետ զարգացումը Սաադ Հարիրին համարում էր նոր կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Այդ հարաբերություններն ընդգրկելու էին ոչ միայն ռազմական, այլ նաև տնտեսական և ֆինանսական ոլորտները[54]: Ռուսաստանի համար սա ևս կարող էր շահավետ լինել: Այն կարող էր Լիբանանը որպես «կամուրջ» օգտագործել Ծոցի արաբական երկրների հետ հարաբերությունները զարգացնելու գործում:

«Հունիսի 7–ի ընտրությունները ցույց տվեցին, որ լիբանանցիները կողմ էին միասնական պետության, ժողովրդավարական և բաց քաղաքական ուղեգծի շարունակմանը», – իր ուղերձում նշեց Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆ.–Վ. Շտայնմայերը: Երկրի հիմնական քաղաքական ուժերը համագործակցության պատրաստակամություն հայտնեցին: «Դա դրական նշան

[52] "Sleiman Urges All Parties to Join Reform Drive After March 14 Victory", by Therese Sfeir, www.dailystar.com.lb, 09.06.2009

[53] Е. Кирсанов, "План С. Харири по формированию правительства Ливана", http://www.iimes.ru/rus/frame_stat.html

[54] Նույն տեղում:

է ոչ միայն Լիբանանի, այլ նաև ընդհանուր առմամբ տարածաշրջանի համար»[55]:

«ԱՄՆ–ն «Հիզբալլահը» ներառել է ահաբեկչական կազմակերպությունների ցանկում, իսկ ԵՄ ձեռնպահ է մնացել այդ քայլից: Իմ խորին համոզմամբ Եվրոպական Միության դիրքորոշումն ավելի խելամիտ է»,– իր հարցազրույցում նշեց Մերձավոր Արևելքում արաբական երկրների հետ կապերի խորհրդարանական խմբի անդամ Գերմանիայի Քրիստոնյա դեմոկրատական կուսակցությունը ներկայացնող Յոահիմ Հերստերն[56]: Վերջինս ընդգծեց նաև, որ «Հիզբալլահը» իշխանության կարևոր գործոն է Լիբանանում: Նա շեշտեց, որ իր համար ընդունելի չէ «Հիզբալլահի» ահաբեկչական գործունեությունը, սակայն այն «արդեն վաղուց Լիբանանի քաղաքական և սոցիալական կարևոր բաղադրիչներից է, որի հետ չի կարելի հաշվի չնստել»[57]:

***

2009 թ. հունիսի 7–ին Լիբանանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում լիբանանահայ քաղաքական ուժերն ունեին հետևյալ կողմնորոշումը. ՌԱԿ–ը և ՍԴՀԿ–ն համագործակցում էին «Մուսթակբալ» շարժման, «Լիբանանյան ուժերի» և «Քաթաիբ» կուսակցության հետ: Մինչդեռ ՀՅԴ–ն համագործակցում էր «Մարտի 8–ի» դաշինքի հետ[58]:

Ընտրություններից առաջ հայտնի էր, որ լիբանանահայերի ձայները պետք է որոշիչ լինեին ընտրություններում: “The New York Times” պարբերականը մայիսի 26–ի համարում գրեց, որ լիբանանահայ համայնքը կարևոր գործոն էր ընտրություններում, ինչը կապված էր ՀՅԴ–ի ձայների հետ[59]:

Ընտրություններից ամիսներ առաջ ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեն սկսեց իր նախընտրական գործունեությունը, որն իրականացվում էր մի քանի ուղղություններով: Նախ նպատակ էր դրված ապահովել Լիբանանից արտագաղթած հայերի ձայները: Այդ նպատակով ՀՅԴ–ն ԱՄՆ գործուղեց իր պատգամավորներից մեկին: Հայերը, որոնք տասնյակ տարիներ լքել

[55] И. Берг, “Выборы в Ливане: оценки немецких политиков и европейских СМИ”, http://www.iimes.ru/rus/frame_stat.html

[56] “Das Parlament”, N 21, 18.05.2009.

[57] “Financial Times Deutschland”, 09.06.2009

[58] Յակոբ Վարդիվառեան, «Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններն ու լիբանանահայ գաղութը», «Ազգ», #106, 10.06.2009:

[59] http://www.nytimes.com/, 26.05.2009

էին իրենց ծննդավայրը, հնարավորություն ստացան անվճար այցելելու Լիբանան: Այդ ընթացքում փակվում էին Լիբանանում նրանց կեցության ծախսերը[60]:

Հետաքրքրական էր այն փաստը, որ ԱՄՆ–ի՝ լիբանանյան ծագում ունեցող հայ քաղաքացիները պետք է մեկնեին Լիբանան՝ քվեարկելու «Հիզբալլահի» օգտին, որը ներառված է ԱՄՆ–ի հրապարակած ահաբեկչական կազմակերպությունների շարքում: Մյուս կողմից ՀՅԴ–ն առաջ քաշեց խորհրդարանում «Հայկական պատգամավորական» դաշինք ստեղծելու գաղափարը, որը փաստորեն գլխավորելու էր հենց ինքը[61]: Հրավեր ուղղարկվեց նաև մյուս երկու կուսակցություններին: Սակայն նրանք ձեռնպահ մնացին այդ առաջարկին միանալուց և հրաժարվեցին այդ դաշինքի մաս կազմելուց[62]:

2000 թ. նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի նախաձեռնությամբ փոփոխություն տեղի ունեցավ գոյություն ունեցող ընտրական համակարգում: Հայ ավանդական երեք կուսակցություններն էլ՝ ՀՅԴ, ՌԱԿ և ՍԴՀԿ, մասնակցեցին խորհրդարանական ընտրություններին: Արդյունքում երեքն էլ տեղ գրավեցին խորհրդարանում: Այսպիսով՝ վերացավ «Հայկական դաշինք» հասկացությունը, թեև «Դաշնակցությունն» իր երկու պատգամավորներով շարունակում էր պնդել, որ ներկայացնում է «Հայկական դաշինքը»: Նույն իրավիճակն էր նաև 2005 թ. խորհրդարանական ընտրություններում[63]:

Նախընտրական շրջանում դաշնակցությունը խստորեն քննադատում էր ՍԴՀԿ–ին և ՌԱԿ–ին[64]: Ընտրությունների արդյունքներից պարզ դարձավ, որ Բեյրութի Բ. ընտրաշրջանից

[60] Յակոբ Վարդիվառեան, «Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններն ու լիբանանահայ գաղութը», «Ազգ», #106, 10.06.2009:

[61] Zaven Messerlian, Armenian Participation in the Lebanese Legislative Elections During the Presidency of Michel Suleiman (2008), Հայկազեան հայագիտական հանդէս, Հ. Լ. Ա., Պէյրութ, 2011, էջ 365: Լիբանանյան տարբեր խորհրդարանական ընտրություններին հայերի մասնակցության մասին տես նաև Zaven Messerlian, Armenian Participation in the Lebanese Legislative Elections During the Presidency of Camille Chamoun /1952–1958/, Հայկազեան հայագիտական հանդէս, ՀԳ., Պէյրութ, 2003, էջ 259–310:

[62] Հարցազրույց ՌԱԿ կենտրոնական վարչության նախկին ատենապետ, ՌԱԿ Լիբանանի մասնաճյուղի ղեկավարներից, Թեքեյան մշակութային միության՝ հիմնադիրների մարմնի փոխատենապետ Հակոբ Գասարճյանի հետ, «Ազգ», # 141, 29.07.2009:

[63] Նույն տեղում:

[64] Համո Մոսկոֆյան, «Լիբանանում խորհրդարանական ընտրությունների պայքարը նախերգանքից անցավ գործնական բանակցությունների ու միտինգների», «Ազգ», # 50, 21.03.2009:

Դոհայի համաձայնությամբ, առանց ընտրապայքարի ընտրվեցին Սեպուհ Գալփաքյանը (ՍԴՀԿ) և Արթուր Նազարյանը, Բեյրութի Ա ընտրաշրջանից ընտրվեցին «Մարտի 14–ի» դաշինքի ներկայացուցիչներ Ժան Օղասափյանը (ՌԱԿ) և հայ կաթոլիկ համայնքը ներկայացնող Սերժ Թուրսարգիսյանը: Մեթնից (Լեռնալիբանան) առանց ընտրապայքարի ընտրվեց Հակոբ Բագրատունին (ՀՅԴ), Զահլեից՝ «Մարտի 14–ի» դաշինքի ներկայացուցիչ Շանթ Չինչինյանը: Այսպիսով՝ առաջիկա 4 տարիների ընթացքում երկրի խորհրդարանում հայ պատգամավորներից 4–ը «Մարտի 14–ի» դաշինքից էր, իսկ 2–ը՝ «Հիզբալլահի» գլխավորած ընդդիմությունից[65]:

***

Թեև Լիբանանում ընտրությունները վաղուց ավարտվել էին, սակայն նրանցում հաղթանակ տարած «Մարտի 14–ի» ուժերի ղեկավար Սաադ Հարիրիին անմիջապես չհաջողվեց կառավարություն ձևավորել[66]:

Չնայած Հարիրիի թեկնածության շուրջ առկա ներքին և արտաքին տարակարծություններին՝ այնուամենայնիվ վերջինս որոշեց անձամբ գլխավորել կառավարությունը: Այս պարագայում ընդդիմությունը ներկայացրեց կառավարության կազմի իր հնարավոր տարբերակ. Նաբիհ Բերրին գլխավորում էր Արտաքին գործերի նախարարությունը (այս հարցում Հարիրին առարկություններ չուներ), իսկ «Ամալը» պետք է ստանար ևս երկու նախարարական աթոռ: Ամենակարևորն ու սկզբունքայինն այն էր, որ «Հիզբալլահը» Աունի ներկայացուցիչների համար պահանջում էր հինգ աթոռ՝ ներառյալ երկու կարևոր՝ ներքին գործերի և կապի նախարարների պաշտոնները: Մեկ նախարարական աթոռ «Հիզբալլահը» թողնում էր իրեն, ընդհանուր ինն աթոռ: Վերոնշյալ երկու նախարարական պաշտոնները սկզբունքային էին, քանի որ կարևոր գործընթացները վերահսկելու հնարավորություն էին տալիս, այդ թվում նաև Ռաֆիկ Հարիրիի սպանության հարցով միջազգային դատարանի՝ իրեղեն «ապացույցների» ձեռք բերումը, որոնք, ինչպես հայտնի է, հիմնվում էին հիմնականում հեռախոսային խոսակցությունների գաղտնազերծման վրա: Հարիրին, բնականաբար, չհամաձայնվեց վերոնշյալի հետ՝ դա

[65] Այս մասին տես «Զարթօնք», Հունիսի 16, 2009, No. 47(19776):

[66] Е. Кирсанов, “Ливан: поле после боя принадлежит мародерам”, http://www.iimes.ru/rus/stat/2009/22–09–09a.htm

համարելով սկզբունքային հարց: Արդյունքը կառավարական երկարաժամկետ ճգնաժամն էր:

Այս իրավիճակից հնարավոր կլիներ խուսափել, եթե չլիներ Առաջադիմական սոցիալիստական կուսակցության ղեկավար Վալիդ Ջումբլաթի՝ օգոստոսի 2–ի հայտարարությունն այն մասին, որ նա դուրս էր գալիս հաղթանակ տարած դաշինքի և խորհրդարանական մեծամասնության կազմից: Ջումբլաթը քննադատեց Սաադ Հարիրիին և հանդես եկավ սիրիամետ հայտարարություններով: Հատուկ անդրադարձ կատարեց «Հիզբալլահին»՝ նշելով, որ «առանց այդ կուսակցության՝ Լիբանանի ապագան անհնար է»: Նա նույնիսկ իր որդուն հանձնարարեց մասնակցել «Հիզբալլահի» ցույցին, նաև հիշեց ավանդական արաբական հակաամերիկյան տրամադրություններն ու ընդգծեց իր հավատարմությունը «լենինյան գաղափարներին»[67]: Այդուհանդերձ Ջումբալթի «գործողությունները» համարժեքորեն չգնահատեց ընդդիմությունը: Դրան սառը վերաբերվեցին ինչպես «Հիզբալլահն», այնպես էլ Դամասկոսը:

Իրականում Ջումբլաթի Հարիրիի՝ դաշինքում ներգրավվելը պատահական չէր: Դրուզական ճակատում նրա հիմնական մրցակիցը երիտասարդ և ինքնավստահ Արսլանն էր, ով ներգրավվել էր ընդդիմության դաշինքում: Ջումբլաթի հեղինակությունն իր համայնքի ներսում գնալով ընկնում էր: 2008 թ. դեպքերը, երբ «Հիզբալլահը» առանց լուրջ դժվարությունների իր վերահսկողությունը հաստատեց Բեյրութի զգալի մասի նկատմամբ, իսկ Արսլանն իր ազդեցությունը հաստատեց դրուզական գյուղերի մեծ մասի նկատմամբ, խիստ ահաբեկեցին Ջումբլաթին: Նա հասկացավ, որ աստիճանաբար կորցնում էր դրուզների վերահսկման ֆինանսական հնարավորությունները և որոշում կայացրեց նոր հովանավորներ գտնելու մասին, ինչպիսիք էին Սաադ Հարիրին և նրա սաուդական գործընկերները: Արսլանն, իհարկե, չուներ նման ֆինանսական աղբյուրներ: Բացի այդ՝ Ջումբլաթի օգտին Շուֆի շրջանում քվեարկեցին ոչ միայն դրուզները, այլ նաև «Մարտի 14–ի» ուժերի այլ կողմնակիցներ ևս՝ 14 հազար քրիստոնյաներ և սուններ[68]:

Ջումբլաթն իր հայտարարությամբ ի ցույց դրեց, որ նոր կառավարության կազմավորման նկատմամբ իր չեզոքությունն ամբողջությամբ կախված էր ֆինանսական հովանավորությունից:

---

[67] "Hariri Takes Holiday as Efforts to Form Cabinet Stumble", by Elias Sakr, www.dailystar.com.lb, 05.08.2009

[68] Е. Кирсанов, "Ливан: поле после боя принадлежит мародерам", http://www.iimes.ru/rus/stat/2009/22–09–09a.htm

Արդեն սեպտեմբերի սկզբին Ջումբլաթին այցելեց Սաուդյան Արաբիայի Թագավորության պատվիրակությունը և բանակցությունների արդյունքում նա հայտարարեց, որ մնում էր խորհրդարանական մեծամասնության կազմում (և առարկություններ չուներ Սաադ Հարիրիի ձևավորած կառավարության նկատմամբ), սակայն չէր ներգրավվում «Մարտի 14–ի» դաշինքի կազմում[69], ինչը նրան հետագա սակարկությունների հնարավորություն էր ընձեռում:

Այս իրավիճակում Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը Հարիրիին կրկին հանձնարարեց կառավարության կազմավորումը սեպտեմբերի վերջին Ռիադի հետ խորհրդակցությունների անցակացումից հետո: Ի դեպ, Լիբանանի սահմանադրության համաձայն, Սաադ Հարիրին անսահմանափակ ժամանակահատված կարող էր զբաղվել կառավարության ձևավորմամբ: Երկար քաղաքական խորհրդակցություններից հետո միայն 2009 թ. նոյեմբերի 9–ին Սաադ Հարիրիին հաջողվեց կազմավորել իր կառավարությունը:

***

Լիբանանում ընտրություններից առաջ մերձեցում էր նկատվում Սիրիայի և Սաուդյան Արաբիայի միջև: Մասնավորապես նշվում էր Վալիդ Բեն Թալալի և նրա շրջապատի մասին, որոնք համարվում էին սիրիամետ ուժեր սաուդական թագավորի շրջապատում: Հենց նրանց դրդմամբ էր, որ Աբդալլահ թագավորը մերձեցման գնաց Դամասկոսի հետ: Վալիդ Բեն Թալալն, իրոք, հաճախակի հյուր էր Դամասկոսում և այնտեղ սաուդական ամենախոշոր ներդրողներից մեկն էր ու մտերիմ հարաբերություններ ուներ Բաշար Ալ–Ասադի հետ[70]:

Ռիադում գործում են երեք ազդեցիկ խմբավորումներ: Առաջին խումբը հարաբերական «ամերիկամետ» ուժերն են, որոնք կողմնակից են Սիրիայի և Իրանի նկատմամբ «կոշտ ուղեգծի» իրականացմանը: Այս դիրքորոշման ղեկավարներն են թագաժառանգներ Բանդարն ու Սուլթանը: Բանդարը անձնական հակասություններ ուներ նաև Դամասկոսի հետ, որոնք բացատրվում են այնտեղ նրա ֆինանսական անհաջող ծրագրերով:

Երկրորդ խումբն «ընդհանուր արաբական» քաղաքականու-

[69] Նույն տեղում:

[70] Abd Al–Rahman Al–Rashidi, “Hariri and the Sunni Leadership”, http://www.asharq–e.com, 10.06.2009

թյան կողմնակիցներն են, որոնք գտնում են, որ անհրաժեշտ է համախմբել ողջ արաբական ներուժն իրանական սպառնալիքի դեմ պայքարում: Այս գործիչներից էին Վ. Բեն Թալալը, Վ. Մունթալալը և այլոք:

Երրորդ խումբը ներառում է առավել արմատական իսլամական քաղաքականության կողմնակիցներին, որոնք հովանավորում են ահաբեկչական մի շարք կազմակերպությունների:

Բոլոր երեք խմբերին միավորում էր իրանական սպառնալիքն ու արաբական աշխարհը գլխավորելու ձգտումը՝ տնտեսական և քաղաքական առումով: Լիբանանում խորհրդարանական ընտրությունների շրջանում Սիրիայի հետ համաձայնությունը հնարավոր դարձավ ոչ միայն երկրորդ խմբի ակտիվ ջանքերի շնորհիվ[71]: Այստեղ շատ կարևոր էր նաև ամերիկյան մերձավորարևելյան նոր քաղաքականությունը, որը նախատեսում էր Սիրիային «հեռու պահել» Իրանից և այդ ճանապարհով հասնել մերձավորարևելյան խնդրի խաղաղ կարգավորմանը:

Նախընտրական փուլում սիրիասաուդական գործարքի շրջանակներում հետևյալ համաձայնությունն էր ձեռք բերվել. Դամասկոսը չէր խառնվում լիբանանյան ընտրություններին: Փոխարենը Լիբանանի վարչապետի պաշտոնը ստանձնելու էր չեզոք փոխզիջումային գործիչ, ով չէր խթանելու հակասիրիական տրամադրությունները և «մոռանալու» էր միջազգային դատարանի մասին, որը հետաքննում էր Ռաֆիկ Հարիրիի սպանությունը: Սիրիայի և Լիբանանի միջև հաստատվում և զարգանում էին դիվանագիտական հարաբերություններ, Իսրայելի գրաված տարածքների ազատագրման հարցում նրանք հանդես էին գալիս միասնական ճակատով: Փոխարենը սիրիացիները սառեցնում էին հարաբերությունները Իրանի հետ և թուլացնում էին «Հիզբալլահի» ակտիվությունը: Հետագայում սաուդցիները, սիրիական տնտեսության մեջ ներդրումներին զուգահեռ, ակտիվ դիվանագիտական շփումներ էին սկսում սիրիահիսրայելյան խաղաղ բանակցությունների ուղղությամբ, որի վերջնական արդյունքը պետք է լիներ բոլոր գրավված տարածքների վերադարձը Սիրիային և խաղաղության համաձայնագրի կնքումը[72]:

Սակայն Սաադ Հարիրիի՝ անձամբ վարչապետի պաշտոնը զբաղեցնելու որոշումը խախտեց ձեռք բերված պայմանավոր-

[71] Е. Кирсанов, “Ливанская ошибка короля Абдаллы”, http://www.iimes.ru/rus/stat/2009/23-09-09a.htm

[72] Tarik Al-Hamidi, “Lebanon and the Fail of Iranian Plan”, http://www.asharq-e.com, 09.06.2009

վածությունները: Նշենք նաև, որ սկզբում սաուդցիների և ամերիկացիների համար դա ևս անսպասելի էր: Սաադ Հարիրիին վարչապետի պաշտոնում նշանակելու Աբդալլահի համաձայնությունը լարվածություն առաջացրեց Դամասկոսում, և նման իրավիճակում վերջինս զիջումների չգնաց: Դամասկոսը Ս. Հարիրիին առաջարկեց ժամանել Սիրիա նոր կառավարության կազմը քննարկելու նպատակով: Բացի այդ, Սիրիայի անուղղակի դրդմամբ «Հիզբալլահը» սկսեց պահանջել նախարարական աթոռների ավելացում Հարիրիի համար ոչ ընդունելի տարբերակով, ակտիվություն սկսեց ցուցաբերել նաև գեներալ Միշել Աունը:

Տվյալ փուլում «Հիզբալլահի»՝ իշխանության գալը ձեռնտու չէր ոչ միայն Սաադ Հարիրիին, այլ նաև Իսրայելին, ԱՄՆ–ին և ԵՄ–ին: Դա նաև չէր բխում Սիրիայի շահերից, որը չէր ցանկանում արմատականության շատ վտանգավոր օջախ ունենալ իր սահմանների մոտ: Դա չէր ցանկանում նաև Իրանը՝ հասկանալով, որ այն կարող էր հանգեցնել Արևմուտքի ուղղակի միջամտությանը լիբանանյան գործերին: Հասկանալի է, որ և՛ Իրանը, և՛ Սիրիան «Հիզբալլահին» նախընտրում էին տեսնել միայն «կառավարելի» կարգավիճակում:

***

2010 թ. հոկտեմբերի 13–14–ի Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադի՝ Լիբանան այցի ընթացքում վերջինս կտրուկ քննադատեց Լիբանանի գործով Միջազգային դատարանի գործունեությունն, ու այն անվանեց «գործիք» արտաքին ուժերի ձեռքում, որն օգտագործվում էր երկրի ներքին գործերին միջամտելու նպատակով[73]:

Ահմադինեժադին ջերմորեն ընդունեցին Լիբանանի շիաները: Ելույթ ունենալով Բեյրութի հարավային՝ հիմնականում շիական արվարձաններում՝ նա իր զորակցությունը հայտնեց «Հիզբալլահին» և նրա ղեկավար Հասան Նասրալլահին և շեշտեց, որ հետագայում ևս Իրանը կշարունակի աջակցություն ցույց տալ կազմակերպությանն ու նրա համախոհներին: Իր ելույթի ընթացքում Իրանի նախագահը կրկին սպառնալիքներ հնչեցրեց Իսրայելի հասցեին և նրան մեղադրեց Լիբանանում սադրանքներ կազմակերպելու մեջ:

Այցի շրջանակներում Իրանի նախագահը հանդիպումներ

[73] Նույն տեղում:

ունեցավ Լիբանանի նախագահի, վարչապետի և խորհրդարանի նախագահի հետ: Երկու երկրների միջև ստորագրվեց 17 համաձայնագիր, որոնք վերաբերում էին տնտեսության տարբեր ոլորտներին, այդ թվում նաև էներգետիկ ոլորտին:

Այցի շրջանակներում կնքված համաձայնագրերից մեկի շրջանակներում Իրանը Լիբանանի կառավարությանը տրամադրելու էր 450 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ իր էներգետիկ ծրագրերի իրականացման համար: Լիբանանը կարիք ունի ավելի մեծ հզորությամբ էլեկտրակայանների, որոնք ի վիճակի կլինեն ապահովելու երկրի ավելացող սպառումը: Ներկայումս Լիբանանն արտադրում է 1,600 մեգավատ էլեկտրաէներգիա, մինչդեռ սպառումը կազմում է 2,400 մեգավատ[74]:

Երկրի էներգետիկ ոլորտի վերակառուցման համար նախատեսված ծրագրի արժեքը 5 միլիարդ ԱՄՆ դոլար է: Դրա շրջանակներում արդեն 2014 թ. Լիբանանը կարող է արտադրել 4,000 մեգավատ, իսկ արդեն 2015 թ.՝ 5,000 մեգավատ: Ծրագրի իրականացման համար կառավարությունը պետք է ներդնի 1,550 միլիարդ ԱՄՆ դոլար, 2,320 միլիարդ ԱՄՆ դոլար ներդնելու է մասնավոր ոլորտը, մնացած 1 միլիարդ ԱՄՆ դոլար նախատեսվում է ստանալ վարկերի և դոնորների կողմից[75]:

***

2009 թ. մարտի 1–ին հոլանդական Լեյշենդամ (Leischendam) բնակավայրում՝ Հաագայից ոչ հեռու, իր աշխատանքները սկսեց Լիբանանի գործով Հատուկ դատարանը: ՄԱԿ–ի հովանու ներքո գործող այդ դատարանը քննելու էր Լիբանանում կատարված հանցագործությունները, որոնք կապված էին ահաբեկչության հետ: Հատուկ դատարանի հիմնական խնդիրն էր բացահայտել և պատասխանատվության ենթարկել նախկին վարչապետ Ռ. Հարիրիի սպանության մեղավորներին[76]:

Լիբանանում սպանությունը քաղաքական նպատակների իրականացման բավական հաճախ կիրառվող միջոցներից է: Ռ. Հարիրիի սպանությունը նպաստեց «Մայրիների հեղափոխության» բռնկմանը: ՄԱԿ–ի ԱԽ թիվ 1595 բանաձևի համաձայն, որ

[74] "Ahmadiejad: Friends are Being Framed", by Ekias Sakr, http://www.dailystar.com.lb,14.09.2010

[75] "Lebanon and Iran Ink 17 Trade Agreements", http://www.dailystar.com.lb, 14.09.2010

[76] Նույն տեղում:

ընդունվեց 2005 թ. ապրիլի 7–ին՝ կազմավորվեց միջազգային անկախ հանձնաժողով, որը զբաղվելու էր Ռ. Հարիրիի սպանության հետաքննությամբ: Այն Լիբանանում ուներ կենտրոնական գրասենյակ, որի նպատակն էր աջակցություն ցույց տալ լիբանանյան իշխանություններին հետաքննության իրականացման գործընթացում (լիբանանցիների երկրի դատական մարմինների նկատմամբ անվստահության առկայության պայմաններում):

2005 թ. դեկտեմբերի 13–ին Լիբանանի կառավարությունը դիմեց ՄԱԿ–ին՝ խնդրելով «կազմավորել միջազգային դատարան՝ պատասխանատվության ենթարկելու բոլոր այն անձանց, որոնք մեղադրվում էին Ռ. Հարիրիի սպանության կազմակերպման մեջ»:

Միջազգային դատարանը կազմավորվեց ԱԽ 1757 բանաձևի համաձայն: Այն ստեղծելու որոշումն ուժի մեջ մտավ 2007 թ. հունիսի 10–ին: Նրա կանոնադրության համաձայն՝ Հատուկ դատարանն ու ազգային դատարաններն ունեին համարժեք իրավասություններ, սակայն Հատուկ դատարանն ուներ գերակայություն ազգայինի նկատմամբ: Կանոնադրության 2–րդ հոդվածում նշված էր, որ հանցագործության համար հետախուզման և պատժի համար կկիրառվեն Լիբանանի քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք վերաբերում են ահաբեկչական գործողություններին, հանցագործություններին և իրավախախտումներին, որոնք առնչվում են կյանքի և անձնական անձեռնմխելիության հետ, անօրինական զինված միավորումներին և հանցագործության մասին չտեղեկացնելուն, ինչպես նաև միջհամայնքային թշնամանք և քաղաքացիական պատերազմ հրահրելուն[77]: Բացի Հարիրիի սպանության քննությունից՝ դատարանը զբաղվելու էր նաև այլ ահաբեկչություններում ներգրավված անձանց գործերի քննությամբ, որոնք տեղի էին ունեցել Լիբանանում 2005 թ. փետրվարի 14–ից հետո: Քննության ընթացքում միջազգային քննչական խումբը վարկածներ առաջ քաշեց, որոնց համաձայն՝ Ռ. Հարիրիի սպանությունը կապված էր նրա քաղաքական գործունեության հետ (սակայն հանցագործության շարժառիթ կարող էր լինել նաև «կոռուպցիան և գումարների լվացումը»): Քննչական խմբի զեկույցներից մեկում ընդգծվում էր, որ ՄԱԿ–ի ԱԽ թիվ 1559 բանաձևը, որն ընդունվել էր 2004 թ., և որում նշված էր սիրիական զորքերի դուրս բերման և «Հիզբալլահի» զինաթափ-

[77] И. Мохова, “Открытие Специального трибунала по Ливану”, http://www.iimes.ru/rus/stat/2009/15–03–09.htm

ման անհրաժեշտության մասին (թեև բուն տեքստում խոսվում էր Լիբանանի ինքնիշխանության ապահովման և զինված խմբավորումների զինաթափման մասին՝ ի նկատի ունենալով «Հիզբալլահը»), ևս նպաստել էր երկրի նախկին վարչապետի սպանության նախապատրաստմանն ու իրականացմանը:

Գերմանացի դատախազ Դետլև Մեհլիսի գլխավորությամբ (հետաքննչական խմբի առաջին ղեկավարը) հետաքննության արդյունքում հարցաքննվեցին ավելի քան 500 վկաներ և կազմվեց 19 անձից կազմված կասկածյալների ցուցակ, իսկ հավաքված ապացույցները, ինչպես նշվում էր Մեհլիսի զեկույցում, վերաբերում էին ինչպես լիբանանյան, այնպես էլ սիրիական հատուկ ծառայությունների բարձրաստիճան պաշտոնյաներին: Հետաքննչական խմբի առաջին զեկույցներում նշվում էր Սիրիայի Արաբական Հանրապետության հետաքննությանը ոչ լիարժեք աջակցություն ցուցաբերելու մասին: ՋԼՄ–ներում Մեհլիսը նույնիսկ քննադատեց սիրիական իշխանություններին՝ հատուկ քարոզչական աշխատանք իրականցնելու համար, ինչի նպատակն էր վարկաբեկել հանձնախմբի գործունեությունը: Խմբի հաջորդ ղեկավար Ս. Բրամմերցը նշեց, որ Սիրիան հետաքննությանը ցուցաբերում էր «արդյունավետ աջակցություն»: Այդուհանդերձ հիմնական կասկածյալներին դեռևս մեղադրանք չէր առաջադրվել: Արդյունքում ձերբակալվել էին լիբանանցի չորս գեներալներ, որոնք պատասխանատու պաշտոններ էին զբաղեցնում երկրի անվտանգության համակարգում՝ սիրիական ռազմական ներկայության վերջին փուլում: Կասկածի տակ հայտնվեցին նաև “Liban Cell” բջջային ընկերության երկու ծառայողներ, որոնց անուններն, ինչպես գեներալներինը, չեն հրապարակվել:

2007 թ. հետաքննությունը գլխավորեց կանադացի դատավոր Դենիել Բելմարը, ով այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 2009 թ. փետրվարի 28–ը:

Հանձնաժողովի աշխատանքի ընթացքում հետաքննվել է ևս 20 գործ, որոնք կապված էին Լիբանանում քաղաքական սպանությունների հետ, որոնց արդյունքում, Բելմարի զեկույցի համաձայն, մահացել է 61 և վիրավորվել 494 մարդ:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա զեկույցում նշվում էր, որ ՍԱՀ–ի աջակցությունը հետաքննությանն ընդհանուր առմամբ բավարար էր, սակայն հանձնաժողովն իրավունք ուներ Սիրիայից պահանջելու «լիարժեք համագործակցություն»:

ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարի իրավական հարցերով տեղակալ Պատրիսիա Օ'Բրայենը Լիբանանի հարցով Միջազգային դատարանի բացման արարողության ընթացքում՝ 2009 թ. մարտի 1–ին, հայտարարեց, որ Դատարանի կազմավորումը «Լիբանանում քաղաքական հանցագործությունները և անպատժելիության մթնոլորտը կանխելու միջազգային հանրության գործունեության արդյունք էր»[78]: Հոլանդիայում Լիբանանի Հանրապետության դեսպան Զեյդան Զահիրի կարծիքով. «Միայն այդպիսի միջազգային կառույցը կարող է լիբանանցիների մոտ վերականգնել վստահությունը: Լիբանանցիները կրկին իրենց կզգան անվտանգ, իսկ հանցագործները կիմանան, որ նրանք չեն կարող խուսափել պատասխանատվությունից»: Իր անկախ դիրքորոշման մասին հայտարարեց Դ. Բելմարը: Նա մասնավորապես ընդգծեց, որ հետաքննությունը և դատական գործընթացը զերծ կլինեն քաղաքական ազդեցությունից և կիրականացվեն արդարադատության սկզբունքների համաձայն[79]:

Դատարանի կազմավորումից սկսած՝ 60 օրվա ընթացքում այն պետք է ստանար հետաքննության բոլոր արդյունքները և դատական նյութերի պատճենները, որոնք գտնվում էին լիբանանյան արդարադատության տրամադրության տակ: Այդպիսով գործը կփոխանցվեր Միջազգային դատարանին: Դատախազի կարծիքով՝ դատական գործընթացը կարող էր տևել 3–ից 5 տարի: Դատավորների քանակը 11 էր, որից 4 դատավոր ներկայացնում էին Լիբանանը: Դատավորների անունները գաղտնի էին պահվում՝ ճնշումներից խուսափելու նպատակով՝ ինչպես նաև անձնական անվտանգության ապահովման շարժառիթից ելնելով: Միջազգային դատարանի ծախսերը փակելու են Լիբանանի կառավարությունը (49 %) և տարբեր պետությունների ինքնակամ ներդրումները (51 %): Գումարի ընդհանուր քանակը կազմում է մոտավորապես 50 մլն ԱՄՆ դոլար: Դատարանի կազմավորման նախօրեին Ս. Հարիրին "Journal du dimanche" ֆրանսիական պարբերականին տված իր հարցազրույցում հայտարարեց, որ «դատարանը կնպաստի նոր Լիբանանի ծնունդին, որում քաղաքական գործիչների և լրագրողների սպանություններ տեղի չեն ունենա: Սա անպատժելիության վերջն է»[80]: Լիբանանյան իշխող մեծամասնությունն ակնկալում էր գործի արդարացի քննություն և պատրաստ էր

[78] Նույն տեղում:
[79] Նույն տեղում:
[80] Սաադ Հարիրի հարցազրույցի տեքստը տե՛ս "Journal du dimanche", 28.02.2009

ընդունելու յուրաքանչյուր դատավճիռ, որը կնդունի մրջազգային դատարանը:

Ինչ վերաբերում է Սիրիայի քննությանն աջակեցելուն, ապա դատարանի կազմավորման ընթացքում Բելմարը նշեց, որ Սիրիայի աջակցությունը մնում է բավարար: Այդ հայտարարությունը կապված էր ոչ այնքան իրական մեղավորներին հայտնաբերելու Սիրիայի ջանքերի հետ, որքան ի ցույց էր դնում, որ միջազգային հանրությունը ցանկանում էր երկխոսել Դամասկոսի հետ և թուլացնել սիրիական վարչակազմի մեկուսացումը, որը սերտ կապեր էր պաշտպանում Իրանի հետ:

Դատարանի կազմավորումը ԱՄՆ–ի և Ֆրանսիայի ջանքերի համատեղման արդյունք էր, պետություններ, որոնք էականորեն ազդում են Մերձավոր Արևելքում իրավիճակի զարգացման վրա: Ֆրանսիայի նախկին նախագահ Ժակ Շիրակը Ռաֆիկ Հարիրիի ընկերն էր և ակտիվորեն աջակցեց ինչպես 2004 թ. սիրիական զորքերի դուրս բերման մասին ՄԱԿ–ի ԱԽ որոշման ընդունմանը, այնպես էլ Հարիրիի սպանության գործով միջազգային հետաքննության իրականացմանը: Սիրիայի մեկուսացումը հարմար առիթ էր Ֆրանսիայի և ԱՄՆ–ի դիրքորոշումների մերձեցման համար:

Սակայն Մերձավոր Արևելքում քաղաքական իրավիճակի անընդհատ փոփոխությունը ստիպում էր հաշվի նստել Դամասկոսի կարծիքի հետ: Այդ պատճառով էլ դատարանի կազմավորման փուլում Ֆրանսիան սկսեց Սիրիայի հետ մերձեցման և հարաբերությունների վերականգնման գործընթացը: Ֆրանիսիայի նախկին նախագահ Ն. Սարկոզիի խոսքերով. «Այդ քաղաքականությունը միտված էր քայլ առ քայլ դեպի վստահության հարաբերությունները»: Փարիզը Սիրիայի նախագահին հավաստիացրեց, որ Միջազգային դատարանի կազմավորումը նպատակ չուներ ապակայունացնելու Սիրիան, այլ ուղղված էր մեղավորների հայտնաբերմանն ու նրանց նկատմամբ արդար դատավարության իրականացմանը և կոչված էր պաշտպանել Լիբանանի ինքնիշխանությունը[81]:

Նշված ժամանակահատվածում նման մոտեցում էր որդեգրել նաև Բարաք Օբամայի վարչակարգը, որը պատրաստակամ էր Դամասկոսի հետ երկխոսության և հարաբերությունների վերականգնման հարցում: Լիբանանի նախագահի հետ իր հեռախոսազրույցի ընթացքում Բ. Օբաման ընդգծեց, որ «Վաշինգտոնը

[81] И. Мохова, “Открытие Специального трибунала по Ливану”, http://www.iimes.ru/rus/stat/2009/15–03–09.htm

նախատեսում էր վերանայել իր քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, հատկապես Սիրիայի հետ հարաբերություններում»: ԱՄՆ–ի պետքարտուղարի մերձավորարևելյան հարցերով խորհրդականի պաշտոնակատար Դ. Ֆելտմանը դեռևս 2009 թ. մարտին Լիբանան իր այցելության ընթացքում նշեց, որ որևէ հակասություն չկա մի կողմից՝ Լիբանանին ամուր աջակցություն ցույց տալու, իսկ մյուս կողմից՝ խնդիրները Սիրիայի հետ երկխոսության միջոցով լուծել փորձելու գործում: Նա ընդգծեց, որ Սիրիան «կարող էր կարևոր և կառուցողական դեր խաղալ տարածաշրջանում»[82]:

Հաշվի առնելով Սիրիայի ոչ միանշանակ հարաբերությունները Փարիզի և Վաշինգտոնի հետ՝ Դամասկոսում գտնում էին, որ այդ Միջազգային դատարանը կարող էր Սիրիայի դեմ ճնշման յուրահատուկ գործիք դառնալ:

Ստեղծված պայմաններում լիբանանցիների մի մասը մտավախություն ուներ, որ Արևմուտքի հետ Սիրիայի հետնաբեմային հնարավոր պայմանավորվածությունները կարող էին կասեցնել դատարանի աշխատանքները, եթե ԱՄՆ–ի և Ֆրանսիայի համար մի շարք կարևոր հարցերում Դամասկոսը գնար իրական համագործակցության:

Լիբանանում Դատարանի աշխատանքների սկսման օրը «Մարտի 14–ի» դաշինքը կազմակերպեց հատուկ միջոցառում, որին մասնակցեցին հայտնի քաղաքական գործիչներ, պատգամավորներ և հասարակական գործիչներ, ինչպես նաև ցույց՝ ի աջակցություն միջազգային հանրության ջանքերի: Բեյրութում՝ Նահատակների հրապարակում, տեղադրվել էր հսկայական էկրան, որով Հոլանդիայից հեռարձակվում էր Միջազգային դատարանի բացման արարողությունը: Օրվա ընթացքում «Մայրիների հեղափոխության» բոլոր զոհերի գերեզմաններին դրվեցին ծաղիկներ և պսակներ:

Միջազգային դատարանի կազմավորման և նրա գործունեության վերաբերյալ վերաբերմունքը միանշանակ չէր լիբանանյան հասարակության ներսում: Թեև շատ լիբանանցիներ դատարանի կազմավորումը դիտում էին որպես արդարադատության հաղթանակ և մեղավորներին պատժի ենթարկելու հավանականության մեծացում, սակայն բնակչության մի հատվածը, որն առանձնապես «համակրանք» չէր տածում Արևմուտքի նկատմամբ, դատարանի կազմավորումը համարում էր Լիբանանի ներքին գործերին

[82] Նույն տեղում:

միջամտելու և լիբանանցիների ու սիրիացիների միջև հակասությունները սրելու հերթական փորձ:

«Մարտի 8–ի» շարժումը բազմիցս հրապարակայնորեն արտահայտել էր իր բացասական վերաբերմունքը Միջազգային դատարանի կազմավորման վերաբերյալ՝ նշելով, որ «դատարանը երբեք չի բացահայտի ճշմարտությունը»:

Այդ պատճառով էլ դատարանի աշխատանքները, որքան էլ որ դատախազ Բերմանը ցանկանար, չէին կարող ներլիբանանյան և ընդհանուր մերձավորարևելյան զարգացումների համատեքստից անջատ դիտարկվել: Դատական գործընթացը չէր կարող զերծ մնալ քաղաքականության ազդեցությունից, որում միահյուսվում էին ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային ուժերի շահերը:

Դատարանի շուրջ իրավիճակը հերթական անգամ ի ցույց դրեց Լիբանանի յուրահատկությունը. ներքին հակամարտության մեջ ներքաշված կողմերից յուրաքանչյուրն ուներ ուժեղ արտաքին հովանավորներ և միևնույն ժամանակ՝ երկրի ներսում էական սոցիալական հենարան: Լիբանանն, ինչպես միշտ, դարձել էր տարածաշրջանային սուր հակամարտության կենտրոն, որում բախվում էին մի կողմից՝ արևմտյան երկրների, մասնավորապես Ֆրանսիայի և ԱՄՆ–ի, իսկ մյուս կողմից՝ Սիրիայի և Իրանի, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի և այլ երկրների շահերը: Նման պայմաններում հազիվ թե հնարավոր լիներ խուսափել Միջազգային դատարանի գործունեության քաղաքականացումից:

Մինչև 2010 թ. ավարտը պետք է հրապարակվեին Միջազգային դատարանի նյութերը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ սաուդական «հակասիրիական» վերնախավը ցանկանում էր մինչև Աբդալլահ թագավորի վերադարձը, ով բուժման նպատակով գտնվում էր ԱՄՆ–ում, հրապարակել Սիրիայի դեմ առկա մեղադրանքները:

Դատարանի տվյալների համաձայն, որոնք ոչ պաշտոնապես հրապարակվեցին մամուլում, Ռաֆիկ Հարիրիի սպանությունը կազմակերպել էր «Հիզբալլահը»: Նրա անդամները ստեղծել էին ութ հոգուց բաղկացած խումբ: Այդ խմբի անդամներից մեկը գտնվել էր ահաբեկչության վայրին մոտ, որի մասին վկայում էր նրա բջջային հեռախոսազրույցների գաղտնազերծումը: Հեռախոսային խոսակցությունների շղթան տանում էր դեպի «Հիզբալլահ»[83]:

[83] Նույն տեղում:

Դատարանը պնդում էր, որ Ռ. Հարիրիի անձնական թիկնազորի ղեկավարը ևս ներգրավված էր նրա սպանության մեջ: Վերջինս սպանության օրը հիվանդության պատճառաբանությամբ չէր եղել նախկին վարչապետին ուղեկցող թիկնազորում: Ի դեպ նա դեռևս աշխատում էր Սաադ Հարիրիի հետ, ինչն ապացուցում էր, որ նրա դեմ, այնուամենայնիվ, ուղղակի ապացույցներ չկային:

Նշվում էր նաև, որ «Հիզբալլահի» դեմ մեղադրանքները «հայնաբերել էր» լիբանանյան ռազմական հետախուզության քննիչը, ով ևս հետագայում ակաբեկչության զոհ էր դարձել: Նույն ճակատագրին արժանացավ նաև նրա անմիջական ղեկավարը: Հարիրիի սպանության կազմակերպման ետևում կանգնած էր շատ լավ կազմակերպված ուժ: Կասկածյալների թվում էր նաև Իսրայելը[84]: Այն, անկասկած, շարժառիթներ ուներ կազմակերպելու Հարիրիի սպանությունը: Դրանով վերջինս կարող էր սրել հակասիրիական տրամադրությունները՝ խնդիրներ առաջացնելով «Հիզբալլահի» ու «Համասի» համար: Հետաքրքրական էր, որ 2009 թ. Լիբանանում ռազմական հետախուզությունը բացահայտեց երկրում գործունություն ծավալող իսրայելյան լրտեսական խումբ: Վերջինիս բացահայտման գործում զգալի ներդրում ունեցավ նաև «Հիզբալլահի» անվտանգության ծառայությունը[85]: Սակայն հնարավոր է նաև, որ սպանությունը կազմակերպած և իրականացրած լիներ այլ ուժ, սակայն դրա արդյունքներից օգտվեր մեկ ուրիշը:

Այս համատեքստում հետաքրքիր էր նաև Իսրայելի ռազմական հետախուզության նախկին ղեկավարի հայտարարությունն այն մասին, որ սպանությունն իրականացրել էր «Հիզբալլահի» ռազմական թեևի ղեկավարներից մեկը՝ Իմադ Մուղնիյան[86], ով դատարանի տվյալների համաձայն հիմնական կասկածյալներից էր:

Սպանության կազմակերպման մեջ կասկածվողների ցուցակը գլխավորում էր Սիրիան: Այս համատեքստում էր դիտարկվում նաև 2005 թ. հոկտեմբերի 12–ին Ղազի Քանաանի «ինքնասպանությունը», ով 1982–2002 Լիբանանում սիրիական հատուկ ծառայությունների ղեկավարն էր:

Բնական էր, որ «Հիզբալլահը» պայքարում էր Դատարանի տվյալների հրապարակման դեմ՝ սպառնալով սրել ներքաղաքական իրավիճակը: Առկա պայմաններում տվյալների հրապարակ-

[84] Ю. Щегловин, “Размышления об уликах в деле по убийству бывшего премьер–министра Ливана Р. Харири”, http://www.iimes.ru/rus/stat/2010/25–11–10a.htm

[85] Նույն տեղում:

[86] Վերջինս 2008 թ. փետրվարի 12–ին սպանվեց Դամասկոսում ավտոմեքենայի պայթյունի հետևանքով:

ման դեմ էին արտահայտվում նաև Սիրիան և Թուրքիան՝ փաստարկելով, որ դրանք կարող էին Լիբանանում իրավիճակի կրկին սրման պատճառ դառնալ:

2010 թ. դեկտեմբերի 23–ին երկրում ստեղծվել էր հերթական ճգնաժամային իրավիճակը: Նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով Միջազգային ռազմական դատարանը ժամանակավորապես դադարեցրել էր իր աշխատանքները: Այս մասին համաձայնություն էր ձեռք բերվել դեռևս երկրի վարչապետ Սաադ Հարիրիի և «Հիզբալլահ» կազմակերպության ղեկավար Հասան Նասրալլահի միջև: Դատարանի աշխատանքները դադարեցվել էին Սիրիայի և Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում: Ըստ շրջանառվող լուրերի՝ Հարիրին իր մերձավորների շրջապատում ասել էր, որ ստեղծված լարված իրավիճակում նա համաձայնվել էր դադարեցնել հոր սպանության քննությունն ու հետաձգել դատարանի եզրակացության հրապարակումը: Սակայն Հարիրին չէր պատրաստվում դիմել ՄԱԿ–ին Դատարանի աշխատանքներն ընդհանրապես դադարացնելու նպատակով: Վերջին ամիսներին «Հիզբալլահը» ակտիվորեն պայքարում էր այդ եզրակացության հրապարակման դեմ: Այդ էր պատճառը, որ Ս. Հարիրին ստիպված էր զիջումների գնալ այդ հարցում երկրում խաղաղության պահպանման նպատակով:

Հերթական քաղաքական ճգնաժամն առաջացրել էր տարածաշրջանի մի շարք պետությունների անհանգստությունը, որոնք երկյուղում էին դրա՝ զինված հակամարտության վերաճելու վտանգից: Այն իր հերթին կարող էր ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում: Ստեղծված իրավիճակում Թուրքիան, ելնելով տարածաշրջանային իր հավակնություններից, փորձեց հանդես գալ միջնորդի դերում: Ճգնաժամի արդյունքում 2011 թ. հունվարի 12–ին Սաադ Հարիրիի կառավարությունը ստիպված եղավ հրաժարական տալ այն բանից հետո, երբ կառավարության 11 անդամներ, որոնք ներկայացնում էին «Հիզբալլահի» շահերը, հրաժարական տվեցին: Այդ քայլը նրանք հիմնավորեցին ՄԱԿ–ի Հատուկ դատարանի եզրակացության հետ իրենց անհամաձայնությամբ[87]:

Հունվարի 13–ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ Թուր-

[87] И. Свистунова, “Об участии Турции в урегулировании политического кризиса в Ливане”, http://www.iimes.ru/rus/frame_stat.html

քիան շատ անհանգստացած է Լիբանանում իրավիճակի անկայունացմամբ, ինչը սպառնում է տարածաշրջանի խաղաղությանն ու անվտանգությանը: Այն բոլոր շահագրգիռ կողմերին կոչ արեց հանդես բերելու պատասխանատվություն և խուսափելու խնդրի քաղաքականացումից: Թուրքիայի ղեկավարությունը պատրաստակամ էր միանալ տարածաշրջանային և միջազգային ուժերի ջանքերին՝ ուղղված Լիբանանում իրավիճակի կայունացմանը:

Հրաժարականի հենց նույն օրը Սաադ Հարիրին ժամանեց Անկարա՝ երկրի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուի հետ հանդիպելու նպատակով: Հարիրիի, իր և «Հիզբալլահի» միջև առկա հակասությունների լուծմանը նպաստելու խնդրանքին ի պատասխան՝ Էրդողանն առաջարկեց կազմավորել հանձնախումբ՝ Լիբանանի, Թուրքիայի, ԱՄՆ–ի, Ֆրանսիայի, Հորդանանի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչների մասնակցությամբ, որը զբաղվելու էր լիբանանյան ճգնաժամի կարգավորման ուղիների մշակմամբ[88]:

Միջազգային խորհրդաժողովի կազմավորման գաղափարը հունվարի 17–ին զարգացրեց Ֆրանիսայի նախագահ Ն. Սարկոզին, ով առաջարկեց կազմավորել հանձնախումբ՝ Լիբանանի, Ֆրանսիայի, Թուրքիայի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի մասնակցությամբ, որի նպատակն էր կանխել հնարավոր քաղաքացիական պատերազմի բռնկումը Լիբանանում: Թուրքական ղեկավարության կոնկրետ քայլերից էր հունվարի 17–ին Դամասկոսում Քաթարի հետ միասին Լիբանանի հարցով խորհրդակցությունների անցկացումը, որին մասնակցեցին Սիրիայի նախագահ Բաշար Ալ–Ասադը, Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը, Քաթարի վարչապետ և արտաքին գործերի նախարար շեյխ Համադա Բեն Ջասեմ Ալ–Թանին: Հաջորդ օրը Բեյրութ ժամանեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն, ով Քաթարի արտաքին գործերի նախարարի հետ բանակցություններ վարեց Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանի և նախկին վարչապետ Սաադ Հարիրիի, խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրիի և «Հիզբալլահի» գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահի հետ[89]:

Բեյրութում լրագրողների հետ հանդիպման ընթացքում Դավութօղլուն հայտարարեց, որ հակամարտության կողմերը ցան-

[88] Նույն տեղում:
[89] Նույն տեղում:

կություն էին հայտնել բանակցություններ վարելու հակասությունների կարգավորման նպատակով:

Սակայն երկօրյա ակտիվ բանակցություններն արդյունք չտվեցին և կողմերը չկարողացան փոխզիջման հասնել: Արդյունքում Թուրքիայի և Քաթարի արտաքին գործերի նախարարները ստիպված եղան ձեռնունայն վերադառնալ տուն, ինչպես ավելի վաղ դա արել էին Սիրիայի և Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչները:

Հունվարի 19–ին Էրդողանն Իրանի նախագահ Մ. Ահմադինեժադի հետ հեռախոսային զրույցի ընթացքում վերջինիս բանակցություններ վարելու կոչ արեց լիբանանյան հակամարտող կողմերի հետ՝ ճգնաժամը քաղաքական ճանապարհով լուծելու նպատակով: Իրանի ազդեցությունը լիբանանյան շիաների շրջանում կարող էր արդյունավետորեն ամբողջացնել Անկարայի միջնորդական ջանքերը:

Իրեն համարելով մերձավորարևելյան առաջատար պետություններից մեկը՝ Թուրքիան ակտիվորեն միջնորդի դեր էր ստանձնում տարածաշրջանային հակամարտություններում: Թեև այդ միջնորդական առաքելություններից ոչ բոլորն էին հաջողությամբ պսակվում, սակայն փաստ էր, որ նրա ակտիվությունը նպաստում էր վերջինիս միջազգային հեղինակության բարձրացմանը՝ անկախ դրա արդյունավետությունից: Դրա ապացույցն էր, օրինակ, այն փաստը, որ Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին, ով կառավարական ճգնաժամի բռնկման պահին ԱՄՆ–ում էր գտնվում պաշտոնական այցով, մինչ Լիբանան վերադարձը ժամանեց Անկարա միջնորդության խնդրանքով:

***

Լիբանանում շարունակվող քաղաքական ճգնաժամի հիմնական հարցը շարունակում էր մնալ նոր վարչապետի թեկնածությունը: Այդ պաշտոնում Սաադ Հարիրիի՝ կրկին առաջադրվելուն դեմ էին ինչպես «Հիզբալլահը», այնպես էլ Միշել Աունն ու Սուլեյման Ֆրանժիեն: Դրան կտրուկ դեմ էր արտահայտվում նաև Դամասկոսը: Լիբանանյան ճգնաժամի երկարաձգման գործում կարևոր դեր էր խաղում Բաշար Ալ–Ասադի դիրքորոշումը, ով Սաադ Հարիրի թեկնածությանը դեմ լինելով, չէր ցանկանում հակադրվել նաև վերջինիս սաուդական հովանավորներին:

Մամուլում ակնարկում էին, որ Հարիրին խախտել էր «Հիզբալ-

լահի» և Բաշար Ալ–Ասադի հետ ձեռք բերված ոչ պաշտոնական պայմանավորվածությունները: Դրանց էությունը հետևյալն էր. Սիրիան թույլ էր տալիս սուննիներին հաղթանակ տանել լիբանանյան ընտրություններում և աջակցում էր կոալիցիոն կառավարության գործունեությանը, իսկ փոխարենը Սաադ Հարիրին խոստանում էր չհրապարակել Միջազգային դատարանի եզրակացությունը: Հարիրին ստիպված էր ընտրություն կատարել «արդարության» և «կայունության» միջև: Դամասկոսի պնդմամբ դատարանի եզրակացության հրապարակմանը Հարիրիին դրդում էին սաուդական հակասիրիական ուժերը՝ արքայազն Բանդարն ու նրա շրջապատը: Դատարանի եզրակացության հրապարակումը, որը դեռևս հստակեցման կարիք ուներ, լրջորեն կհարվածեր «Հիզբալլահի» դիրքերին և կթուլացներ երկրում շիաների դիրքերը: Դրա հետ մեկտեղ կթուլանային նաև Սիրիայի և Իրանի դիրքերը:

Լիբանանում կառավարական ճգնաժամի առաջացման գործում իր դերակատարումն ունեցավ նաև Վալիդ Ջումբլաթը, ով այդ շրջանում գտնվում էր Դամասկոսի և «Հիզբալլահի» վերահսկողության ներքո: Հարիրիի դաշինքն իր հերթին ծրագրեր էր մշակում դրուզների շրջանում Ջումբլաթի դիրքերը թուլացնելու ուղղությամբ, նույնիսկ խոսում էին նրան վաստակած թոշակի ուղարկելու մասին: ԱՍԿ 13 պատգամավորներից 10–ը իբրև թե պատրաստ էին աջակցելու Հարիրիին նոր վարչապետի պաշտոնում[90]:

Սակայն նախագահ Միշել Սուլեյմանն ընդառաջ գնաց ընդդիմությանն ու սիրիամետ ուժերին և նոր կառավարության ձևավորման վերաբերյալ խորհրդակցությունները հետաձգեց մեկ շաբաթով: Այդ ընթացքում Ջումբլաթն այցելեց Դամասկոս, որտեղ հանդիպեց նախագահ Ասադի հետ: Արդյունքում իրավիճակը կտրուկ փոխվեց:

Նոր վարչապետի պաշտոնում ընդդիմությունն առաջարկում էր Օմար Քարամեի թեկնածությունը, ով արդեն երկու անգամ զբաղեցրել էր երկրի վարչապետի պաշտոնը (1990 թ. դեկտեմբերի 24–ից մինչև 1992 թ. մայիսի 13–ը, ապա 2004 թ. հոկտեմբերի 21–ից մինչև 2005 թ. փետրվարի 28–ը): Նա դիտարկվում էր որպես փոխզիջումային թեկնածու, ում գլխավորությամբ ընդդիմությունը պատրաստ էր աշխատել նաև կոալիցիոն կառավարության կազմում:

[90] Նույն տեղում:

2011 թ. հունվարի 25–ին Լիբանանի նախագահը հաստատեց նոր վարչապետի թեկնածությունը: «Հիզբալլահ» շարժման և խոհրդարանի մեծամասնության աջակցությունը ստացավ մեկ այլ սուննի ղեկավար՝ Նաջիբ Միկաթին, ով գլխավորեց Լիբանանի նոր կառավարությունը: Վերջինս ստացավ 128 պատգամավորական ձայներից 68–ը, մինչդեռ Հարիրիի օգտին քվեարկեց 55 խորհրդարանական[91]: Ինչպես և սպասվում էր, Միկաթիի օգտին քվեարկեց նաև դրուզների ղեկավար Վալիդ Ջումբլաթը, ով քննադատեց Հարիրիի քաղաքական ուղեգիծը[92]:

Հենց նույն օրը Լիբանանի տարբեր քաղաքներում սկսվեցին Հարիրիի կողմակիցների ելույթները, ովքեր իրենց դժգոհությունն էին հայտնում Միկաթիի թեկնածության նկատմամբ:

Սակայն Հարիրին իր կողմնակիցներին երկրի ապագայի նկատմամբ պատասխանատվություն դրսևորելու և Լիբանանի խաղաղությունը չխաթարելու կոչ արեց:

Լիբանանում նոր վարչապետի ընտրության շուրջ առկա գործընթացները հաստատեցին, որ Սաադ Հարիրիի դաշինքում անդամների թվի նոսրացում էր տեղի ունեցել: Արդյունքում Սաադ Հարիրին կորցրեց իր ունեցած խորհրդարանական մեծամասնությունը:

Կարելի է ասել, որ այս դեպքում Լիբանանն այն եզակի արաբական երկրներից էր, որտեղ արևմտյան ժողովրդավարական երկրների օրինակով քաղաքական ճգնաժամը հարթվեց սահմանադրական ճանապարհով: Փաստորեն երկրում օրինական ճանապարհով իշխանության եկավ շիական «Հիզբալլահ» շարժման ղեկավարած սիրիամետ և իրանամետ դաշինքը:

Լիբանանյան գործընթացներն ի ցույց դրեցին, որ Դամասկոսի դիրքերը շարունակում էին ուժեղ մնալ Լիբանանում: Ռաֆիկ Հարիրիի սպանությանը հաջորդած սիրիական զորքերի դուրս բերումից հետո որոշ հետազոտողներ գտնում էին, որ Սիրիան կարող էր կորցնել իր դիրքերը Լիբանանում: Սակայն Դամասկոսը Լիբանանում աշխատում էր արդեն վաղուց փորձարկված տնտեսական և միջկլանային կապերի միջոցով[93]: Դրա վառ օրինակն էր Վալիդ Ջումբլաթի քաղաքական ուղեգծի փոփոխությունը, ում սիրիացիները, օգտագործելով տարբեր մեթոդներ, կարո-

[91] http://www.arabnews.com/, 25.01.2011
[92] http://ria.ru/, 05.01.2011
[93] Ю. Щегловин, “Размышления о возможной «иранизации Ливана”, http://www.iimes.ru/rus/frame_stat.html

ղացան կրկին անգամ իրենց կողմը գրավել: Այս երևույթը շատ բնորոշ է լիբանանյան քաղաքական իրականությանը:

Հետքրքրական էր, որ Ն. Միկաթին, ով ղեկավարեց լիբանանյան նոր կառավարությունը վերջին խորհրդարանական ընտրություններին, Տրիպոլիից ընտրվել էր Հարիրիի դաշինքի ցուցակով: Դա տեղի էր ունեցել Դամասկոսի հետ պայմանավորվածության արդյունքում և լավագույնս ցույց էր տալիս լիբանանյան քաղաքական զարգացումների յուրօրինակությունը:

Նշենք, որ Միջազգային դատարանի եզրակացության հրապարակման առժամանակ հետաձգումը չէր նշանակում ընդմիշտ հրաժարում: Բացի այդ՝ այն կարող էր յուրահատուկ ճնշման միջոց դառնալ Հարիրիի ընդդիմադիր դաշինքի համար:

Կարևոր էր նաև, որ «Հիզբալլահի»՝ իշխանության գալը չբերեց Լիբանանի շիականացմանը, ինչը բացատրվում էր լիբանանյան հասարակության յուրահատուկ կրոնադավանական բնույթով:

2009 թ. ընթացքում Իրանի՝ «Հիզբալլահին» ցույց տրվող ֆինանսական աջակցությունը նվազել էր 40 %–ով, ինչը խոսում էր այն մասին, որ տնտեսական պատժամիջոցների և ֆինանսական ճգնաժամի պայմաններում Իրանը ստիպված էր վերանայել իր հովանավորչական ծրագրերը: Լիբանանի շիականացումը ձեռնտու չէր նաև Դամասկոսին: Պատահական չէր, որ վերջինս ակտիվորեն փորձում էր իր ազդեցության տակ պահել այն և կանխել Լիբանանի «իրանացումը»: Տվյալ փուլում Լիբանանում Իրանի ազդեցության ուժեղացման դեմ առաջին հերթին պայքարում էր հենց Դամասկոսը՝ շարունակելով տարածաշրջանային դաշնակից մնալ Իրանի հետ: Վերջինս իր հերթին պատրաստ էր ընդունելու Դամասկոսի առաջադրած պայմանները, քանի որ ելնում էր ավելի շատ գլոբալ տարածաշրջանային շահերից և չէր ցանկանում Թեհրան–Դամասկոս դաշինքի կողքին տվյալ փուլում տեսնել Դամասկոս–Ռիադ տարբերակը:

***

Այսպիսով՝ Լիբանանում զարգացումները մնացին սահմանադրական հարթությունում, և նորանշանակ վարչապետը սկսեց ակտիվ խորհրդակցություններ վարել նոր կառավարության ձևավորման նպատակով: Քաղաքական պայքարի այդ փուլում հաղթանակ տարան «Հիզբալլահն» ու Դամասկոսը: Սպասվում էր, որ 2011 թ. փետրվարին, երբ նախատեսվում էր հրապա-

ռակել Միջազգային դատարանի եզրակացությունը, իրավիճակը կրկին կարող էր սրվել: Սակայն 2011 թ–ի սկզբից արաբական մի շարք երկրներում՝ Թունիս, Եգիպտոս, Եմեն, ապա նաև Սիրիա, «արաբական գարնան» շրջանակներում սկիզբ առած բողոքի ցույցերն ու ընդհանուր տարածաշրջանային անկայունությունը, ստիպեցին ինչպես միջազգային հանրությանը, այնպես էլ լիբանանյան մի շարք ուժերի կրկին անորոշ ժամանակով հետաձգել այդ եզրակացության հրապարակումը: Բնական էր, որ արաբական անկայուն երկրների շարքում ևս մեկի՝ Լիբանանի ավելացումն էլ ավելի կսրեր պայթյունավտանգ իրավիճակը տարածաշրջանում:

Սիրիայի համար լիբանանյան շիաներն ունեն ռազմավարական նշանակություն, հատկապես որպես ռազմական ուժ: «Հիզբալլահը», ինչպես և «Համասը» Սիրիայի համար յուրահատուկ ճնշման միջոց են Իսրայելի դեմ պայքարում, նաև մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացում: Իրանի ֆինանսավորման նվազումն ու այդ շրջանում նրա առաջատար դիրքերի զիջումը Դամասկոսին իրենց արտացոլումը գտան նաև «Հիզբալլահի» ներքին կառուցվածքում: Այն ավելի ակտիվորեն սկսեց ֆինանսավորման այլընտրանքային ուղիներ փնտրել: Այդպիսի ֆինանսավորման աղբյուր էր շիական սփյուռքի ֆինանսական աջակցությունը[94]:

Այս համատեքստում հետաքրքրական էր կազմակերպության անվտանգության ոլորտի պատասխանատուներից մեկի՝ Ի. Մուղնիայի և նրա երկու տեղակալների սպանությունը Դամասկոսում: Նա պատասխանատու էր նաև շիական սփյուռքի ֆինանսական փոխանցումների համակարգման համար:

Մուղնիայի գործունեության կարևոր ուղղություններից էր Աֆրիկան, որտեղ նա աշխատում էր «Ալ–Խադիր» հիմնադրամի միջոցով: 2010 թ. դեկտեմբերին Լագոսում տեղի ունեցավ շիա գործարարների հանդիպում, ովքեր ներկայացնում էին Աֆրիկայի մի շարք երկրների՝ հարուստ շիա մոտ 20 ընտանիքներ: Շիական կապիտալն ակտիվ է Անգոլայում, Նիգերիայում, Մալիում և այլ երկրներում: Այդ հանդիպման ընթացքում քննարկվեց Իրանի նկատմամբ պատժամիջոցների բացասական ազդեցությունը շիական գործարար շրջանակների վրա, ինչպես նաև ամերիկյան տնտեսական շրջանակների, Աֆրիկայի տարբեր երկրներում շիական գործարար ոլորտների վրա ճնշումները: Այդ խորհրդակ-

[94] Նույն տեղում:

ցությունից երկու շաբաթ անց քննարկմանը մասնակցած երկու պատվիրակներ այցելեցին Բեյրութ և հանդիպում ունեցան շեյխ Նասրալլահի հետ: Հանդիպման ընթացքում որոշում կայացվեց հնարավորինս «առանձնացնելու» շիական բիզնեսն Իրանից և «Հիզբալլահից», ինչը թույլ կտար աֆրիկյան շիական կապիտալը զերծ պահել պատժամիջոցներից: Հանդիպմանը մասնակցում էր նաև Մուղնիայի պաշտոնում նշանակված Հասան Իզեդինը: Վերջինս ուներ ընդգծված սիրիամետ դիրքորոշում: Դամասկոսն ակտիվորեն փորձում էր վերահսկել նաև շիական սփյուռքի գործունեությունը[95]: Կարող ենք փաստել, որ սփյուռքում շիական գործարար շրջանակների դիրքերը պահպանելու նպատակով որոշում ընդունվեց գոնե ցուցադրաբար կապերը թուլացնելու Իրանի և «Հիզբալլահի» հետ ֆինանսական կապիտալի զարգացման նպատակով:

Այս պայմաններում Ռաֆիկ Հարիրիի սպանության մեջ մեղադրվողների ցանկում առաջնային էր Մուղնիայի անունը, ինչով էլ բացատրվում էր նրա սպանությունը, որը ձեռնտու էր նաև Սիրիային:

Երկարատև՝ շուրջ հինգ ամիս շարունակվող բանակցությունների արդյունքում միայն 2011 թ. հունիսի 13–ին Միկաթին կարողացավ ձևավորել կառավարություն: Այն կազմված էր 30 նախարարներից: Կառավարության կազմի հաստատումից հետո Նաջիբ Միկաթին հայտարարեց, որ նոր կառավարությունը ողջ Լիբանանինն է և աշխատելու է բոլոր լիբանանցիների համար: Այն գործելու էր հետևյալ կարգախոսով՝ «Ամեն ինչ երկրի և աշխատանքի համար»:

Կառավարության կազմավորման կապակցությամբ առաջիններից մեկը Լիբանանի նախագահին շնորհավորեց Բաշար Ալ–Ասադը:

Նոր կառավարությունում Մուհամմեդ Սաֆադին զբաղեցրեց ֆինանսների, Ադնան Մանսուրը՝ արտաքին գործերի, Ֆայեզ Ղոսնը՝ պաշտպանության և Մարվան Շարբելը՝ ներքին գործերի նախարարների պաշտոնները: «Հիզբալլահը» և «Ամալը» յուրաքանչյուրը ստացավ երկուական նախարարական աթոռ: «Հիզբալլահը» ներկայացնող Մուհամմեդ Ֆնեյշը նշանակվեց պետնախարար, իսկ Հուսեյն Հաջ Հասանը՝ գյուղատնտեսության նախարար: Նիկոլաս Նահասը զբաղեցրեց էկոնոմիկայի նախարարի, Նիկոլաս Սահնավին՝ հեռահաղորդակցության

[95] Նույն տեղում:

նախարարի, իսկ Շաքիբ Քուրթոբավին՝ արդարադատության նախարարի պաշտոնը[96]:

Նախագահ Միշել Սուլեյմանը նշանակեց 3 չեզոք նախարարներ, իսկ Միկաթիի միջնորդությամբ նշանակվեց 7 նախարար: Նոր կառավարության մեջ ներգրավվեց նաև Հարիրիի դաշինքից դուրս եկած Վալիդ Ջումբլաթի ղեկավարած ԱՍԿ–ն: Դրուզական համայնքում նրա մրցակից Արսլանը հրաժարվեց նոր կառավարության հետ համագործակցելուց: 10 նախարարական աթոռ ստացավ Միշել Աունի «Ազատ հայրենասիրական» շարժումն ու նրա հետ համագործակցող մարոնիական «Մարադա» շարժումն ու ՀՅԴ–ն: Կառավարությունում ՀՅԴ–ն ներկայացնում են Վրեժ Սաբունջյանը (հայ առաքելական), ով զբաղեցրեց արդյունաբերության նախարարի պաշտոնը, և Փանոս Մանջենյանը (կրկին հայ առաքելական), ով նշանակվեց պետնախարարի պաշտոնում[97]:

Նոր կառավարությունում ներգրավվեց նաև նախկին վարչապետ Օմար Քարամեի որդին՝ Ֆեյսալ Քարամեն: Այս փաստն ուրախությամբ ընդունեցին Քարամեների հարազատ Տրիպոլիում: Կառավարության կազմում, կրոնադավանական համակարգի համաձայն, կան հավասար թվով քրիստոնյա և մուսուլման նախարարներ, իսկ վերջիններիս մեջ՝ 6 սուննի և 5 շիա (թեև սովորաբար նրանց թիվը ևս հավասար է լինում):

***

2011 թ. արաբական մի շարք երկրներում ընթացող բողոքի ցույցներն ու անկայունությունը չշրջանցեցին նաև Սիրիան: 2011 թ. մարտից այնտեղ շարունակվող ներքին անկայուն իրավիճակը, բնականաբար, իր արտացոլումն ունեցավ նաև Լիբանանում: Առկա իրավիճակում «Հիզբալլահի» ղեկավարած դաշինքը որոշեց պաշտպանել Սիրիայի վարչակարգին: Որպես ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի անդամ՝ Լիբանանը ձեռնպահ մնաց 2011 թ. օգոստոսի 4–ին 14 պետությունների ընդունած հայտարարությանը միանալուց, որը դատապարտում էր ուժի կիրառումը Սիրիայի խաղաղ բնակչության նկատմամբ: Դրանով Լիբանանն ի ցույց դրեց իր անհամաձայնությունը երրորդ պետության ներքին գործերին միջամտելու հարցում: Իր հերթին ընդդիմա-

[96] "Prime Minister Najib Mikati formed Monday a 30–Member Cabinet", by Thomas Al–Basha, http://www.dailystar.com.lb,13.06.2011

[97] Նույն տեղում:

դիր Սաադ Հարիրիի դաշինքը շուրջ մի քանի ամիս ձեռնպահ էր մնում Սիրիայում ընթացող զարգացումները մեկնաբանելուց՝ դրանով իսկ փորձելով չսրել լիբանանյան հակասությունները:

«Մի շարք լիբանանյան քաղաքական գործիչներ գիտակցաբար խուսափում էին արտահայտվելուց Սիրիայում ընթացող զարգացումների վերաբերյալ»,– այս կապակցությամբ նշեց Լիբանանի համալսարանի Հասարակագիտական ինստիտուտի պրոֆեսոր Միքայել Շաուլը: Միայն հուլիսի վերջին Սաադ Հարիրին խախտեց լռությունը և նշեց, որ ինչպիսին էլ լինեն հանգամանքները Սիրիայում, լիբանանցիները չեն կարող լռել[98]:

Սիրիայում հասարակության երկփեղկումն ու անկայունության խորացումը ևս մեկ անգամ հաստատեց սիրիական ազդեցությունը Լիբանանի քաղաքականության և հասարակության վրա: Միքայել Շաուլը նշեց, որ սիրիամետ դաշինքում ոմանք երկյուղում են տարածաշրջանային կարևոր գործընկերոջը կորցնելու հեռանկարից և անհանգստանում են սեփական քաղաքական ապագայի համար: Մինչդեռ Հարիրիի դաշինքը գտնում էր, որ «ժողովրդավարական» Սիրիայի հետ ավելի դյուրին կլիներ պայմանավորվածություններ ձեռք բերելը[99]:

Լիբանանի քաղաքացիական հասարակությունն ավելի վաղ, քան քաղաքական գործիչները, արտահայտեց իր տեսակետը սիրիական գործընթացների վերաբերյալ: Երկրում նույնիսկ բախումներ տեղի ունեցան սիրիական վարչակարգի կողմնակիցների և ընդդիմադիրների միջև: 2011 թ. հոկտեմբերի սկզբին մոտ 50 խաղաղ ցուցարարներ, որոնք Բեյրութում Սիրիայի դեսպանատան մոտ ցույց էին կազմակերպել՝ ի պաշտպանություն սիրիական ընդդիմությանը, ծեծի ենթարկվեցին Բաշար Ալ–Ասադի վարչակարգի պահպանման աջակիցների կողմից: Կային նաև վիրավորներ: Ինչպես նշում է ֆրանսալեզու "L'Orient–le–Jour" լիբանանյան պարբերականը. «Դա առաջին բախումը չէր: Սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսների ընթացքում հյուսիսային Տրիպոլի քաղաքում բախումների հետևանքով արդեն իսկ կար 6 զոհ, ինչն ի ցույց էր դնում լիբանանյան հասարակության բևեռացումը սիրիական հարցում»[100]:

Այս ամենը չխանգարեց, որ 20 լիբանանցի մտավորականներ Բեյրութի կենտրոնում հոկտեմբերի 3–ին ցույց կազմակերպեին և իրենց աջակցությունը հայտնեին սիրիացի ժողովրդին: Նրանց

[98] http://www.reuters.com/, 08.10.2011
[99] Նույն տեղում:
[100] http://www.lorientlejour.com/, 08.10.2011

շարքում էր նաև Զիադ Մաջիդը, ով քաղաքագետ է և Փարիզում Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր: “France24.com”–ին տված իր հարցազրույցում նա ընդգծեց. «Այդ միջոցառման նպատակը քաղաքական չէ: Պարզապես մենք ցանկանում ենք սիրիացի ժողովրդին և հատկապես մտավորականներին ցույց տալ, որ նրաց պայքարը՝ հանուն ազատության, նաև լիբանանցիներինն է: Բեյրութը չի լռելու»[101]:

***

Հայ–լիբանանյան կապերն ու հարաբերություններնն ունեն կայուն հենք, քանի որ բոլոր մակարդակներում էլ ջերմ են և բարեկամական: Այդ հարաբերությունները դրսևորվում են ինչպես պետական՝ քաղաքական երկխոսություն, բազմաբովանդակ շփումներ ու բազմաոլորտ համագործակցություն, այնպես էլ ժողովրդական մակարդակներում: Այս կապերի խորացմանը մեծապես նպաստեց նաև ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հրավերով 2011 թ. հոկտեմբերի 3–ին Լիբանանի խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրիի եռօրյա պաշտոնական այցը Հայաստան: Այցի շրջանակներում Լիբանանի Ազգային ժողովի նախագահը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Հոկտեմբերի 4–ին նա ելույթ ունեցավ Ազգային ժողովում, այցի շրջանակներում լիբանանյան պատվիրակությունն այցելեց Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին[102]:

Իսկ նույն թվականի դեկտեմբերի 8–10–ը Հայաստան այցելեց Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը: Նրա գլխավորած պատվիրակության կազմում էր նաև երկրի արդյունաբերության նախարար Վրեժ Սաբունջյանը: Լիբանանի նախագահը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, օրենսդիր և գործադիր իշխանությունների ղեկավարների, ինչպես նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ: Տեղի ունեցավ հանդիպում Սաբունջյանի և ՀՀ գյուղատն-

[101] “La crise en Syrie s’invite chez le voisin libanais”, http://www.france24.com, 08.10.2011

[102] http://ar.newsarmenia.ru/intercoop/20111003/42533970.html.http://ar.newsarmenia.ru/intercoop/20111003/42533970.html. 03.10.2011

տեսության նախարար Սերգո Կարապետյանի միջև, որի ընթացքում կողմերը նշեցին երկկողմ տնտեսական համագործակցության ակտիվացման անհրաժեշտության մասին[103]: Այցի շրջանակներում ստորագրվեցին հայ–լիբանանյան համագործակցության զարգացմանն ուղղված մի շարք փաստաթղթեր[104]:

***

Ամփոփելով փաստենք, որ Սիրիայում ճգնաժամի խորացումն անպայմանորեն իր ազդեցությունը կունենա լիբանանյան ներքաղաքական զարգացումների վրա: Այս համատեքստում լուրջ խնդիրներ կարող են առաջանալ «Հիզբալլահ» շարժման համար, որի հիմնական հովանավորներից է Սիրիայի ներկայիս վարչակարգը: Դժվար է կանխատեսել, թե ինչպիսին կլինեն զարգացումները Սիրիայում, սակայն, փաստ է, որ դրանք անկասկած իրենց արտացոլումը կգտնեն Լիբանանում:

[103] http://www.armtimes.com/tag/6078, դեկտեմբերի 9, 2011
[104] http://www.panorama.am/am/politics/2011/12/08/arm–lebanon/, դեկտեմբերի 8, 2011

## ԼԻԲԱՆԱՆԸ 2008–2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**10.01.2008.** «Ֆաթհ ալ–իսլամ» կազմակերպության 10 անդամ ձերբակալվեց Տրիպոլի քաղաքում: Ձերբակալվածների մեջ էր կազմակերպության ղեկավարներից Նաբիլ Ռահիմը:

**11.01.2008.** Լիբանանի խորհրդարանը հետաձգեց Լիբանանի նախագահի ընտրության նպատակով գումարվող խորհրդարանի նիստը:

**15.01.2008.** Բեյրութում՝ ԱՄՆ դեսպանատան շրջակայքում, տեղի ունեցավ պայթյուն, որի արդյունքում կար 3 զոհ և 21 վիրավոր:

**19.01.2008.** Գերմանիայի կառավարությունը որոշում ընդունեց KFW զարգացման բանկի աջակցությամբ Լիբանանի հարավում իրականացնել 140.000 դոլար արժողությամբ ջրային ծրագիր (South Lebanon Water and Waste–Water Establishment (SLWWWE):

**21.01.2008.** 13–րդ անգամ հետաձգվեց Լիբանանի նախագահի ընտրությունը:

**23.01.2008.** Վարչապետ Ֆուաադ Սինիորան մեկնեց Կահիրե, որտեղ հանդիպեց Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հետ, իսկ հունվարի 24–ին մասնակցեց Արաբական պետությունների լիգայի շրջանակներում արաբական երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը:

**25.01.2008.** Պայթյունի հետևանքով զոհվեց երկրի անվտանգության ուժերի ահաբեչության դեմ պայքարի վարչության առաջատար մասնագետներից Վիսամ Մահմուդը: Կար ևս 4 զոհ և 40 վիրավոր:

**27.01.08.** Ընդդիմության հրավիրած ցույցը վերածվեց բախումների ընդդիմության ակտիվիստների և իշխանամետ ուժերի կողմակիցների միջև, որոնց արդյունքում զոհվեց 9 և վիրավորվեց 22 մարդ:

**06.02.2008.** Լիբանանի ֆինանսների նախարար Ջիհաադ Ազուրը լրատվամիջոցների հետ հանդիպման ընթացքում նշեց, որ 2007 թ. Լիբանանի ընդհանուր պարտքը կազմել է 42,06 բիլիոն դոլար կամ ՀՆԱ–ի 171 %–ը:

**11.02.2008.** 14–րդ անգամ հետաձգվեց նոր նախագահի ընտրությունը:

**14.02.2008.** Դամասկոսում պայթյունի հետևանքով զոհվեց «Հիզբալլահի» ղեկավարներից Իմադ Մուղնիյան: Իշխանամետ ուժերի հարյուր հազարավոր կողմնակիցներ փետրվարի 14–ին Նահատակների հրապարակում նշեցին Ռաֆիկ Հարիրիի մահվան 3–րդ տարելիցը:

**16.02.2008.** ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Բան Կի–մունը հայտնեց, որ կազմավորվել է Լիբանանում քաղաքական սպանությունների հետաքննության հատուկ դատարանի ստեղծման հարցերով զբաղվող կառավարման հանձնախումբը:

**17.02.2008.** Քաթարի բարեգործական ընկերությունը Լիբանանին տրամադրեց 5,5 մլն դոլար հարավային Լիբանանի Բինթ Ջբեյլ քաղաքի վերակառուցման նպատակով:

**25.02.2008.** Նոր նախագահի ընտրությունը կրկին հետաձգվեց:

**29.02.2008.** ԱՄՆ–ի Միջազգային զարգացման գործակալության Լիբանանի մասնաճյուղի տնօրենը 50.000 դոլար տրամադրեց Բեյրութում գտնվող Դար ալ–ֆաթվա առողջական կենտրոնին, որտեղ տարեկան անվճար բուժօգնություն են ստանում 1000 անապահով հիվանդներ:

**02.03.2008.** Լիբանանի զբոսաշրջիկության նախարարության հրապարակած տվյալների համաձայն՝ 2006 թ. համեմատությամբ 2007 թ. զբոսաշրջության ոլորտից ստացվող եկամուտները նվազել էին 14,4 %–ով:

**07.03.2008.** Լիբանանում տեղահանվածների կենտրոնական հիմնադրամի ղեկավար Ֆադի Արամունին նշեց, որ 2006 թ. Լիբանանի տարածքում Իսրայելի և «Հիզբալլահի» միջև հակամարտության արդյունքում տուժածների 63 %–ին վճարվել էին խոստացված փոխհատուցումները (դրանք հիմնականում Լեռնալիբանանի, Բեքաայի հովտի և Բեյրութի ու նրա արվարձանների բնակիչներ են: 18–19 %–ը արդեն պատրաստ էր վերադառնալու իրենց բնակավայրերը):

**10.03.2008.** Երկրի նախագահի ընտրությունները հետաձգվեցին 16–րդ անգամ:

**12.03.2008.** ՄԱԿ–ում ԱՄՆ դեսպանը հայտարարեց, որ համաշխարհային դոնորներն արդեն իսկ նվիրաբերել են 28,7 մլն դոլար Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման նպատակով և խոստացվել է ևս 21,3 մլն դոլար:

**18.03.2008.** Ճապոնիայի կառավորությունը համաձայնագիր էր ստորագրել ՄԱԿ–ի օգնության և աշխատանքի գործակալության հետ, ըստ որի՝ 588 մլն յեն կամ 5,5 մլն դոլար կտրամադրվեր կազմակերպությանը՝ հյուսիսային Լիբանանի պաղեստինյան փախստականների ճամբարիների խնդիրները լուծելու նպատակով:

**24.03.2008.** Երկրի նախագահի ընտրությունները հետաձգվեցին 17–րդ անգամ:

**28.03.2008.** ԱՄՆ–ի Կոնգրեսը 5 մլն դոլար տրամադրեց լիբանանյան հասարակական կազմակերպություններին:

**29.03.2008.** Մարտի 29–ից 30–ը Դամասկոսում կայացավ ԱՊԼ անդամ երկրների ղեկավարների ամենամյա գագաթնաժողովը, որին մասնակցեց նաև Իրանի արտաքին գործերի նախարարը: Լիբանանը բոյկոտեց գագաթնաժողովը, Սաուդյան Արաբիան և Հորդանանը ներկայացնում էին ԱՊԼ–ում այդ երկրների ներկայացուցիչները, Եգիպտոսը՝ իրավական հարցերով և խորհրդարանի հետ հարաբերությունների պետնախարարը, Իրաքը և Եմենը՝ նախագահի տեղակալները, Բահրեյնը՝ վարչապետի տեղակալը, Օմանը՝ վարչապետի կառավարության գծով տեղակալը և Մարոկկոն՝ թագաժառանգը:

**05.05.2008.** Մայիսի 5–ին Լիբանանի կառավարությունն ընդունեց երկու որոշում, որոնց համաձայն՝ պաշտոնանկ արվեց Բեյրութի միջազգային օդանավակայանի անվտանգության ծառայության ղեկավարը, ով ներկայացնում էր «Հիզբալլահը», ինչպես նաև վերահսկողություն սահմանվեց «Հիզբալլահի» հաղորդակցության ցանցի նկատմամբ:

**06.05.2008.** 2008 թ. մայիսի 6–ին Լիբանանի աշխատավորների համադաշնության կազմակերպած գործադուլը վերաճեց զինված բախումների՝ կառավարության կողմնակիցների և ընդդիմադիր ուժերի, հիմնականում շիական «Հիզբալլահ» շարժման զինյալների միջև:

**09.05.2008.** Մայիսի 9–ին Լիբանանում գործող լիբանանահայ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հանդիպման ընթացքում ընդունվեց որոշում՝ հակամարտող կողմերից որևէ մեկին չպաշտպանելու և նրանց միջև երկխոսության հաստատմանը նպաստելու վերաբերյալ: Համայնքը հավատարիմ մնաց դեռևս 1975 թ. բռնկված երկ-

որոդ քաղաքացիական պատերազմի ընթացքում որդեգրած դրական չեզոքության քաղաքականությանը:

**11.05.2008.** Լիբանանում զինված բախումների խորացումն ու հնարավոր քաղաքացիական պատերազմի բռնկումը կանխելու նպատակով մայիսի 11–ին Կահիրեում ԱՊԼ արտաքին գործերի նախարարաների խորհրդի նիստում կազմավորվեց հանձնախումբ, որի ղեկավարումը ստանձնեց Քաթարի վարչապետ և արտաքին գործերի նախարար Համադ բեն Ջասեմ բեն Ջաբար Ալ–Թանիին:

Լիբանանյան հակամարտող կողմերը համաձայնության եկան զինված բախումները դադարեցնելու, ինչպես նաև պայմանավորվեցին ԱՊԼ–ի հովանու ներքո բանակցությունները մայիսի 16–ին Քաթարի մայրաքաղաք Դոհայում շարունակելու վերաբերյալ:

**21.05.2008.** Մայիսի 21–ին Քաթարի մայրաքաղաքում հայտարարվեց ԱՊԼ–ի հովանու ներքո լիբանանյան «ազգային երկխոսության» հաջող ավարտի մասին: «Երկխոսության» մասնակիցներն ընդունեցին «Դոհայի համաձայնագիրը»:

**25.05.2008.** Շուրջ 7 ամիս շարունակվող հակամարտության, ապա նաև զինված բախումներից հետո Լիբանանի խորհրդարանը մայիսի 25–ին 118 կողմ ձայնով նոր նախագահ ընտրեց բանակի գլխավոր հրամանատար գեներալ Միշել Սուլեյմանին:

**28.05.2008.** Լիբանանյան իշխող մեծամասնությունը վարչապետի պաշտոնում կրկին առաջադրեց Ֆուադ Սինիորայի թեկնածությունը, ում մայիսի 28–ին նոր նախագահը հանձնարարեց «ազգային միասնության կառավարության» ձևավորումը:

**01.03.2008.** 2009 թ. մարտի 1–ին հոլանդական Լեյշենդեմ (Leischendam) բնակավայրում՝ Հաագայից ոչ հեռու, իր աշխատանքները սկսեց Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործը քննող Հատուկ դատարանը:

**15.05.2009.** «Հիզբալլահ» շարժման ղեկավար Հասան Նասրալլահը 2009 թ. մայիսի 15–ին հանդես եկավ նախընտրական ելույթով: Այն Լիբանանում, ինչպես նաև հարևան արաբական երկրներում ընկալվեց որպես շիական այդ խոշոր կազմակերպության գլխավոր քարտուղարի կոչը, որի հիմնական շեշտադրումը Լիբանանում «Հիզբալլահի պետություն» ստեղծելն էր:

**07.06.2009.** 2009 թ. հունիսի 7–ին Լիբանանում կայացան խորհրդարանական ընտրություններ, որոնցում հաղթանակ տարավ «Մարտի 14–ի» դաշինքը՝ Սաադ Հարիրիի գլխավորությամբ: 128 պատգամավորական տեղերից այն ստացավ 71–ը: 57 տեղ գրավեց ընդդիմադիր «Մարտի 8–ի» դաշինքը:

**02.08.2009.** Խորհրդաարանական ընտրություններից հետո շարունակվող ճգնաժամի պայմաններում, երբ Սաադ Հարիրիին չէր հաջողվում ձևավորել կառավարություն, հայտարարությամբ հանդես եկավ Առաջադիմական սոցիալիստական կուսակցության ղեկավար Վալիդ Ջումբլաթը և նշեց Հարիրիի գլխավորած դաշինքից իր դուրս գալու մասին:

**13.10.2010.** 2010 թ. հոկտեմբերի 13–14–ին Լիբանան պաշտոնական այցով ժամանեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մ. Ահմադինեժադի ղեկավարած պատվիրակությունը: Այցի ընթացքում ստորագրվեց 17 պայմանագիր, որոնք վերաբերում էին տնտեսության տարբեր ոլորտներին, այդ թվում նաև էներգետիկ ոլորտին:

**09.11.2009.** Երկար քաղաքական խորհրդակցություններից հետո 2009 թ. նոյեմբերի 9–ին Սաադ Հարիրիին հաջողվեց կազմավորել իր կառավարությունը:

**23.12.2010.** 2010 թ. դեկտեմբերի 23–ին Լիբանանում ստեղծվել էր հերթական ճգնաժամային իրավիճակը: Նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով Միջազգային ռազմական դատարանը ժամանակավորապես դադարեցրեց իր աշխատանքները Լիբանանում: Այս մասին համաձայնություն էր ձեռք բերվել այդ ընթացքում դեռևս երկրի վարչապետ Սաադ Հարիրիի և «Հիզբալլահ» կազմակերպության ղեկավար Հասան Նասրալլահի միջև:

**12.01.2011.** 2011 թ. հունվարի 12–ին Սաադ Հարիրիի կառավարությունը հերթական ճգնաժամի արդյունքում ստիպված եղավ հրաժարական տալ: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ կառավարության 11 անդամներ, որոնք ներկայացնում էին «Հիզբալլահը», հրաժարական տվեցին: Այդ քայլը նրանք հիմնավորեցին ՄԱԿ–ի Հատուկ դատարանի եզրակացության հետ իրենց անհամաձայնությամբ: Հենց հրաժարականի օրը Սաադ Հարիրին

ժամանեց Անկարա երկրի վարչապետ Ռ. Էրդողանի և արտաքին գործերի նախարար Ա. Դավութօղլուի հետ հանդիպելու նպատակով:

**13.01.2011.** Թուրքիայի արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ Թուրքիան շատ անհանգստացած էր Լիբանանում իրավիճակի անկայունացմամբ, ինչը սպառնում էր տարածաշրջանի խաղաղությանն ու անվտանգությանը:

**17.01.2011.** Թուրքական ղեկավարության նախաձեռնությամբ հունվարի 17–ին Դամասկոսում Քաթարի հետ համատեղ անցկացվեցին Լիբանանի հարցով խորհրդակցություններ, որոնց մասնակցեցին Սիրիայի նախագահ Բաշար Ալ–Ասադը, Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը, Քաթարի վարչապետ և արտաքին գործերի նախարար շեյխ Համադա Բեն Ջասեմ Ալ–Թանին:

**18.01.2011.** Բեյրութ ժամանեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն, ով Քաթարի արտաքին գործերի նախարարի հետ բանակցություններ վարեց Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանի և նախկին վարչապետ Սաադ Հարիրիի, խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրիի և «Հիզբալլահի» գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահի հետ, որոնց նպատակն էր նպաստել լիբանանյան ճգնաժամի կարգավորմանը: Սակայն դրանք արդյունք չտվեցին:

**19.01.2011.** Թուրքիայի վարչապետ Էրդողանը հեռախոսային զրույց ունեցավ Իրանի նախագահ Մ. Ահմադինեժադի հետ և վերջինիս բանակցություններ վարելու կոչ արեց լիբանանյան հակամարտող կողմերի միջև ճգնաժամը քաղաքական ճանապարհով լուծելու նպատակով:

**25.01.2011.** Լիբանանի նախագահը հաստատեց նոր վարչապետի թեկնածությունը: «Հիզբալլահ» շարժման և խոհրդարանի մեծամասնության կողմից աջակցություն ստացած սուննի ղեկավար Նաջիբ Միկաթին գլխավորեց Լիբանանի նոր կառավարությունը: Վերջինս ստացավ 128 պատգավորական ձայներից 68–ը, մինչդեռ Հարիրիի օգտին քվեարկեց 55 խորհրդարանական:

**13.06.2011.** Երկարատև՝ շուրջ հինգ ամիս շարունակվող բանակցությունների արդյունքում Նաջիբ Միկաթին կարողացավ ձևավորել կառավարություն:

**04.08.2011.** Որպես ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի անդամ՝ Լիբանանը ձեռնպահ մնաց 14 պետությունների ընդունած հայտարարությանը միանալուց, որը դատապարտում էր ուժի կիրառումը Սիրիայի խաղաղ բնակչության նկատմամբ: Դրանով Լիբանանն ի ցույց դրեց իր անհամաձայնությունը երրորդ պետության ներքին գործերին միջամտելու հարցում:

**03.10.2011.** ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հրավերով եռօրյա պաշտոնական այցով Հայաստան անցելեց Լիբանանի խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրին:

**08.12.2011.** Դեկտեմբերի 8–10–ը Հայաստան այցելեց Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը: Նրա գլխավորած պատվիրակության կազմում էր նաև երկրի արդյունաբերության նախարար Վրեժ Սաբունջյանը:

*ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ*

# ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ (2008–2011 ԹԹ.)

2008–2011 թթ. Եգիպտոսում ընթացող հասարակական–քաղաքական զարգացումները հանգեցրին պետության ղեկավարության հարատև գոյության կործանմանը, որն իր հերթին փոխեց նաև երկրի պետական իշխանության բնույթը: Վերը նշված զարգացումները հանրապետական Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ միտված էին երկրում քաղաքացիական հասարակություն կառուցելու գործընթաց սկսելուն: Միևնույն ժամանակ եգիպտական քաղաքական ընդհատակում տասնյակ տարիներ գործող առավել գործուն ընդդիմադիր ուժը՝ «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժումը, դուրս գալով օրինական դաշտ, եգիպտական հասարակությանը կանգնեցրեց աշխարհիկության և իսլամականության բևեռների միջև դժվարին ընտրություն կատարելու փաստի առջև՝ նախադրյալներ ստեղծելով ապագայում հավանական այսպես կոչված «խորքային պետություն» ձևավորելու օրինաչափության համար: Նշված ժամանակահատվածի ներքաղաքական բուռն զարգացումները պայմանավորեցին նաև Եգիպտոսի արտաքին քաղաքական օրակարգը: 2008–2011 թթ. ներքաղաքական զարգացումները բյուրեղացրեցին եգիպտական հասարակության քաղաքական հասունության հանգամանքը:

Տվյալ հոդվածի նպատակն է ներկայացնել նշված ժամանակահատվածում ներքաղաքական գործընթացների կարևորագույն փուլերը, վերլուծել այն զարգացումները, որոնք պայմանավորում են նաև Կահիրեի արտաքին քաղաքական կեցվածքը և ձևավորում նրա քաղաքական ուղեգիծը:

Եգիպոսում 2008 թ. առաջին կիսամյակի առավել կարևոր ներքաղաքական իրադարձություններից էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

Վերջին տարիներին ասիական և աֆրիկյան մի շարք երկնրերում լայն թափ են ստացել քաղաքական համակարգի արդիականացմանն ու ժողովրդավարացմանն ուղղված գործընթացները: Եգիպտոսում իշխող «Ազգային–դեմոկրատական» կուսակցությունը[1] (ԱԴԿ), ի դեմս նախագահ Հոսնի Մուբարաքի, նույնպես փորձում էր իրականացնել եգիպտական քաղաքական համակարգի բարեփոխմանն ուղղված քայլեր, որոնք պայմանավորված էին թե՛ ներքին և թե՛ արտաքին մի շարք գործոններով:

2008 թ. ապրիլի 8–ին Եգիպտոսում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների[2] (ՏԻՄ) ընտրություններ[3], որոնք բոյկոտեց երկրի ամենահզոր ընդդիմադիր ուժը՝ «Թել Ավիվ» կրոնաքաղաքական կազմակերպությունը[4]՝ հրա-

[1] «Ազգային–դեմոկրատական» կուսակցությունը ստեղծվել է 1976 թ. Եգիպտոսի նախագահ Անվար աս–Սադաթի որոշմամբ: Մանրամասն տե՛ս National Democratic Party of Egypt, http://egyptelections.carnegieendowment.org/2011/09/22/national–democratic–party

[2] Եգիպտոսում ՏԻՄ ընտրությունները կարգավորվում են 1979 թ. ընդունված թիվ 43 համապատասխան օրենքով, ըստ որի դրանք տեղի են ունենում բաց, ուղիղ քվեարկության միջոցով հինգ տարի ժամկետով: Մանրամասն տես Арабская Республики Египет, М., 1990, с. 235: ՏԻՄ ընտրությունները կարևոր դերակատարություն ունեն երկրի ներքաղաքական կյանքում. ընտրությունները հնարավորություն են տալիս եգիպտական հասարակության տարբեր խավերին իրենց մասնակցությունն ունենալու երկրի ներքաղաքական կյանքում: ՏԻՄ ընտրությունների արդյունքում կազմավորվում են խորհուրդներ, որտեղ պարտադիր կերպով պետք է ընդգրկված լինի նաև մեկ կին: Խորհուրդների գործունեության շրջանակներում կարևորագույն դերակատարություն ունեն վարչական–տարածքային միավորների ղեկավարները՝ նահանգապետ, քաղաքապետ, շրջանի նախագահ, գյուղական թաղամասերի ղեկավարներ, որոնք անմիջականորեն նշանակվում են երկրի գործող իշխանությունների կողմից: Մանրամասն տես M. Herzallah, A. Hamzawy, Egypt's Local Elections Farce Causes and Consequences, http://www.policyarchive.org/handle/10207/bitstreams/6520.pdf

[3] И. Царегородцева, "Бойкот "Братьями–мусульманами" муниципальных выборов в Египте", http://www.iimes.ru/rus/stat/2008/30–04–08c.htm

[4] «Թել Ավիվ» կրոնաքաղաքական կազմակերպությունը հիմնվել է 1928 թ. Իսմաիլիյա քաղաքում՝ Հասան Ալ–Բաննայի կողմից: Կազմակերպությունն իր գոյության սկզբնական շրջանում քաջալերում էր իսլամական խալիֆայության ստեղծման գաղափարը: Վերջին շրջանում այն ավելի շատ շեշտը դնում է Եգիպտոսում խորհրդարանական պետություն կառուցելու վրա՝ իշխանության իսլամական տարրի պահպանմամբ: Մանրամասն տես Абгарян Е., Религиозно–политическая организация "Братья–мусульмане" в Египте, Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, М., 1986, с. 52–55; Lia B., The Society of the Muslim Brothers in Egypt: The Rise of an Islamic Mass Movement 1928–1942, UK–Ithaca press 1998, p. 27–30: 1954 թ. մայիսի 4–ին «Մուսուլմա–եղբայրներ» կազմակերպության առաջնորդ Խոդեյբիի կողմից Եգիպտոսի վարչապետ Գամալ Նասերին ուղղված նամակում «Մուսուլման եղբայրները» պահանջեցին պետությունում հաստատել կառա-

ժարվելով մասնակցել ընտրություններին: Հարկ է նշել, որ ՏԻՄ ընտրությունները պետք է տեղի ունենային 2006 թ., սակայն իշխանությունների կողմից հետաձգվել էին երկու տարով. վերջիններս մտավախություն ունեին, որ իսլամականները կկարողանային կրկնել 2005 թ. խորհրդարանական ընտրություններում ձեռք բերած հաջողությունները: «Թել Ավիվ» կազմակերպության նման կեցվածքն անսպասելի էր, քանի որ 2008 թ. փետրվարի 21–ին կազմակերպության առաջնորդ Մուհամմեդ Մահդի Աքեֆը հայտարարել էր, որ իրենց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին միտված էր Եգիպտոսի ներքաղաքական կյանքի ակտիվացմանը: Ըստ էության՝ «Թել Ավիվ» կազմակերպության՝ ՏԻՄ ընտրություններին մասնակցությունը իշխանությունների դեմ պայքարի գործընթացի շարունակությունն էր: 2008 թ. մարտի 9–ին այս կազմակերպության պաշտոնական կայքէջում տեղադրված էր նրա նախընտրական ծրագիրը, որտեղ հանգամանալից ներկայացված էին ներքաղաքական բարեփոխումների դրույթները: Այս ամենը վկայում էր, որ կազմակերպությունը լրջորեն նախապատրաստվել էր ՏԻՄ ընտրություններին մասնակցելուն: Նույնիսկ ընտրությունների նախօրեին «Մուսուլման եղբայրները» հայտարարեցին, որ ցանկանում են կրկնել 2005 թ. դեկտեմբերին Ազգային ժողովի ընտրություններում իրենց հաջողությունները, երբ կազմակերպությունն ունեցավ 88 անկախ պատգամավորներ[5]: Հատկանշական է, որ քաղաքական մեծ փորձ ունեցող շարժումը, որի մասնաճյուղերը գործում են Եգիպտոսում և արաբական մի շարք երկրներում, ձգտում է իշխանության գալ՝ որոշակիորեն իսլամականացնելով պետության սոցիալ–քաղաքական համակարգը[6]: Եգիպտոսում 2005 թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Մուսուլման եղբայրները» դարձան հանրապետական

վարման խորհրդարանական համակարգ, վերականգնել խոսքի ազատությունը և այլն: Տես Mitchell R.P., The Society of the Muslim Brothers, L., 1969, pp. 134–135. Ուսումնասիրվող շրջանում «Թել Ավիվ» կազմակերպությունը գործում էր ընդհատակում, իսկ պետության ներքաղաքական զարգացումներին, մասնավորապես ընտրություններին մասնակցում էր անկախ թեկնածուներով:

[5] И. Царегородцева, “Бойкот “Братьями–мусульманами” муниципальных выборов в Египте”, http://www.iimes.ru/rus/stat/2008/30–04–08c.htm

[6] В. Куделев, “Ситуация в Египте: апрель 2008г.”, www.iimes.ru. Եգիպտոսի Ազգային ժողովը բաղկացած է 458 պատգամավորից, որից 448–ն ընտրվում է համընդհանուր ուղիղ ընտրությունների միջոցով, իսկ 10–ին նշանակում է երկրի նախագահը: Պատգամավորների ընտրություններն անցնում են 48 ընտրատարածքներում՝ մեծամասնական և համամասնական ընտրությունների հիման վրա:

Եգիպտոսի պատմության մեջ Ազգային ժողովում թվաքանակով ամենամեծ ընդդիմությունը[7]:

2008 թ. ապրիլի 8–ին կայանալիք ՏԻՄ ընտրություններից երկու օր առաջ «Մուսուլման եղբայրները» հայտարարեցին, որ չեն մասնակցելու ընտրություններին: Շարժման ներկայացուցիչներն իրենց որոշումը հիմնավորում էին հետևյալ կերպ. եթե իրենք չեն մասնակցում ընտրություններին, ապա այդ ընտրություններն արդեն իսկ չեն կարող լինել ժողովրդավարական: Նման դեպքում ընտրություններին կմասնակցեին միայն «Ազգային–դեմոկրատական» կուսակցությունը (ԱԴԿ) և նրան սատարող կեղծ ընդդիմադիր ուժերը: Հարկ է նշել, որ ԱԴԿ–ն իր գոյության ողջ ընթացքում բոլոր ընտրություններում շահել է ընտրաձայների ճնշող մեծամասնությունը[8]: ԱԴԿ–ն ընտրություններին առաջադրել էր շուրջ 53.000 թեկնածու[9]: Սակայն նույն թվականի մարտի 13–ին եգիպտական իշխանությունների կողմից ՏԻՄ ընտրություններին մասնակցելու հնրավորությունից զրկել էին «Թել Ավիվի» կողմից առաջադրված թեկնածուների մոտ 90 %–ին[10]: Մարտի 14–ին ԱՄՆ Սպիտակ տան մամլո խոսնակ Դանա Փերինան քննադատեց եգիպտական իշխանությունների կողմից իրականացված քայլերը: Վաշինգտոնը մտահոգություն էր հայտնում Եգիպտոսում մարդու իրավունքների ոտնահարման կապակցությամբ[11]:

Եգիպտոսի Ազգային ժողովի իսլամականների կողմից առաջադրված անկախ թեկնածուների խորհրդրանական խմբի ղեկավարի տեղակալ Հուսեյն Իբրահիմը ՏԻՄ ընտրությունների նախորդ օրը կոչ արեց հայրենակիցներին չմասնակցելու ընտրություններին: «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության իրավաբան Մունիմ Աբդ Ալ–Մասուդը հայտարարեց, որ ընտրություններից առաջ եգիպտական իշխանություններն ընտրություն-

[7] «Մուսուլման եղբայրները» պետության քաղաքական համակարգը փոփոխելով, ցանկանում են ստեղծել աստվածապետություն, սակայն յուրահատուկ խորհրդարանական կարգերով: Եգիպտական իշխանությունները խստորեն վերահսկում էին շարժման գործունեությունը՝ պարբերաբար իրականացնելով ակտիվիստների ձերբակալություններ, կիրառելով բռնություններ ու պատժամիջոցներ: Մանրամասն տես www.albawaba.com/cn/countries/Egypt/211310

[8] "Egypt: Muslim Brotherhood Opposition Group Urges Boycott of Municipal Elections", http://www.ikhwanweb.com/article.php?id=16604

[9] Օրինակ՝ Եգիպտոսի Ազգային ժողովի 1984 թ. ընտրություններում ԱԴԿ–ն հավաքեց ընտրաձայների 73 %, 1987 թ.՝ 70 %, 1990 թ.՝ 80 %, իսկ 2000 թ.՝ 87 % (պատգամավորական 458՝ 353), http://news.bbc.co.uk//

[10] В. Куделев, "Ситуация в Египте: апрель 2008", http://www.iimes.ru/rus/stat/2008/10–05–08a.htm

[11] Նույն տեղում:

ներին մասնակցելու հնարավորությունից զրկեցին «Թել Ավիվի» ևս 100 թեկնածուի[12]: Ապրիլի 4–ին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության մամլո խոսնակը հայտարարեց, որ նշված օրը եգիպտական իշխանությունների կողմից ձերբակալվել էին կազմակերպության 34 ակտիվիստ[13]: Եգիպտական իշխանությունների կողմից «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության թեկնածուներին նախընտրական գործընթացից դուրս թողելուց, ինչպես նաև փետրվար–մարտ ամիսների ընթացքում տեղի ունեցած զանգվածային ձերբակալությունների արդյունքում (ձերբակալվեց կազմակերպության մոտ հազար ակտիվիստ) ՏԻՄ ընտրությունների նախօրեին այս կազմակերպությունն ուներ ընդամենը 21 թեկնածու[14]: ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրաձայների մեծամասնությունը (97 %) ձեռք բերեց իշխող ԱԴԿ–ն, իսկ մնացած ձայները միմյանց միջև բաշխեցին «Ալ–Վաֆդ»[15], «Թագամմու»[16], «Ալ–Ղադ»[17] կուսակցությունները և նասերականները[18]:

Ընտրություններից երկու օր անց, ԱՄՆ Սպիտակ տան մամլո խոսնակ Դանա Փերինան հայտարարեց, որ Վաշինգտոնը մտահոգված է Եգիտպոսում ապրիլի 8–ին տեղի ունեցած ընտրություններով, ինչը պայմանավորված էր բազմաթիվ ընտրախախտումներով և քաղաքական հետապնդումներով[19]: ԱՄՆ–ի վարչակազմը հույս հայտնեց, որ եգիպտական իշխանությունների և

[12] Նույն տեղում:

[13] И. Царегородцева, նշվ.աշխ.:

[14] "Братья–мусульмане" призвали к бойкоту муниципальных выборов в Египте, www.islamrf.ru

[15] "Муниципальные выборы в Египте и политическая позиция США", նշվ. աշխ.:

[16] «Ալ–Վաֆդ» կուսակցությունը ստեղծվել է 1919 թ. և համարվում է Եգիպտոսի ամենահին կուսակցություններից մեկը: Կուսակցության գործունեությունն արգելվեց Գամալ Նասերի իշխանության տարիներին մի շարք այլ կուսակցությունների հետ մեկտեղ: 1977 թ. Ֆուադ Սիրագ Ադ–Դինի նախաձեռնությամբ կուսակցությունը վերսկսեց իր գործունեությունը՝ վերանվանվելով «Նոր վաֆդ»: Տես Hiro D., The Essential Middle East, New–York, 2003, pp. 563–564.

[17] «Թագամմու ազգային առաջադիմական» կուսակցությունը ստեղծվել է 1976 թ.՝ Արաբական սոցիալիստական դաշինքի «ձախ» թևի հիմքի վրա: Կուսակցությունը գլխավորեց Խալեդ Մոհի Ադ–Դինը: Կուսակցության նպատակն է՝ Եգիպտոսում կառուցել սոցիալիստական պետություն: 2000 թ. Ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունը ստացավ 6 մանդատ: Տես http://news.bbc.co.uk//

[18] «Ալ–Ղադ» կուսակցությունը հիմնվել է 2004 թ. հոկտեմբերին Այման Նուրի նախաձեռնությամբ, ով և գլխավորեց կուսակցությունը: «Ալ–Ղադը» համարվում է այսպես կոչված վարդագույն կուսակցություն, որը ըստ որոշ տեղեկությունների՝ գտնվում է Արևմուտքի անմիջական հովանավորության ներքո: Տես www.meast.ru

[19] В. Куделев, նշվ. աշխ.:

ընդդիմության միջև կհաստատվեն երկխոսության կամուրջներ[20]: Հարկ է նշել, որ Եգիպտոսում քաղաքական համակարգի պահպանման պարագայում ցանկացած ընտրություններ կանխավ դատապարտված էին նույնանման սցենարի կրկնությանը:

ՏԻՄ ընտրություններին «Մուսուլման եղբայրների» ինքնաբացարկի փաստն առաջ բերեց բազմաքանակ ցույցեր, որոնցից ամենամեծը տեղի ունեցավ Ալ–Քուբրա քաղաքում, որտեղ եգիպտական ոստիկանական ուժերի միջամտության արդյունքում զոհվեց մեկ անչափահաս և վիրավորվեցին բազմաթիվ ցուցարարներ: Ապրիլի 6–ին եգիպտական իշխանությունները կանխեցին նաև Կահիրեում նախատեսվող ցույցը, որը կազմակերպել էր «Քիֆայա» շարժումը: Նույն օրը ձերբակալվեցին այդ շարժման մասնաճյուղերի 60 ղեկավարներ: Հիշեցնենք, որ «Քիֆայա» շարժումն առաջին անգամ հասարակությանը հայտնի դարձավ 2004 թ.[21]: Եգիպտոսում իշխող ԱԴԿ–ի համար ներքաղաքական իրավիճակի լարվածությանն էր միախառնվել նաև 2007 թ. վերջին և 2008 թ. սկզբին ի հայտ եկած պարենային ճգնաժամը՝ հացի և այլ անհրաժեշտ ապրանքների նկատմամբ գների աճը, ինչպես նաև եգիպտական իշխանությունների՝ Գազայի եգիպտապաղեստինյան սահմանի հարցում հսկողության ուժեղացումը: Այսպիսով՝ եգիպտական իշխանությունների առջև ծառացել էին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ ներքաղաքական խնդիրներ, որոնք լուծում էին պահանջում: Հաշվի առնելով մի շարք զարգացած երկրների կառուցողական դիրքորոշումն ընդդիմության նկատմամբ եգիպտական իշխանությունները ևս, թույլ

[20] Մանրամասն տե՛ս՝ “Муниципальные выборы в Египте и политическая позиция США”, www.i–r–p.ru:
Կարևոր է նշել, որ «Թել Ավիվ» կազմակերպության կողմից ՏԻՄ ընտրությունների բոյկոտը կարող էր ազդակի դերակատարություն ունենալ Եգիպտոսի ներքաղաքական համակարգի և հասարակական կյանքի փոփոխման հարցում: Հարկ է նշել, որ վերջին շրջանում ԱՄՆ–ի և Եվրամիության նախաձեռնությամբ քաջալերվող քաղաքացիական հասարակության կառուցման, իշխանական համակարգի բարեփոխման, արդիականացման և ի վերջո ժողովրդավարական պետության կայացման նախաձեռնություններն արաբական մի շարք երկներում պարարտ հող են գտնում կարծրացած և ժառանգաբար փոխանցվող իշխանության դեմ տարվող պայքարի համատեքստում:

[21] «Քիֆայա» արաբերենից թարգմանաբար նշանակում է «բավական է»: Այս շարժումը պաշտոնապես առաջին անգամ հայտնի դարձավ 2004 թ. նոյեմբերին: Նրանում միավորվել էին եգիպտացի 300 մտավորականներ: Շարժման ղեկավար էր դարձել Աբու Ալ–Իլա Մադին: Սակայն շարժման ակունքները կարելի է հայտնաբերել արդեն սկսած 2000 թ., երբ Եգիպտոսում սկսեցին ձևավորվել համերաշխության կոմիտեներ՝ ի պաշտպանություն Պաղեստինում սկսված երկրորդ ինթիֆադայի:

տալով «Թել Ավիվի»՝ պատմաքաղաքական զարգացման օբյեկտիվ տեսանկյունից վաստակած, օրինական մասնակցությունը ներքաղաքական գործընթացներում, հնարավոր կդարձնեն երկրում լարվածության մթնոլորտի թոթափումը՝ ի վերջո հանգեցնելով խնդիրների՝ որոշ առումով համատեղ ու համապարփակ լուծմանը: Հարկ է նշել, որ «եգիպտական փողոցը» երկրում գործող ընդդիմադիր ուժերից առավել շատ համակրում էր «Թել Ավիվ» կազմակերպությանը: Օրինակ՝ 2004 թ. մարտին «Մուսուլման եղբայրների» կողմից «Բարեփոխումների նախաձեռնություններ» ծրագրի հրապարակումը նաև նպաստեց Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի կողմից սկսված սահմանադրական բարեփոխումներին, որոնց արդյունքում մի շարք փոփոխությունների ենթարկվեց նաև պետության նախագահի ընտրության կարգը[22]:

Սկսած 2005 թ.՝ Եգիպտոսի ներքաղաքական զարգացումները պայմանավորված էին նաև Մուբարաքի հետնորդի հարցի շուրջ ընթացող բազմաթիվ քննարկումներով: Առավել շատ արծարծվում էր այդ ժամանակ գործող նախագահ Հոսնի Մուբարաքի որդուն՝ Գամալ Մուբարաքին, երկրի իշխանությունը փոխանցելու տարբերակը: Գործող նախագահը «զգուշորեն պատրաստում էր» որդուն երկրի նախագահի պաշտոնի հավանական փոխանցմանը՝ աշխատելով չառաջացնել եգիպտական ընդդիմության ցասումը:

Վերը նշված նպատակին էր հավանաբար միտված նաև 2009 թ. մարտին Գամալ Մուբարաքի այցն ԱՄՆ[23]: Պաշտոնապես նշվում էր, թե Գամալ Մուբարաքի գործուղման նպատակն էր նախապատրաստել Հոսնի Մուբարաքի ԱՄՆ–ն նախատեսվող այցելությունը: Գործող նախագահը պետք է հանդիպեր ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ: Որոշ վերլուծաբաններ կարծում էին, որ Բուշի նախագահության տարիներին եգիպտաամերիկյան հարաբերությունները զգալիորեն սառել էին, ինչը պայմանավորված էր ԱՄՆ–ը մերձավորարևելյան քաղաքականությամբ[24]:

[22] Այս մասին մանրամասն տե՛ս Գևորգյան Գ., Եգիպտոսում 2005 թ. կայացած նախագահական ընտրությունների շուրջ, Մերձավոր Արևելք, Եր., 2006, էջ 47, Գևորգյան Գ., Սահմանադրական բարեփոխումները Եգիպտոսում. ժողովրդավարությո՞ւն, թե՞ պատրանք, Եր., 2007, էջ 36:

[23] Հոսնի Մուբարաքի կրտսեր որդին՝ Գամալ Մուբարաքը, Եգիպտոսում իշխող «Ազգային–դեմոկրատական» կուսակցության քաղաքական հարցերով քարտուղարն էր:

[24] Օրինակ՝ կոնգրեսական Էնթոնի Վեյները 2009 թ. փետրվարին առաջարկում էր կրճատել Եգիպտոսին ամենամյա տրամադրվող ամերիկյան ֆինանսական օգնության չափը:

Եգիպտաամերիկյան հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությունից բացի՝ Գամալ Մուբարաքի այցը միտված էր նաև պարզելու Վաշինգտոնի կարծիքը Եգիպտոսում «սիրիական սցենարով»[25] իշխանափոխություն իրականացնելու հարցում: Գամալ Մուբարաքը հանդիպեց ԱՄՆ ազդեցիք կոնգրեսականների հետ և ԱՄՆ կառավարության մի շարք առանցքային պաշտոնյաների հետ: Ամերիկյան լրատվամիջոցներից մի քանիսը նշում էին, որ Գամալի այցը նաև ինքնաներկայացման նպատակ էր հետապնդում[26]:

Արտաքուստ բարիդրացիական թվացող եգիպտաամերիկյան հարաբերությունները իրականում բարդ էին և ոչ կայուն. ամերիկյան տարբեր կառույցներ, մասնավորապես ԱՄՆ պետդեպարտամենտը պարբերաբար դատապարտում և մեղադրում էին եգիպտական իշխանություններին երկրում մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների և ոտնահարումների համար: Ի պատասխան ամերիկյան կառույցների քննադատություններին՝ Եգիպտական կողմը կոչ էր անում չմիջամտելու իր ներքին գործերին:

Ամենևին պատահական չէր, որ այս զարգացումների շրջանակներում փետրվարի 18–ին եգիպտական բանտից ազատվեց 44–ամյա Այման Նուրը, ով դեռ 2005 թ. դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման եգիպտական իշխանությունների կողմից՝ մեղադրվելով իր հիմնդրած «Ալ–Ղադ» կուսակցությունն օրինականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կեղծելու մեջ: Նուրին ազատ արձակելու վերաբերյալ միջնորդում էին ոչ միայն եգիպտական իրավապաշտպանները, այլև մի շարք արևմտյան երկրներ, այդ թվում նաև ԱՄՆ:

Եգիպտոսի ներքաղաքական զարգացումների համատեքստում կարևոր տեղ էր զբաղեցնում 2010 թ. նոյեմբերի 28–ին և դեկտեմբերի 4–ին երկու փուլով անցկացված խորհդարանի ստորին պալատի ընտրությունները[27]: Նոյեմբերի 8–ին հայտնի

[25] Խոսքը գնում էր Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ–Ասադի մահից հետո երկրում իշխանությունը նրա որդուն՝ Բաշար Ալ–Ասադին փոխանցելու մասին:

[26] Gamal Mubarak, Possible Successor to Egyptian President, visits USA, http://www.huffingtonpost.com

[27] Եգիպտոսի օրենսդիր իշխանությունը բաղկացած է երկպալատանի համակարգից՝ վերին և ստորին պալատներից. 1) Խորհրդատվական խորհուրդ (Մաջլիս աշ–շուրա) և 2) Ժողովրդական ժողով (Մաջլիս ալ–շաաբ): Մաջլիս աշ–շուրան ստեղծվել էր 1980 թ.: Այնուհետև նրա լիազորությունները լրամշակվեցին 2011 թ. թիվ 109 դեկրետ–օրենքով: Այն խորհրդատվական մարմնի լիազորություններ ունի: Նախագահն այն կարող էր ցրել՝ ըստ իր ցանկության: Համաձայն այդ օրենքի՝ վերջինս կազմված է 270 անդամներից, որոնց 2/3–ը

դարձավ, որ խորհրդարանական ընտրություններին 508 տեղի համար կպայքարեն 5720 թեկնածու, սակայն Կենտրոնական ընտրական կոմիտեն թույլատրեց մասնակցել ընտրություններին միայն 4686–ին: «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն առաջադրել էր 134 թեկնածու, որոնք հանդես էին գալիս որպես անկախ թեկնածուներ. «Վաֆդը»՝ 250 թեկնածու, «Ալ–Թագամմուն»՝ 82 թեկնածու, նասերականները՝ 47 թեկնածու[28]:

Նոյեմբերի 9–ին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գերագույն ղեկավար Մոհամմեդ Բադին հայտարարեց, որ եթե եգիպտական իշխանություններն ընտրախախտումներ կազմակերպեն, ապա «եգիպտական ժողովրդի զայրույթը կթափվի փողոցներ[29]»: Միևնույն ժամանակ Բադին նշեց, որ «Մուսուլման եղբայրները» չեն դիմի բռնության: Իր հերթին Մուբարաքը հայտարարեց, որ ընտրությունները կլինեն արդար և ազատ: Նոյեմբերի 15–ին ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ֆիլիպ Քրոուլին հայտարարեց, որ Վաշինգտոնը ողջունում է եգիպտական իշխանությունների պատրաստակամությունն՝ ազատ և թափանցիկ ընտրություններ անցկացնելու հարցում: Քրոուլին կոչ արեց նաև թույլատրելու ընտրություններին միջազգային դիտորդների և եգիպտական քաղաքացիական կազմակերպությունների մասնակցությունը: Ի պատասխան ԱՄՆ առաջարկություններին՝ նոյեմբերի 18–ին Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը հայտնեց, որ ԱՄՆ–ի մի շարք առաջարկներ, մասնավորապես միջազգային դիտորդներին Եգիպտոս ուղարկելու առաջարկությունը, անընդունելի են Եգիպտոսի համար: Եգիպտոսի արտաքին քաղաքական գերատեսչությունը նաև մտահոգություն էր հայտնում ԱՄՆ նախագահ Օբամայի և ամերիկյան մի շարք քաղաքագետների հետ հանդիպման ժամանակ հնչեցված առաջարկների վերաբերյալ, մասնավորապես «Մերձավոր Արևելքի

ընտրվում են ուղիղ գաղտնի քվեարկությամբ, իսկ 1/3–ը նշանակվում են երկրի նախագահի կողմից: 180 հոգուց 120–ը պետք է ընտրվեն քաղաքական կուսակցությունների ցուցակով, իսկ 60–ը՝ անհատական թեկնածուների համակագով: Ընտրական շրջանները ներառում են 30 շրջաններ, որտեղ պատգամավորներն ընտրվում են՝ ըստ ցուցակների, և 30 շրջաններ՝ անհատական ընտրակարգով ընտրվող պատգամավորների համար: Մաջլիս ալ–շաաբը, սկսած 2010 թ., բաղկացած էր 518 տեղից, որոնցից 508–ը ընտրվում են համաժողովրդական քվեարկությամբ, 64 տեղ նախատեսված է կանանց համար, և ևս 10–ին նշանակում է նախագահը: Տես www.cia.gov/library

[28] Egypt՝s Islamists Sees Election Setback in 2010, http://www.ikhwanweb.com/article.php?id=17551

[29] M.Badie, A Voice in the Government, http://www.thedailybeast.com/newsweek/2010/11/29/mohammad–badie–on–egypt–s–muslim–brotherhood.html

բարեփոխման» ծրագրի: Եգիպտոսի ԱԳՆ վերոնշյալ քաղաքագետներին անվանեց «Մերձավոր Արևելքում քաոս տարածողներ»՝ ավելացնելով, որ նման նախաձեռնությունները տարածաշրջանը կներքաշեն անդառնալի զարգացումների մեջ:

Ի հավելումն եգիպտական արտաքին գերատեսչության հայտարարությանը՝ նոյեմբերի 26–ին Եգիպտոսի խորհրդարանի խոսնակ Ֆաթհի Սուրուրը նշեց, որ ԱՄՆ–ի կողմից վերը նշված հարցի կապակցությամբ գործադրած ճնշումները կարող են հանգեցնել Եգիպտոսում իսլամական կարգերի հռչակման, ինչը կփոխի տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը:

Ընտրություններից առաջ եգիպտական իշխանությունները կարծում էին, որ ընտրությունների համար բավական կլինի մեկ փուլը, սակայն ընդդիմության գործոնը և երկրում լարված քաղաքական իրադրությունը ընտրական զարգացումները տարան դեպի երկրորդ փուլ: Արդեն նոյեմբերի 30–ին «Մուսուլման եղբայրները» հայտարարեցին, որ ընտրությունների առաջին փուլը հարկավոր է ճանաչել անվավեր, որ իշխանությունների կողմից կատարված ընտրախախտումները զարհուրելի են՝ հայտնելով նաև, որ իրենք բոյկոտում են ընտրությունների հաջորդ փուլը: «Մուսուլման եղբայրների» հայտարարությանը միացան նաև «Վաֆդը» և մյուս ընդդիմադիր կուսակցությունները: Այս ամենի արդյունքում ընտրությունների երկրորդ փուլ անցավ միայն իշխող ԱԴԿ–ն:

Ընտրությունների առաջին փուլում տեղ գտած զանգվածային ընտրախախտումներին արձագանքեց նաև ԱՄՆ–ը՝ արտահայտելով իր խոր հիասթափությունը և կոչ արեց չեղյալ հայտարարելու ընտրությունների առաջին փուլի արդյունքները[30]: Այնուամենայնիվ եգիպտական իշխանությունները շարունակեցին ընտրական գործընթացը՝ հայտարարելով, որ ընդդիմությունը կեղծ տեղեկատվություն է տարածում:

Հարկ է նշել, որ այդ ընտրությունները «մուբարաքյան Եգիպտոսի» վերջին խորհրդարանական ընտրություններն էին: Երկու փուլով անցած խորհրդարանական ընտրությունները հերթական անգամ ի ցույց դրեցին եգիպտական իշխանությունների դեմ ուղղված զանգվածային դժգոհությունները[31]:

Համաձայն հրապարակված պաշտոնական տվյալների՝

[30] Куделев В., Ситуация в Египте: ноябрь 2010 г., www.iimes.ru

[31] "В Египте оппозиция протестует против нарушений на парламентских выборах, в ходе которых погибли 3 человека", http://www.newsru.com/world/30nov2010/egi.html

Եգիպտոսում խորհրդարանական ընտրությունների արդյունքում գրանցվեց հետևյալ պատկերը՝ «Ազգային–դեմոկրատական կուսակցություն»՝ 420 տեղ, նույն կուսակցությանը հարող անկախ թեկնածուներ՝ 53 տեղ, «Նոր վաֆդ» կուսակցություն՝ 6 տեղ, «Ալ–Թագամմու» կուսակցություն (առաջադեմ ազգային յունիոնիստական կուսակցություն)՝ 5 տեղ, «Ալ–Ղադ» կուսակցություն՝ 1 տեղ, նասերականներ («Արաբական դեմոկրատական» կուսակցություն), «Սոցիալական դեմոկրատիայի կուսակցություն»՝ 1 տեղ, «Սերնդի դեմոկրատական կուսակցություն»՝ 1 տեղ, «Ազատական» կուսակցություն», «Մուսուլման եղբայրներ» կազմակերպություն՝ 1 տեղ, և 10 տեղ նախատեսված պետության նախագահի կողմից համապատասխան նշանակումների համար[32]:

Այդպիսով՝ երկրում իշխող ԱԴԿ–ն զբաղեցրեց ստորին պալատի տեղերի մեծամասնությունը: Հարկ է նշել, որ խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլում ԱԴԿ–ի կողմից պատգամավորական տեղերի մեծ մասի զբաղեցնելը պայմանավորված էր նաև այն փաստով, որ ընտրությունների առաջին փուլից հետո ընդդիմադիր կուսակցությունների ճնշող մեծամասնությունը, այդ թվում և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը հրաժարվեցին ընտրությունների երկրորդ փուլին մասնակցելուց՝ բոյկոտելով այն: Լրատվամիջոցները նշում էին, որ այդ ընտրությունները եգիպտական պատմության մեջ երևի թե վատթարագույնն էին: ԱՄՆ պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Ֆիլիպ Քրոուլին նշեց, որ Եգիպտոսում խորհրդարանական ընտրությունները կասկածելի էին իրենց օբյեկտիվությամբ, և ԱՄՆ–ում մտահոգված էին Եգիպտոսում ժողովրդավարության ոտնահարմամբ[33]: Հետաքրքիրն այն էր, որ 2009 թ. դեկտեմբերին հրապարակված «Վիքիլիքսի» աղմկահարույց նյութերից մի քանիսը վերաբերում էին նաև ներքաղաքական իրադրությանը Եգիպտոսում: Համաձայն այդ տեղեկությունների՝ Եգիպտոսում ԱՄՆ նախկին դեսպան Ֆրենսիս Ռիչարդսոնը Վաշինգտոն 2007 թ. մայիսին ուղարկած իր նամակում գրել էր, որ Գամալ Մուբարաքի թեկնածությունը, որպես Եգիպտոսի նախագահ, կառաջադրվեր իշխող ԱԴԿ–ի կողմից համապատասխան միջոցների օգտագործմամբ, ՏԻՄ և խորհրդարա-

[32] Guide to Egypt's Transition, http://egyptelections.carnegieendowment.org/2010/09/10/egypt

[33] Նույն տեղում:

նական ընտրությունների միջոցով: Սակայն դեսպանը նշում էր նաև, որ Գամալի թեկնածությունը միանշանակ չէր ընկալվում եգիպտական բարձրաստիճան մի շարք զինվորականների կողմից, որոնք հասկանում էին, որ նախ՝ Գամալը զինվորական է, և երկրորդ՝ նա այսպես կոչված եգիպտական «հին գվարդիայից» չէ: Դեսպանը նշում էր նաև, որ Գամալը հեղինակություն չի վայելում նաև եգիպտական հասարակությունում: Եգիպտոսում ԱՄՆ հաջորդ դեսպան Մարգրեթ Սկոբիի՝ 2009 թ. մայիսին Վաշինգտոն գրած նամակում նշվում էր, որ Հոսնի Մուբարաքն ինքը կարող էր կրկին առաջադրվել նախագահի հաջորդ ընտրություններում, և կամ որպես հավանական թեկնածուներ նշվում էին Գամալ Մուբարաքի, Օմար Սուլեյմանի և ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսայի թեկնածությունները: Սկոբին նշում էր նաև, որ չնայած բարձրաստիճան զինվորականների արտաքուստ հավատարմությանը Մուբարաքին՝ հնարավոր էր, որ նրանցից մի քանիսն ամենակարևոր պահին չսատարեն իրենց նախագահին[34]:

Նպատակ ունենալով մեկուսացնելու ընդդիմությանը՝ եգիպտական իշխանությունները հոկտեմբերի 19–ին սառեցրին եգիպտական 12 հեռուստաալիքների՝ եթեր դուրս գալու թույլտվությունը[35]: Միևնույն ժամանակ այս ընտրությունների ժամանակ բոլոր ընդդիմադիր կուսակցությունները միաձայն հայտնում էին իրենց բողոքը: Զանգվածային բողոքի ակցիաներ անցկացվեցին Կահիրեում և Ալեքսանդրիայում: Ընդդիմության և ոստիկանական ուժերի միջև բախումներ տեղի ունեցան Քաֆր Աշ–Շեյխ, Դամանխուր և Դաքխալիա քաղաքներում: Ընտրությունների երկրորդ փուլն անցավ դեկտեմբերի 5–ին: Ժողովրդական ժողով ընտրվեց 508 պատգամավոր՝ 254 ընտրատարածքներից: Հարկ է նշել, որ ընտրություններից առաջ Կենտրոնական ընտրական կոմիտեն հրաժարվեց գրանցելու «Մուսուլման եղբայրների» մի շարք թեկնածուների, որոնց կողմնակիցները հակակառավարական ցույցեր կազմակերպեցին: Դրանցից ամենամեծն անցավ Ալեքսանդրիայում: Ընտրություններին չէին թույլատրել մասնակցել նաև օտարերկրյա դիտորդներին[36]:

2010–2011 թթ. արաբական մի շարք երկրների համար գլոբալ ցնցումների, քաղաքական համակարգի ձևափոխման և կարծ-

[34] В. Куделев., “Ситуация в Египте: декабрь 2010 г.”, www.iimes.ru

[35] Մինչդեռ նախորդ ընտրություններին եգիպտական իշխանությունները եթեր դուրս գալու իրավունքից զրկել էին 5 հեռուստաալիք:

[36] В. Куделев., “Ситуация в Египте: выборы в парламент”, www.iimes.ru

ռացած իշխանության կերպարանափոխման ժամանակահատված էր: Տասնյակ տարիներ գոյություն ունեցող արաբական մի շարք վարչակարգեր հայտնվեցին համակարգային փոփոխման ընտրության առջև: Սկիզբ առած զարգացումների համար որպես խթան հանդիսացան թե՛ 2010 թ. Թունիսում սկսված ներքաղաքական ճգնաժամը և թե՛ 2010 թ. աշնանը Եգիպտոսում աննախադեպ ընտրախախտումներով անցկացված խորհրդարանական ընտրությունները:

2011 թ. հունվարի 1-ի գիշերը Ալեքսանդրիայում ղպտիական եկեղեցու մոտ պայթյուն որոտաց, որի արդյունքում զոհվեցին շուրջ 20 և վիրավորվեցին ավելի քան 97 ղպտի քրիստոնեա[37]: Ալեքսանդրիայի քաղաքապետ Աբդ Ալ-Լաբաբը կատարվածի պատասխանատվությունը դրեց «Ալ-Կաիդա» ահաբեկչական կազմակերպության վրա[38]: Հաջորդ օրը Եգիպտոսի ներքին գործերի նախարար Հաբիբ ԱլԱդլին Ալեքսանդրիայում տեղի ունեցած ահաբեկչության մեջ մեղադրեց «Իսլամի բանակ» («Ջեյշ ալ-իսլամ») կազմակերպությանը, որը կապված էր «Ալ-Կաիդայի» հետ[39]: Կարելի է ենթադրել, որ Ալեքսանդրիայում տեղի ունեցած արյունալի դեպքերը միտված էին խարխլելու եգիպտական հասարակական փխրուն կարգը: Կազմակերպիչները հավանաբար հաշվի էին առել նաև այն հանգամանքը, որ որոշ ժամանակ առաջ Եգիպտոսում անցկացված խորհրդարանական ընտրությունները երկրում զանգվածային դժգոհություն էին առաջացրել, որը ևս հարկավոր էր էլ ավելի զարգացնել: Հարկ է նշել, որ Եգիպտոսում ղպտիների և իսլամադավանների միջև պարբերաբար զանգածային բնույթի բախումներ էին տեղի ունենում, որոնք ուղղորդելու դեպքում կարող էին վերաճել նունիսկ հակամարտության:

2011 թ. հունվարի 25-ին Կահիրեում կազմակերպվեց «Ցասման օրը»[40]: Եթե հիմք ընդունենք «Վիքիլիքսի» տարբեր հրա-

[37] Egypt Bomb Kills 21 at Alexandria Coptic Church, http://www.bbc.co.uk/news/world-middle-east-12101748
Պայթյունը տեղի էր ունեցել ամանորյա ավանդական աղոտքից մեկ ժամ անց, երբ եկեղեցու այցելուները լքում էին եկեղեցին:

[38] Теракт в Александрии и демография в Палестине: обзор арабских СМИ, http://www.newsru.co.il/press/02jan2011/arab_a101.html

[39] "Взрыв в Александрии устроили палестинские "друзья" "Аль-Каиды", http://www.vesti.ru/doc.html?id=422568&tid=87114

[40] Ըստ "Wikileaks"-ի՝ Կահիրեում ԱՄՆ-ի դեսպանությունը վերջին երեք տարիների ընթացքում օգնություն էր տրամադրում ընդդիմադիր եգիպտացի երիտասարդներին՝ երկրում իշխանափոխություն իրականացնելու համար: 2008 թ. դեկտեմբերի 30-ին Վաշինգտոն հղած իր գաղտնի նամակում

պարակումները, ապա ներքաղաքական ճգնաժամը և ծայրահեղ լարվածության առաջացումը Եգիպտոսում ամենևին էլ անակնկալ չէր, քանի որ ներքաղաքական զարգացումների նման սցենարը վերջին տարիներին հաճախ էր շոշափվում Եգիպտոսում ամերիկյան գաղտնի գործակալների և ընդդիմադիր որոշ ուժերի միջև գոյություն ունեցող գաղտնի շփումների ժամանակ: Հարկ է նշել, որ դեռ 2011 թ. հունվարի 19–ին «Մենք բոլորս Խալեդ Սաիդ ենք»[41] շարժման ներկայացուցիչները հայտարարեցին, որ հունվարի 25–ին ողջ Եգիպտոսում տեղի կունենան աննախադեպ բողոքի ակցիաներ և ցույցեր՝ ուղղված եգիպտական իշխանությունների դեմ: Եգիպտական հասարակությունը ձգտում էր փոփոխությունների և չէր ցանկանում 2011 թ. սեպտեմբերին նախատեսվող նախագահական ընտրություններին տեսնել Գամալ Մուբարաքին երկրի իշխանությունը փոխանցելու հավանականությունը: Հոսնի Մուբարաքի՝ տասնյակ տարիներ իշխանության ղեկին գտնվելու հանգամանքը ևս հասարակությունը դիտարկում էր որպես Եգիպտոսի աղքատության և երկրի տնտեսական աճի հիմնական պատճառներից մեկը:

Անտարակույս է այն հանգամանքը, որ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը 20–րդ դարի սկզբից ծավալած իր ընդդիմադիր գործունեությամբ կարողացավ յուրովի հասունացնել եգիպտական հասարակությունը նշված այսպես կոչված «Ցասման օրվան» և հակաիշխանական իրենց երկարատև պայքարով որոշ առումով նաև «քաղաքացիական զարթոնքի» միտման գործոն հանդիսանալ: «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ներկայացուցիչները հայտարարեցին, որ սոցիալական ցանցերի միջոցով կկարողանան փողոց հանել 100 հազարավոր եգիպտացիների[42]:

Մի շարք հեղինակների կարծիքով՝ Եգիպտոսում սկսված

Եգիպտոսում ԱՄՆ դեսպան Մարգրեթ Սկոբին գրում էր, որ 70.000 երիտասարդներից բաղկացած «Ապրիլի 6–ի» ընդդիմադիր շարժումը պատարաստվում էր իշխանափոխություն իրականացնել 2011 թ.: Սկոբին նշում էր նաև, որ «Ապրիլի 6–ի» շարժումը կազմակերպչական հիմնական գործողությունները պատրաստվում էր իրականացնել սոցիալական ցանցերի օգնությամբ:

[41] Խալեդ Սաիդի անունը եգիպտական ընդդիմամդիր «Ապրիլի 6–ի» շարժման և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության համար դարձել էր խորհրդանշական: Խալեդ Սաիդը 28 տարեկան հասակում մահացել էր 2010 թ. Ալեքսանդրիայի բանտում տանջանքների ենթարկվելուց հետո: Տես “Братья назначили дату народного восстания в Египте”, http://www.newsru.co.il/mideast/

[42] Over 37.500 Egyptians to Take Part on January 25th Uprising, http://www.ikhwanweb.com/article.php?id=27870

ներքաղաքական ճգնաժամը Մուբարաքի 30–ամյա կառավարման արդյունքն էր, որի պայմաններում եգիպտական ընդդիմությունը չուներ իրական հնարավորություն «մոտենալու նախագահական աթոռին», ինչպես նաև գործազրկությունը, եգիպտական ընչազուրկ ստվար զանգվածի սոցիալական վիճակը բարելավելու իրական մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև ժողովրդագրական խնդիրը[43]: Ներքաղաքական ճգնաժամը Եգիպտոսում պայմանավորված էր նաև Թունիսում սկսված հեղափոխության գործոնով, որն էլ «դոմինոյի էֆեկտի»[44] նշանակություն ունեցավ[45] ոչ միայն Եգիպտոսի, այլև արաբական ևս մի քանի այլ երկրների համար: Եգիպտոսում, ինչպես և Թունիսում տեղ գտան ինքնահրկիզման դեպքեր: Օրինակ՝ հունվարի 17–ին Կահիրեում՝ խորհրդարանի շենքի առջև, մի եգիպտացի ուսանող ինքնահրկիզվեց: Հունվարի 19–ին Միջուկային էներգիայի միջազգային գործակալության (ՄԷՄԳ) նախկին ղեկավար եգիպտացի Մուհամմեդ Ալ–Բարադեին լրագրողների հետ զրույցում նշեց՝ իրավիճակը Եգիպտոսում կապված է Թունիսում ընթացող զարգացումների հետ, այնուհետև շեշտեց, որ Մուբարաքը ստիպված կլինի հրաժարական տալ, քանի որ եգիպտական ժողովուրդը փոփոխությունների կարիք ունի[46]:

Հարկ է նշել, որ դեռ 2010 թ. փետրվարին Բարադեյը, լքելով ՄԷՄԳ–ի ղեկավարի պաշտոնը, հայտարարեց, որ Մուբարաքին

---

[43] А. Коротаев, , Ю. Зинькина, “Египетская революция 2011 г.”: структурно–демографический анализ, Полис, Экстратекст. 2011, Выпуск 1., տե՛ս http://www.politstudies.ru/extratext/text/issue2011A.htm

Ընդդիմադիրները պահանջում էին նաև պաշտոնանկ անել Եգիպտոսի ներքին գործերի նախարար Հաբիբ Ալ–Ալիին:

[44] Քաղաքական այս տեսությունն առաջադրվել է ԱՄՆ պետքարտուղար Ջոն Դալեսի կողմից, որի հիմքում ընկած է «շղթայաձև արձագանքի» սկզբունքը: Այս տեսությունն օգտագործվում էր ԱՄՆ վարչակազմի կողմից Վիետնամում պատերազմ սկսելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար, քանի դեռ Վաշինգտոնը կարծում էր, որ եթե Հարավային Վիետնամում հաղթի կոմունիզմը, ապա դա շղթայաձև ձևվով կազդի տարածաշրջանի մյուս երկրների վրա: «Դոմինոյի էֆեկտի» տեսությունը լայնորեն օգտագործվում էր նաև 1980–ականներին Ռեյգանի վարչակազմի կողմից Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ:

[45] Ինչպես հայտնի է, 2010 թ. դեկտեմբերի 17–ին Թունիսի Սիդի–Բուզիդ քաղաքի քաղաքապետարանի առջև 26–ամյա թունիսցի Մուհամմեդ Բուազիզին՝ որպես սոցիալ–տնտեսական և քաղաքական անարդարության դեմ բողոքի ցասում, ինքնահրկիզում կատարեց: Антиправительственные демонстрации перекинулись из Туниса в Египет, տե՛ս http://www.rbcdaily.ru/2011/01/25/

[46] “Эль–Барадеи, Египет ждет то же, что и Тунис”, http://www.newsru.co.il/mideast/

ընդդիմադիր շարժում է սկսելու[47] և հաջողության դեպքում կստանձնի Եգիպտոսի նախագահի պաշտոնը[48]: Արդեն 2010 թ. դեկտեմբերին՝ դեռ թունիսյան իրադարձություններից բավականին ժամանակ առաջ, Բարադեյն եգիպտական ժողովրդին քաղաքացիական անհնազանդության կոչ հղեց: Հունվարի 28–ին Բարադեյն արդեն մասնակցում էր Կահիրեում կազմակերպված ցույցին[49], իսկ հունվարի 30–ին անցկացվող ցույցին Բարադեյն արդեն հանդես եկավ որպես միացյալ ընդդիմության, այդ թվում և իսլամականների առաջնորդ: Նպատակ ունենալով հսկողության տակ պահելու ներքաղաքական զարգացումները երկրում՝ եգիպտական իշխանությունները սկսեցին ձերբակալել ընդդիմության՝ թե՛ իսլամիստ և թե՛ լիբերալ առաջնորդերին[50]: Նույն օրը երկրում անջատվեց ինտերնետը, մասնակի անջատվեց բջջային կապը, իսկ մեծ քաղաքներում պարետային ժամ մտցվեց[51]: Երկրի խոշոր քաղաքներում սկսվեցին ընդհարումներ զորքերի և ցուցարարների միջև: Փետրվարի 2–ին Եգիպտոսի փողոցներում հայտնվեցին նաև այն ուժերը, որոնք սատարում էին Մուբարաքին[52]: Կահիրեի տարբեր արվարձաններում նրանց և ընդդիմադիրների միջև ևս բախումներ գրանցվեցին[53]:

Արդեն փետրվարի 3–ին Մեծ Բրիտանիայի իշխանությունները Կահիրեն հայտարարեցին «պատերազմի գոտի»[54] և կոչ արեցին բրիտանահպատակ քաղաքացիներին լքելու Եգիպտո-

---

[47] "Бывший глава МАГАТЭ эль–Барадеи создает "Коалицию за перемены", http://www.newsru.co.il/mideast/24feb2010/baradei510.html

[48] "Мухаммед эль–Барадеи хочет баллотироваться на пост президента Египта", http://www.newsru.co.il/mideast/23feb2010/baradei504.html

[49] Հարկ է նշել, որ հունվարի 27–ին՝ Եգիպտոս ժամանելուն պես, Բարադեյն ոստիկանությունը տնային կալանքի տակ վերցրեց: Բարադեյը հայտարարել էր, թե ինքը պատրաստ էր ստանձնել Եգիպտոսի նախագահի պաշտոնը, եթե իրեն այդ մասին «խնդրի փողոցը»՝ միևնույն ժամանակ կոչ անելով Մուբարաքին թողնելու իր պաշտոնը: Տես "Бывший главе МАГАТЭ призвал президента Египта уйти в отставку", http://www.lenta.ru/news/2011/01/27/rescall/

[50] "В Египте продолжаются массовые аресты членов движения "Братья–мусульмане"", http://www.portal–credo.ru/site/?act=news&id=82114&cf=

[51] "Египет стер себя с интернет–карты мира", http://www.portal–credo.ru/site/?act=news&id=82114&cf=

Տես՝ նաև՝ Египет: армия охраняет пирамиды, http://www.zman.com/news/2011/01/30/93951.html

[52] "Violent Clashes Mark Protests Against Mubarak"'s Rule, http://www.nytimes.com/2011/01/26/

[53] В Египте сторонники президента Мубарака открыли огонь по оппозиционерам", http://www.1tv.ru/news/world/170120

[54] "Protest in Egypt and Unrest in Middle East–as it happened", http://www.guardian.co.uk/global/blog/2011/jan/25/middleeast–tunisia#block–51

սը: Հունվարի 26–ից Եգիպտոսի տարբեր խոշոր քաղաքներում, այդ թվում՝ Կահիրեում սկսվեցին զանգվածային անկարգություններ և զինված բախումներ զորքերի և ընդդիմադիրների միջև[55]: Հարձակումներ էին իրականացվում վարչական շենքերի վրա, եգիպտական ոստիկանությունը շարունակում էր ձերբակալությունները[56]: Հունվարի 27–ին եգիպտական ֆոնդային բորսան դադարեցրեց առք ու վաճառքը երկրում սկսված ճգնաժամի պատճառով: Հունվարի 28–ին երկրում կազմավորվեց անցումային կառավարություն, որի ղեկավարումը ստանձնեց Եգիպտոսի ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Մուհամմեդ Հուսեյն Տանտաուին[57], իսկ հունվարի 29–ին Մուբարաքը հայտարարեց հին կառավարության կազմալուծման մասին[58]: Հունվարի 29–ի դրությամբ նշվում էր 13 սպանվածի և 1030 վիրավորվածների մասին[59]: Հունվարի 29–ին Մուբարաքը վերականգնեց է 1981 թ. փաստացի չգործող Եգիպտոսի փոխնախագահի պաշտոնը, որը ստանձնեց Եգիպտոսի հետախուզության նախկին պետ Օմար Սուլեյմանը: Վերջինիս նախկին պաշտոնը հունվարի 31–ին ստանձնեց Մուրադ Մուաֆին: Պաշտոնանկ արված վարչապետ Ահմեդ Նազիֆի փոխարեն նշանակվեց Եգիպտոսի ռազմաօդային ուժերի նախկին հրամանատար Ահմեդ Շաֆիքը[60]: Այս նույն ժամանակահատվածում եգիպտական կողմից հանվեց Ռաֆահ անցակետի շրջափակումը, որտեղ Սինայի բեդվինների և եգիպտացի սահմանապահների միջև տեղի ունեցած բախման արդյունքում 12 եգիպտացի սահմանապահ

---

[55] "Egypt Protesters set Fire to Government Building in Suez", http://www.reuters.com/article/2011/01/26/us–egypt–protest–suez–idUSTRE70P7T620110126

Հունվարի 27–ին Սուեզ քաղաքում հրկիզվեց հրշեջ կայանը, հունվարի 9–ին հայտնի դարձավ առաջին 9–ը զոհված ընդդիմադիրների մասին: Ալեքսանդրիա, Լուքսոր, Մինա, Շարքիյա, Ալ–Մանսուրա, Իսմայիլիա քաղաքներում տեղի ունեցան զինված բախումներ, հունվարի 28–ին Կահիրեում հրկիզվեց իշխող «Ազգային–դեմոկրատական» կուսակցության շենքը, և փորձ արվեց թալանելու Կահիրեի եգիպտական պատմության թանգարանը, նույն օրը ընդդիմադիր ուժերը փորձեցին գրոհել Եգիպտոսի արտաքին գործերի նախարարության շենքը:

[56] "Egypt Protests: Anti–Mubarak Demonstrators Arrested", http://www.bbc.co.uk/news/world–africa–12289475

[57] "Мубарак бежал из Египта", http://mignews.ru/news/disasters/world/280111_224624_05091.html

[58] "Мубарак распустил правительство Египта:, http://lenta.ru/news/2011/01/29/mubarak/

[59] Նույն տեղում:

[60] "Президент Египта Мубарак назначил новым премьером экс–главу ВВС страны", http://www.gazeta.ru/news/lenta/2011/01/29/n_1680006.shtml

էր զոհվել[61]: Հունվարի 30–ին եգիպտական Վադի–Նաթրուն բանտից շուրջ 1000 բանտարկյալներ փախուստի դիմեցին[62]: Նույն օրը Կահիրեում տուն վերադառնալիս սպանվեց ադրբեջանական դեսպանության աշխատակիցը, որից հետո պաշտոնական Բաքուն սկսեց Ադրբեջանի քաղաքացիների դուրս բերումը Եգիպտոսից[63]: ԱՄՆ–ն ևս կոչ արեց իր քաղաքացիներին լքելու Եգիպտոսը[64]: Հարկ է նշել, որ ԱՄՆ–ի տվյալ կոչին նախորդել էր Եգիպտոսում 1986–1991 թթ. ԱՄՆ նախկին դեսպան Ֆրենք Վիսների հանդիպումը Մուբարաքի հետ[65]: Վաշինգտոնը հույս ուներ, որ Մուբարաքի հետ մտերիմ հարաբերություններ ունեցող նախկին դեսպանին կհաջողվեր համոզել նախագահին հրաժարական տալ, սակայն ապարդյուն[66]: Երկիրը լքելու ցուցում ստանում են նաև ռուսական «Լուկոյլ» և «Նովատեկ» ընկերությունների աշխատակիցները[67]: Հունվարի 30–ին եգիպտական զորքեր մտցվեցին նաև Շարմ Ալ– Շեյխ[68]: Իսկ հունվարի 31–ին դադարեցվեց նաև Ալեքսանդրիայի նավահանգստի շահագործումը[69]:

Այս ընթացքում ընդդիմությունը, նպատակ ունենալով ուժեղացնելու ճնշումը իշխանությունների նկատմամբ, միավորվեց «Ազգային ճակատում» և փետրվարի 1–ը հայտարարեց «մի-

---

[61] "Эхо египетского восстания: перестрелка на КПП в Рафиахе, 12 убитых", http://www.zman.com/news/2011/01/29/93912.html

[62] "Из тюрьмы Египта збежали тысячи заключенных", տես http://lenta.ru/news/2011/01/30/prisoners/

[63] "При беспорядках в Египте погиб сотрудник посольства Азербайджана", http://news.day.az/society/250550.html?crnd=73626

[64] "США призывают своих граждан покинуть Египет "быстро, насколько возможно", готовят в пондельник эвакуацию", տես http://www.gazeta.ru/news/lenta/2011/01/30/n_1680674.shtml

[65] Վաշինգտոնում որոշեցին, որ միայն դեսպան Մարգրեթ Սկոբիի ներկայությունը Կահիրեում բավական չէ Մուբարաքի հետ բանակցելու համար: Այդ իսկ պատճառով որոշում ընդունվեց Կահիրե գործուղելու Վիսներին: Վիսները բավականին մեծ հեղինակություն ունի ԱՄՆ–ում, նրա հայրը ԿՀՎ հիմնադիրներից մեկն էր:

[66] А. Реутов, "Хосни Мубарака отстраняют и привлекают. Египтянам уже мало отставки президента Египта, они требуют суда над ним", http://www.centrasia.ru/newsA.php?st=1296622800

[67] "ЛУКойл" и "Новатэк" эвакуируют сотрудников из Египта, где число жертв достигло 150, туристы остаются, http://www.gazeta.ru/news/lastnews/2011/01/30/n_1680746.shtml

[68] "Власти Египта вводят в Шарм аш Шейх войска", http://www.gazeta.ru/news/lastnews/2011/01/30/n_1680794.shtml

[69] "Египетские власти закрыли морской порт Александрии", http://www.vesti.ru/doc.html?id=424590

լիոնների քայլքի» օր[70]: Բացի Մուբարաքի հրաժարականի մասին բացականչություններից՝ «եգիպտական փողոցի» կարգախոսն էին նաև «հաց, խաղաղություն և հարգանք» բառերը: Հերթական անգամ հավաքվելով Թահրիր հրապարակում, որը արդեն վերածել էր «եգիպտական հեղափոխության կենտրոնական հավաքատեղիի», ընդդիմությունն ակնկալում էր, որ բանակը կանցնի իրենց կողմը և Մուբարաքը ստիպված կլինի հրաժարական տալ[71]: Նույն օրը երեկոյան Մուբարաքը ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ և հայտարարեց, որ չի առաջադրվի 2011 թ. աշնանը նախատեսվող նախագահական ընտրություններում, բայց մինչ այդ չի հանձնի երկրի նախագահի պաշտոնը[72]: Մուբարաքի ելույթի արդյունքում երկրում իրավիճակն էլ ավելի սրվեց և փետրվարի 2–ին Ալ–Բարադեյը խնդրեց եգիպտական զինված ուժերին միջամտել ստեղծված իրավիճակին, քանի որ ընդդիմադիրներին հնարավոր չէ վերահսկել. այրվում էին խանութներ, գրասենյակներ, իսկ եգիպտական բանտերից փախուստի դիմածների թիվը հասնում էր 20.000–ի, որոնց շարքերում էին նաև «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության և «Համաս» շարժման ներկայացուցիչները[73]:

Փետրվարի 4–ին ընդդիմությունը կրկին կազմակերպեց «միլիոնների երթի» օր: Նույն օրը շարունակելով պահանջել Մուբարաքի հրաժարականը՝ «Մուսուլման եղբայրները» և Ալ–Բարադեյը[74] ևս հայտարարեցին, որ չեն մասնակցի ապագա նախագահական ընտրություններին[75]: Հայտնվելով գրեթե անելանելի վիճակում և զրկվելով արտաքին աշխարհի աջակցությունից՝ Մուբարաքը նախագահական պարտականությունների մի մասը հանձնեց Օմար Սուլեյմանին, սակայն դարձյալ հայտարարեց, որ կմնա իշխանության գլուխ մինչև 2011 թ. աշնանը նախատեսվող

[70] "Египетская оппозиция объединилась в Национальный фронт", http://www.interfax.ru/society/news.asp?id=175635

[71] А.Реутов, "Хосни Мубарака отстраняют и привлекают. Египтянам уже мало отставки президента Египта, они требуют суда над ним", http://www.centrasia.ru/newsA.php?st=1296622800

[72] Президент Египта не будет участвовать в следующих выборах, http://top.rbc.ru/politics/01/02/2011/536657.shtml

[73] За время массовых протестов из тюрем Египта бежали 20 тысяч зеков, http://world.comments.ua/2011/02/02/227620/za–vremya–massovih–protestov.html

[74] Эль–Барадеи не будет бороться за пост президента Египта, http://www.vesti.az/news.php?id=67203

[75] "Братья–мусульмане" отказались от власти в Египте, http://www.vesti.az/news.php?id=67140

ընտրությունները[76]: Չնայած Մուբարաքի այս հայտարարությանը, ակնհայտ էր, որ հուսալքված և միջազգային ճնշման տակ գտնվող նախագահի կողմից իր լիազորությունների մի մասի փոխանցումը Օմար Սուլեյմանին նշանակում էր մուբարաքյան դարաշրջանի ավարտի սկիզբը:

Արդեն հաջորդ օրը՝ փետրվարի 11–ին, Մուբարաքը հայտարարեց իր պաշտոնանկության մասին[77]: Փետրվարի 13–ին երկրում հռչակվեց Ժամանակավոր ռազմական դիկտատուրա, իսկ իշխանությունն անցավ Զինված ուժերի բարձրագույն խորհրդին՝ գեներալ Տանտաուի[78] գլխավորությամբ[79], վարչապետ Շաֆիքը պահպանեց իր լիազորությունները մինչև նոր կառավարության ձևավորումը: Բարձրագույն խորհուրդը դադարեցրեց սահմանադրության գործունեությունը և ցրեց խորհրդարանը[80]: Մուբարաքի պաշտոնաթող լինելուն հաջորդած քաղաքական զարգացումները դժվար թե ստիպեն հավատալ, որ երկրում համակարգային լուրջ փոփոխություններ գրանցվեցին: Ինչպես նշում է այդ կապակցությամբ Բարադեին, «Եթե ես Եգիպտոսը լքեի հեղափոխությունից առաջ՝ հունվարի 24–ին, և վերադառնայի Մուբարաքի հրաժարականից հետո՝ փետրվարի 13–ին, դժվար թե հավատայի, որ այս երկրում հեղափոխություն է եղել»[81]:

Կարելի նշել, որ հեղափոխական զարգացումները Եգիպտոսում երկու եզրակացության հանգեցրին՝ առաջինը, որ Մուբա-

---

[76] Defiant Mubarak Refuses to Resign, http://www.aljazeera.com/news/middleeast/2011/02/201121017251977683 0.html|title=Defiant

[77] Мубарак ушел в отставку, http://lenta.ru/news/2011/02/11/mubarak1/
Խորհուրդը ցրեց խորհրդարանը և առաջադրեց սահմանադրական փոփոխություններ անցկացնելու մասին պահանջը, որի հիման վրա պետք է ձևավորվեր նոր ժողովրդավարական իշխանական համակարգ, որի հիման վրա էլ կանցկացվեին նոր ժողովրդավարական ընտրություններ: Կառավարության աշխատակազմի ղեկավար Քամալ Ահմեդ Ալ–Գանզուրիին հանձնարարվեց նոր կառավարություն ձևավորել մինչև 2011 թ. նոյեմբերի 27–ը:

[78] Հարկ է նշել, որ Տանտաուին առանձնապես մեծ ժողովրդականություն չի վայելում Եգիպտոսում, և ժողովրդի շրջանում ստացել է «Մուբարաքի պուդել» անունը: Sh. Joshi, Viewpoint: Too Early to Celebrate in Egypt?, http://www.bbc.co.uk/news/world–middle–east–12438007

[79] Руководить внутренней и внешней политикой Египта будет глава Высшего совета ВС, http://www.fontanka.ru/2011/02/13/036/

[80] Военные Египта отменили действие конституции и распустили парламент, http://www.fontanka.ru/2011/02/13/030/

[81] H.Hendawi, Egypt's Arab Spring: A Revolution Gone Astray, http://www.guardian.co.uk/world/feedarticle/9957832, Հետ «հեղափոխական» Եգիպտոսի մասին տե՛ս նաև՝ The Failings of Egypt's Arab Spring Revolution, http://www.dw.de/dw/article/0,,16032603,00.html

ռաքների ընտանիքից էլ ոչ ոք չի հավակնի Եգիպտոսի նախագահի պաշտոնին, և երկրորդ, որ հանձինս եգիպտական հասարակության՝ աշխարհը տեսավ, որ երկրում հասունացած է քաղաքացիական մտածելակերպ ունեցող բնակչության հոծ զանգված, առողջ քաղաքացիական հասարակություն և ժողովրդավարական քաղաքական համակարգ կառուցելու բնակչության պատրաստակամություն: Եգիպտական պետության մոդելը, մասնավորապես «հեղափոխությունից» հետո ավելի հաճախ սկսեցին նմանեցնել Թուրքիայի «խորքային պետություն» մոդելին՝ փորձելով գտնել ընդհանուր զուգահեռներ[82]:

[82] Sh. Joshi, Viewpoint: Too Early to Celebrate in Egypt?, http://www.bbc.co.uk/news/world–middle–east–12438007

*ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ*

# «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ՍԻՐԻԱՅՈՒՄ. ՊԱՅՔԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

2010 թ. ի վեր արաբական աշխարհում սկիզբ առած հակակառավարական լայնածավալ շարժումները[1], որոնք Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում և Եմենում ուղեկցվեցին իշխանափոխությամբ, իսկ արաբական այլ երկրներում՝ հասարակական հուժկու ելույթներով, հայտնի դարձան այսպես կոչված «արաբական գարուն» անունով, որին քաղաքական զարթոնքի նշանակություն տրվեց[2]:

Գործընթացը, որ սկիզբ առավ Թունիսից, արաբական երկրներից յուրաքանչյուրում աչքի ընկավ իր առանձնահատկություններով և ընթացավ տարբեր սցենարներով: Հատկանշական է, որ վարչակարգերի դեմ ուղղված շարժումները դրսևորվեցին տարերային ձևով՝ առանց մշակված հայեցակարգերի ու առաջնորդող քաղաքական ուժերի: Ընդվզող հասարակություններում երիտասարդության դերն ամենահանգուցայինն էր, իսկ համացանցը դարձավ այն հենքը, որը նպաստեց համախմբմանը և պայքարի հետագա ծավալմանը:

---

[1] Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի (Մաղրիբ) մի շարք երկրներում սկսված հակակառավարական ելույթներն, ինչ խոսք, անակնկալ էին, սակայն դրանք աննախադեպ չէին, ինչպես սխալմամբ նշում էին շատ ու շատ հետազոտողներ: Արաբական երկրների նորագույն պատմության վերջին շրջանում արդեն երկրորդ անգամ է, ինչ «արաբական փողոցը», անտեսելով վարչակարգերի կողմից իրականացվող բռնաճնշումները, նման կերպ ընդվզում է: Հուզումների վերջին նմանօրինակ ալիքը կապված էր 20–րդ դարի առաջին կեսին տարածաշրջանում խմորվող ազգային–ազատագրական շարժումների հետ, որոնք այն ժամանակ ուղղված էին արտաքին ուժերի դեմ:

[2] «Արաբական գարնան» մեկնարկը կապված է 2010 թ. դեկտեմբերի 17–ին թունիսցի երիտասարդ Մուհամադ Բուազիզի ինքնահրկիզման հետ: Վերջինս այդ քայլին էր դիմել՝ բողոքելով ոստիկանության գործողությունների դեմ, երբ նրան արգելվել էր փողոցում զբաղվել բանջարեղենի և մրգի վաճառքով:

Միտված լինելով հասարակական–քաղաքական բարեփոխումների իրականացմանն ու ժողովրդավարության հաստատմանը՝ «արաբական գարունն» իրականում որոշակիորեն բարդ և խրթին իրավիճակներ ստեղծեց արաբական երկրներում[3]: Եվ չնայած այն փաստին, որ 2011–ից ի վեր սկիզբ առած և «դոմինոյի էֆեկտով» ընթացող հակակառավարական հուզումները կապված էին տասնամյակներ ի վեր արաբական երկրներում կուտակված սոցիալական, տնտեսական և քաղաքական բնույթ ունեցող համակարգային խնդիրների հետ[4], աստիճանաբար ի հայտ եկան նաև այդ գործընթացներում աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների հետապնդած շահերը, որոնք շատ դեպքերում դրսևորվեցին մարդու իրավունքների և քաղաքական ազատությունների պաշտպանության լույսի տակ:

Այս տեսանկյունից գիտական և քաղաքական կարևորություն է ներկայացնում նաև Սիրիայի Արաբական Հանրապետությունում (ՍԱՀ) և նրա շուրջ ծավալված գործընթացը[5]: Եթե Բաշար Ալ–Ասադի ներքին ընդդիմադիրները հայտարարում էին, որ ձգտում են իշխող վարչակարգի տապալման միջոցով հասնել Սիրիայում ժողովրդավարական համակարգի ձևավորմանը, ապա հակաասադական վարչակարգի արտաքին ընդդիմախոսները հետամուտ էին այդ երկրի աշխարհաքաղաքական ուղենիշների փոփոխությանը:

Սիրիան Մերձավոր Արևելքի հանգուցային պետություններից

[3] «Արաբական գարնան» հետևանքով արաբական աշխարհում խարխլվեց ներքաղաքական կյանքի հավասարակշռությունը, մշուշոտ դարձան զարգացման հեռանկարները: Զ. Բժեզինսկու կարծիքով՝ «արաբական գարունը» գրեթե ոչինչ չի փոխի. քաղաքական զարթոնքն արաբական երկրներում կհանգեցնի ոչ թե ժողովրդավարական, այլ պոպուլիստական վարչակարգերի ձևավորմանը՝ հաշվի առնելով, որ ժողովրդավարությունը երկարատև գործընթաց է, իսկ պոպուլիզմը գրավում է զանգվածներին: Տես З. Бжезинский: Политическое пробуждение арабов скорее приведет к возникновению популистских, а не демократических режимов, http://www.centrasia.ru/newsA.php?st=1303997880

[4] Արդեն անկախությանը հաջորդած տարիներին ավտորիտարիզմի ճանապարհով ընթացող արաբական երկրներում, չնայած առանձին ոլորտներում ունեցած հաջողություններին, հասարակական–քաղաքական կյանքը որոշակիորեն լճացավ, մեծ հարված հասցվեց խոսքի ազատությանը, այլախոհությունը սկսեց դաժանորեն պատժվել: Այս ամենին գումարվեցին սոցիալ–տնտեսական խնդիրները՝ անհավասար մրցակցային պայմանները, ժողովրդագրական աճի բարձր ցուցանիշները, սոցիալական բևեռացումը, գործազրկությունը, կլանային համակարգի ձևավորումը, վերջին տարիներին՝ նաև համաշխարհային տնտեսական ճգնաժամը և այլն, որոնք բնականաբար, հասարակական լուրջ դժգոհություն էր ստեղծել:

[5] Հոդվածում փորձ է արվել քննության ենթարկել Սիրիայում և նրա շուրջ ծավալված գործընթացները 2011 թ. մարտից մինչև 2012 թ. մայիսը:

մեկն էր՝ առաջին հերթին որպես Իսրայելին հակազդող երկիր, նաև՝ որպես տարածաշրջանային անվտանգության կարևոր բաղադրիչ: Դամասկոսը, որը Թեհրանի ռազմավարական դաշնակիցն էր, միևնույն ժամանակ շատ կարևոր օղակ էր Իրան–«Հիզբալլահ» համագործակցության շղթայում: Այս համատեքստում «սիրիական հեղափոխության» հիմնական պատճառներից մեկն Իրանի դիրքերի թուլացումն էր, քանի որ բաասական վարչակարգի տապալմամբ Իրանը կկորցներ Մերձավոր Արևելքում իր միակ և հետևողական դաշնակցին:

Նկատի ունենալով արաբական երկրների նախկին առաջնորդների, մասնավորապես Բեն Ալիի և Հոսնի Մուբարաքի նախադեպը՝ փորձագիտական հանրության մի մասը սխալմամբ հակված էր ենթադրելու, որ նախագահ Ալ–Ասադը Սիրիայում սկսված «հեղափոխական» գործընթացից կարճ ժամանակ անց կկորցնի իշխանությունը՝ տեղի տալով ներքին և արտաքին ճնշումներին:

Բաշար Ալ–Ասադն իշխանության եկավ 2000–ին՝ հոր՝ Հաֆեզ Ալ–Ասադի (1971–2000 թթ.) մահից հետո՝ ինչ–որ իմաստով ժառանգական դարձնելով արդեն իսկ ավտորիտար իշխանության փոխանցման մեխանիզմը: Փոխարինելով մահացած հորը՝ նա դարձավ արաբական աշխարհում սկիզբ առած այն յուրահատուկ սերնդափոխության միակ հաջող և ավարտված օրինակը, ինչն արաբ սոցիոլոգներն սկսեցին անվանել «հանրաթագավորություն» (արաբերեն՝ գումալաքիյյա, գումհուրիյյա՝ հանրապետություն և մալաքիյյա՝ թագավորություն տերմինների համադրումից)[6]:

Ալ–Ասադն, ընդհանուր առմամբ շարունակեց հոր քաղաքական ուղեգիծը՝ պահպանելով երկրում դեռևս 1963–ից գոյություն ունեցող հատուկ դրությունը, սակայն իր ղեկավարման առաջին շրջանում որոշակի քաղաքական ազատություններ մտցնելով, ինչը հայտնի է «դամասկոսյան գարուն» անունով[7]: Սիրիայում զգալիորեն ակտիվացավ հասարակական–քաղաքական բանավեճը, ստեղծվեցին առանձին ակումբներ, որոնցից առավել հայտնի էին

[6] Հարցազրույց Միչիգանի համալսարան–Դիրբորնի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ, արևելագետ, պրոֆ. Ա. Սանճեանի հետ, Ա. Փաշայան, Լ. Հարությունյան, Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., 2011, էջ 115–126:

[7] Տե՛ս Ս. Մանուկյան, Բաշար Ալ–Ասադի կառավարման առաջին չորս տարիներին Սիրիայում հասարակական և քաղաքական որոշ տեղաշարժերի մասին (2000–2004 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Եր., 2004, էջ 204–216:

«Ռիյադ Սեյֆի ակումբը» և «Ջամալ Ալ–Ատտասիի ազգային երկխոսության ակումբը»: Դրանցում ներգրավվեցին նախկին քաղբանտարկյալներ, քաղաքացիական ակտիվիստներ, մտավորականներ, ովքեր իրենց քաղաքական պահանջները ձևակերպեցին «99–ի մանիֆեստում»: Սակայն «դամասկոսյան գարունը» շատ կարճ կյանք ունեցավ՝ տևելով մինչև 2001 թ. սեպտեմբեր ամիսը, երբ շարժման տասնյակ անդամներ ձերբակալվեցին, որոնցից մի քանիսը դատապարտվեցին երկարատև ազատազրկման[8]: Այդպիսով՝ հասարակական–քաղաքական կյանքը Սիրիայում նախկինի պես մնաց ճահճացած, այլախոհությունը շարունակվեց հետապնդվել, իսկ իշխանական վերնախավը, չցանկանալով ընդառաջ գնալ բարեփոխումների պահանջին, կորցրեց պետական համակարգն արդիականացնելու հնարավորությունը:

Սիրիայում հակակառավարական շարժման մեկնարկը կարելի է համարել 2011 թ. մարտի 15–ը, որը համացանցի ակտիվիստների կողմից հայտարարվել էր «Ցասման օր»: Այդ օրը Դամասկոսի հայտնի «Համիդիյե» շուկայում և Օմայան մզկիթին կից տարածքում ուրբաթօրյա աղոթքից հետո հավաքված մի քանի հարյուր ցուցարարներ հակակառավարական կոչեր էին հնչեցնում՝ իշխանություններից պահանջելով բարեփոխումներ իրականացնել և ազատ արձակել քաղբանտարկյալներին[9]:

Մարտի 18–ին Սիրիայի հարավարևելյան Դարաա քաղաքում տեղի ունեցավ հակակառավարական առաջին բազմամարդ հավաքը: Նախօրեին՝ մարտի 15–ին, այստեղ մի խումբ դպրոցականներ էին ձերբակալվել պատերին հակակառավարական կարգախոսներ գրելու պատճառով: Հանրահավաքը տեղի ունեցավ ի պաշտպանություն դպրոցականների: Հենց Դարաայում առաջին անգամ իշխանությունները կոշտ ուժ կիրառեցին ցուցարարների դեմ[10]:

Չնայած Բաշար Ալ–Ասադն անձամբ ցավակցեց զոհվածների հարազատներին՝ պաշտոնանկ անելով Դարաայի նահանգապե-

[8] The Emergence of a Human Rights Community in Syria, Human Rights Watch, http://www.hrw.org/en/node/10646/section/4

[9] Արաբական երկրներում հակակառավարական ակցիաների ժամանակ ամենատարածված կարգախոսներից էր՝ «Աշ–շաաբ յուրիդ իսկատ ալ–նիզամ», այսինքն՝ հեռացե՛ք, բառացի՝ «Ժողովուրդը պահանջում է վարչակարգի հրաժարականը»: Սիրիայում ընդդիմադիրները շատ հաճախ վանկարկում էին «Ալլահ, Սիրիա, ազատություն և վերջ», իսկ վարչակարգի համախոհները՝ «Ալլահ, Սիրիա, Բաշար և վերջ»:

[10] Ընդդիմադիրները համարում էին, որ մարտի 18–ը պետք է նշվի որպես ավտորիտար վարչակարգի դեմ պայքարի մեկնարկի օր:

տին և խոստանալով ստեղծել հանձնաժողով՝ դեպքի հանգամանքները քննելու համար, սակայն իրավիճակը չկարգավորվեց[11]: Դարաայից հակակառավարական ելույթների ալիքը տարածվեց հյուսիսարևելյան քրդաբնակ շրջաններ, ծովափնյա Լաթաքիայի շրջան, Հոմս և Համա, Իդլիբի և Դեյր Էզ–Զորի նահանգներ, նաև Դումա և այլուր: Իշխանությունները փորձում էին ամեն կերպ կասեցնել բողոքի ակցիաների կազմակերպումը՝ շատ դեպքերում ձերբակալելով դրանց կազմակերպիչներին ու մասնակիցներին[12]:

Թեև Սիրիայի իշխանությունները վստահեցնում էին, որ երկիրը զերծ կմնա ցնցումներից, սակայն այն աստիճանաբար ներքաշվեց ճգնաժամի մեջ: Վերջին ամենամեծ ցնցումը երկիրն ապրել էր 1982 թ. Համայի հայտնի դեպքերի ժամանակ, երբ իշխանությունները՝ ի դեմս նախագահ Հաֆեզ Ալ–Ասադի, ճնշեցին Համայի ապստամբությունը՝ բազմաթիվ զոհերի գնով արմատախիլ անելով կրոնաքաղաքական ընդդիմությանը և կասեցնելով Սիրիան իսլամական պետության վերածելու «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության փորձերը[13]:

Ի տարբերություն արաբական այլ երկրների առաջնորդների՝ Բաշար Ալ–Ասադը բավական արագ արձագանքեց ցուցարարների պահանջներին՝ խոստանալով բարեփոխումներ իրականացնել: Արդեն մարտի 24–ին խնդրին ավելի հանգամանորեն անդրադարձավ նախագահի խորհրդական Բուսայնա Շաաբանը[14]: Մարտի 25–ին նախագահի հրամանով բարձրացվեցին պետական աշխատողների աշխատավարձները, նաև թոշակները, վե-

[11] Հանձնաժողովը ստեղծվեց նախագահի՝ ապրիլի 1–ի հրամանով, տե՛ս Распоряжение президента Аль–Асада о расследовании событий в провинциях Дараа и Латакия, апрель 01, 2011, http://www.sana.sy/rus/325/2011/04/01/pr–339439.htm

[12] Ձերբակալվողների մեջ կային նաև ոչ միայն սովորական ցուցարարներ, այլ հասարակական ակտիվիստներ, մշակույթի և այլ ոլորտի գործիչներ, այդ թվում՝ կանայք: Մարտի 16–ին Դամասկոսի Մարջա հրապարակում ի պաշտպանություն քաղբանտարկյալների անցկացված լուռ երթի ժամանակ ձերբակալվեց դամասկոսցի հայտնի կին ակտիվիստ Սուհեյր Ատտասին, ով ազատ արձակվեց ապրիլի սկզբին: Ի դեպ՝ նաև վերջինիս նախաձեռնությամբ դեռևս փետրվարի 3–ին Դամասկոսի քրիստոնեական Բաբ Թումա թաղամասում կազմակերպվել էր թերևս առաջին ակցիաներից մեկը՝ ի պաշտպանություն եգիպտացի ցուցարարների:

[13] Տե՛ս С. Манукян, Зигзаги развития исламского движения в Сирии в 1982–2000 гг., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Եր., 2005, էջ 181–195:

[14] Руководство Сирии объявило о начале радикальных реформ, http://lenta.ru/news/2011/03/24/increase1/

ռանայվեց հարկային քաղաքականությունը[15]: Նախագահի մեկ այլ հրամանով թոշակառուներին ընձեռվեց բժշկական ապահովագրության հնարավորություն[16]:

Ընդառաջ գնալով շարունակվող բողոքի ցույցերին՝ մարտի 30–ին Բաշար Ալ–Ասադը հանդես եկավ խորհրդարանում՝ անդրադառնալով իր պաշտոնավարման ընթացքում Սիրիայում կուտակված խնդիրների պատճառներին: Այն, որ իշխանությունները շատ դեպքերում չէին արդարացրել հասարակության հույսերը, ըստ նրա՝ կապված է եղել 2001–ից ի վեր միջազգային հարաբերություններում և մասնավորապես Մերձավոր Արևելքում ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրողությունների և Սիրիային ուղղված մարտահրավերների հետ: Սիրիայի նախագահը խոստացավ բարեփոխումներ անցկացնել իրավապահ և դատական համակարգերում, ներդնել բազմակուսակցական համակարգ, մեծացնել լրատվամիջոցների ազատությունը, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումներ անցկացնել, լուծել նոր աշխատատեղերի հարցը[17]:

Միևնույն ժամանակ, Սիրիայում ստեղծված իրավիճակը համարելով արտաքին դավադրության արդյունք, Ալ–Ասադը նոր ձևավորված հանգամանքների ճնշման տակ բարեփոխումների գործընթացի արհեստական արագացումը համարեց անընդունելի և վնասակար[18]: Մինչդեռ շատերը թե՛ Սիրիայում և թե՛ դրա սահմաններից դուրս հակված էին ենթադրել, որ բարեփոխումներն այլևս ուշացած էին:

2011 թ. ապրիլի 3–ին Սիրիայում ձևավորվեց նոր կառավարություն՝ գյուղատնտեսության նախկին նախարար Ադել Սաֆարի գլխավորությամբ[19]: Սակայն մինչ այդ՝ մարտի 26–ին, Սիրիայի անկախության տոնի կապակցությամբ, որը նշվում է ապրիլի 17–ին, Ալ–Ասադի հրամանով ազատ արձակվեց 200–250 քաղբանտարկյալ[20]: Բացի այդ՝ չեղյալ համարվեց հատուկ դրության մասին օրեն-

[15] Մանրամասն տե՛ս Президент Башшар Аль–Асад издал ряд законодательных указов об улучшении жизни граждан, http://www.sana.sy/rus/325/2011/03/25/pr–338423.htm

[16] Указ президента Башшара Аль–Асада о медицинском страховании пенсионеров, http://www.sana.sy/rus/325/2011/04/04/pr–339818.htm

[17] Президент Башшар Аль–Асад: Благодаря национальному единству её народа Сирия останется неприступной крепостью, http://www.sana.sy/rus/325/2011/04/01/pr–339335.htm

[18] Նույն տեղում:

[19] Президент Башшар Аль–Асад издал указ за № 146 о составе правительства САР во главе с Аделем Сафаром, http://www.sana.sy/rus/325/2011/04/15/pr–341751.htm

[20] Առանձին տեղեկությունների համաձայն՝ ազատ արձակվածները հիմնականում իսլամիստներ էին:

քը[21] (այն գործում էր 1963–ից, երբ Սիրիայում իշխանության եկավ «Բաաս» կուսակցությունը), ինչը կարելի է համարել նշանակալից իրադարձություն: Նախագահի մեկ այլ հրամանով համընդհանուր ներում շնորհվեց այն քաղաքացիներին, ովքեր հանցանքներ էին գործել մինչև 2011 թ. մարտի 31–ը: Համաներումը, ըստ էության, տարածվում էր նաև արգելված «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամների և քաղաքական տարբեր հայացքների համար դատապարտված բանտարկյալների վրա[22]:

Չնայած իշխանությունների ձեռնարկած քայլերին՝ սիրիական արմատական ընդդիմադիրներն անվերապահորեն պահանջում էին Ալ–Ասադի հրաժարականը՝ որպես հիմնարար բարեփոխումների կարևորագույն նախապայման: Հատկանշական է, որ վարչակարգին ընդդիմադիր զանգվածը զգալիորեն համալրված էր սոցիալապես ցածր, անապահով խավերից, առավելապես սուննիադավան: Սակայն միանգամայն այլ դիրքորոշում ունեին սուննի գործարարները[23], բարձրաստիճան զինվորականներն ու պաշտոնական հոգևորականությունը՝ ի դեմս մեծ մուֆտի Ահմադ Բադր Ադ–Դին Հասունի, ովքեր աջակցում էին իշխող վարչակարգին[24]:

Սիրիայում սկսված բողոքի ակցիաների համար առանցքային դարձան ուրբաթօրյա աղոթքից հետո կազմակերպվող միջոցառումները, որոնք հիմնականում ճնշվում էին պետական մեքենայի կողմից: Հատկանշական է, որ բողոքի ակցիաներն առավելապես տեղի էին ունենում նահանգներում, այդ թվում՝ փոքր բնակավայրերում՝ հիմնականում շրջանցելով Դամասկոսն ու Հալեպը: Օրեցօր ստվարացող զոհերի թիվը թե՛ խաղաղ բնակչության և թե՛ անվտանգության ուժերի շրջանում, մեծ թվով ձերբակալվածների, բանտում կտտանքների ենթարկվածների, նաև անհայտ կորածների փաստը շարունակում էր ճնշող տպավորություն թողնել հասարակության շրջանում:

Բռնությունների ալիքի հետագա խորացմանը զուգահեռ աշ-

[21] Президент Аль–Асад издал указ и три законодательных декрета, http://www.sana.sy/rus/325/2011/04/21/pr–342717.htm

[22] Указ президента Аль–Асада о всеобщей амнистии лиц, совершивших преступления до 31 мая 2011 года, http://www.sana.sy/rus/325/2011/06/02/pr–350030.htm

[23] Reva Bhalla, Making Sense of the Syrian Crisis, http://www.stratfor.com/weekly/20110504–making–sense–syrian–crisis.

[24] Հասունը համարվում է Բաշար Ալ–Ասադի ամենաջերմ աջակիցներից մեկը, որի պատճառով ընդդիմադիրները դաժան հաշվեհարդար տեսան Հասունի հետ՝ սպանելով նրա երիտասարդ որդուն: Տե՛ս Муфтий Республики Ахмад Бадр–эд–Дин Хассун проводил в последний путь своего сына Сарию Хассуна, http://sana.sy/rus/325/2011/10/03/373211.htm

խարհի տարբեր երկրներում Սիրիայի դեսպանատների առաջ սկսեցին կազմակերպվել բողոքի ակցիաներ, որի մասնակիցները պահանջում էին վարչակարգի հրաժարականը և երկրում արյունահեղության դադարեցում[25]: Սիրիայի սահմաններից դուրս գործելը նույնպես վտանգ էր ներկայացնում ոչ միայն սիրիացի ակտիվիստների համար, ովքեր կարող էին հետապնդվել սիրիական հատուկ ծառայությունների կողմից, այլև նրանց հարազատների, ովքեր ապրում էին Սիրիայում[26]:

Հակակառավարական հուզումներին զուգահեռ մայրաքաղաք Դամասկոսում և այլ քաղաքներում ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում ստվարածավալ հանրահավաքներ և երթեր՝ ի պաշտպանություն նախագահ Բաշար Ալ-Ասադի[27]: Ի դեպ՝ վարչակարգի սոցիալական հենարանը նաև երկրի քրիստոնյա փոքրամասնություններն էին, ովքեր օգտվում էին ազգային և կրոնական լայն իրավունքներից, իսկ էթնոդավանական հանդուրժողականությունը հնարավորություն էր տալիս նրանց անվտանգ զգալու: Սակայն հնարավոր իշխանափոխությունը լուրջ անհանգստություն էր ստեղծել վերջիններիս շրջանում: Նրանք զգուշանում էին կրոնաքաղաքական ուժերի իշխանության գալու և առհասարակ կրոնական ծայրահեղականության տարածման հնարավորությունից[28]: Պատահական չէ, որ սըրյան (Syrian) կաթոլիկների առաջնորդ Իգնատիոս Հովսեփ Երրորդ պատրիարքը գերմանական DPA լրատվական գործակալությանը տված հարցազրույցում կոշտ քննադատության ենթարկեց ԱՄՆ-ին և

[25] Syrian Embassies Accused of Threatening Activists Overseas, http://www.voanews.com/content/syrian-embassies-accused-of-threatening-activists-overseas-131064848/146137.html

[26] И. Берг, Сирийская оппозиция глазами немецких экспертов и комментаторов, http://www.iimes.ru/rus/stat/2011/17-10-11.htm

[27] Դրանց մեջ առավել հիշարժան էր 2012 թ. հունվարի 11-ին Դամասկոսի Օմայյան հրապարակի բազմամարդ միտինգը, որտեղ իր համախոհների առաջ անսպասելիորեն ելույթ ունեցավ ընտանիքի հետ հրապարակ այցելած Ալ-Ասադը: Տես Башар Асад выступил на миллионном митинге в Дамаске, http://syrianews.ru/node/91

[28] Հարկ է նշել, որ թե՛ Իրաքի և թե՛ «արաբական գարնան» իրադարձությունները լուրջ մարտահրավերներ ստեղծեցին տարածաշրջանի քրիստոնյաների համար: Պատահական չէ, որ անգլիկան եկեղեցու առաջնորդ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռոուեն Ուիլյամսը բրիտանական խորհրդարանի Լորդերի պալատում ունեցած ելույթում նշել էր, որ Մերձավոր Արևելքում քրիստոնյաների դիրքերն ավելի խոցելի են, քան երբևէ վերջին հարյուրամյակի ընթացքում: Տես House of Lords debate on Christians in the Middle East, http://www.archbishopofcanterbury.org/articles.php/2277/house-of-lords-debate-on-christians-in-the-middle-east

ԵՄ երկրներին, որոնք, ըստ նրա, ինչպես միշտ, բախտի քմահաճույքին էին թողել Մերձավոր Արևելքի էթնիկ ու դավանական փոքրամասնություններին և գործում էին բացառապես սեփական աշխարհաքաղաքական շահերից ելնելով՝ սպասելով Սիրիայում իսլամիստների հաղթանակին[29]:

Քրիստոնյաների մտահոգությունը պատահական չէր և կապված էր ցույցերի սկզբնական շրջանում սուննիական ծայրահեղական շրջանակների կողմից հնչեցված «Ալավիներին՝ գերեզման, քրիստոնյաներին՝ Լիբանան» կարգախոսի հետ[30]: «The Wall Street Journal»–ին տված հարցազրույցում, ի պատասխան Սիրիայի դավանական փոքրամասնություններին առնչվող հարցին, «Ազգային խորհրդի»[31] (ԱԽ) նախկին նախագահ Բուրհան Ղալյունը, փարատելով նման մտայնությունը, նշել էր, թե Սիրիայի բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ, և կրոնական գործոնով պայմանավորված որևէ խտրականություն մեծամասնության և փոքրամասնության միջև լինել չի կարող, քանի որ վերջիններս պետք է դիտարկվեն ոչ թե որպես փոքրամասնություններ, այլ պարզապես քաղաքացիներ[32]:

Սիրիայում սկսված «հեղափոխական» գործընթացը միջազգայնացվեց գրեթե միանգամից: Եվ չնայած այս փաստին՝ հակակառավարական տրամադրությունների ձևավորման հարցում կային քաղաքական և սոցիալական նախադրյալներ, երկրում լարվածության հետագա խորացման հարցում էական դերակատարություն ունեցան հենց արտաքին ուժերը: Պատահական չէ, որ ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Ռոբերտ Գեյթսը արդեն 2011 թ. մարտի վերջին Իսրայել կատարած պաշտոնական այցի ընթացքում սիրիացի զինվորականներին խորհուրդ տվեց օրինակ վերցնել Եգիպտոսի բանակից և մի կողմ քաշվել՝ չխանգարելով ընդդիմադիրներին մասնակցել բողոքի ակցիաներին[33]: Սակայն Սիրիայի բանակը, ի տարբերություն Եգիպտոսի բանակի, չէր կարող չսատարել իշխանությանը, քանի որ, ինչ-

[29] Syrian Patriarch Says Christians Feel Betrayed by West, http://news.monstersandcritics.com/middleeast/news/article_1684906.php/INTERVIEW–Syrian–patriarch–says–Christians–feel–betrayed–by–West

[30] Nicholas Blenford, Assad Regime may be Gaining upper Hand in Syria, The Christian Science Monitor, May 13, 2011, http://www.csmonitor.com/World/Middle–East/2011/0513/Assad–regime–may–be–gaining–upper–hand–in–Syria

[31] «Ազգային խորհրդի» մասին տե՛ս հաջորդ էջերում:

[32] Interview with Burhan Ghalioun, http://online.wsj.com/article/SB10001424052970203833104577071960384240668.html

[33] Robert Gates Calls for Syrian Forces to Move Aside, http://www.sott.net/articles/show/226391–Robert–Gates–calls–for–Syrian–forces–to–move–aside

պես իր հերթին փաստում է արաբական աշխարհի հեղինակավոր մասնագետներից մեկը՝ Ժիլ Կեպելը, սերտաճած էր նրան[34]:

Թե՛ իշխանության և թե՛ բանակի հիմնական կորիզը Սիրիայում ալավիներ էին՝ շիայական այն փոքրամասնությունը, որն Հաֆեզ Ալ–Ասադի՝ իշխանության գալուց հետո ավելի քան չորս տասնամյակ ղեկավարում էր սուննի մեծամասնությանը: Այնպես որ բանակի բարձրագույն սպայական կազմը թույլ չէր տա, որպեսզի Սիրիայում իշխանությունն անցներ սուննիներին: Եվ բացի այդ՝ իշխանությունները հակակառավարական ելույթների և դրանց մասնակիցների նկատմամբ կարողացան կոշտ դիրքորոշում որդեգրել, քանի որ սիրիական բանակի ղեկավարությունը և զինվորականության ճնշող մեծամասնությունը հավատարիմ մնացին նախագահ Ալ–Ասադին և նրա անմիջական շրջապատին՝ ի տարբերություն նույն Եգիպտոսի և Թունիսի, որտեղ բանակի հրամանատարական կազմերը, չեզոք դիրքորոշում որդեգրելով կառավարության և ցուցարարների միջև, գործնականում արագացրեցին նախագահներ Բեն Ալիի և Մուբարաքի քաղաքական մեկուսացումը[35]:

Ժամանակ առ ժամանակ սիրիական վարչակարգի վերաբերյալ սկսեցին կոշտ հայտարարություններ անել ոչ միայն ԱՄՆ–ի, այլև Եվրամիության, Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ), Թուրքիայի և Ծոցի արաբական միապետությունների բարձրաստիճան պաշտոնատարները: Բացի այդ՝ ԵՄ–ի, ԱՄՆ–ի, Թուրքիայի, ԱՊԼ–ի կողմից Սիրիայի դեմ սկսեցին իրականացվել տարաբնույթ պատժամիջոցներ, պահանջվեց Բաշար Ալ–Ասադի հրաժարականը[36]: Միջազգային զանգվածային լրատվամիջոցներով, որոնց մեջ առաջատար էր Քաթարին պատկանող «Ալ–Ջազիրա» արբանյակային հեռուստաալիքը, տեղեկատվական պատերազմ սկսվեց Սիրիայի դեմ, որի արդյունքում սկսեցին պարբերաբար խեղաթյուրվել Սիրիայում տեղի ունեցող դեպքերը[37]: Սիրիայի վերաբերյալ զեկույցներ էին հրապարակել

[34] "Военные против Асада? Мне кажется это невероятным", http://inopressa.ru/article/28mar2011/lastampa/kepel.html

[35] Հարցազրույց Միչիգանի համալսարան–Դիրբորնի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ, արևելագետ, պրոֆ. Ա. Սանճեանի հետ, նշվ. աշխ.:

[36] Sanctions Imposed on Syria, http://www.reuters.com/article/2012/02/28/us–syria–eu–sanctions–idUSTRE81R27R20120228, Q&A: Syria Sanctions, http://www.bbc.co.uk/news/world–middle–east–15753975

[37] Anne Sewel, "No Independent Journalism any more" says ex–Al–Jazeera reporter, http://digitaljournal.com/article/321163

միջազգային տարբեր կառույցներ, այդ թվում՝ իրավապաշտպան կազմակերպություններ, որոնցում սուր քննադատություն կար վարչակարգի և մասնավորապես նախագահի հասցեին: Միջազգային շրջանակներում սկսեցին ավելի շատ խոսել Սիրիայում արտաքին ռազմական միջամտության մասին:

2011 թ. հոկտեմբերի 29–ին «The Sunday Telegraph»–ին տված հարցազրույցում Բաշար Ալ–Ասադը զգուշացրեց, որ Սիրիայում արտաքին ուժերի միջամտությունը կամ երկիրը մասնատելու փորձերը կհանգեցնեն մեկ այլ Աֆղանստանի և երկրաշարժի ողջ Մերձավոր Արևելքում[38]:

Սիրիայից հնչող տեսակետը, սակայն, չկասեցրեց միջամտությունն այդ երկրի ներքին գործերին: Սիրիայի վրա ճնշումներ իրականացնելու հարցում ակտիվորեն համագործակցեցին ԱՄՆ–ն, տարածաշրջանային նրա դաշնակիցները՝ Թուրքիան և Պարսից Ծոցի արաբական պետությունները, մասնավորապես Կատարը և Սաուդյան Արաբիան, որոնք բոլորն էլ հակամարտության մեջ ներքաշվելու համար իրենց հետաքրքրություններն ունեին:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա վերջինիս քաղաքականությունը 2002 թ. «Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իշխանության գալուց հետո միտված էր երկրի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության ակտիվացմանը, որի հիմքում ընկած էր Ա. Դավութօղլուի մշակած նեոսմանականության հայեցակարգը: Պատահական չէ, որ «արաբական գարնան» մեկնարկից ի վեր Թուրքիան աջակցեց արաբական աշխարհի հասարակական–քաղաքական ընդդիմադիր դաշտին, ինչը նպատակ ուներ ընդլայնելու Թուրքիայի՝ որպես առաջատար պետության դերն ու հարաճուն հեղինակությունը տարածաշրջանում: Սիրիայում ներքաղաքական լարվածության սկզբնական փուլից ի վեր Անկարան դարձավ սիրիական վարչակարգի ամենակոշտ ընդդիմախոսներից մեկը և պատրաստ էր անգամ միակողմանի պատժամիջոցներ կիրառելու Դամասկոսի նկատմամբ: Նախկինում Բաշար Ալ–Ասադի վարչակարգի հետ բացառիկ ջերմ հարաբերություններ ունեցող Թուրքիայի ներկա իշխանությունները, միջամտելով Սիրիայի ներքին գործերին, փաստացիորեն դարձան արտերկրում գործող սիրիական ընդդիմության թե՛ քաղաքական, թե՛ ռազմական թևերի հենակետը[39]:

[38] Assad: challenge Syria at your peril, http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/8857898/Assad–challenge–Syria–at–your–peril.html

[39] Julien Cecillon, Turkey and the Struggle for Syria. Time for accountability, Near

Հակակառավարական շարժումներից շատ չանցած՝ Թուրքիան ապաստան տվեց սիրիացի փախստականներին՝ Հաթայի նահանգում ստեղծելով փախստականների ճամբարներ[40]: Թուրքիան նպատակ ուներ նաև թուրք–սիրիական սահմանին ստեղծելու բուֆերային գոտի և հումանիտար միջանցք[41], որի իրականացման համար, ըստ սիրիական իշխանությունների, սադրանքներ էր հրահրում: Նկատի էր առնվում մասնավորապես 2012 թ. ապրիլի 9–ի սահմանային միջադեպը[42]:

Ինչ վերաբերում է Քաթարին ու Սաուդյան Արաբիային, պետք է նշել, որ այդ երկրների իշխանությունները հանգուցային դերակատարություն էին ունեցել նաև եգիպտական և լիբիական գործընթացներում: Այս երկու պետությունների ներգրավվածությունը նպատակ ուներ Սիրիայում իշխանափոխության միջոցով վերջ դնելու տարածաշրջանի ամենահզոր մրցակիցներից մեկի՝ Իրանի հետ համագործակցությանը և Սիրիայում, ըստ ամենայնի, իշխանության բերելու սուննիական կրոնաքաղաքական ուժերի: Էռ–Ռիադն արաբական երկրներում նոր՝ սաուդամետ վարչակարգերի ձևավորման միջոցով նպատակ ուներ տարածելու նաև իր երկրի կրոնական գաղափարախոսությունը՝ սալաֆիականությունը (որը սուննի իսլամի արմատական մեկնաբանությունն է), ինչին ձեռնամուխ էր եղել դեռ «Սառը պատերազմի» տարիներից[43]:

Բացի այդ Ծոցի այս երկու պետությունները փորձում էին ամեն կերպ պահպանել իրենց դաշնակցային դիրքերը ԱՄՆ–ի արտա-

East Qaarterly, http://www.neareastquarterly.com/index.php/2012/03/20/turkey–and–the–struggle–for–syria–time–for–accountability/

[40] Սիրիացի հազարավոր փախստականներ էին հանգրվանել նաև հարևան երկրներում՝ Հորդանանում, Լիբանանում, Իրաքում:

[41] Turkey considers Syria buffer zone; Annan seeks unity, http://www.reuters.com/article/2012/03/17/us–syria–turkey–idUSBRE82G04S20120317

[42] Ապրիլի 9–ի վաղ առավոտյան գնդակոծվել էին թուրքական Քիլիս քաղաքի մոտ թուրք–սիրիական սահմանը հատած և թուրքական տարածքում հայտնված սիրիացի փախստականներ, ինչի հետևանքով զոհվել էր երկու և վիրավորվել չորս մարդ: Թուրքական կողմը, միջադեպի մեջ մեղավոր համարելով սիրիական բանակին, հայտարարեց, որ Սիրիան կոպտորեն խախտել էր երկու երկրների սահմանը: Թուրքիայի սահմանային տարածքի գնդակոծումը կրկնվեց ապրիլի 10–ի երեկոյան: Իր հերթին Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալիմը Թուրքիային մեղադրեց սահմանային գոտում Սիրիայի քաղաքացիներին ահաբեկելու, փախուստի դրդելու և փախստականների ճգնաժամ առաջ բերելու մեջ:

[43] Ա. Փաշայան, Վահաբական քարոզչության մի քանի դրսևորումների շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Եր., 2004, էջ 290–303:

քին քաղաքականության ուղեծրում: Իրենց հերթին թե՛ Քաթարը և թե՛ Սաուդյան Արաբիան, որոնք տիրապետում են հսկայական էներգետիկ ռեսուրսների, շիայական գործոնի ազդեցությունը սեփական երկրներում և տարածաշրջանում թուլացնելով, ցանկանում էին լրացնել այն բացը, որը կառաջանար Թեհրանին դուրս մղելուց հետո: Եվ եթե Սաուդյան Արաբիայի հավակնություններն իսլամական աշխարհի կենտրոն դառնալու հարցում դրսևորվել էին շատ ավելի վաղ, ապա Կատարի հավակնությունները ոչ երկար պատմություն ունեին: 1995 թ. թագավորությունում հեղաշրջման արդյունքում գահին բարձրացած էմիր Համադ բին Խալիֆա Ալ–Թանին սկսեց իրականացնել Արաբական թերակզղու այդ թզուկ պետությունը տարածաշրջանային հզորներից մեկը դարձնելու իր հավակնոտ ծրագրերը: Դրան հասնելու համար օգտագործվեց տեղեկատվական ակտիվությունը: Ինչպես արդեն նշվեց, ոչ պակաս կարևոր ռեսուրս դարձավ «Ալ–Ջազիրան», որը հսկայական ազդեցություն ունեցավ «արաբական փողոցի» վրա՝ վերաճելով արաբական աշխարհում տրամադրությունների ձևավորման յուրօրինակ կենտրոնի: Բացի այդ միլիոնավոր դոլարների հասնող օգնությունը սիրիական ընդդիմությանը, մասնավորապես «Ազատ սիրիական բանակին» հնարավորություն տվեցին լարված պահելու իրավիճակը Սիրիայում[44]:

Իրենց հերթին սիրիական իշխանություններին սատարելու գործում ներգրավվեցին աշխարհաքաղաքական խոշոր դերակատարներ Իրանը, Ռուսաստանը և Չինաստանը: Առանձին տեղեկությունների համաձայն՝ Սիրիան աջակցություն ստացավ Իրանի հովանավորությամբ գործող շիայական շրջանակներից[45]:

Սիրիային ցուցաբերված քաղաքական աջակցության հարցում հանգուցային նշանակություն ունեցավ ՄԱԿ–ի ԱԽ–ում Ռուսաստանի ու Չինաստանի՝ երկու անգամ օգտագործված վետոյի իրենց իրավունքը: Դրանով կասեցվեց Սիրիայում արտաքին ռազմական միջամտության հնարավորությունը: Մոսկվայի և Պեկինի՝ Սիրիային ցուցաբերված աջակցությունը նույնպես պայմանավորված էր նշված պետությունների աշխարհաքաղաքական հետաքրքրություններով, ինչը նրանք փաստարկեցին լիբիական նախադեպից խուսափելու և իշխանությունների ու ընդդիմության

[44] Ս. Մանուկյան, Ծոցի միապետությունները և «արաբական գարունը», Հանրապետական, h.100, 2012 թ., http://www.hhk.am/files/library_pdfs/223.pdf

[45] Shia Forces are Supporting Damascus and Sunni Forces are Supporting the Opposition, Says Kurdish Syrian Opposition Leader, http://www.aknews.com/en/aknews/9/303364/

միջև երկխոսության հնարավորության՝ սպառված չլինելու հանգամանքով: Ռուսաստանի համար Սիրիան Միջերկրական ծովի վերջին հենակետն էր: Բացի այդ՝ Սիրիան համարվում է աշխարհում ռուսական ռազմամթերքի խոշոր սպառողներից մեկը, որի դիմաց Մոսկվան ստանում էր տարեկան ավելի քան 1 մլրդ ԱՄՆ դոլար[46]:

Մոսկվայի իրականացրած ամենացուցադրական քայլը, թերևս, ռուսական ռազմանավերի այցելություններն էին Տարտուս նավահանգիստ և Սիրիայի ջրային սահմաններ, որտեղից նրանք հեռացան 2012 թ. հունվարի 9–ին[47]: Չնայած ռուսական կողմը պնդում էր, որ նշված միջոցառումը նախատեսված էր ավելի վաղ և կապ չուներ սիրիական գործընթացների հետ, սակայն միանգամայն պարզ էր, որ նման քայլով Մոսկվան ցանկանում էր ցույց տալ, որ թույլ չի տա Սիրիայում լիբիական սցենարի կրկնությունը[48]:

Ինչ վերաբերում է Պեկինին, ապա վերջինս գիտակցում էր, որ այն, ինչ տեղի էր ունենում Մերձավոր Արևելքում, իրականում պայքար է նաև ասիական–խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար: Չինաստանը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում ամենամեծ ներդրողներից մեկն էր, և Պեկինն էապես շահագրգռված էր տարածաշրջանի կայունությամբ, որը նրա համար նաև կարևոր ճանապարհ էր՝ դեպի արտաքին աշխարհ:

Ստեղծված իրավիճակում հակաասադական ուժերը լավագույնս օգտագործեցին Արաբական պետությունների լիգայի ներուժը, որտեղ թե՛ Սաուդյան Արաբիան և թե՛ Քաթարն ազդեցիկ դիրքեր ունեին: ԱՊԼ–ն դարձավ Բաշար Ալ–Ասադի ամենակոշտ ընդդիմախոսներից մեկը: 2011 թ. նոյեմբերի 12–ին Կահիրեում տեղի ունեցած ԱՊԼ արտահերթ նիստում որոշվեց կասեցնել Սիրիայի անդամակցությունը և խստացնել այդ երկրի դեմ տնտեսական և քաղաքական պատժամիջոցները[49]: Նախքան այդ ԱՊԼ–ն Սիրիայի իշխանություններին քանիցս կոչ էր արել ընդդիմության հետ երկխոսություն սկսել, դադարեցնել ռազմական գործողությունները, դուրս բերել տանկերը քաղաքներից ու

[46] David Blair, The Real Dilemma, The Daily Telegraph, 01.06.2012

[47] Syria Hails Visit of Russian Warships to Tartus, http://en.rian.ru/russia/20120109/170675862.html

[48] ICG Report Syria's Phase of Radicalization, Middle East Briefing N.33, 2012, April 10, http://www.crisisgroup.org/~/media/Files/Middle%20East%20North%20Africa/Iraq%20Syria%20Lebanon/Syria/b033–syrias–phase–of–radicalisation.pdf

[49] Syria Suspended from Arab League, http://www.washingtonpost.com/world/syria–suspended–from–arab–league/2011/11/12/gIQAvqGxEN_story.html

բնակավայրերից: Իր հերթին Դամասկոսը, ընդդիմադիրներին համարելով ահաբեկիչներ, ԱՊԼ–ին մեղադրում էր ԱՄՆ–ի և Իսրայելի հետաքրքրություններին ծառայելու մեջ, սակայն միևնույն ժամանակ համաձայնել էր ընդունել ԱՊԼ դիտորդներին (ովքեր պետք է ուսումնասիրեին ստեղծված ճգնաժամը և գտնեին այն հաղթահարելու լուծումներ)՝ ցույց տալով, որ բաց է ցանկացած կառուցողական նախաձեռնության առաջ[50]:

2012 թ. հունվարի 14–ին Համադ բին Խալիֆան ամերիկյան CBS–ի «60 տոպե» հաղորդաշարին տված հարցազրույցում Սիրիայի վերաբերյալ անսպասելի հայտարարություն արեց՝ առաջարկելով այդ երկիր արաբական զորքեր մտցնել արյունահեղությունը դադարեցնելու նպատակով[51], ինչը սակայն հակասում էր ԱՊԼ կանոնադրությանը: Դրան հաջորդեց հունվարի 15–ին ՄԱԿ գլխավոր քարտուղարի հայտարարությունը, որում կոչ էր արվում Սիրիայի իշխանություններին «դադարեցնել սպանել սեփական ժողովրդին»[52]: Բան Կի–մունը չէր բացառում գործընթացին ՄԱԿ–ի միջամտությունը:

Նշենք նաև, որ հակաասադական ուժերը մեծ սպասելիքներ ունեին այդ շրջանում Սիրիայում աշխատող ԱՊԼ 165 դիտորդների առաքելությունից (2011 թ. դեկտեմբերի 24–ից 2012 թ. հունվարի 18–ը): Սակայն առաքելության ավարտին հրապարակված եզրափակիչ զեկույցը որոշակի դժգոհություն առաջացրեց նրանց շրջանում, քանի որ դիտորդները, քննադատության ենթարկելով Սիրիայի իշխանություններին, միևնույն ժամանակ արձանագրել էին, որ երկրում գործում էին գրոհայինների խմբեր, որոնց մեղքն իրավիճակի սրման մեջ էական էր[53]:

Սիրիայում ժողովրդավարության հաստատման և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում հատկապես վիճարկելի էին Ծոցի միապետությունների դիրքորոշումը: Գաղտնիք չէ, որ արաբական աշխարհում մարդու իրավունքներն ամենակոշտ ձևով խախտվում էին հենց այդ երկրներում: Իսկ Քաթարի էմի-

[50] Syrian State Media Accuses Arab League of Serving the Interest of U.S. and Israel, http://www.alarabiya.net/articles/2011/10/19/172584.html

[51] Emir of Qatar Favors Arab Troops in Syria, http://www.cbsnews.com/8301–18560_162–57359014/emir–of–qatar–favors–arab–troops–in–syria/

[52] UN Chief tells Syra's Asad to stop the killing, http://www.euronews.com/2012/01/15/un–chief–tells–syria–s–assad–to–stop–the–killing/

[53] Report of the Head of the League of Arab States Observer Mission to Syria for the period from 24 December 2011 to 18 January 2012, http://www.columbia.edu/~hauben/Report_of_Arab_League_Observer_Mission.pd

րի հայտարարությունը, որի բովանդակությունն ըստ ամենայնի մշակվել էր ոչ միայն Դոհայում, որոշակի քննադատության արժանացավ արաբական առանձին շրջանակների կողմից՝ վերստին կենդանացնելով արաբական աշխարհի հակառակորդների մասին առկա ավանդական պատկերացումները: Հորդանանցի քաղաքագետ Ֆայեզ Շեհատրայի կարծիքով՝ «Քաթարը վերածվել է արաբական տարածաշրջանում սիոնիստական–ամերիկյան գերիշխանությունը հաստատող գործիքի»[54]: Շեհատրան առաջ քաշեց Սիրիային պաշտպանելու գաղափարը, ինչպես դա եղավ 1956 թ., երբ արաբները, միավորելով իրենց ուժերը, օգնեցին Եգիպտոսին՝ հաղթահարելու «Եռյակ ագրեսիան»[55]:

Սիրիայի շուրջ արտաքին զարգացումներին 2012 թ. հունվարի 10–ին անդրադարձավ Բաշար Ալ–Ասադը Դամասկոսի համալսարանում ունեցած ելույթում: Մատնացույց անելով միջազգային և արաբական այն ուժերին, մասնավորապես Արաբական պետությունների լիգային, որոնք ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ներքո ձգտում էին վնասելու Սիրիային, Ալ–Ասադը վերստին փորձեց հիմնավորել արտաքին դավադրության մասին իր թեզը[56]:

Սիրիայում սկիզբ առած հակակառավարական շարժումներն օրակարգային դարձրեցին ընդդիմադիր դաշտի ձևավորման հարցը: Ավտորիտար վարչակարգի պայմաններում երկրում ինստիտուցիոնալ ընդդիմություն, բնականաբար, գոյություն չուներ: Այդ իսկ պատճառով առաջին տեսակետները հնչեցին սիրիական սփյուռքից, մասնավորապես վտարանդի շրջանակներից: Բաշար Ալ–Ասադի հորեղբայրը՝ լոնդոնաբնակ Ռիֆաաթ Ալ–Ասադը, նախկին արտգործնախարար և փոխնախագահ Աբդուլ Հալիմ Խադդամը, սիրիական «Մուսուլման եղբայրների» առաջնորդ Ալի Բայանունին և այլոք Բաշար Ալ–Ասադին խորհուրդ էին տալիս անմիջապես հրաժարական տալ:

Աստիճանաբար թե՛ Սիրիայում, թե՛ Սիրիայի սահմաններից դուրս ձևավորվեցին տարբեր դաշինքներ, քաղաքական խմբավորումներ ու կառույցներ, որոնք աչքի էին ընկնում իրենց բարդ խճանկարով: Դրանցում ներկայացված էին գաղափարական (թե՛ կրոնա–քաղաքական և թե՛ աշխարհիկ) ու աշխարհագրական տարբեր պատկանելություն ունեցող քաղաքական ուժեր: Սիրի-

[54] Տեղեկությունը՝ ըստ www.sana.sy/ru

[55] Նույն տեղում:

[56] Речь президента Башшара Аль–Асада в Дамасском университете, январь 10, 2012, http://www.sana.sy/rus/325/2012/01/10/pr–393339.htm

ական ընդդիմադիր դաշտի մի հատվածի ձևավորման հարցում վճռորոշ նշանակություն ունեցան արտաքին դերակատարները: Առանց այդ միջամտության ընդդիմադիրների մի հատվածին, որը «հեղափոխության» սկզբնական փուլում ամորֆ վիճակում էր, հազիվ թե հաջողվեր միավորվել: Դեպքերին առավել չեզոք գնահատական էր տալիս և զոհերի մասին հնարավորինս անաչառ տեղեկատվություն էր տարածում Մարդու իրավունքների պահպանման սիրիական մոնիթորինգային կենտրոնը (OSDH), որ գործում էր Լոնդոնում:

2011 թ. հոկտեմբերի 2–ին թուրքական իշխանությունների հովանավորությամբ Ստամբուլում վերջնականապես ձևավորվեց «Ազգային խորհուրդը», որը հանդես եկավ որպես ընդդիմադիր դաշտի գործադիր և համակարգող մարմին[57]: ԱԽ–ն փաստորեն ստեղծվեց Լիբիայի «Ազգային խորհրդի» նմանությամբ՝ որպես անցումային կառավարություն, և նպատակ էր հռչակել իշխանությունից հեռացնել իշխող վարչակարգին և Սիրիան դարձնել ժողովրդավարական պետություն: «Ազգային խորհրդին» մաս կազմեցին թե՛ աշխարհիկ–լիբերալները, թե՛ Ալ–Ասադների վարչակարգի ավանդական ընդդիմադիրները՝ իսլամիստները, այդ թվում՝ «Մուսուլման եղբայրները», ովքեր, ունենալով Ծոցի միապետությունների աջակցությունը, կարողացան ամրապնդել իրենց դիրքերն ԱԽ–ում[58]: ԱԽ անդամների մեջ կային էթնիկ ու դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ քրդեր, նաև ասորիներ և այլ քրիստոնյաներ: Չնայած հակաասադական միջազգային ուժերի և մի շարք ազդեցիկ պետությունների կողմից Սիրիայի ժողովրդի օրինական ներկայացուցիչ ճանաչվելու փաստին՝ Խորհուրդը չդարձավ սիրիական ընդդիմության միասնական ձայնը և, բնականաբար, ոչ միանշանակ ընդունվեց սիրիացիների կողմից: Աստիճանաբար ԱԽ–ում ուժեղացան նաև ներքին հակասությունները[59]: Արդյունքումում 2012 թ. մայիսի վերջին ԱԽ ղեկավար Բուրհան Ղալյունը հրաժարական տվեց[60]:

Հատկանշական է, որ Ազգային խորհրդի նկատմամբ ոչ

[57] Մանրամասն տե՛ս Սիրիայի Ազգային խորհրդի պաշտոնական կայքում՝ http://www.syriancouncil.org/

[58] Ю. Щегловин, О ситуации в сирийской оппозиции, http://iimes.ru/rus/stat/2012/27–05–12a.htm

[59] More Divisions Among the Syrian Opposition, Stratfor, http://du111w.dub111.mail.live.com/default.aspx#!/mail/InboxLight.aspx?n=1802861434!n=1949387192&fid=1&fav=1&mid=011b5e77–a34b–11e1–82d8–002264c248a4&fv=1

[60] Syrian National Council head Burhan Ghalioun ‘to resign’, http://www.bbc.co.uk/news/world–middle–east–18106592

միանշանակ դիրքորոշում որդեգրեցին նաև Սիրիայի քրդերը՝ չնայած դրանում քուրդ գործիչների մասնակցությանը՝ մտավախություն ունենալով, որ Խորհրդի ղեկավարությունը, իրականում դեմ լինելով Սիրիայում քրդերի իրավունքների ընդլայնմանը, կփորձի օգտագործել քրդական ռեսուրսը՝ Ալ–Ասադի վարչակարգը տապալելու համար[61]: ԱԽ–ի հարցում առկա անվստահությունը նպաստեց, որպեսզի երկրի քրդաբնակ շրջաններում ստեղծվի հակակառավարական ուղղվածությամբ մեկ այլ ընդդիմադիր դաշինք՝ «Քրդական ազգային խորհուրդը», որի նպատակը Սիրիայում դաշնային պետության ստեղծումն էր՝ ըստ աշխարհագրական սկզբունքի[62]:

2011 թ. աշնանից Սիրիայում կազմավորվեց աշխարհիկ և լիբերալ ուղղվածությամբ «Հանուն ժողովրդավարական բարեփոխումների ազգային կոորդինացման կոմիտեն» (կամ՝ «Ազգային կոորդինացման կոմիտեն» (ԱԿՄ)), որը որոշակի տարակարծություններ ուներ ԱԽ–ի հետ: Կառույցը ստեղծվեց նախկին Ազգային դեմոկրատական դաշինքի հիման վրա[63]: ԱԿՄ–ն, որ կազմված էր հիմնականում ձախ ուղղվածությամբ 10–ից ավել կուսակցություններից և անկախ քաղաքական ակտիվիստներից՝ ներառյալ՝ մի քանի քրդական կուսակցությունները, ղեկավարում էր սիրիացի այլախոհ գործիչ Հասան Աբդ Ալ–Ազեմը: Կառույցի արտասահմանյան ներկայացուցիչը փարիզաբնակ սիրիացի գրող, մարդու իրավունքների պաշտպան Հայսամ Մանան էր[64]:

ԱԿՄ–ն, պահանջելով Ալ–Ասադի վարչակարգի հրաժարականը, կողմ էր ժողովրդավարության հաստատման խաղաղ ճանապարհին, համաձայն էր երկխոսել իշխանությունների հետ պայմանով, եթե վերջինս դադարեցնի բռնությունը: Սակայն երկրում սկիզբ առած քրեածին տարրերի և ահաբեկչական գործողությունների ակտիվացմանը զուգահեռ, երբ Սիրիայի բնակիչները շատ դեպքերում իրենք էին խնդրում իշխանություններին կոշտ ուժ կիրառել, ԱԿՄ–ի վերոնշյալ պահանջը

[61] О. Жигалина, К вопросу о политических организациях сирийских курдов, http://www.iimes.ru/rus/stat/2012/18–02–12a.htm

[62] И. Берг, Вероятность раскола Сирии по этнорелигиозному признаку: мнения экспертов, http://www.iimes.ru/rus/stat/2012/26–02–12a.htm

[63] Ընդդիմադիր Ազգային դեմոկրատական դաշինքը, որ ստեղծվել էր 1980 թ., աշխարհիկ ուղղվածություն ուներ: Դրան մաս էին կազմում 6 կուսակցություններ: Մանրամասն տե՛ս Alan George, Syria: Neither Bread nor Freedom, London, Zed Books, 2003, p. 94

[64] Randa Slim, Meet Syria's Oppositon, http://mideast.foreignpolicy.com/posts/2011/11/02/meet_syrias_opposition

անկենսունակ ու վիճարկելի էր թվում: Ի տարբերություն ԱԽ–ի՝ ԱԿՄ–ն կտրականապես դեմ էր Սիրիայում արտաքին ռազմական միջամտությանը՝ անընդունելի համարելով լիբիական սցենարի կրկնությունը[65]: ԱԿՄ–ի հիմնական կորիզն ավագ սերնդի այլախոհ վետերաններն էին՝ նախկին քաղբանտարկյալներ: Այս հանգամանքն, անշուշտ, մեծ կշիռ էր հաղորդում կառույցին թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում, սակայն փորձագետների կարծիքով՝ դժվարություն ստեղծում նոր ժամանակներին համահունչ շարժվելու առումով[66]: ԱԿՄ–ն գրեթե ազդեցություն չուներ «սիրիական փողոցի» վրա: Ի տարբերություն ԱԽ–ի, որն արտաքին աշխարհից ստանում էր տարաբնույթ, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն՝ ԱԿՄ–ն չէր տիրապետում նմանօրինակ ռեսուրսների, ինչը զգալիորեն կաշկանդում էր նրա գործողությունները[67]:

Ի դեպ՝ «Ազգային խորհրդին» նույնպես դժվար էր համարել ծանրակշիռ հեղինակություն ունեցող ուժ երկրի ներսում: Մինչդեռ «սիրիական փողոցի» վրա որոշակիորեն շոշափելի ազդեցություն ունեին 2011 թ. մարտից երկրում ստեղծված և ԱԽ–ին մաս կազմող Տեղական կոորդինացման կոմիտեները[68], քանի որ համալրված էին երիտասարդ ակտիվիստներով, որոնք էլ տեղում գործնականում իրականացնում էին հավաքներ ու բողոքի ակցիաների կազմակերպումը: Դրանք ամորֆ բջիջներն էին, սակայն հենց դրանց միջոցով էին միջազգային լրատվամիջոցներն արագորեն իրազեկ դառնում Սիրիայում տիրող իրավիճակին[69]:

Հատկանշական է, որ սիրիական զարգացումներին զուգահեռ փորձագիտական հանրությունը ձեռնամուխ էր եղել սիրիական ընդդիմության գործողությունների և իշխանափոխության սցենարների մշակմանը: Մի քանի տարբերակներ առաջ քաշեցին գերմանացի հետազոտողները: Առաջինը աշխարհիկ հեղաշրջումն էր, որի մեջ պետք է ներգրավված լինեին ալավիական բարձրաստիճան սպաներ՝ դա համարելով քաղաքական ճգնա-

[65] Veysel Ayhan, The Social Opposition Movement in Syria: the Assad Regime in the Context of Reform and Revolution, http://www.alternatifpolitika.com/page/docs/kasim–2011–sayi3/fulltext/3veyselayhan.pdf

[66] А. Королевская, Сирийские реалии: прогнозы и перспективы, http://iimes.ru/rus/stat/2012/24–05–12.htm

[67] Նույն տեղում:

[68] Մանրամասն տես կառույցի կայքում՝ http://www.lccsyria.org

[69] А. Королевская, Сирийские реалии: прогнозы и перспективы, http://iimes.ru/rus/stat/2012/24–05–12.htm

ժամից դուրս գալու ելք: Սակայն այդ դեպքում ընդդիմությունը պետք է երաշխավորեր ալավի փոքրամասնության անվտանգությունը, իսկ բանակը պետք է դառնար հասարակական կարգի և քաղաքական ազատությունների երաշխավոր: Երկրորդ սցենարը համընդհանուր քաղաքացիական ընդվզումն էր, ինչն, ըստ ամենայնի, կհանդիպեր բանակի դիմադրությանը և շատ զոհեր կպահանջեր: Երրորդ սցենարը կապված էր սիրիական սփյուռքի ընդդիմադիր շրջանակների ակտիվացման հետ, ինչը, ըստ դիտարկման, այնքան էլ իրատեսական չէր՝ հաշվի առնելով սիրիական սփյուռքի բազմաշերտությունը[70]:

Արևմտյան առանձին փորձագետների կարծիքով՝ Բաշար Ալ–Ասադի վարչակարգը կարող էր գոյատևել մինչև 2013 թ. վերջը՝ հաշվի առնելով հատկապես տնտեսական այն դժվարությունները, որոնք ի հայտ էին եկել միջազգային պատժամիջոցների արդյունքում և կարող էին երկիրը հասցնել վերջնական անկման[71]:

Նշենք, որ ներքաղաքական զարգացումների վրա արտաքին գործոնի ազդեցությունն ի վերջո արմատականացրեց ընդդիմադիրների դիրքերը և ռազմականացրեց ներսիրիական գործընթացը, որի ապացույցը «Ազատ սիրիական բանակի» (ԱՍԲ) ստեղծումն էր: ԱՍԲ–ի հռչակած գերնպատակը Սիրիայի քաղաքացիներին կառավարական զինված ուժերի գործողություններից պաշտպանելն էր, ինչպես նաև իշխող վարչակարգի տապալումը[72]:

ԱՍԲ–ի տեղեկատվական կերպարի ստեղծման գործում ակտիվ աշխատանք տարան հակաասադական միջազգային լրատվամիջոցները, որոնք միաժամանակ փորձում էին ներկայացնել այն որպես բազմաշերտ կառույց՝ էթնիկ և դավանական առումով: Սակայն բանակը հստակ սուննիական ուղղվածություն ուներ, որի ապացույցը դրա կազմում գործող և վաղ իսլամի հայտնի գործիչների անունները կրող գումարտակների անվանումներն էին («Խալիբ իբն ալ–Վալիդ», «Յազիդ իբն ալ–Մուավիյա», «Օմար իբն ալ–Խատտաբ» և այլն): Բանակը զգալիորեն համալրված էր դասալիքներով և ռազմական, տեխնիկական և ֆինանսական աջակցություն էր ստանում հովանավոր-

[70] И. Берг, Сирийская оппозиция глазами немецких экспертов и комментаторов, http://www.iimes.ru/rus/stat/2011/17–10–11.htm

[71] Ю. Щегловин, О ситуации в сирийской оппозиции, http://iimes.ru/rus/stat/2012/27–05–12a.htm

[72] А. Королевская, Размышления о природе Свободной сирийской армии, http://www.iimes.ru/rus/stat/2012/03–03–12.htm

ներից: «Ազատ սիրիական բանակը» գործում էր աշխարհագրական հետևյալ կենտրոններում՝ հյուսիս–արևմտյան (Իդլիբի նահանգ), հարավային (Հոուրան, Դարաա), արևելյան (Դեյր Էզ–Զոր, Աբու Քամալ), Դամասկոսի նահանգում և Լիբանանին հարակից շրջանում (Զաբադանի, Մադայի), կենտրոնական (Հոմս, Համա, Ռասթան)[73]: Նշենք նաև, որ ռազմական գործողությունների աշխարհագրությունը ներառում էր ոչ միայն Սիրիան: Սիրիական ճգնաժամը տեղափոխվել էր Լիբանան, որտեղ բախումներ էին տեղի ունենում Բաշար Ալ–Ասադի վարչակարգի հակառակորդների և կողմնակիցների միջև: Դրանք ունեին թե՛ քաղաքական, թե՛ դավանական ենթատեքստ, քանի որ հակասությունները ձևավորվել էին մի կողմից՝ շիաների ու ալավիների, մյուս կողմից՝ սուննիների միջև[74]:

Ներսիրիական գործընթացի ռազմականացման հարցում Թուրքիան կարևոր դերակատարությունն ունեցավ: Առանձին տեղեկությունների համաձայն՝ թուրքական հատուկ ծառայություններն ու զինվորական հետախուզությունն ակտիվ աշխատանք էին տարել ԱՍԲ–ի ձևավորման, դրան մարզելու և զինելու ուղղությամբ՝ ձգտելով այն դարձնել Սիրիայում զինված պայքարի հենակետ[75]: “Washington Post” թերթի հրապարկման համաձայն՝ ԱՄՆ իր հերթին համագործակցել է Սաուդյան Արաբիայի և Կատարի հետ ապստամբներին զինելու հարցում[76]:

«Ազատ սիրիական բանակը» պատասխանատվություն է կրում հակակառավարական ռազմական, նաև ահաբեկչական և քրեական բազմաթիվ գործողությունների, ինչպես նաև Հոմսում քրիստոնյաներին թիրախ դարձնելու հարցում[77]: ԱՍԲ–ն Սիրիայի կառավարական ուժերի դեմ մարտեր է մղել Դարաայում, Իդլիբի նահանգում, մասնավորապես Իդլիբ քաղաքում, Ռասթանում, Ջեբել Զավիյայում, Համայում, Հոմսում և այլն: ԱՍԲ–ի հետ են համագործակցել և առանձին դեպքերում ԱՍԲ–ի անվան տակ են գործել Սիրիա ուղարկված վարձկանները (կամ ջիհադական-

[73] Նույն տեղում:

[74] Paul Salem, Syiran Crisis Spills into Lebanon, http://carnegieendowment.org/2012/05/21/syrian–crisis–spreads–to–lebanon/ausr

[75] Syria’s Armed Opposition: Free Syrian Army, http://middleeast.about.com/od/syria/p/Syrias–Armed–Opposition–Free–Syrian–Army.htm

[76] US Helps Gulf States Arm Syrian Rebels:Report, http://www.israelnationalnews.com/News/News.aspx/155856#.T–LttnLXdIg

[77] Syrian Christians: The Revolution’s Unsung Victims, http://www.israeltoday.co.il/tabid/178/nid/23182/language/en–US/Default.aspx

ները), որոնք ներթափանցում էին հարևան Իրաքից, Լիբանանից, Թուրքիայից և Հորդանանից: Պատահական չէ, որ ԱՍԲ–ի զինյալների շրջանում զգալի տարածում ունեին ջիհադական և առհասարակ սալաֆիական տրամադրությունները[78]:

ԱՍԲ–ին հաջողվեց որոշ ժամանակ վերահսկողության տակ վերցնել Սիրիայի առանձին շրջաններ, ինչպես օրինակ՝ 2012 թ. հունվարի երկրորդ կեսին Զաբադանին և Դուման[79]: Առանձնապես դաժան մարտեր ընթացան Սիրիայի կառավարական զորքերի և «Ազատ սիրիական բանակի» միջև Հոմս քաղաքի Բաբ Ամր թաղամասում, ինչն ավարտվեց վերջինիս պարտությամբ[80]: Բաբ Ամրն, ըստ ամենայնի, նախատեսվում էր դարձնել սիրիական Բենղազին, ինչը, սակայն, չհաջողվեց: Բանակի հրամանատարությունը հայտարարեց, որ տակտիկական նկատառումներից ելնելով՝ ԱՍԲ–ն նահանջում է հետագայում նորից գրոհելու մտադրությամբ, սակայն, ըստ էության, շարունակեց կայուն դիրքեր ունենալ Հոմսի նահանգում: Կառույցն, ըստ էության, ներկայացվում էր որպես «Ազգային խորհրդի» զինված թև, սակայն իրականում վերջինիս հետ ժամանակ առ ժամանակ հակասություններ էր ունենում՝ գործելով անջատ:

Հարկ է նշել, որ ԱՍԲ–ի դեմ կռվում էին նաև կառավարամետ «Շաբիհայի»՝ քաղաքացիական անձանցից կազմված զինյալների խումբը[81], որոնց գործողությունները շատ դեպքերում նույնպես ոչ համարժեք էին:

Նշված շրջանում Սիրիայում տեղի ունեցան բազմաթիվ ահաբեկչական գործողություններ՝ հարձակումներ զինվորականների, ռազմական ու քաղաքացիական օբյեկտների, այդ թվում՝ դպրոցների վրա, խաղաղ բնակիչների և զինվորական անձանց առևանգումներ ու սպանություններ[82]: Ի դեպ՝ մեկ անգամ չէ, որ նա-

[78] А. Королевская, Размышления о природе Свободной сирийской армии, http://www.iimes.ru/rus/stat/2012/03–03–12.htm

[79] Zabadani, Former Syria Resort, Now Rebel Stronghold http://www.huffingtonpost.com/2012/01/16/zabadani–syria–resort_n_1208743.html, Security forces, dissidents clash in Damascus suburb, http://edition.cnn.com/2012/01/21/world/meast/syria–unrest/

[80] We Simply couldn't Stay there any more Rebel Forces Leave Baba Amr, http://www.guardian.co.uk/world/2012/mar/01/syrian–government–forces–retake–baba

[81] Ghosts of Syria: diehard militias who kill in the name of Assad, http://www.guardian.co.uk/world/2012/may/31/ghosts–syria–regime–shabiha–militias

[82] Հատկապես ցնցող էին 2011 թ. դեկտեմբերի 23–ին Դամասկոսի պետական անվտանգության շենքի դիմաց, հունվարի 6–ին Դամասկոսի Միդան թաղամասում, մայիսի 10–ին Դամասկոսի Բաբ Շարկի թաղամասում իրա-

խագահ Ալ–Ասադը նշել էր, որ պետությունը պայքարում է միջազգային ահաբեկչության դեմ՝ նկատի ունենալով ոչ միայն «Ազատ սիրիական բանակին», այլև «Ալ–Կաիդային»[83]:

«Ալ–Կաիդան» իր հերթին նպատակ ուներ տապալելու Ալ–Ասադի վարչակարգը: Նրա գործողություններն, ի դեպ, վտանգավոր էին համարում հակաասադական ուժերը ևս, այդ թվում՝ ԱՄՆ–ն: Սիրիական զարգացումներին երկու անգամ անդրադարձավ կառույցի առաջնորդ Այման Ազ–Զավահիրին: Նա վարչակարգի դեմ մարտնչողներին անվանեց «Ալլահի զինվորներ», իսկ արդեն 2012 թ. փետրվարին Սիրիայում ջիհադի կոչ արեց[84]:

2012 թ. սկզբներին Սիրիայում ծավալված դեպքերի համատեքստում հակասիրիական ճամբարում գործող ուժերը՝ ԱՄՆ–ի գլխավորությամբ, ՄԱԿ–ի ԱԽ–ից դուրս ձեռնամուխ եղան «Սիրիայի բարեկամների խմբի» (ՍԲԽ) ստեղծմանը, որը փորձելու էր կազմալուծել սիրիական վարչակարգը վերջինիս վրա միջազգային ճնշումների ուժեղացման միջոցով: 2012 թ. փետրվարի 24–ին տեղի ունեցավ ՍԲԽ–ի առաջին հանդիպումը Թունիսում, իսկ ապրիլի 1–ին Ստամբուլում կայացած երկրորդ հանդիպման ամփոփիչ հռչակագրում «Ազգային խորհուրդը» ճանաչվեց որպես Սիրիայի օրինական իշխանություն: Բացի այդ՝ որոշվեց խստացնել պատժամիջոցները վարչակարգի նկատմամբ և ֆինանսական աջակցություն ցույց տալ ընդդիմությանը[85]: Ապրիլի 19–ին Փարիզում ՍԲԽ երրորդ հանդիպմանն ընդունված փաստաթղթում տեղ գտան գրեթե նույն շեշտադրումները, քննության առարկա դարձավ Քոֆի Անանի ծրագիրը[86]:

Սիրիայի հարցում միջազգային մեկ այլ նախաձեռնություն կապված էր այդ երկրում խաղաղություն հաստատելու Քոֆի Անանի ծրագրի հետ, որը վերջինս իրականացրեց որպես ՄԱԿ–ի

---

կանացված պայթյունները, 2012 թ. փետրվարի 10–ի, մայիսի 18–ի Հալեպի պայթյունները, որոնց ընթացքում զոհվեցին և վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ՝ թե՛ զինվորական, թե՛ քաղաքացիական:

[83] Bashar Al–Assad says an interview country under terrorist attacks, http://www.metrolic.com/bashar–al–assad–says–in–interview–country–under–terrorist–attacks–180642/

[84] Joseph Holliday, Syira's Armed Opposition, Institute for the Study War, Middle East Security Report 3, March 2012, http://www.understandingwar.org/sites/default/files/Syrias_Armed_Opposition.pdf

[85] "Friends" of Syria Recognise SNC, http://www.aljazeera.com/news/middleeast/2012/04/20124113351659274.html

[86] Friends of Syria Say Annan Plan is Last Hope, http://www.dailystar.com.lb/News/Middle–East/2012/Apr–19/170749–france–says–syria–faces–civil–war–if–un–plan–fails.ashx#ixzz1wNheEfji

և ԱՊԼ–ի հատուկ բանագնաց: Ծրագիրը, որ ներառում էր վեց կետ, նախատեսում էր 2012 թ. ապրիլի 12–ից Սիրիայում վերջ դնել բռնություններին, հաստատել զինադադար, որից հետո կողմերը պետք է նստեին բանակցությունների սեղանի շուրջ[87]: Չնայած այն փաստին, որ թե՛ սիրիական իշխանությունները և թե՛ ապստամբներն ընդունել էին ծրագրի պայմանները, հրադադարի կանոններն այդպես էլ չպահպանվեցին և այն ձախողվեց: Միանգամայն կանխատեսելի էր թվում, որ նման բարդ իրավիճակում, երբ արտաքին դերակատարներն էականորեն շահագրգռված էին իշխանափոխությամբ, Անանի ծրագիրը կարող էր կենսունակ լինել:

2012 թ. ապրիլին Անանի առաքելության շրջանակներում ՄԱԿ–ի ԱԽ–ն մշակեց Սիրիայում դիտորդական առաքելության ծրագիր՝ անզեն դիտորդների կազմով: ՄԱԿ–ի դիտորդների խնդիրներից էր երկրի ուժային կառույցների և ընդդիմության զինված խմբավորումների միջև հրադադարի վերահսկողությունը: ՄԱԿ–ի դիտորդական առաջին խումբը Սիրիա ժամանեց ապրիլի 15–ին: Սիրիայի իշխանությունները և դիտորդական խումբը նախնական համաձայնագիր ստորագրեցին երկրի տարածքում առաքելության աշխատակարգի մասին: Համաձայնագիրը սահմանում էր նաև սիրիական կառավարության խնդիրներն ու պատասխանատվության աստիճանը[88]: Դիտորդական առաքելության շրջանում նույնպես հրադադարի կանոնները չպահպանվեցին:

Չնայած ներքաղաքական ճգնաժամին՝ Սիրիայի իշխանությունները, այնուամենայնիվ, շարունակեցին իրենց իսկ հռչակած բարեփոխումների գործընթացը, որը, սակայն, չկարողացավ կայունացնել ներքաղաքական վիճակը: Դրանք այլևս չէին էլ կարող արմատական բեկում մտցնել ներքաղաքական գործընթացում, քանի որ ինչպես իրավացիորեն նշում է Պատրիկ Սիլը. «Ամեն ինչ Սիրիայում պետք է վերակառուցվի հենքից՝ ներառյալ պետության գաղափարախոսությունը: Երկրորդ աշխարհարհամարտից հետո ստեղծված հին կարգախոսները՝ հակագաղութատիրություն, հեղափոխական սոցիալիզմ, բաասականություն, արմատական իսլամականություն, արաբական միասնություն և արաբական ազգայնականություն, կարիք ունեն վերաշարադրվելու,

[87] Anan's Peace Plan for Syria, http://www.cfr.org/syria/annans–peace–plan–syria/p28380

[88] Presence of Observers in Syria has 'Calming Effect' in Areas Deployed – UN official, http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=42038

դրանցից կամ պետք է հրաժարվել, կամ էլ դրանք պետք է համապատասխանեցվեն մեր օրերին[89]:

2012 թ. փետրվարի 26–ին անցկացվեց նոր սահմանադրության նախագծի հանրաքվեն, որին կողմ քվեարկեց բնակչության մեծամասնությունը: Արդյունքում վերամշակված սահմանադրությամբ[90] հռաչկվեց բազմակուսակցական համակարգ, վերացվեց Բաաս կուսակցության մենաշնորհը: Արգելվեց կրոնական, ազգային, ցեղային կամ տարածաշրջանային հենքի վրա որևէ կուսակցության ստեղծումը, ինչն, ըստ էության, ուղղված էր «Մուսուլման եղբայրների» դեմ: Իսկ սահմանադրության 3–րդ կետը, համաձայն որի նախագահը պետք է լիներ մուսուլման (որն, ի դեպ, Սիրիայի սահմանադրության մեջ ներառված էր 1973–ից) որոշակի մտահոգություն առաջ բերեց քրիստոնյաների շրջանում, ովքեր աջակցում էին իշխող վարչակարգին: Վերջիններս հույս ունեին, որ Սիրիան պետք է գնար ժողովրդավարացման ճանապարհով և ոչ թե փորձեր սիրաշահել իսլամիստներին[91]:

2012 թ. մայիսի 7–ին Սիրիայում անցկացվեցին նաև խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում ընդդիմադիր որևէ ազդեցիկ ուժ չհայտնվեց խորհրդարանում: Սիրիայում ընտրություններին նախորդած մի քանի ամիսներին գրանցված կուսակցություններից ոչ մեկը չմասնակցեց դրանց, բացառությամբ «Փոփոխությունների և ազատագրման ազգային ճակատի», որը նորընտիր խորհրդարանում ստացավ հինգ տեղ: Այդ համատեքստում միանգամայն կանխատեսելի էր «ԲԱԱՍ» կուսակցության և բաասամետ «Ազգային առաջադիմական ճակատի» մեծամասնություն կազմելը[92]:

Նշենք նաև, որ թե՛ սահմանադրության հանրաքվեն և թե՛ խորհրդարանական ընտրությունները բոյկոտվեցին ընդդիմադիրների կողմից, որոնք երկրում արմատական փոփոխությունների համար նախապայման էին համարում վարչակարգի հրաժարականը:

Այսպիսով՝ կասկածից վեր է, որ Արևմուտքը և նրա հովանավորությամբ գործող ուժային կենտրոնները հետաքրքրված էին

[89] Patrick Seal, Syria's Assad on the Ropes?, http://www.thenation.com/article/162971/syrias–assad–ropes

[90] Draft Constitution for the Syrian Arab Republic, http://www.sana.sy/eng/337/2012/02/23/401178.htm

[91] Sami Moubayed, Why Syria's Christians are angry?, http://edition.cnn.com/2012/02/28/opinion/moubayed–syria–christians/index.html

[92] А. Королевская, Сирийские реалии: прогнозы и перспективы, http://iimes.ru/rus/stat/2012/24–05–12.htm

ոչ թե Սիրիայում ժողովրդավարության հեռանկարով, այլ վարչակարգի տապալմամբ, որի միջոցով հնարավոր կլիներ փոխել Սիրիայի քաղաքական ուղենիշները: Ուսումնասիրվող շրջանում, զերծ մնալով Ալ–Ասադի վարչակարգը ռազմական ներխուժմամբ տապալելու ծրագրից, Դամասկոսի դեմ գործող միջազգային ուժերը ռազմականորեն, տեխնիկապես և ֆինանսապես աջակցեցին սիրիացի ապստամբներին և երկիր ներթափանցած վարձկաններին, ուժեղացվեցին պատժամիջոցները Սիրիայի դեմ՝ ավելի ու ավելի ներքաշելով այդ երկիրը ճգնաժամի մեջ: Արտաքին միջամտությունը նպաստեց ահաբեկչական գործողությունների և քրեածին մթնոլորտի ձևավորմանն ու ակտիվացմանը, զգալի վնաս հասցվեց երկրի սոցիալ–տնտեսական իրավիճակին, էթնոդավանական հանդուրժողականության մթնոլորտին, խարխլվեցին սիրիական պետության հիմքերը, իսկ հասարակությունը երկփեղկվեց:

*ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ*

# ԵԳԻՊՏՈՍԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԽՆԴԻՐԸ (2008–2011 ԹԹ.)

2008–2011 թթ. Եգիպտոսի քաղաքական կյանքը հագեցած էր չափազանց կարևոր իրադարձություններով: Երկրի հասարակական–քաղաքական համակարգը բախվեց աշխարհիկության և իսլամականության բևեռների միջև ընտրության ծանր փաստին: Եգիպտական հասարակությունը 1952 թ. ի վեր առաջին անգամ իրական փորձ կատարեց ավտորիտար ռազմաքաղաքական համակարգից անցում կատարելու դեպի քաղաքացիական հասարակություն կառուցելու գործընթացը: 2008–2011 թթ. ընթացքում Եգիպտոսը շարունակում էր նաև գործուն մասնակցություն ունենալ պաղեստինյան հարցի և արաբ–իսրայելական դիմակայության խաղաղ կարգավորման գործընթացներին: Հանդիսանալով մերձավորարևելյան դիմակայության հաղթահարման ուղիներ մշակող կարևոր գործոն՝ Կահիրեն միջնորդի դեր էր ստանձնել պաղեստինյան ուժերի հաշտեցման և Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորման մեջ: Եգիպտոսը շարունակում էր առանցքային դերակատարություն ունենալ նաև միջարաբական հարաբերություններում՝ պահպանելով իր ուրույն տեղն ու դերը նաև աֆրիկյան մայրցամաքում:

Տվյալ հոդվածի նպատակն է ներկայացնել նշված ժամանակահատվածում ներքին և արտաքին քաղաքական գործընթացների կարևորագույն փուլերը, վերլուծել ներքաղաքական այն զարգացումները, որոնք պայմանավորում են նաև Կահիրեի արտաքին քաղաքական կեցվածքը և ձևավորում նրա քաղաքական ուղեգիծը:

Եգիպտոսի համար 2008 թ. սկսվեց նրանով, որ հունվարի 5–ին եգիպտական հատուկ ծառայության ուժերը Սինայի և Գազայի սահմանագծին հերթական անգամ 5 թունել հայտնաբերեցին,

որոնք օգտագործվում էին «Համաս»[1]–ին մաքսանենգ ճանապարհով զենք և զինամթերք փոխանցելու համար:

Կարելի է ասել, որ վերջին տարիներին Սինայի և Գազայի Ռաֆահի[2] միջև անցակետը Եգիպտոսի համար դարձել էր իսկական գլխացավանք: Հունվարի 8–ին իսրայելական թերթերից մեկին տված հարցազրույցում ԱՄՆ նախկին պետքարտուղար Ք. Ռայսը հայտնեց, որ Վաշինգտոնը համոզված է, որ եգիպտական իշխանությունները բավականաչափ կամք չեն դրսևորում Սինայի և Գազայի գոտու միջև սահմանը վերահսկելու համար, և որ Եգիպտոսը այդպիսով պատասխանատվություն է կրում «Համասը» զինելու գործում: Միևնույն ժամանակ պետքարտուղարը նշեց, որ ԱՄՆ–ն պատրաստ է իր աջակցությունը ցուցաբերել նշված հարցի կապակցությամբ[3]:

Արդեն հունվարի 17–ին Իսրայելը շրջափակեց Գազայի գոտին, որտեղից պարբերաբար հրթիռահարվում էր Գազային սահմանամերձ իսրայելական տարածքը: Այս ամենի արդյունքում հունվարի 22–24–ին ավելի քան 100.000 պաղեստինցի գրոհեցին

[1] «Համասը» արաբերենից թարգմանաբար նշանակում է խանդավառություն, աքրոնիմը՝ Հարաքա ալ–մուկաուամա ալ–իսլամիյա (Իսլամական դիմադրության շարժում), պաղեստինյան սուննիական կրոնաքաղաքական կազմակերպություն է, որի ենթակառույցների հիմնական մասը գտնվում է Գազայի գոտում: «Համասը» հիմնվել է 1987 թ. դեկտեմբերին Գազայում, պաղեստինյան «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության առաջնորդ շեյխ Ահմադ Յասինի և կազմակերպության ևս մի քանի անդամների կողմից: Ըստ որոշ տեղեկությունների՝ «Համասի» ստեղծման հարցում իսրայելական հատուկ ծառայությունները որդեգրել են դիտորդի կեցվածք՝ հույս ունենալով Յասիր Արաֆաթի «Ֆաթհին» հակակշիռ ստեղծելու: Հարկ է նշել նաև, որ Համասը որպես ահաբեկչական կազմակերպություն է ճանաչվել Իսրայելի, ԱՄՆ–ի, Կանադայի, Եվրամիության, Ճապոնիայի կոմից: Ռուսաստանի Դաշնությունը այն ահաբեկչական կազմակերպություն չի համարում: Տե՛ս՝ Ա. Փաշայան, «Համաս», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2474

[2] Համաձայն որոշ տվյալների՝ Ռաֆահում 2006 թ. բնակվում էր 171,363 մարդ: Հարկ է նշել, որ Սինայ թերակղզու և Գազայի միջև սահմանային միակ անցակետը Ռաֆահ նահանգն է, որի մի մասը գտնվում է Սինայի, իսկ մյուս հատվածը՝ Գազայի գոտում: Ռաֆահ անցակետը կառուցվել է դեռ 1967 թ. և գտնվում էր իսրայելական կառավարության հսկողության տակ: 1979 թ. եգիպտա–իսրայելական հաշտության պայմանագրի ստորագրման արդյունքում և 1982 թ. Սինայ թերակղզուց իսրայելական զորքերի դուրս բերումից հետո անցակետը անցավ եգիպտա–իսրայելական համատեղ հսկողության ներքո: 2007 թ. հունիսից, երբ իշխանությունը Գազայում ամբողջությամբ անցավ «Համասի» ձեռքը, Ռաֆահը եգիպտական կողմից ամբողջությամբ փակվեց: 2005 թ. սկսած՝ Պաղեստինյան ինքնավարության խնդրանքով Եվրամիության կողմից հատուկ առաքելություն ձևավորվեց, որը ևս պետք է հսկեր սահմանակետի շարժը:

[3] В. Куделев, Ситуация в Египте: январь 2008 г., http://www.iimes.ru/rus/stat/2008/06–02–08a.htm

և ճեղքեցին Ռաֆահ անցակետը՝ անցնելով եգիպտական տարածք: Խնդիրն այն էր, որ Գազայից հասարակ բնակչության հետ եգիպտական կողմ էին անցնում նաև «Համասի» մարտիկները: Արդեն հունվարի 31–ին եգիպտական ոստիկանությունը հայտարարեց, որ ձերբակալվել են «Համասի» 12 զինված ներկայացուցիչ, որոնք նախնական տվյալներով Եգիպտոսում գտնվող իսրայելցիների դեմ ահաբեկչություն պետք է իրականացնեին: Եգիպտական կողմի համար Ռաֆահ անցակետի վերահսկումը բարդանում էր նաև Սինայի բեդուինների կողմից պարբերաբար իրականացվող հարձակումների պատճառով: Օրինակ՝ հունվարի 8–ին Սինայի բեդուիններից բաղկացած զինված մի խումբ հարձակում գործեց Ռաֆահից դեպի հարավ ընկած ալ–Ուջա սահմանակետի վրա, որի արդյունքում եգիպտական մեկ սահմանապահ և մեկ մաքսային ծառայող ծանր վիրավորվեցին[4]:

Ապրիլի 17–ին Կահիրեում կայացավ ԱՄՆ–ի նախկին նախագահ Ջիմմի Քարթերի և «Համասի» ներկայացուցիչներ Մահմուդ Զահարի և Սաիդ Սիամի միջև հանդիպումը: Չնայած այն հանգամանքին, որ Վաշինգտոնը պաշտոնապես հայտարարել էր, թե կապ չունի և առհասարակ դեմ է այդ հանդիպմանը, քանի որ ԱՄՆ–ն «Համասը» համարում է ահաբեկչական կազմակերպություն, բայց և այնպես այդ հանդիպումը չափազանց կարևոր էր: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Գազայում տիրող իրավիճակի վերաբերյալ մի շարք հարցեր[5]: Կարելի է փաստել, որ հակառակ պաշտոնապես շրջանառվող բոլոր պնդումներին, այնուամենայնիվ, Վաշինգտոնը «Համասը» ընկալում է որպես տարածաշրջանի ռազմաքաղաքական գործոն:

Արդեն հունիսի 19–ին Եգիպտոսի հետախուզության պետ

[4] Սինայի թերակղզին բնակեցված է նաև մի քանի տասնյակ բեդուինական ցեղերով, որոնք մաքսանենգության և այլ իրավախախտումների հետևանքով ենթարկվում են եգիպտական իշխանությունների կողմից իրականացվող պատժամիջոցների: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ տվյալ բեդուինական ցեղերը ապրում են իրենց ավանդական ցեղային օրենքներով և հաճախ չեն ընդունում եգիպտական իրավական համակարգի օրենքները: Տվյալ դեպքում բեդուինների նշված հարձակումը իրականացվել էր եգիպտական բանտից իրենց երկու ցեղակիցներին ազատ արձակելու նպատակով: 2004 թ. և 2006 թ. Սինայի բեդուինները իրականացրել էին երկու ահաբեկչություն, որից հետո եգիպտական իշխանությունները ուժ գործադրեցին վերջիններիս նկատմամբ:

[5] Ուշագրավ է այն հանգամանքը, որ ամերիկյան կողմը հետամուտ էր լինում նաև Սիանայի և Գազայի միջև անցակետի հսկողությանը, և այդ նպատակով հունիսի 16–ին Ռաֆահ ժամանեցին 16 ամերիկյան զինվորականներ, որոնք եգիպտացի սահմանապահներին պետք է սովորեցնեին, թե ինչպես պետք է աշխատել գաղտնի թունելները բացահայտող նորագույն տեխնիկայով:

Օմար Սուլեյմանի միջնորդությամբ «Համասի» և Իսրայելի միջև 6–ամսյա ժամկետով ստորագրվեց զինադադարի վերաբերյալ համաձայնագիր: Կահիրեի դիրքորոշումը «Համաս»–Իսրայել անմիջական բանակցություններ սկսելու հարցում չափազանց կարևոր էր, քանի որ Թել Ավիվը երկար ժամանակ հրաժարվում էր անմիջականորեն «Համասի» հետ բանակցելուց: Համաձայնագրի ստորագրմանը դրական արձագանքեց նաև Սիրիան, որի տարածքում ապաստան էր գտել «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալը: 6–ամսյա զինադադարի պայմաններից էր նաև Եգիպտոսի ստանձնած պարտավորությունը՝ միջնորդելու իսրայելական բանակի կապրալ Շալիդ Գիլադի փոխանակումն կազմակերպելու գործում, որը, ինչպես հայտնի է, 2006 թ. հունիսին գերեվարվել էր «Համասի» մարտիկների կողմից[6]: Հունիսի 16–ին Եգիպտոսը բացեց Ռաֆահ անցակետը, որպեսզի եգիպտական կողմում մնացաց Գազայի բնակիչները կարողանան վերադառնալ հետ:

2008 թ. նոյեմբերի 9–ին Շարմ էլ Շեյխում կայացավ պաղեստինյան հարցի կարգավորման նպատակով կազմավորված «մերձավորարևելյան քառյակի»՝ ի դեմս Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ–ի, ՄԱԿ–ի և Եվրամիության ներկայացուցիչների հանդիպումը: Նշված հանդիպումը ըստ էության հանդիսանում էր մի կողմից 2007 թ. նոյեմբերի 27–ին Անապոլիսում (ԱՄՆ) «մերձավորարևելյան քառյակի» և մյուս կողմից՝ «Ֆաթհի» ու Իսրայելի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքը[7]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Անապոլիսում սկսված բանակցություններին «Համասը» չէր հրավիրվել: Շարմ էլ Շեյխում կայացած հանդիպման ընթացքում եգիպտական կողմը առաջ քաշեց «Համասի» և «Ֆաթհի» հաշտեցման մի քանի

[6] Շալիդ Գիլադին վերադարձնելու դիմաց «Համասը» պահանջում է ազատ արձակել բանտարկված 450 պաղեստինցիների, որոնցից շատերը մեղադրվում էին Իսրայելի տարածքում ահաբեկչություն իրականացնելու մեջ, և որոնց էլ Իսրայելը հրաժարվում է ազատ արձակել:

[7] Անապոլիսում կայացած հանդիպման մասին մանրամասն տե՛ս А. Г. Майко, Международная конференция в Анаполисе по мирному ближневосточному урегулированию. Некоторые итоги для Египта, http://www.iimes.ru/rus/stat/2007/01–12–07c.htm Հարկ է նշել, որ Անապոլիսում կայացած հանդիպումը կարևոր էր նաև Եգիպտոսի համար, քանի որ վերջինս ձգտում էր հնարավորինս շուտ հաշտեցնել «Համասին» և «Ֆաթհին», որը կնպաստեր նաև Իսրայելի հետ որոշակի համաձայնեցման ձեռքբերմանը: Այս ամենը հարաբերական կայունություն կապահովեր Սինային սահմանակից Գազայում և մասնավորապես Ռաֆահ անցակետում, որի հսկողությունը դրված է եգիպտական սահմանապահ ուժերի վրա:

սկզբունքներ[8], որոնք ենթադրում էին. 1) կազմավորել պաղեստինյան ինքնավարությունում «ազգային համաձայնեցման» կառավարություն, 2) նախաձեռնել Պաղեստինում խորհրդարանական և նախագահական նոր ընտրությունների անցկացում, 3) սկսել պաղեստինյան հատուկ ծառայությունների վերակազմավորման գործընթացը[9]: Եգիպտոսի առաջարկած հաշտեցման սկզբունքները մերժվեցին «Համասի» կողմից, որը պնդում էր այն հանգամանքին, որ «Համասը» արդեն օրինական հաղթանակ է ձեռք բերել Պաղեստինում 2006 թ. անցկացված խորհրդարանական ընտրություններին: Բանակցություններին մասնակից «Ֆաթհի» ներկայացուցիչ Աբու Ռուդեյնը մեղադրեց «Համասին» «խաղաղ բանակցությունների տապալման և պաղեստինցիների շարքերը կրկին պառակտելու մեջ»[10]: Հանդիպման մասնակից ԱՄՆ պետքարտուղար Ք. Ռայսը հայտարարեց, որ «Համասի» և «Ֆաթհի» միջև առկա լուրջ տարաձայնությունները փակուղի են տանում պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման գործընթացը[11]:

Շարմ էլ Շեյխում կայացած բանակցությունների անարդյունավետության, ինչպես նաև Գազայից իսրայելական տարածքների հրթիռակոծության ակտիվացման արդյունքում Իսրայելը նախաձեռնեց «Համասին» ռազմաքաղաքական ճնշման և մեկուսացման ենթարկելու գործընթացը:

2008 թ. դեկտեմբերի 27–ին իսրայելական զինված ուժերը սկսեցին «Թափվող արճիճ»[12] ռազմական գործողությունը, որը միտ-

[8] Եգիպտոսի կողմից առաջադրվող պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման, ինչպես նաև «Ֆաթհի» և «Համասի» հաշտեցման նախաձեռնությունների իրականացումը դրված էր Եգիպտոսի հետախուզական ծառայության տնօրեն Օմար Սուլեյմանի պատասխանատվության տակ:

[9] «Համասի» ներկայացուցիչ Ֆաուզի Բարհումի փոխանցմամբ վերջին շրջանում Մահմուդ Աբբասի կարքադրությամբ Հորդանան գետի արևմտյան ափին «Համասի» տասնյակ հարյուրավոր անդամներ են ձերբակալվել: Հիշեցնենք, որ պաղեստինյան երկու հզոր ռազմաքաղաքական ուժերի «Ֆաթհի» և «Համասի» միջև բացահայտ հակամարտությունը սկսվեց այն բանից հետո, երբ 2007 թ. հունիսին իսլամիստները ուժի միջոցով Գազայում զավթեցին իշխանությունը, որից հետո «Ֆաթհի» ղեկավարության տակ մնաց միայն Հորդանան գետի արևմտյան ափը:

[10] Palestinians, Israel Pledge to Continue Peace Talks in 2008, www.china.org.cn / international/2008–11/10/content_16737493.htm

[11] The Israel–Palestinian Negotiations in 2008, http://www.mfa.gov.il/MFA/ Peace+Process/Guide+to+the+Peace+Process/Israel–Palestinian+Negotiations.htm

[12] 22 օր տևողությամբ «Թափվող արճիճ» ռազմական գործողությունները սկսվեցին Իսրայելի և «Համասի» միջև 2007 թ. հունիսին ստորագրված զինադադարի ժամկետի ավարտից 8 օր անց՝ 2008 թ. դեկտեմբերի 27–ին: Իսրայելի ռազմական ուժերի (ՑԱՀԱԼ–ի) գեներալ Ավի Բենայահուն հայտարարեց, որ իսրայելական կողմը այդ գործողություններին պատրաստվել է 1,5

ված էր Գազայում պաղեստինյան «Համաս» շարժման ռազմաքաղաքական ենթակառույցների ոչնչացմանը և շարժման մարտիկների կողմից իսրայելական տարածքների ռմբակոծությունների կանխարգելմանը: 2001–2008 թթ. ընթացքում Գազային սահմանամերձ իսրայելական տարածքները պարբերաբար ռմբակոծվում էին Գազայի գոտում գտնվող պաղեստինյան տարբեր ռազմական կառույցների, այդ թվում նաև «Համասի» կողմից:

2008 թ. դեկտեմբերի 25–ին «Ալ–Արաբիա» հեռուստաալիքին տված հարցազրույցում Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտը նշեց, որ եթե «Համասը» չդադարեցնի իսրայելական տարածքների ռմբակոծությունը, ապա Թել Ավիվը կձեռնարկի համապատասխան քայլեր պետության (Իսրայելի–Գ.Գ.) անվտանգությունն ապահովելու համար[13]: Ռազմական գործողությունների սկսվելու հաջորդ օրը «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալը կոչ արեց Հորդանան գետի արևմտյան ափի բնակիչներին Իսրայելի դեմ սկսելու երրորդ ինթիֆադան[14] և սատարելու Գազայում գտնվող իրենց պաղեստինցի եղբայրներին[15]:

Դեկտեմբերի 27–ին Ռուսաստանի Դաշնության արտաքին

---

տարի: «Թափվող արճիճ» ռազմական գործողություններին մասնակցում էր իսրայելական 10.000 զինվորական: Rabbani M., Birt Pangs of a New Palestine, January 7,2009, http://www.merip.org/mero/mero010709

Ուշագրավ է այն փաստը, որ ռազմական գործողություններից առաջ իսրայելական ռազմակայաններից մեկում պատրաստվել էր Գազայի գոտու մակետը, որով վարժվում էին իսրայելական զորքերը: Zuhur Sh., Gaza, Israel, Hamas and the Lost Calm of Operation Cast Lead, Middle East Policy Council, Vol. XVI, Summer 2009 N 2, p. 12. Համաձայն որոշ տեղեկությունների, «Թափվող արճիճ» ռազմական գործողությունների նախօրեին «Համասը» Գազայում կենտրոնացրել էր 20.000 մարտիկների, որոնք գտնվում էին Ահմեդ Ջաբարիի հրամանատարության ներքո:

[13] «Համասի» ռմբակոծությունների արդյունքում հիմնականում տուժում էին Սդերոտ և Աշքելոն քաղաքները:

[14] Cast Lead in the Foundry, December 31, 2009 http://merip.org/mero/mero123108

[15] Պաղեստինի ժողովուրդը արդեն վերապրել է երկու ինթիֆադա. առաջինը սկսվել է 1987 թ. դեկտեմբերին և տևեց 6 տարի՝ մինչև 1993 թ.՝ ավարտվելով պաղեստինաիսրայելական համաձայնագրի ստորագրմամբ՝ Գազայում և արևմտյան ափին պաղեստինյան ազգային վարչակազմի ստեղծման վերաբերյալ: Տարբեր տվյալների համաձայն՝ առաջին ինթիֆադայի ժամանակ զոհվել է 1200 պաղեստինցի և 170 իսրայելցի: Երկրորդ ինթիֆադան սկսվեց 2000 թ. սեպտեմբերին, որի պատճառը դարձավ «Լիքուդ»–ի աջ բլոկի ղեկավար Արիել Շարոնի այցելությունը Երուսաղեմի տաճարի Լացի պատ, որտեղ գտնվում է նաև արաբների սրբատեղի Ալ–Աքսա մզկիթը: Պաղեստինցիները Շարոնի այս քայլը ընկալեցին որպես սրբապղծություն: Երկրորդ ինթիֆադան ավարտվեց 2004 թ. նոյեմբերին Յասիր Արաֆաթի մահով, թեպետև պաշտոնապես ինթիֆադայի դադարեցման մասին հայտարարություն չէր արվել:

գործերի նախարարության ներկայացուցիչ Ա. Նեստերենկոն հայտարարեց, որ Մոսկվան կոչ է անում կողմերին անհապաղ դադարեցնելու ռազմական գործողությունները՝ Գազայի խաղաղ բնակչությանը կոտորածից զերծ պահելու համար[16]:

«Թափվող արճիճ» ռազմական գործողությունները կրկին ի հայտ բերեցին նաև միջարաբական հարաբերություններում առկա մրցակցությունը և Իսրայելի դեմ միասնական դիրքորոշում զբաղեցնելու անկարելիությունը: Այսպես՝ 2008 թ. դեկտեմբերի 31–ին Կահիրեում ավարտվեց Արաբական պետությունների լիգայի անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների արտահերթ հանդիպումը, որը, ինչպես և նախորդ նմանտիպ հանդիպումները, անարդյունք էր[17]: Իսրայելական ռազմական գործողությունները դատապարտելու փոխարեն հանդիպման մասնակիցները ընդունեցին այսպես կոչված «չորս առաջարկությունների» մասին պայմանավորվածությունը՝ 1. «հակամարտող կողմերը պետք է անհապաղ դադարեցնեն ռազմական գործողությունները»[18], 2. կողմերը պետք է զինադադար ստորագրեն, 3. «Գազայի սահմանային հատվածում Եգիպտոսը և Իսրայելը պետք է բացեն հսկիչ անցակետերը, որոնց հսկողությունը պետք է իրականացվի նաև Եվրամիության հատուկ առաքելության ներկայացուցիչների մասնակցությամբ»[19], 4. «բոլոր նշված կետերը իրականացնելուց հետո միայն պետք է մեկնարկեր միջպաղեստինյան բանակցությունները»[20]: ԱՊԼ հանդիպման մասնակիցները միևնույն ժամանակ կոչ էին անում Մահմուդ Աբբասին համապատասխան միջոցներ ձեռնարկելու ՄԱԿ–ում կրակը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով:

Հարկ է նշել, որ իսրայելական ռազմական գործողությունն-

---

16 http://www.iimes.ru/rus/stat/2009/04–01–09.htm

17 Г. Косач, “Лига арабских государств: положение в Газе и вокруг нее”, http://www.iimes.ru/rus/stat/2009/04–01–09.htm

Հանդիպմանը մասնակցում էին արաբական բոլոր պետությունները՝ բացի Սոմալիից և Կոմորյան Կղզիների Հանրապետությունից: ԱՊԼ անդամ պետությունների արտաքին գործերի նախարաների այդ նիստը նախագահում էր Սաուդյան Արաբիան: Bahgat G., The Arab Peace Initiative: An Assessment, Middle East Council, Vol. XVI, Spring 2009, N 1, p 29.

18 Ուշագրավ է այն հանգամանքը, որ արաբական պետությունները կրակի դադարեցման մասին պահանջը հղել էին երկու կողմերին էլ հավասարաչափ ձևով:

19 Առաջին անգամ արաբական պետությունները առաջարկում էին միջազգայնացնել Գազայի սահմանին գտնվող անցակետերը:

20 A. B. Meir, Negotiating an Israeli–Palestinian Breakthrough, Middle East Policy Council, Vol. XVI, Summer 2009 N 1, p. 23.

րի նկատմամբ արաբական երկների շարքում միայն Սիրիան էր, որը խիստ քննադատության ենթարկեց Իսրայելին և հայտարարեց, որ միակողմանի դադարեցնում է «ոչ անմիջական բանակցությունների» գործընթացը Իսրայելի հետ[21]: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս ուժերին, ապա Իրանը հայտարարեց, որ Իսրայելի ղեկավարությանը մարդկության դեմ հանցանքի համար հարկավոր է հանձնել Միջազգային դատարան: Իրանի նախագահը նշեց նաև, որ սկսում է հումանիտար օգնություն մատակարարել «պաղեստինցի եղբայրներին», իսկ Իրանի պայքարող հոգևորականների խորհուրդը սկսեց կամզակերպել կամավորական ջոկատների զորահավաք՝ Գազա ուղարկելու համար, այն բանից հետո, երբ դրա մասին կոչ արեց այաթոլլա Ալի Խամենեին՝ նշելով, որ ողջ իսլամական աշխարհը պետք է դուս գա Իսրայելի դեմ պայքարի[22]: Ի զարմանս Իսրայելի՝ «Թափվող արճիճ» ռազմական գործողությունները դատապարտեց նաև Թուրքիան[23]: Սաուդյան Արաբիայի միապետը դիմեց ԱՄՆ–ը նախագահ Ջ. Բուշին՝ խնդրելով միջամտել Գազայում ստեղծված իրավիճակի կարգավորման հարցին[24]: Ծոցի արաբական մյուս միապետությունները հստակ դիրքորոշում չհայտնեցին[25]:

2009 թ. հունվարի 1–ին, ելույթ ունենալով Կահիրեում, ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսան և սաուդական արքայազն Սաուդ Ալ–Ֆեյսալը հայտարարեցին, որ ԱՊԼ արտահերթ հանդիպմանը մասնակից արաբական պետությունները ճիշտ գնահատեցին Գազայում ստեղծված իրավիճակը և համապատասխան որոշում ընդունեցին[26]: 2008 թ. դեկտեմբերի 30–ին Մահմուդ Աբբասը մեկնեց Կահիրե Մուբարաքի հետ Գազայում ստեղծված իրավիճակից ելք փնտրելու վերաբերյալ բանակցելու նպատակով[27]:

Հարկ է նշել, որ ռազմական գործողություններին զուգընթաց Իսրայելը ձգտում էր նաև մեկուսացնելու «Համասին» քաղաքական դաշտում. Իսրայելը մասնավորապես փորձում էր ներազ-

[21] В. Куделев, “Ситуация в Египте: январь 2009 г.”, http://www.iimes.ru/rus/stat/2009/19–02–09.htm

[22] Նույն տեղում:

[23] Նույն տեղում: Հարկ է նշել, որ իսրայելական ռազմական գործողությունների խիստ դատապարտությամբ հանդես եկավ նաև Վատիկանը:

[24] Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդել Ազիզ Ալ–Սաուդը հեռախոսազրույցի միջոցով խնդրել է Բուշին զբաղվել հարցի լուծմամբ:

[25] www.rian.ru/analytics

[26] Մանրամասն տես www.polpred.com

[27] http://ru.euronews.net

դել Եգիպտոսի դիրքորոշման վրա, որի միջնորդական գործունեությունը տվյալ հարցի կապակցությամբ քաջ հայտնի էր[28]: Հավանաբար ելնելով այդ հանգամանքից՝ Իսրայելը մերժեց եգիպտաֆրանսիական համատեղ առաջին նախաձեռնությունը՝ իսրայելական զորքերի և «Համասի» մարտիկների միջև կրակի դադարեցման վերաբերյալ: Դիվանագիտական այս նախաձեռնությունը ենթադրում էր բանակցություններ սկսել հակամարտող կողմերի միջև Եգիպտոսի միջնորդությամբ:

Իսրայելական ռազմական գործողությունները դադարացնելու և զինադադար ստորագրելու նպատակով, ինչպես նաև միջպաղեստինյան բանակացություններ սկսելու ուղղությամբ ակտիվ դիվանագիտական գործունեություն ծավալեց Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը: Եգիպտոսը 1990–ականների առաջին կեսից միակ գործուն արաբական ուժն էր, որը նախագահ Մուբարաքի կառուցողական և հավասարակշռված քաղաքականության արդյունքում կարողանում էր միջնորդել Իսրայելի և պաղեստինցիների միջև իրական քայլեր կատարելու ուղղությամբ:

Եգիպտոսի նախագահի իսրայելապաղեստինյան զինադադար ստորագրելու վերաբերյալ նախաձեռնությունը ստացավ «Մուբարաք[29]–Սարկոզի[30] խաղաղ նախաձեռնություն» անվանումը:

Նախաձեռնությունը բաղկացած էր հետևյալ մի քանի առանցքային կետերից.

1. Պատերազմող կողմերը անհապաղ դադարեցնում են կրակը, որի ժամանակահատվածում Եգիպտոսը կողմերին նախապատրաստում է «նախաձեռնության երկրորդ փուլին»: Միևնույն ժամանակ Իսրայելը համաձայնվում է Գազա հումանիտար բեռների ներմուծմանը:

2. Մուբարաքի նախագահությամբ Կահիրեում նիստ է հրավիր-

[28] Cast Lead in the Foundry, December 31, 2009, http://merip.org/mero/mero123108

[29] Մուբարաքի կողմից առաջադրված զինադադարի նախագիծը սկզբից բաղկացած էր 4 կետից:

[30] ԱՄՆ–ի վարչակազմը ակտիվորեն քննադատում էր Ֆրանսիայի ղեկավարությանը «Համասի» հետ շփումների համար: Հետաքրքիրն այն էր, որ «Համասի» ներկայացուցիչների հետ հանդիպել էր նաև ԱՄՆ նախկին նախագահ Ջիմմի Քարթերը, ինչպես նաև Անգլիայի նախկին վարչապետ Թոնի Բլեյերը: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա արտաքին գործերի նախարար Քուշները ընդգծում էր, որ իր պետությունը Համասի հետ հարաբերություններ չունի, դրանք ընդամենը առնչություններ են, որոնք անհրաժեշտ են տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար: Հարկ է նշել, որ ի տարբերություն Ֆրանսիայի՝ Գերմանիայի Դաշնությունը սկսված պատերազմական գործողությունների ողջ մեղավորությունը դրեց «Համասի» վրա:

վում, որին ներկա իսրայելցիները և պաղեստինցիները ձեռք են բերում մի շարք պայմանավորվածություններ, որոնք իրավունք չեն ունենա միակողմանի խախտելու: Այս նույն հանդիպմանը քննարկվում է նաև Գազա–Եգիպտոս սահմանի հսկողության ուժեղացման հարցը:

3. Մուբարաքի նախաձեռնությաբ կազմակերպվում է պաղեստինյան բոլոր խմբավորումների ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ տեղում բոլորի կողմից կքննարկվեն «նախաձեռնության» առանցքային հիմնադրույթները[31]:

2009 թ. հունվարի 7–ին Իսրայելը և Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը ողջունեցին եգիպտա–ֆրանսիական խախաղ նախաձեռնությունը, սակայն «Համասը» հայտարարեց, թե իր փորձագետները դեռ պետք է քննարկեն այդ կետերը, որից հետո միայն կհստակեցվի համասյան դիրքորոշումը տվյալ նախաձեռնության նկատմամբ[32]:

Խոսելով Թել Ավիվ զինադադարի ձեռքբերման հարցում Մուբարաքի դիրքորոշման մասին՝ պետք է նշել, որ արաբական աշխարհում այն միանշանակ չէր ընկալվում: Օրինակ՝ լոնդոնյան «Ալ–քուդս ալ–արաբի» արաբալեզու թերթը գրում էր, որ եգիպտական հետախուզությունը՝ ի դեմս նրա ղեկավար Օմար Սուլեյմանի, օգնել է Իսրայելին և ապատեղեկացրել է «Համասին» իսրայելական ռազմական ուժերի կողմից նախաձեռնվող հարձակման հարցում, որի հետևանքով «Համասի» ուժերը հանկարծակիի են եկել[33]: «Համասը» իր հերթին մեղադրեց Եգիպտոսին դավաճանության մեջ, քանի որ վերջինս թույլ տվեց Իսրայելի արտգործնախարար Ցիպի Լիվնիին, ելույթ ունենալով Կահիրեում, սպառնալ, որ Իսրայելը շուտով ռազմական հարձակում կնախաձեռնի «Համասի» դեմ: Ամմանում գործող իսլամական շարժ-

---

[31] http://korrespondent.net/world/702225

[32] Զինադադարի նախաձեռնությամբ հանդես եկավ նաև Լիբիայի նախագահ Մուամմար Կադդաֆին, ով առաջարկեց երկկողմ ձևով դադարեցնել կրակը, այնուհետև Գազայում տեղակայել միջազգային ուժեր՝ Գազայում իրավիճակը հսկելու և խաղաղ բնակչությանը պաշտպանելու նպատակով: Սակայն Կադդաֆիի նախաձեռնությունը լայն արձագանք չգտավ՝ ի տարբերություն Մուբարաք–Սարկոզի նախաձեռնությանը, որը դրական արձագանք գտավ նաև ՄԱԿ–ում: Տե՛ս www.mideast.ru

Եգիպտական նախաձեռնությունը թե՛ իսրայելցիների և թե՛ մյուս կողմերի կողմից շատ ավելի էր կարևորվում, քան մյուս խաղաղ նախաձեռնությունները: Օրինակ՝ 2009 թ. դեկտեմբերի 30–ին Իսրայելը մերժեց Ֆրանսիայի՝ 48 ժամանոց զինադադար ստորագրելու նախաձեռնությունը: Տե՛ս՝ www.mideast.ru

[33] «Ալ–քուդս ալ–արաբի» 02.01.2009.

ման ներկայացուցիչներից Ալ–Բալադը ռադիոյով ելույթներից մելի ժամանակ, նշեց որ Գազայում կատարվողի համար մեղավոր են չարիքի առանցքի պետությունները, որոնց մեջ մտնում են Եգիպտոսը, Իսրայելը, ինչպես նաև Պաղեստինյան ինքնավարության «Ֆաթհը»: Եգիպտոսին մեղադրում էին նաև Գազայից վիրավորված պաղեստինցիներին եգիպտական սահման տեղափոխվելու թույլտվություն չտալու մեջ[34]:

Եգիպտոսի ԱԳ նախարար Աբու Ալ–Ղեյթը, խոսելով իր պետության դիրքորոշման մասին, նշեց, որ Եգիպտոսը դեռ չի կարող բացել Ռաֆահ անցակետը: Դա կնշանակեր, որ իրենք ճանաչում են «Համասի» ռազմական ներկայացուցչությունը, ինչը կխարխլի Մահմուդ Աբբասի լեգիտիմությունը, և իրենց համագործակցությունը «Համասի» հետ վերջնականապես կպառակտի պաղեստինյան հասարակությունը: Մինչդեռ եգիպտական կողմը ջանում է պահպանել պաղեստինյան միասնությունը և թույլ չտալ երկփեղկվածության խորացում, Իսրայելը առաջարկում էր, որ այսպես կոչված «Ֆիլադելֆյան միջանցքը»[35] հսկվի եգիպտաամերիկագերմանական փորձագետների կողմից, ինչը կտրականապես մերժվեց եգիպտական կողմից:

Անտեսելով հակամարտության շուրջ ընթացող խաղաղ նախաձեռնությունները՝ իսրայելական ռազմական ուժերը ձեռնամուխ եղան «Թափվող արճիճ» ռազմական գործողությունների ծրագրի հաջորդ փուլի իրականացմանը:

Անարդյունք եղավ հունվարի 2–ին Եգիպտոսի ԱԳ նախարար Աբու Ալ–Ղեյթի Ցիփի Լիվնիի ներկայացրած պահանջը՝ Գազայում ռազմական գործողությունների երկրորդ փուլը սկսելու իսրայելական կողմի մտադրությունը կանխելու մասին[36]:

Հունվարի 3–ին սկսվեց «Թափվող արճիճ» ռազմական գործողությունների երկրորդ՝ «ցամաքային» փուլը[37]:

---

[34] Նույն տեղում:

[35] «Ֆիլադելֆյան միջանցքը» 14 կմ երկարությամբ Գազայի և Եգիպտոսի միջև սահմանի մի հատվածն է:

[36] В. Куделев, “Ситуация в Египте: январь 2009 г.”, http://www.iimes.ru/rus/stat/2009/19-02-09.htm

[37] Իսրայելական գրոհը ընթացավ 5 ուղղությամբ՝ Բեյթ–Խանուն, Բեյթ–Լահիա և Ջաբալիա, Ռաֆահ և Գազա քաղաքների ուղղությամբ: Գազայում Համասի զորքերի հրամանատար Ահմեդ Ջաբարին Գազայի գոտին բաժանեց 3 շրջանի՝ 1.Հյուսիսային՝ հրամանատարը Ահմեդ Ռանտուր, 2.Կենտրոնական՝ Այման Նուֆալ, 3.Հարավային՝ Մահմեդ Աբու Շիմալախ: Իսրայելական հատուկ նշանակության ուժերը աշխատում էին ոչնչացնել նաև «Համասի» ղեկավար մարմիններին: Օրինակ՝ հունվարի 1–ին իսրայելական ռմբակոծությունների արդյունքում սպանվեց Համասի շահիդների այսպես կոչված «հոգևոր առաջ-

Իսրայելական բանակի կողմից սկսված ցամաքային գործողությունները կանխելու նպատակով Մուբարաքը հունվարի 5–ին Շարմ էլ Շեյխում շտապ հանդիպում կազմակերպեց եվրոպական «եռյակի»[38] հետ Նիկոլա Սարկոզիի գլխավորությամբ, ինչպես նաև առանձին հանդիպումներ «Համասի» ներակայացուցիչների հետ՝ առաջարկելով նրանց գնալ փոխզիջման և դադարեցնել կրակը[39]: Պետք է նշել, որ պաշտոնական Եգիպտոսի դիրքորոշումը Գազայի դեմ ընթացող ռազմական գործողությունների նկատմամբ «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժումը բացասական էր գնահատում, քանի որ վերջիններս պահանջում էին ռազմական աջակցություն ցուցաբերել «Համասին»: Դեկտեմբերի 27–ից մինչև հունվարի 7–ը եգիպտական ոստիկանության կողմից ձերբակալվեցին այդ շարժման ավելի քան 1000 ակտիվիստներ[40]:

2009 թ. հունվարի 8–ին ՄԱԿ–ի ԱԽ–ն ընդունեց Գազային գոտում կրակը դադարեցնելու մասին թիվ 1860 բանաձևը[41], որը չընդունվեց ոչ «Համասի» և ոչ էլ Իսրայելի կողմից: Համաձայն նշված բանաձևի՝ կողմերից պահանջում էին անհապաղ դադարեցնել կրակը, որից հետո Իսրայելը դուրս կբերեր զորքերը Գազայի գոտուց: Վերը նշված բանաձևի ընդունման ժամանակ ԱՄՆ–ն ձեռնպահ մնաց[42]: 2009 թ. հունվարի 14–ին ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Բան Կի–մուն Կահիրեում հանդիպեց Հոսնի Մուբարաքի, Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ահմեդ Աբու Ալ–Ղեյթի և ԱՊԼ–ի գլխավոր քարտուղար Ամր Մուսայի հետ: Բան Կի–մունը նշեց, որ իր այցի հիմնական նպատակն է հասնել երկկողմ կրակի դադարեցմանը և ակտիվացնել հումանիտար օգնության տրամադրման գործընթացը[43] Գազայի գոտում: Կահիրեում քննարկ-

նորդը» և «Համասի» պաշտոնացանկում երրորդ տեղը զբաղեցնող Նիզար Ռայանը:

[38] «Եվրոպական եռյակի» մեջ մտնում են Ֆրանսիան, Գերմանիան և Մեծ Բրիտանիան:

[39] В. Куделев, “Ситуация в Египте: январь 2009 г.”, http://www.iimes.ru/rus/stat/2009/19–02–09.htm

[40] Նույն տեղում:

[41] Տվյալ բանաձևի ամբողջական տեքստը տես S/RES/1860, Distr.: General 8 January 2009: Հարկ է նշել, որ պաղեստինյան կողմը իսրայելցիներին մեղադրում էր «ֆոսֆորային ռումբերի» օգտագործման մեջ և նաև, որ նրանց ռմբակոծություններին ենթարկվում են նաև կարմիր խաչի մեքենաները, միջազգային մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցչությունները և այլն:

[42] Նույն տեղում:

[43] ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարը պետք է այցելեր նաև Ամման՝ թագավոր Աբդալլահի, այնուհետև Թել Ավիվ և Երուսաղեմ Ցիփի Լիվնիի, Էհուդ Բարաքի

վեց նաև Գազայի և Եգիպտոսի սահմանին գտնվող անցակետերի և մասնավորապես Ռաֆահ անցակետի բացման և պաղեստինցիների միջև համերաշխության ձեռքբերմանը վերաբերյալ մի շարք առանցքային հարցեր: Բան Կի–մուն կոչ արեց նաև տարածաշրջանային ազդեցիք առաջնորդներին ջանքեր գործադրելու կրակը դադարեցնելու համար և նպաստելու ՄԱԿ–ի ԱԽ թիվ 1860 բանաձևի կատարմանը[44]: Անտեսելով ՄԱԿ–ի ԱԽ 1860 բանաձևը, ինչպես նաև հակամարտության շուրջ ընթացող խաղաղ նախաձեռնությունները՝ իսրայելական զորքերը հունվարի 10–ին սկսեցին առաջխաղացումը դեպի Գազայի խորքը:

Կարելի է կարծել, որ ստեղծված իրավիճակը Եգիպտոսի համար իրականում բավականին բարդ էր: Հարկ է նշել, որ այդ առումով Եգիպտոսի համար «ամենամեծ գլխացավը կլիներ», եթե նա ստանձներ Գազայի գոտում բնակվող 1,5 մլն պաղեստինցիներին իրապես սատարելու դերակատարությունը, ինչը նպաստավոր կլիներ երևի թե միայն Իսրայելի համար: Սրանով էր նաև բացատրվում հավանաբար այն հանգամանքը, որ Կահիրեն ձգտում էր հնարավորինս շուտ դադարեցնելու Գազայի գոտու նկատմամբ ծավալված գործողությունները և կարգավորելու Գազայում ստեղծված իրավիճակը: Գազայում ստեծված իրավիճակի շուրջ Մուբարաքի հետ բանակցելու նպատակով հունվարի 7–ին Կահիրե ժամանեց իսրայելական հատուկ բանագնաց Ամոս Գիլադը: Հունվարի 10–ին Կահիրե ժամանեցին նաև «Համասի» ներկայացուցիչները: «Համասը» ակնկալվող զինադադարի վերաբերյալ բանակցություններում կարևորում էր հետևյալը՝ 1. «երկու պետություն–երկու ժողովրդի համար» սկզբունքը, 2. Իսրայելական անձնագրերից պետք է հանվի «հրեական պետություն» բառերը՝ դրանով իսկ ընդգծելով Իսրայելի «մուլտիպետություն» լինելու հանգամանքը[45]: Նույն օրը սկսվեցին պաղեստինաեգիպտական բանակցությունները[46]: Իսրայելի հատուկ բանագնաց Գիլադի առջև դրված էր երկու խնդիր՝ 1. մեկուսացնել և վնասազերծել Գազայի սպառնալիքը Իսրայելի համար և 2. թույլ չտալ «Հա-

և վարչապետ Էհուդ Օլմերտի հետ հանդիպելու նպատակով: Ռամալլահում նա պետք է հանդիպեր Պաղեստինի վարչակազմի վարչապետ Սալամ Ֆայադի և նախագահ Մահմուդ Աբբասի հետ, ինչպես նաև Համասի այն ներկայացուցիչների հետ, որոնք ճանաչում ունեն:

[44] http:/www.unic.ru/bill/S /Res/1860(2009)

[45] Give Up on the Two–State Solution? http://www.danielpipes.org/blog/2009/01/give–up–on–the–two–state–solution; Кирсанов Е., Хаммас в ожидании, http://www.iimes.ru/rus/stat/2009/25–09–09a.htm

[46] Give Up on the Two–State Solution?, նշվ.աշխ.:

մասի» ենթակառույցների վերականգնումը[47]: Միևնույն ժամանակ Թել Ավիվը համոզմունք էր հայտնում, որ տվյալ հակամարտությունում իր մեղքի բաժինն ունի նաև Եգիպտոսը: Քնեսսեթի պաշտպանության և ահաբեկչության դեմ պայքարի կոմիտեի ղեկավար Մ. Ք. Յուվալ Շթայնիցը ԱՄՆ–ի սենատին ուղղված իր նամակում նշում էր, որ Համասի և այլ խմբավորումների կողմից իսրայելական տարածքի ռմբակոծությունների համար մեղավոր է նաև Եգիպտոսը, որը անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկում կանխելու համար զենքի փոխադրումները Գազա: Ելնելով այդ ամենից՝ Եգիպտոսին չի կարելի համարել խաղության գործընթացի մասնակից գործոն: Շտայնիցը նշում է, որ իրենց ունեցած տեղեկությունների համաձայն՝ եգիպտական տարածքից մի քանի ամիսների ընթացքում Գազա են տեղափոխվել շուրջ 20000 ինքնաձիք, 100 տոննա պայթուցիկ, հրթիռներ և այլն: Շթայնիցը առաջարկում է ԱՄՆ–ի սենատին սառեցնել Եգիպտոսին յուրաքանչյուր տարի տրամադրվող ֆինանսական օգնությունը, մինչև որ վերջինս չկանխի «Համասին» տրամադրվող սպառազինության գործընթացը[48]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ սկսված բանակցություններին մասնակցում էին «Համասի» երկու պատվիրակություն՝ Գազայից և Դամասկոսից: Բանակցություններին եգիպտական կողմը գլխավորում էր Օմար Սուլեյմանը[49]:

Հետաքրքրաշարժ է նաև այն հանգամանքը, որ 2009 թ. հունվարին Դամասկոս էին ժամանել Իրանի մեջլիսի նախագահ Ալի Լարիջանին և Իրանի հատուկ ծառայությունների ներկայացուցիչ Սաիդ Ջալիլը «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալի հետ բանակցելու նպատակով: Իրանական բանագնացները «հորդորեցին» Մաշալին չստորագրել Իսրայելի հետ զինադադար, հակառակ դեպքում «Համասը» կկորցնի «իրանական աջակցությունը»[50]: Հարկ է նշել, որ Իրան–«Հիզբալլահ»–«Համաս» եռյակը ճնշում իրականացնելու փորձեր կատարում էր նաև Եգիպտոսի նկատմամբ՝ կապված Ռաֆահի բացման հետ. մասնավորապես «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրալլահը արաբական հեռուստաալիքներով կոչ արեց եգիպտացինե-

[47] Հարկ է նշել, որ Իսրայելի բոլոր կուսակցությունները, այդ թվում և ընդդիմադիր՝ բացի «երեց» և «Խադաշ» կուսակցություններից, կողմ հանդես եկան «Համասի» դեմ ռազմական գործողություններ սկսելու կապակցությամբ:

[48] Meir A. B., նշվ. աշխ., էջ 25:

[49] В. Куделев, “Ситуация в Египте: январь 2009 г.”, www.iimes.ru/rus/stat/2009/19–02–09htm

[50] The Jerusalem Post 12.01.2009.

րին «միլիոններով» դուրս գալու փողոց և ստիպելու եգիպտական իշխանություններին բացել Գազայի հետ սահմանը[51]:

Ստանձնելով պաղեստինաիսրայելական զինադադարի ստորագրման գործընթացը առաջնորդելու դերակատարությունը՝ Կահիրեն միևնույն ժամանակ թույլ չէր տալիս որևէ արաբական խաղաղ այլ նախաձեռնության առաջադրմանը: Ի պատասխան շարունակվող իսրայելական ռազմական գործողությունների՝ Եգիպտոսի նախագահը Իսրայելին հայտնեց, որ եթե Թել Ավիվը շարունակի չհամաձայնվել «Համասի» հետ զինադադար կնքելու առաջարկին, ապա Եգիպտոսը կբացի Ռաֆահ անցակետը[52]: Մուբարաքը դատապարտեց նաև եվրոպական ռազմանավերի օգտագործմամբ Գազայի ծովային շրջափակման Իսրայելի մտադրությունը[53]:

Եգիպտոսը շարունակում էր մնալ մերձավորարևելյան հակամարտության կարգավորման ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկող կարևորագույն և հաճախ նույնիսկ միակ արաբական պետությունը, որի նախաձեռնությունները հասանելի էին թե՛ «Համասին» և թե՛ Իսրայելին[54]: Եգիպտոսի նախագահը Իսրայելը դատապարտող բազմաթիվ ելույթներով հանդես եկավ՝ միևնույն ժամանակ քննադատելով նաև «Համասը», նշելով, որ «Համասը» ինքը հնարավորություն տվեց Իսրայելին նման գործողություններ սկսելու, ավելացնելով, որ «Համասը» վերածվել է Իրանի կամակատարի, այլ ոչ պաղեստինցի արաբների շահերը պաշտպանողի[55]:

2009 թ. հունվարի 16-ին Դոհայում կայացավ ԱՊԼ անդամ պետությունների վեհաժողովը, որտեղ Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը և «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալը առաջարկեցին դատապարտել Իսրայելին և դադարեցնել վերջինիս հետ շփումները: Սակայն այդ առաջարկին դրական արձագանքեց միայն Քատարը և Մավրիտանիան[56]:

---

[51] В. Куделев, “Ситуация в Египте: январь 2009 г.”, http://www.iimes.ru/rus/stat/2009/19-02-09.htm

[52] http://easttime.ru/

[53] http://cursorinfo.co.il

[54] В. Куделев, “Ситуация в Египте: январь 2009 г.”, http://www.iimes.ru/rus/stat/2009/19-02-09.htm

[55] Sh. Zuhur, նշվ. աշխ., էջ 14:

[56] ԱՊԼ գագաթնաժողովում Սիրիան և «Համասը» պահանջում էին Իսրայելին խիստ դատապարտող որոշում ընդունել և դադարեցնել նրա հետ բոլոր տեսակի հարաբերությունները: Սակայն հավաքվածները չկարողացան մի շարք պատճառների հետևանքով գալ ընդհանուր հայտարարի: Տե՛ս http://easttime.ru/

2009 թ. հունվարի 17–ին ՄԱԿ–ի ԱԽ–ի արտահերթ նիստում Գազայի գոտում կրակը դադարեցնելու վերաբերյալ ընդունվեց թիվ 1864 բանաձևը[57]: Նույն օրը երեկոյան իսրայելական նախարարների խորհուրդը ընդունեց որոշում Գազայում կրակը դադարեցնելու մասին[58]: Մեկ օր անց այդ մասին արտահայտվեց նաև պաղեստինյան կողմը: Արդեն 2009 թ. հունվարի 20–ի դրությամբ Գազայի գոտուց դուրս էին բերվել ՑԱՀԱԼ–ի բոլոր ստորաբաժանումները, սակայն հարկ է նշել, որ կրակը դադարեցնելու մասին որոշումից հետո դեռ հինգ օր էլ պաղեստինյան կողմը շարունակում էր հրթիռակոծել Գազային սահմանամերձ իսրայելական տարածքները: Ռազմական գործողությունների արդյունքում իսրայելական զինված ուժերը կարողացան ոչնչացնել Գազայում տեղակայված «Համասի» ենթակառույցների մեծ մասը: Եգիպտոսի և Իսրայելի միջև որոշում կայացվեց փոխելու Ռաֆահի շրջանում ոստիկանական ուժերը բանակային զորքերով՝ միևնույն ժամանակ ավելացնելով նաև նրանց թվաքանակը:

Իսրայելական «Թափվող արճիճ» ռազմական գործողությունները պաշտոնապես ավարտվեցին 2009 թ. հունվարի 18–ին[59]: Կրակը դադարեցնելու մասին հայտարարությունից հետո Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտը հայտարարեց, որ իսրայելական զինված ուժերը կատարեցին իրենց առջև դրված բոլոր խնդիրները[60]: Վարչապետը ցավակցություն հայտնեց Գազայում զոհված խաղաղ բնակչության հարազատներին՝ նշելով, որ իսրայելական զորքերի թիրախը եղել է «Համասը», այլ ոչ խաղաղ բնակչությունը[61]:

2009 թ. հունվարի 12–ին ՄԱԿ–ի Մարդու իրավունքների խորհուրդը Գազայում հանցագործությունների բացահայտման նպատակով հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ ընդունեց S–9/1 բանաձևը: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց ազգությամբ հրեա Ռիչարդ Գլադստոնը: Գլադստոնի հանձնաժողովը խիստ դատապարտեց ինչպես իսրայելական, այնպես էլ համասականների բռնարարքները[62]:

---

[57] Ամբողջական տեքստը տե՛ս www.un.org/SC/Resolution/2009/January17

[58] Իրականում մինչև հունվարի 21–ը դեռ երկուստեք շարունակվում էին տարեբային հրթիռահարումները:

[59] www.newsru.com/world/18jan2009/hamasizr.html

[60] A. B. Meir, նշվ. աշխ., էջ 26:

[61] Նույն տեղում:

[62] Ըստ որոշ տեղեկությունների՝ պատերազմական գործողությունների ժամանակ «Համասի» ներկայացուցիչների կողմից սպանվեցին «Ֆաթահի» 16 ներկայացուցիչներ, և 80–ը մարմնական ծանր վնասվածքներ ստացան: Israeli's

2009 թ. հունվարի 18–ին Մարդու իրավունքների պաշտպանության «Amnesty Internationale» կազմակերպությունը հանդես եկավ Իսրայելի դատապարտությամբ՝ մեղադրելով նրան ֆոսֆորային ռումբերի օգտագործման և Գազայի գոտում հումանիտար ճգնաժամի առաջացման մեջ[63]:

Իրսայելի կողմից կրակի դադարեցման մասին որոշումը ողջունեց ԱՄՆ–ն[64]: ԱՄՆ–ի պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը նշեց, որ կրակի դադարեցման գործում մեծ է Եգիպտոսի ներդրումը, ինչը շատ բարձր է գնահատում ԱՄՆ–ն[65]: Միևնույն ժամանակ Իսրայելը և ԱՄՆ ստորագրեցին «Համասի» հետագա զինումն արգելող միջոցառումների վերաբերյալ» համաձայնագիրը[66]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԱՄՆ–ն դեռ հունվարի 3–ին հայտարարեց չդադարեցնել «Համասի» դեմ ռազմական գործողությունները, և անել հնարավորը այն («Համասը» Գ. Գ.) գլխատելու համար[67]:

2009 թ. հունվարի վերջին «Համասի» ներկայացուցիչ Ֆաուզի Բարխումը հայտարարեց, որ «Համասը» պատրաստ է Իսրայելի հետ ստորագրելու զինադադար մեկ տարի ժամկետով, սակայն, եթե բացվեն սահմանները և Իսրայելը հանի Գազայի գոտու շրջափակումը: Բարխումը չէր բացառում, որ զինադադարը կարող է ստորագրվել նաև մեկ ու կես տարով, ինչպես որ դա առաջարկում էր Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը[68]: «Թափվող արճիճ» իսրայելական ռազմական գործողությունների արդյունքում, ըստ պաղեստինյան աղբյուրների, զոհվեց 1314 մարդ, որոնցից 412–ը՝ երեխա, 110–ը՝ կին, 48–ը՝ «Համասի» մարտիկ և մնացածը՝ քաղաքացիականներ: Վիրավորվեցին 5300 մարդ՝ ներառյալ 1855 երեխա և 795 կին[69]: Համաձայն իսրայելական տվյալների՝ զոհվածների թիվը կազմում էր 1160 մարդ, որոնցից 750–ը «Համասի» մարտիկներն էին[70]: Իսրայելական կողմը

Strategic Incompetence in Gaza, www.jpost.com

63 www.amnesty.com

64 G. Bahgat, "The Arab Peace Initiative: An Assessment, Middle East Council", Vol. XVI, Spring 2009, N 1, p 34.

65 Նույն տեղում: Եգիպտոսի դերակատարության «բարձր գնահատականը» առավել ցայտուն կերպով դրսևորվեց մի քանի տարի անց, երբ Եգիպտոսը ներքաշվեց «արաբական գարնան և դոմինոյի էֆեկտի» մեջ:

66 Նույն տեղում:

67 D. Hoey, "Obama Appoints George Mitchell Middle East Envoy, Portland Press Herald", 23.01.2009.

68 G. Bahgat, նշվ. աշխ., էջ 35:

69 www.lenta.ru/news/2009/01/21

70 www.jpost.com

ուներ հետևյալ կորուստները՝ 13 սպանված, որից 10 զինծառայող և 3 քաղաքացիական, 518 վիրավոր, որից 336 զինծառայող և 182 քաղաքացիական[71]: Գազայի վերականգման համար որոշվեց 2 տարիների ընթացքում հատկացնել 1,3 մրդ ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ Գազայի վերականգնման համար նախատեսված ընդհանուր գումարի չափը հետագայում պետք է հասներ մինչև 5,2 մլրդ ԱՄՆ դոլարի[72]:

2009 թ. փետրվարի 26–ին Կահիրեում ավարտվեցին Եգիպտոսի միջնորդությամբ սկսված Մահմուդ Աբբասի ներկայացուցիչ Ահմեդ Քուրեյի և «Համասի» քաղբյուրոյի ղեկավարի տեղակալ Մուսա Աբու Մարզուքի միջև սկսված բանակցությունները[73]: Եզրափակիչ փաստաթղթում նշվում էր, որ պաղեստինյան ժողովուրդը հաղթահարեց պառակտության շրջանը՝ անցում կատարելով դեպի համաձայնության և ազգային միասնության տանող գործընթացը: Երկու կողմերն էլ ստեղծեցին «բանակցային հանձնաժողովներ», որոնք պետք է իրականացնեին ազգային հաշտեցման գործընթացը, և որի վերջնական արդյունքը կլիներ «ազգային միասնության» կառավարության ստեղծումը[74]: Այն իր աշխատանքները պետք է սկսեր 2009 թ. մարտի 10–ից ոչ ուշ: Այս հանձնաժողովներին զուգընթաց պետք է գործեր Կահիրեում ձեռք բերված համաձայնությունների կատարման գործընթացի «հսկողության հանձնաժողովը», որի կազմի մեջ, բացի պաղեստինյան ներկայացուցիչներից, պետք է ներգրավեին նաև ԱՊԼ–ի անդամ պետությունների ներկայացուցիչները: Կողմերը պայմանավորվեցին ազատ արձակել միմյանց ռազմագերիներին, չհետապնդել յուրաքանչյուրը իրեն ենթակա տարածքում մյուս կողմի ներկայացուցիչներին[75]: Կողմերը պարտավորվում էին նաև վերջ տալ միմյանց դեմ ԶԼՄ–ում տարվող տեղեկատվական պատերազմին: Ըստ ձեռք բերված համաձայնության կետերից մեկի՝ երկու կուսակցությունների ներկայցուցիչները պետք է դադարեին կրել

[71] Նույն տեղում:

[72] That Surreal Gaza Reconstruction Conference, http://www.danielpipes.org/6204/surreal–gaza–reconstruction–conference

[73] Г. Косач, "Каирский этап палестино–палестинского диалога: контекст арабского мира", http://www.iimes.ru/rus/stat/2009/01–03–09.htm

[74] Նախատեսվում էր, որ այդ հանձնաժողովներում պետք է ընդգրկվեին պաղեստինյան քաղաքական, հասարակական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները հասարակության մեջ ներդաշնակություն ապահովելու նպատակով:

[75] Նույն տեղում:

կուսակցության պատկանելիությունը հաստատող համապատասխան հագուստը: Սակայն խոսել այն բանի մասին, թե ներպաղեստինյան բանակցությունների «եգիպտական փուլը» կկարողանա ի վերջո կանխել երկուստեք գոյություն ունեցող հակասությունները, դեռ վաղ էր, քանի որ արդեն իսկ բանակցությունների ընթացքում ի հայտ էին եկել բազմաթիվ տարաձայնություններ: Բանն այն է, որ «Համասը» վերապահումով էր վերաբերվում Պաղեստինի ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասին, «Համասը» խույս էր տալիս նաև ՊԱԿ–ը ճանաչելուց որպես պաղեստինյան հարցի կարգավորման միակ օրինական ներկայացուցչի: Այդուամենայնիվ փետրվարի 27–ին արված հայտարարությամբ «Համասի» ներկայացուչիցը ընդգծում էր, որ պաղեստինյան հերթական խորհրդարանական և նախագահական ընտրությունները պետք է միավորեն Պաղեստինի արաբ ժողովրդին[76]:

Եգիպտական կողմը աշխատում էր առաջին հերթին բանակցություններին ապահովել միայն պաղեստինյան կողմի մասնակցությունը՝ թույլ չտալով արտաքին, թեկուզև արաբական ուժերի ազդեցությունը[77]: Հարկ է նշել, որ բանակցությունների վրա որոշակի ազդեցություն ունեին նաև տարածաշրջանում իրենց քաղաքական շահերն ունեցող պետությունները:

2009 թ. փետրվարի 26–ին Ֆրանսիայում գտնվող Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար արքայազն Սաուդ Ալ–Ֆեյսալը հայտարարեց, որ Կահիրեի բանակցությունների հաջող ավարտի պարագայում հնարավոր է դառնում Արաբական արևելքում եռյակի վեհաժողովի գումարումը՝ Եգիպտոսի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի ղեկավարների մասնակցությամբ: Կահիրեի բանակցությունների ընթացքում Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ահմեդ Աբու Ալ–Ղեյթը նշեց, որ սիրիական ղեկավարության դիրքորոշումը ներպաղեստինյան բանակցությունների հարցում ամբողջությամբ համապատասխանում է պաղեստինյան ժողովրդի շահերին և խնդիրներին:

2009 թ. մայիսի 11–ին Իսրայելի վարչապետ Բենիամին Նե-

[76] Գ. Կոշավ, նշվ. աշխ., www.iimes.ru: «Համասի» պատվիրակությունը Կահիրեում նշում էր, որ այս բանակցություններից առաջ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Գազայում գործող բոլոր ռազմական խմբավորումների հետ, նաև Իսմաիլ Խանիի «կառավարության» հետ:

[77] Բանակցությունների սկզբում Օմար Սուլեյմանը կողմերին կոչ արեց սեփական ուժերով հասնելու «ազգային հաշտության» և թույլ չտալու տարածաշրջանում ձևավորվող բլոկների մասնակցությունը այդ գործընթացներին:

թանյահուն և Հոսնի Մուբարաքը, հանդիպելով Շարմ էլ Շեյխում, հույս հայտնեցին, որ առաջիկայում կվերսկսվեն իսրայելապաղեստինյան խաղաղ բանակցությունները[78]:

Իսրայելա–պաղեստինյան պատերազմական գործողությունների նկատմամբ եգիպտական խաղաղ նախաձեռնության վերջնական արդյունքը հանդիսացավ 2009 թ. գարնանը հրապարակված պաղեստինյան հարցի կագավորման համապարփակ նախագիծը, որի համաձայն[79].

1. Գազայի գոտում պետք է համատեղ գործադիր կոմիտե ստեղծվի, որում կներգրավվեն Գազայի գոտում գործող բոլոր խմբավորումները՝ ներառյալ «Իսլամական ջիհադ»–ը: Տվյալ կոմիտեում տեղերի հիմնական մասը պետք է զբաղեցնեն «Համասի» և «Ֆաթհի» ներկայացուցիչները, որոնք մինչև 2010 թ. հունվարը կիրականացնեն գործադիր իշխանության գործառույթները, այսինքն՝ Պաղեստինի ինքնավարության նախագահի և օրենսդիր ժողովի ընտրությունները:

2. Վերը նշված կոմիտեն անմիջականորեն պետք է ենթարկվի Պաղեստինի ինքնավարության նախագահին:

3. «Համասը» և «Ֆաթհը» կնախաձեռնեն 2010 թ. նախագահական ընտրությունների նախապատրաստական աշխատանքները և անխտիր կճանաչեն ընտրությունների արդյունքները:

4. Դադարեցվում է «Համասի» և «Ֆաթհի» կողմնակիցների նկատմամբ հալածանքները թե՛ Գազայում և թե՛ Արևմտյան ափին:

5. «Ֆաթհի» և «Համասի» ներկայացուցիչների, արաբական երկրների մասնակցությամբ և ՄԱԿ–ի հովանու ներքո պետք է կազմավորվեն համատեղ անվտանգության ուժեր, որոնց հիմնական նպատակը պետք է լինի անվտանգության ապահովումը Պաղեստինի ինքնավարությունում և Իսրայելի հետ զինադադարի պայմանների կատարմանը հետևելը:

6. «Ֆաթհը» և «Համասը» Իսրայելի հետ պետք է երկարատև զինադադարի համաձայնագիր ստորագրեն:

7. Կազմակերպել Իսրայելի հետ ռազմագերիների փոխանակման գործընթացը: Ընդ որում՝ ենթադրվում էր, որ խոսքը չի գնալու կալանքի տակ գտնվող, Իսրայելի կողմից ահաբեկչու-

[78] Д. Эпштейн, “Война в Газе и ее возможные негативные последствия для Израиля”, http://www.iimes.ru/rus/stat/2009/14–01–09a.htm; Seener B. M., Targeting Israelis via Internationale Law. Israel and its Enemies, Middle East Quarterly, Fall 2009, p. 44.

[79] Е. Кирсанов, “Новый план АРЕ по ближневосточному уегулированию”, http://www.iimes.ru/rus/stat/2009/24–06–09.htm

թյան մեջ մեղադրվող, պաղեստինյան աչքի ընկնող գործիչների՝ ազատ արձակման մասին:

8. Եգիպտոսը ազատ է արձակում իր տարածքում ձերբակալված «Համասի» ակտիվիստներին և դարձյալ թույլատրում է «Համասի» գործունեությունը իր տարածքում[80]:

9. Իսրայելը բացում է Գազայի բոլոր անցակետերը հումանիտար օգնություն տրամադրելու համար: Պաղեստնյան կողմից անցակետերը պետք է վերահսկվի նաև ԵՄ ներկայացուցիչների կողմից ՄԱԿ–ի հովանու ներքո: Եգիպտոսը բացում է Ռաֆահ անցակետը, որը ևս վերահսկվում է նույն սկզբունքով, իսկ Իսրայելին հնարավորություն է տրվում անցակետով շարժին հետևելու տեսախցիկների միջոցով:

Այս ամենից բացի՝ գոյություն ունի նաև Օմար Սուլեյմանի կողմից առաջադրված գաղտնի կետը, համաձայն որի «Համասը» պետք է հրաժարվի եգիպտական տարածքով սպառազինություն տեղափոխելուց և վերահսկի այդ գործընթացը եգիպտական համապատասխան ուժերի հետ միասին:

Փաստորեն, «Թափվող արճիճ» ռազմական գործողությունների արդյունքում կարելի է արձանագրել հետևյալ կարևոր դրույթները.

ա. Պատերազմական գործողությունները հերթական անգամ ցույց տվեցին, որ պաղեստինաիսրայելական հակամարտությունը կարգավորելու համար ռազմական ուժը միշտ չէ, որ կարող է դիտվել որպես այլընտրանք: Չիրականացան իսրայելական փորձագետների՝ կայծակնային հաղթանակի հասնելու ակնկալիքները: Իսրայելը հավանաբար հաշվի չէր առել, որ «Համասի» համար Գազան կենսական գոյությունը պահպանելու խնդիր է, և հետևաբար «Համասը» կռվելու էր մինչև վերջ, այլապես Գազան, կորցնելով «Համասը», կկորցներ իր միակ և իրական հենարանը Պաղեստինի ինքնավարությունում: Տարաձայնություններ կային նաև իսրայելական ղեկավարության մեջ, մասնավորապես Օլմերտը ձգտում էր ընդլայնելու և խորացնելու ռազմական գործողությունները, Բարաքը և Լիվնին աշխատում էին որքան հնարավոր է շուտ զինադադար կնքել և բանակցություններ սկսել:

բ. Եվրոպան և ԱՄՆ–ն ընդունեցին «Համասը» որպես վերոնշյալ հակամարտության բանակացող կողմ, ինչին երկար ժամանակ ձգտում էր «Համասը»: Դրա վառ ապացույցն է Մեծ Բրի-

[80] Հարկ է նշել, որ Համասի գործունեությունը պաշտոնապես արգելված է ԱՄՆ–ում, Կանադայում, Հորդանանում, Ավստրալիայում և Անգլիայում:

տանիայի նախկին վարչապետ Թոնի Բլեյերի, ԱՄՆ–ի նախկին նախագահ Ջիմմի Քարթերի և Ֆրանսիայի տարբեր պաշտոնյաների հանդիպումները «Համասի» ներկայացուցիչների հետ: Արևմուտքը քաջ գիտակցում էր, որ մոտ ապագայում՝ 2010 թ. հունվարին, նախագահական և օրենսդիր ժողովի ընտրություններում «Համասը» կարող է կրկնել 2006 թ. հունվարի խորհրդարանական ընտրություններում իր հաղթանակը, որից հետո նրա հետ բանախոսելը արդեն կլինի ծայրահեղ անհրաժեշտություն:

գ. Հակամարտությունը ակնհայտ դարձրեց Սիրիայի ավելի ճկուն դիրքորոշումը պաղեստինահիսրայելական հակամարտության հարցում, որը նապատակ ուներ բարենպաստ պայմաններ ստեղծելու Գոլանի բարձունքները վերադարձնելու համար:

դ. 2006 թ. ընտրություններից հետո «Համասի» ամենակարևոր խնդիրն էր միջազգային հարաբերություններում «Ֆաթհին» համարժեք ճանաչում ձեռք բերել, որն էլ նրան մեծ հաշվով հաջողվեց:

ե. Իսրայելին հարկավոր էր ձեռք բերել հնարավորինս երկարաժամկետ զինադադար կամ խաղաղություն, որն էլ, դատելով տվյալ զարգացումներից, Թել Ավիվը մեծ հաշվով կունենա:

ը. Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը իր կառուցողական դիրքորոշմամբ ևս մեկ անգամ ապացուցեց, որ առանց Կահիրեի մասնակցության շատ դժվար է հասնել որևէ իրական ձեռքբերման Թել Ավիվ հակամարտության կարգավորման գործընթացում: Միևնույն ժամանակ Եգիպտոսը ևս մեկ անգամ ապացուցեց բոլոր շահագրգիռ կողմերին, որ Կահիրեն տարածաշրջանային այն միակ ուժն է, որը կարող է գործուն և իրական միջնորդի դերակատարություն ունենալ Իսրայելի հետ բանակցություններում:

2009 թ. մարտի 2–ին Շարմ էլ Շեյխում միջազգային կոնֆերանս կայացավ՝ նվիրված Գազայի վերականգնման հարցին, որտեղ որոշվեց, որ առաջիկա երկու տարիների ընթացքում Պաղեստինին կտրամադրվի 4,481 մլրդ դոլար օգնություն[81]: Որոշվեց նաև, որ այդ օգնությունը կփոխանցվի միայն պաղեստինյան վարչակազմին՝ Մահմուդ Աբբասի գլխավորությամբ: Պաղեստինին օգնություն տրամադրողների շարքում են ԱՄՆ–ն՝

[81] Հարկ է նշել, որ պաղեստինյան վարչակազմը իրեն հարկավոր օգնության չափը գնահատում էր 2,8 մլրդ դոլար, որից 1,3 մլրդ դոլարը կհատկացվեր Գազայում վերականգնողական աշխատանքներին, իսկ 1,5 մլրդ դոլարը՝ 2009 թ. պաղեստինյան բյուջեի պակասուրդ փակելուն:

900 մլն դոլար, որից 300–ը՝ Գազային, Եվրահանձնաժողովը՝ 554 ՑԱՀԱԼ դոլար այդ թվում՝ Իտալիան՝ 100 ՑԱՀԱԼ դոլար, Անգլիան՝ 45 ՑԱՀԱԼ դոլար, Ֆրանսիան՝ 25 ՑԱՀԱԼ եվրո, Ծոցի արաբական միապետությունները համաձայնվեցին առաջին հինգ տարիների ընթացքում հատկացնել 1,65 մլրդ դոլար, այդ թվում՝ Սաուդյան Արաբիան՝ 1մլրդ դոլար, ՌԴ՝ պարեն և դեղորայք, 50 զրահամեքենա՝ առանց ռազմական սարքավորումների, և երկու ուղղաթիռ: Ի պատասխան նշված որոշմանը «Համասը» մեղադրեց հանդիպման մասնակիցներին կողմնակալության մեջ՝ նշելով, որ Գազայի վերականգնման համար օգնության բաշխման աշխատանքներում պետք է ներգրավված լինի նաև Համասը»:

Շարմ էլ Շեյխում կայացած համաժողովին հաջորդեց Կահիրեում մարտի 11–ին տեղի ունեցած «Համասի» հետ գաղտնի բանակցությունների երրորդ փուլը[82], որի նախաձեռնությունը, ինչպես արդեն նշել էինք, պատկանում էր Օմար Սուլեյմանին: Բանակցությունների գլխավոր հարցերից մեկն էր Գիլադ Շալիթի ազատ արձակելու խնդիրը[83]: Հասկանալով, որ Թել Ավիվ բանակցությունների հաջող ավարտը կախված է նաև Վաշինգտոնի դիրքորոշումից, ինչպես նաև նպատակ ունենալով մեղմել ԱՄՆ–ի դիրքորոշումը «Համասի» նկատմամբ՝ 2009 թ. մարտի 17–ին Վաշինգտոն գործուղվեց Օմար Սուլեյմանը: Բանն այն էր, որ վերը նշված գաղտնի բանակցությունների ավարտին Կահիրեն «Համասի» և «Ֆաթհի» ներկայացուցիչներին առաջարկել էր մինչև հուլիսի 7–ը պատասխանել, թե արդյոք պաղեստինյան երկու կողմերը համաձայն են հաշտեցման՝ եգիպտական առաջարկությունների հիման վրա, և Իսրայելի հետ խաղաղություն հաստատելու համար համաձայնագրի նախագծի դրույթներին[84]: Կարելի է արձանագրել, որ Կահիրեի կողմից առաջարկված պաղեստինահիսրայելական հարաբերությունների նախնական կարգավորման համաձայնագրի

[82] Իսրայելի կողմից բանակցությունները վարում էր Օֆեր Դեքելը՝ «Շաբակ» իսրայելական անվտանգության ծառայության նախկին տեղակալը, իսկ Եգիպտոսի կողմից Օմար Սուլեյմանը:

[83] Ինչպես հայտնի է, նա գերի է վերցվել «Համասի» կողմից 2006 թ. հունիսի 26–ին, որի դիմաց «Համասը» պահանջում էր ազատ արձակել իսրայելական բանտերից շուրջ 1000 պաղեստինցիների, որոնց Իսրայելը դատապարտել էր ահաբեկչության մեջ՝ մեղադրանքի հիման վրա:

[84] Հարկ է նշել, որ «Համաս»–«Ֆաթհ» հարաբերությունների կանոնակարգման համար բավականին ակտիվ քաղաքականություն է իրականացնում նաև Թուրքիան, որի դիրքորոշումը տվյալ հարցում հիմնականում համընկնում է եգիպտասիրիական դիրքորոշման հետ:

նախագիծը կարող էր Իսրայելի համար տևական խաղաղություն, «Համասի» համար միջազգային ճանաչում ապահովել, իսկ Կահիրեի համար էլ՝ արաբական աշխարհում առաջնորդի դիրքերի վերահաստատում: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Դամասկոսը ևս հույս ուներ տվյալ համաձայնագրով ապահովելու նաև Գոլանի բարձունքների վերադարձը:

Այս ամենին զուգընթաց Մուբարաքը հետամուտ էր նաև եգիպտական տարածքում «Համասի» գործունեության հնարավորինս սահմանափակմանը: Օրինակ՝ ապրիլի 28–ին եգիպտական իշխանությունները ձերբակալեցին «Համասի» պաշտոնական ներկայացուցչի՝ Սամի Աբու Զուհրիի եղբորը՝ Յուսեֆ Աբու Զուհրիին, որը անօրինական ճանապարհով անցել էր Գազայից Եգիպտոս:

2009 թ. հունիսի 21–ին Կահիրե ժամանեց Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը: Եգիպտոսի նախագահի հետ միասին նրանք քննարկեցին երկկողմ կարևորություն ունեցող մի շարք հարցեր, մասնավորապես երկկողմ գործադրվող ջանքերը արաբ–իսրայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ, պաղեստինյան տարբեր խմբավորումների և Իսրայելի միջև բանակցության անհրաժեշտության մասին, այդ համատեքստում Կահիրեի միջնորդության անհրաժեշտության վերաբերյալ հարցերը: Իսրայելի պաշտպանության նախարարի պաշտոնական այցին Եգիպտոս՝ հունիսի 23–ին, հաջորդեց ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի պաշտոնական այցը: Եգիպտոսը դրական արձագանքեց 2009 թ. վերջին Մոսկվայում Մերձավոր Արևելքին նվիրված միջազգային վեհաժողով կազմակերպելու ՌԴ նախագահի առաջարկին: Այդ կապակցությամբ իսկույն իր կարծիքը հայտնեց Վաշինգտոնը՝ հայտնելով, որ եթե այդ վեհաժողովին մասնակցեն «Համասի» և «Հիզբալլահի» ներկայացուցիչները, ապա ԱՄՆ մասնակցություն չի ունենա: Տվյալ այցի շրջանակներում Եգիպտոսի և ՌԴ–ի միջև ստորագրվեց նաև ռազմական–տեխնիկական համագործակցության վերաբերյալ նոր համաձայնագիր, քանի որ հայտնի է, որ նախորդը դադարեցվել էր դեռ 1970–ականներին Անվար Սադաթի նախաձեռնությամբ:

Եգիպտոսի հետախուզության պետ Օմար Սուլեյմանի հետ «Համասի» և «Ֆաթհի» միջև հարաբերությունների, ինչպես նաև Իսրայելի հետ հաշտության նախագծի կետերը քննարկելու նպատակով հուլիսի 8–ին Կահիրե ժամանեց «Համասի» քաղբյուրոյի

նախագահ Խալեդ Մաշալը: Սակայն այս անգամ էլ հանդիպումը սպասված արդյունքները չբերեց:

Նպատակ ունենալով խթանելու պաղեստինյան երկու կողմերի միջև հաշտեցման գործընթացը՝ 2009 թ. սեպտեմբերի 9–ին Մուբարաքը «Համասին» և «Ֆաթհին» ներկայացրեց հաշտեցման նոր նախագիծ, որի համաձայն՝ կողմերին առաջարկվում էր նախագահական և խորհրդարանական ընտրությունները անցկացնել 2010 թ. կեսերին, քանի որ գործող խորհրդարանի լիազորությունները ավարտվում են 2010 թ. հունվարին: Հարկ է նշել, որ եգիպտական հաշտեցման նախաձեռնությունները դեռ չէին տվել սպասված արդյունքը: Ի պատասխան Մուբարաքի առաջարկությանը միայն սեպտեմբերի 28–ին «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալը հայտարարեց, որ բանակցությունների հերթական փուլը կանցկացվի 2009 թ. հոկտեմբերի կեսերին Եգիպտոսում Օմար Սուլեյմանի ղեկավարման ներքո, և որին պետք է մասնակցեն պաղեստինյան տարբեր ուժեր և խմբավորումներ:

Արդեն նույն թվականի սեպտեմբերի 13–ին Կահիրեում կայացավ հանդիպում Մուբարաքի և Իսրայելի վարչապետ Նեթանյահուի միջև: Հանդիպման հիմնական խնդիրն էր արաբ–իսրայելական հակամարտության համապարփակ նախագծի մշակման հարցը: Կահիրեն պնդում էր, որ Իսրայելը դադարեցնի հրեական բնակելի շինություններ կառուցելու գործընթացը Երուսաղեմում: Մուբարաքը նշեց նաև, որ Պաղեստինի արաբական անկախ պետության հռչակումը Կահիրեի համար ընդունելի է միայն 1967 թ. արաբ–իսրայելական պատերազմից առաջ գոյություն ունեցած սահմաններում՝ Արևելյան Երուսաղեմում մայրաքաղաքով, համաձայն ՄԱԿ–ի բանաձևերի[85]:

[85] Եգիպտոսի՝ նման խիստ կեցվածքը վերլուծաբանները մեկնաբանում են մի քանի պատճառներով. ա) Սույն թվականի սեպտեմբերի սկզբին Իսրայելի ՊՆ Բարաքի կողմից խրախուսվեց Արևմտյան ափին 366 հրեական նոր բնակելի շինությունների կառուցումը, բ) Հուլիսին կայացած ՄԱԿ ԱԽ հերթական նիստի ժամանակ ընդհանուր համաձայնություն ձեռք բերվեց պաղեստինյան հարցի կարգավորման «հակաիսրայելական դիրքորոշում», գ) ԱՄՆ մերձավորարևելյան հատուկ բանագնաց Ջ. Միտչելի և Մուբարաքի դիրքորոշումը մերձավորարևելյան հակամարտության կարգավորման հարցում համընկնում էր, դ) Իսրայելի ԱԳ նախարար Լիբերմանը Արևմտյան Աֆրիկա կատարած իր այցելության ընթացքում համաձայնագիր ստորագրեց Արևմտյան Աֆրիկայի երկրների տնտեսական հանրության հետ (ECOWAS), ինչը հնարավոր էր դարձնում Եգիպտոսի դերակատարության նվազեցումը Աֆրիկյան մի շարք երկրների հետ հարաբերություններում: «Ալ Ահրամ» կենտրոնի տնտեսագիտական փորձագետ Մագդի Սուբհին նշեց, որ որակապես նոր կապեր հաստատելով աֆրիկական երկրների հետ՝ Իսրայելը փորձում է ամրապնդել իր դիրքերը միջազգային

Պաղեստինյան կողմերի միջև հաշտության ձեռք բերման և Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ 2010–2011 թթ. տարվող քայլերը ավելի պասիվ և ոչ արդյունավետ գտնվեցին, ինչը առաջին հերթին պայմանավորված էր արաբական աշխարհում սկիզբ առած բարդ և տարածաշրջանը ապակայունացնող ներքաղաքական զարգացումներով, որոնք լրատվամիջոցների կողմից հաճախ հիշատակվում են որպես «արաբական գարուն»:

հարաբերություններում՝ միևնույն ժամանակ նվազեցնելով Եգիպտոսի դերակատարությունը Աֆրիկայում:

*ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

## ՉԻՆ–ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

1956 թ. օգոստոսի 1–ին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) և Սիրիայի Արաբական Հանրապետության (ՍԱՀ) միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր երկու երկրները կայուն հարաբերություններ են զարգացրել և սատարել միմյանց միջազգային ասպարեզում: Սիրիայի կառավարությունը մշտապես հավատարիմ է եղել «մեկ Չինաստանի» ընդունման քաղաքականությանը՝ պաշտպանելով վերջինիս ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Պեկինն էլ մշտապես պաշտպանել է ՄԱԿ–ի համապատասխան բանաձևերի և «հող խաղաղության դիմաց» սկզբունքի հիման վրա երկխոսության ու քաղաքական բանակցությունների միջոցով Մերձավոր Արևելյան հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացը[1]: Գտնելով, որ Մերձավոր Արևելքում (ՄԱ) կայուն խաղաղություն չի կարող հաստատվել առանց Սիրիայի՝ Չինաստանը, իբրև ՄԱԿ–ի ԱԽ–ի մշտական անդամներ, որպես օրենք պաշտպանել է Սիրիային՝ Իսրայելի կողմից պաղեստինյան հողերի բռնագրավումը դատապարտելու և պաղեստինյան ինքնորոշման իրավունքը պաշտպանելու գործում: Պեկինը մշտապես հանդես է եկել Լիբանանի և Սիրիայի միջև դիվանագիտական կապերի հաստատման, Լիբանանի և Սիրիայի (Ղոլանի բարձունքներ) գրավյալ տարածքներից իսրայելական ուժերի դուրսբերման, ինչպես նաև Իսրայելի ու արաբական երկրների միջև հարաբերությունների կարգավորման պաշտպանությամբ[2]:

Սիրիայի և Չինաստանի հայացքները մոտ են եղել նաև մար-

[1] China to Boost Cooperation with Arabs, Xinhua News Agency, 13.01.2009. http://news.xinhuanet.com/english/2009–01/13/content_10647852.htm.

[2] Massoud Daher, China and the Middle East: Establishing a New Partnership, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia), Shanghai International Studies University, Vol. 3, No. 1, 2009, p. 22.

դու իրավունքների հետ կապված հիմնահարցերում: Երկու երկրները հանդես են եկել Արևմուտքի կողմից զարգացող երկրների ներքին գործերին միջամտելու փորձերի դեմ, որոնք որպես պատրվակ օգտագործում են վերոնշյալ հիմնախնդիրները[3]:

Սիրիայի և Չինաստանի միջև հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացան 2004 թ. հունիսի 21–25–ը Բաշար Ալ–Ասադի՝ ՉԺՀ կատարած այցից հետո, որի ընթացքում կողմերը համագործակցության մի շարք պամանագրեր ստորագրեցին[4]: Այդուհետ երկու երկրների կառավարությունների, կուսակցությունների, զինված ուժերի միջև տարբեր մակարդակներով բարեկամական ու համագործակցային կապերն առավել ամրապնդվեցին: Հաճախացան քաղաքական ու ռազմավարական խնդիրների շուրջ բարձր մակարդակի քննարկումները[5]:

Հարկ է նկատել, որ սիրիական առաջնորդի այցը տեղի ունեցավ Իրաք ԱՄՆ–ի ներխուժման, ինչպես նաև Իրաքի ընդդիմադիր տարրերին նպաստելու գործում Սիրիայի մասնակցության կասկածանքով Դամասկոսի նկատմամբ ԱՄՆ–ի աճող ճնշման ֆոնի ներքո[6]: Պատահական չէր, որ Ալ–Ասադի՝ ՉԺՀ կատարած այցը գնահատվեց որպես Վաշինգտոնին հասցեագրված ուղերձ, որով Դամասկոսն ասես ընդգծում էր Սիրիայի նկատմամբ ԱՄՆ–ի պատժամիջոցների կիրառման անօգտակարությունը: Իրենց հերթին ՉԺՀ–ի արտգործնախարար Լի Ճաոսինը և ՍԱՀ–ում ՉԺՀ–ի դեսպանը Վաշինգտոնի պատժամիջոցները որակեցին իբրև «երկակի ստանդարտների քաղաքականություն»[7]: Նկատենք, որ դեռևս 2003 թ. ապրիլին Պեկինը դրվատել էր Սիրիային՝ իրաքյան ճգնաժամի քաղաքական լուծման ուղղությամբ

[3] Syria Supports China on Taiwan Issue Syria–China, Politics, Arabic News.com, 3.17.2005. http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/050317/2005031712.html; Сирия подтверждает приверженность политике одного Китая, Жэньминь Жибао, 08.11.2007.
http://russian.people.com. cn/31 520/6298769.html
2008 թ. մարտին Դամասկոսը սատարեց տիբեթյան իրադարձությունների նկատմամբ Պեկինի դրսևորած դիրքորոշումը՝ դրանք որակելով իբրև ՉԺՀ–ի միասնության և կայունության դեմ «նենգադուլ» գործողություններ:

[4] Китай и Сирия стабильно развивают отношения дружбы и сотрудничества, Жэньминь Жибао, 02.04.2008, с. 1. http://russian.people.com. cn/31520/6385087.html.

[5] Christina Y. Lin, Syria in China's New Silk Road Strategy, China Brief, The Jamestown Foundation, Vol. X, Issue 8, 16.04.2010, p. 3.

[6] Chris Zambelis, China Tests its Mettle in Syria Greater China, Asia Times Online, Thailand, 6.11.2008, p. 1.

[7] Исторический визит президента Сирии в Китай, Ислам для всех, 22.06.2004. http://islam.com.ua/news/1022/.

գործադրած ջանքերի և իրաքյան խնդրում ԱՄՆ–ի ճնշումներին տեղի չտալու առիթով[8]: Սիրիայի նախագահ Բաշար Ալ–Ասադը ՉԺՀ–ի առաջատար "Renmin Ribao" թերթին տրված հարցազրույցում, ընդգծելով ՉԺՀ–ի՝ իբրև գերտերության կարգավիճակը, կարևորել էր ԽՍՀՄ–ի փլուզումից հետո Պեկինի դերի մեծացումը միջազգային գործերում, հատկապես այնպիսի փոքր երկրների համար, ինչպիսին Սիրիան է[9]:

2004 թ. ՉԺՀ–ն ձեռնպահ քվեարկեց ՄԱԿ–ի ԱԽ–ի՝ սեպտեմբերի 2–ի 1559–րդ բանաձևին, որով պահանջում էր սիրիական ուժերի դուրսբերումը Լիբանանից[10]: Պեկինն անգամ սպառնաց Սիրիայի նկատմամբ պատժամիջոցների պահպանման դեպքում արգելափակել 2005 թ. հոկտեմբերին ՄԱԿ–ի ԱԽ–ի ընդունած 1636–րդ բանաձևը, որից հետո վերջինիս երեք համահեղինակներ՝ ԱՄՆ–ն, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, տեղի տվեցին[11]: Նշենք, որ բանաձևի համաձայն՝ պահանջվում էր Սիրիայի լիիրավ համագործակցությունը Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործի փաստահավաք հետաքննությանը՝ կապված սպանությանը Սիրիայի հնարավոր մասնակցության հետ[12]:

Ենթադրվում է, որ ՉԺՀ–ն առավել մեծ ռազմավարական նշանակություն ձեռք բերեց Դամասկոսի համար հատկապես Սիրիային Լիբանանի վարչապետ Հարիրիի սպանության մասնակցության մեջ մեղադրելուց հետո[13]: Ուստի պատահական չէ, որ վերջին տարիներին Սիրիայի «ապակողմնորոշումը» դեպի Հեռավոր Ասիա, մասնավորապես ՉԺՀ գնահատվում էր իբրև Արևմուտքի հետ Դամասկոսի բարդ հարաբերությունների փոխհատուցման կամ հաղթահարման փորձ[14]:

---

[8] Ji Hye Shin and John J. Tkacik, Jr., China and the Middle East: A New Patron of Regional Instability, The Heritage Foundation Leadership For America, No. 1974, 26.09.2006, p. 7. http://www.heritage. org/Research /AsiaandthePacific/bg1974.cfm; Renmin Ribao, 14.04.2003, p. 3. http://www.people.com.cn/GB/paper464/ 8941/834181.html.

[9] Jin Liangxiang, Energy First. China and the Middle East, Middle East Quarterly, Vol. XII: No. 2, Spring 2005. http://www.meforum.org/article/694.

[10] Jin Liangxiang, նշվ. աշխ., էջ 1:

[11] MR. John W. Ballard, Globalization's Impact on the Chinese War Machine, National Security Agency, The U.S. Army War College, 2008, p. 24. http://www.dtic.mil/cgi–bin/GetTRDoc?Location=U2&doc=GetTRDoc.pdf&AD=ADA479051.

[12] Massoud Daher, նշվ. աշխ., էջ 22.

[13] Christina Y. Lin, նշվ. աշխ., էջ 4:

[14] Virginie Delattre, Syria on the Edge of a New Cooperation Era? Prospects for the EU–Syrian Association Agreement, Department for Near/Middle East and North Africa, Friedrich–Ebert–Stiftung, Berlin, April 2010, p. 7.

### *Չին–սիրիական առևտրատնտեսական համագործակցությունը*

Սիրիան, ոգեշնչված բարեփոխումների չինական մոդելով, ևս ձգտում էր «սոցիալիստական շուկայական տնտեսության», որում ներդաշնակորեն միահյուսվում են տնտեսության ազատականացումն ու պետության խիստ դերակատարությունը[15]: Տնտեսության զարգացման և արդիականացման ՉԺՀ–ի անկախ ուղու որդեգրումը Սիրիայի պես զարգացող երկրում, ի տարբերություն ԱՄՆ–ի և Արևմուտքի կողմից առաջադրվող ազատ շուկայական մոդելի, ընդօրինակման արժանի և կենսունակ այլընտրանք էր գնահատվում[16]: Պատահական չէ, որ ըստ 2006 թ. Սիրիայի կառավարության մշակած զարգացման հնգամյա պլանի՝ երկրում պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցում կատարելու հարցում Սիրիան մտադիր էր փոխառնել հատկապես Չինաստանի կուտակած հաջող փորձը[17]:

Չինաստանը փորձում էր ապահովել իր ներկայությունն Սիրիայում՝ իբրև տնտեսական ներուժ ունեցող և տարածաշրջանում իր ազդեցության տարածման հենակետ ծառայող երկիր: Պեկինի հետաքրքրությունը Դամասկոսի՝ որպես հինավուրց «Մետաքսի ճանապարհի» առևտրային վերջնահանգույցի հանդեպ, չնայած Սիրիայի՝ իբրև Արևմուտքի կողմից «մերժվածի» կարգավիճակին, վկայում է, որ ՉԺՀ–ն Սիրիային կարևոր առևտրային գործընկեր է դիտել ՄԱ–ում[18]: Պեկինն իր «Մետաքսի ճանապարհի» ռազմավարությունում Սիրիային գնահատում էր որպես «ning jiu li» կամ «հարակից ուժ», որն էլ իր հերթին համընկնում էր Սիրիայի «Հայացք Արևելք»՝ դեպի Չինաստան ռազմավարության հետ[19]: Այն ՄԱ–ում Պեկինի հետզհետե ներգրավվածության հետ միասին կարող էր ընկալվել իբրև նոր «Pax Sinica»: Սիրիան կարող էր ՉԺՀ–ի համար եվրոպական շուկա մուտքի դարպաս ծառայել հատկապես Եվրամիության (ԵՄ) խոշոր երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կողմից աճող հովանավորչության ֆոնի վրա: Նշենք, որ Չինաստանը ԵՄ անդամակցության պատրաստվող բալկանյան (Սերբիա, Բոսնիա, Սլովենիա, Մակեդոնիա) կամ Լևանտի երկրներում ու տարածքներում վարում է են-

[15] Նույն տեղում, էջ 1:
[16] Chris Zambelis, China Tests its Mettle in Syria Greater China, նշվ. աշխ., էջ 1:
[17] Китай и Сирия стабильно развивают отношения дружбы и сотрудничества, նշվ. աշխ., էջ 1:
[18] Christina Y. Lin, նշվ. աշխ., էջ 3:
[19] The Syrian Report, 11.05.2009; Gulf News, 12.01.2009.

թակառուցվածքային ծրագրերում ներդրումների իրականացման և առատ վարկերի տրամադրման ռազմավարություն, որտեղ ակտիվների ձեռքբերումը համեմատաբար էժան է: Ուստի պատահական չէր, երբ ՉԺՀ–ի փոխնախագահ Սի Ծինպինը 2009 թ. հոկտեմբերին կոչ արեց ԵՄ–ի անդամ բալկանյան խոշոր երկրներին (Հունգարիա, Բուլղարիա և Ռումինիա) ԵՄ–ի հետ իրենց կապերն օգտագործելու ի նպաստ վերջինիս անդամակցելու ենթակա բալկանյան փոքր երկրների[20]: Այդ է թերևս պատճառը, որ ինչպես Բալկաններ, այնպես էլ Սիրիա Պեկինի՝ մուտք գործելու ջանքերը գնահատվում էին որպես վերջինիս կողմից ԵՄ–ի ետնադռնից մուտք գործելու փորձ[21]:

Ուշագրավ է, որ 2007 թ. հունիսի 26–ին Դամասկոսում չին–սիրիական համատեղ հանձնաժողովի երրորդ նիստին Սիրիան պաշտոնապես ճանաչեց ՉԺՀ–ի «շուկայական տնտեսության կարգավիճակը», Առևտրի համաշխարհային կազմակերպության սահմանած չափանիշներին Չինաստանի տնտեսության համապատասխանությունը, ՉԺՀ–ում պետական ֆինանսավորման՝ նվազագույնի հասցված լինելու և մենաշնորհների սահմանափակման փաստը: Հարկ է նկատել, որ նշյալ հիմնախնդիրների հետ կապված՝ Պեկինը տարաձայնություններ ունի Արևմուտքի հետ[22]: Հանդիպման ընթացքում կողմերը կրթության, տրանսպորտի և հաղորդակցությունների ոլորտներում համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր ստորագրեցին, պայմանավորվեցին խորացնել համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների, արդյունաբերության, նավթաքիմիական, գյուղատնտեսության, մանրագործվածքների, ենթակառուցվածքային շինարարության, էներգետիկայի, հեռահաղորդակցության ոլորտներում, համատեղ համալսարանների և հետազոտական կենտրոնների հիմնադրման գործում[23]: Հանդիպման նպատակներից էր նաև սիրիաչինական բանկի հիմնադրումը՝ համատեղ ռիսկերի նվազեցման և երկկողմ ներդրումների խթանման

[20] Christina Y. Lin, նշվ. աշխ., էջ 3–5: Միջերկրական ծովի երկայնքով ԵՄ–ի, Հյուսիսային Աֆրիկայի և ՄԱ–ի երկրների միջև ազատ առևտրային գոտու ստեղծման նպատակով 1995 թ. Բարսելոնում հիմնվել էր Միջերկրածովյան միությունը:

[21] Global Arab Network, 16.10.2009.

[22] Syria: Befriending Beijing, Oxford Business Group, 2.07.2007, էջ 1: http://www.joshualandis.com/blog/?p=304. Շուկայական տնտեսության կարգավիճակն օգնում է երկիրը պաշտպանել հակադեմպինգային պահանջներից, որում Չինաստանը հաճախ է մեղադրվում:

[23] MR. John W. Ballard, նշվ. աշխ., էջ 23:

նպատակով[24]: Պեկինը ողջունեց Սիրիայի ձեռնարկած քայլերը՝ բանկային համակարգի սեփականաշնորհման և Դամասկոսի ֆոնդային բորսայի ստեղծման ուղղությամբ մրցակցային գնագոյացում ապահովելու նպատակով[25]: Սիրիայում չինական ներդրումների խրախուսման նպատակով Դամասկոսն առաջարկեց Չինական արդյունաբերական գոտի (Chinese Industrial Zone) և Չինական տելեկոմ պուրակ (China Telecom Park) հիմնել[26]: Նշենք, որ Դամասկոսից 25 կմ հեռավորության վրա՝ «Դամասկոս–Բաղդադ» մայրուղուց դեպի հյուսիս արևելք՝ ՉԺՀ–ի Ճեծիան նահանգի ձեռնարկատերերի հիմնադրած Ադրա ազատ գոտու արդյունաբերական պուրակում կառուցված «China City»–ն դեպի Իրաք, Լիբանան և ընդհանրապես տարածաշրջանի այլ երկրներ չինական ապրանքների վաճառքի և վերաբեռնման (trans–shipment) հանգույց է ծառայել[27]:

Չին–սիրիական համագործակցությունը զարգանում էր նաև էներգետիկ ոլորտում: Դեռևս 2005 թ. Չինաստանի նավթի–գազի ազգային կորպորացիան՝ ՉՆԳԱԿ–ը (China National Petroleum Corporation–CNPC), և Հնդկաստանի Նավթի և բնական գազի կորպորացիան 573 ՅԱՀԱԼ դոլարի գործարք կնքեցին Ալ–Ֆուրաթի նավթի և գազի հորատների նկատմամբ իրավունքների ապահովման մասին[28]: 2008 թ. Պեկինն ու Դամասկոսը պայմանագիր ստորագրեցին Սիրիայի արևելյան հատվածում՝ Աբու Խաշեբ շրջանի մոտ, 1,5 մլրդ դոլար արժողությամբ նավթազտման գործարանի կառուցման վերաբերյալ, որը Սիրիան տարիներ առաջ փորձում էր կառուցել Հյուսիսային Կորեայի օգնությամբ: ՉՆԳԱԿ–ին նախատեսվում էր 85 % մասնաբաժին համատեղ ձեռնարկությունում, որն այդ տարվա վերջին իր գործառույթները սկսելիս պարտավորվում էր ապահովել օրական ավելի քան 110.000 բարել նավթի արդյունահանում[29]: 2008 թ. սեպտեմբերին Չինաստանի նավթաքիմիական կորպորացիան (China Petroleum & Chemical Corporation–SINOPEC) Կանադայի Տանգանյիկա նավթային ընկերության (Canada's Tanganyika Oil Company) գնման վերաբերյալ 2 մլրդ դոլարի պայմանագիր կն-

[24] Syria: Befriending Beijing, նշվ. աշխ., էջ 1; Forward Magazine, Damascus, 26.01.2009.
[25] Forward Magazine, Damascus, 26.01.2009.
[26] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 1:
[27] Forbes, New York City, 21.05.2009.
[28] MR. John W. Ballard, նշվ. աշխ., էջ 23:
[29] J. Peter Pham, China's Interests in the Middle East and North Africa in the Light of Recent Developments in those Regions, Atlantic Council, 13.04.2011, p. 4.

քեց, որը Սիրիայի նավթարդյունաբերության ոլորտում մեծ շահեր ուներ[30]:

Նշենք նաև, որ 2010 թ. ապրիլին տեղական և օտարերկրյա ներդրողներին ներգրավելու նպատակով Սիրիայի նավթագազային միջազգային «ՍԻՐՕՅԼ 2010» (SYROIL 2010) 7–րդ ցուցահանդեսին Սիրիան առավել մեծ թվով պայմանագրեր էր նախատեսում կնքել հատկապես չինական նավթային ընկերություններին հետ[31]: Կողմերը քննարկել էին նաև Իրաքի արևմտյան Աքքաս (Akkas) դաշտերից դեպի Սիրիա բնական գազամուղի կառուցման նախագիծը[32]:

Չինական ընկերությունները ներգրավված էին Սիրիայի երկու հիմնական՝ Ջաբլեհի (Jableh) բամբակի ֆաբրիկայի և մայրաքաղաքի մոտ գտնվող Ղութա (Ghuta) շրջանի հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագծերում[33]: Դեռևս 2004 թ. հունիսին Բաշար Ալ–Ասադի՝ ՉԺՀ կատարած այցի ընթացքում Սիրիան չինական ընկերությունների հետ շահավետ պայմանագրեր էր ստորագրել, որոնց շարքում՝ տեքստիլ ֆաբրիկայի և 150 մլն դոլար արժողությամբ ցեմենտի արտադրության գործարանի կառուցման վերաբերյալ պայմանագրերը[34]:

Նշենք, որ 2007 թ. երկու երկրների միջև առևտրի ծավալը կազմել է 1.87 մլրդ դոլար՝ 2006 թ. համեմատությամբ ապահովելով 32,9 % աճ: Չինական ապրանքների արտահանումը Սիրիա կազմել է 1,862 մլրդ դոլար՝ 2006 թ. համեմատությամբ 37,3 %–ով ավելի: Արդյունքում Չինաստանը դարձել էր խոշորագույն ներկրողը Սիրիա[35]: 2010 թ. երկու երկրների միջև առևտրի ծավալը հասել է 2,48 մլրդ ԱՄՆ դոլար՝ կազմելով ՉԺՀ–ի ողջ արտաքին առևտրի ընդամենը 0,08 %–ը: Միևնույն ժամանակամիջոցին, Սիրիայից Չինաստան ներկրումը կազմել է ընդամենը 40 մլն ԱՄՆ դոլար[36]: Առևտրային հաշվեկշռի կարգավորման նպատակով,

---

[30] Parris H. Chang, China's Policy Toward Iran And The Middle East, The Jewish Institute for National Security Affairs, USA, 24.11.2009, p. 11. http://www.jinsa.org/publications/research–articles/middle–east/chinas–policy–toward–iran–and–middle–east#.UBji6KBK1kg.

[31] Xinhua News Agency, 5.04.2010.

[32] The Wall Street Journal, 1.04.2010.

[33] Merchant of Weapons of Mass Destruction to the Axis of Evil, A National Security Report, American Defense Council, 2002, p. 25.

[34] Исторический визит президента Сирии в Китай, նշվ. աշխ., էջ 1:

[35] Китай и Сирия стабильно развивают отношения дружбы и сотрудничества, նշվ. աշխ., էջ 1:

[36] Qu Xing, The UN Charter, the Responsibility to Protect, and the Syria Issue, China International Studies, March/April 2012, p. 15.

որը հիմնականում արտոնյալ առևտրային համաձայնագրերի ու յուանի արժեզրկման հետևանք էր, Չինաստանը խրախուսում էր երկու երկրների միջև զբոսաշրջության զարգացումը[37]: Նշենք, որ 2008 թ. դրությամբ Չինաստանը դարձել էր Սիրիայի խոշորագույն առևտրային գործընկերը[38]:

2009 թ. հոկտեմբերին ՉԺՀ–ի և ՍԱՀ–ի կառավարությունների միջև կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագիր ստորագրվեց[39]: 2011 թ. մարտին Դամասկոսում չինացի և սիրիացի գործարարների խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվեց առևտրատնտեսական հարցերով չին–սիրիական համաժողովը, որի ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջև համագործակցության և տարբեր ոլորտներում համատեղ առևտրային ու ներդրումային նախագծերի իրականացման հետ կապված խնդիրներ: Սիրիական կողմը չինացի գործարարներին կոչ արեց օգտվելու Սիրիայի ներդրումային բարենպաստ միջավայրի, ինչպես նաև ներդրումների խրախուսման ու ներդրողների շահերի երաշխավորման վերաբերյալ կառավարության ընդունած որոշումների հանգամանքից[40]:

### *Չին–սիրիական ռազմաքաղաքական համագործակցությունը*

ՉԺՀ–ի ՍԱՀ–ի միջև ռազմական համագործակցության ուղղությամբ առաջին քայլերից է համարվում 1969 թ. Սիրիայի բանակի շտաբի պետ Մուստաֆա Թլասի գլխավորած զինվորականների առաքելության այցը Պեկին և ՉԺՀ–ի հետ ռազմական գործարքի կնքումը[41]: Խնդիրն այն է, որ «Սառը պատերազմի» տարիներին սիրիական հրթիռները հեռավոր գործողության կարողություններով ընդլայնելու գործընթացից ԽՍՀՄ–ի հրաժարումը ՍԱՀ–ին ստիպեց փնտրել այլ գործընկերներ: Պեկինն էլ, օգտվելով Սիրիայում և ՄԱ–ում ԽՍՀՄ–ի ազդեցության թուլացումից, փորձեց լրացնել զենքի շուկայում առաջացած բացը: Հարկ է նկատել,

[37] Chris Zambelis, China Tests its Mettle in Syria Greater China, նշվ. աշխ., էջ 1:
[38] Parris H. Chang, նշվ. աշխ., էջ 10:
[39] Bilateral Relations, Ministry of Foreign Affairs, the People's Republic of China, 22.08.2011. http://www.fmprc.gov.cn/eng/wjb/zzjg/xybfs/gjlb/2888/.
[40] Участники сирийско–китайской конференции по вопросам торговли и экономики обсудили сферы совместного сотрудничества, SANA, 29.03.2011. http://sana.sy/rus/329/2011/03/29/339178.htm.
[41] George Meri Haddad, Jūrj Marī –addād, Revolutions and Military Rule in the Middle East: The Arab states pt. I: Iraq, Syria, Lebanon and Jordan, Vol. 2, 1973, p. 380.

որ չինական զենքի վաճառքից ստացվող միջոցները ուղղորդվել են երկրի՝ դինամիկ աճող տնտեսության և ռազմարդյունաբերության՝ Ժողովրդական ազատագրական բանակի՝ ԺԱԲ–ի (People's Liberation Army–PLA) ֆինանսավորմանը[42]:

Բնականաբար, չինական զենքի որոշակի տեսակների, հատկապես բալիստիկ և թևավոր հրթիռների, միջուկային զենքի հետ առնչվող որոշ զինատեսակների արտահանման փաստն այնպիսի վարչակարգ ունեցող երկրների, ինչպիսիք են Իրանը, Իրաքը, Պակիստանը, Հյուսիսային Կորեան, Սաուդյան Արաբիան և Սիրիան, չէր կարող չմտահոգել Վաշինգտոնին: Ուստի զենքի արտահանման և չտարածման ուղղությամբ չին–ամերիկյան առճակատումն անխուսափելի էր, որը խորացավ ԱՄՆ–ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի վարչակազմի կառավարման վերջին տարիներից[43]:

Ըստ էության՝ 1980–ականների վերջին ու 1990–ականների սկզբին Սիրիա և տարածաշրջանի այլ պետություններ միջին հեռավորության բալիստիկ հրթիռային համակարգեր և դրանց առնչվող տեխնոլոգիաներ արտահանելու վերաբերյալ որոշումը Պեկինի առաջին լուրջ հայտն էր՝ իբրև ՄԱ–ում ուժերի հավասարակշռության վրա ազդելու ներուժ ունեցող երկրի[44], որն աննկատ չմնաց Վաշինգտոնի կողմից: Վերջինս 1987 թ. Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկողության ռեժիմի՝ ՀՏՎՌ–ի (Missile Technology Control Regime–MTCR) հովանու ներքո սահմանափակումներ մտցրեց ՉԺՀ–ին համակարգչային և այլ տեխնոլոգիաներ վաճառելու հարցում[45]:

ԱՄՆ–ի և Իսրայելի հետախուզական տվյալների համաձայն՝ Սիրիան և Չինաստանը 1988 թ. մայիսին քննարկել էին Դամասկոսին չինական «M–9» դասի գործողության կարճ շառավղով 170 մլն դոլար արժողությամբ 140 հրթիռների վաճառքի հարցը[46]: Գործարքը պետք է ֆինանսավորեր Լիբիայի նախագահ Մուամ-

[42] Chris Zambelis, Geopolitics of Sino–Syrian Relations, նշվ. աշխ., էջ 2; Kristen Gunness, նշվ. աշխ., էջ 1:

[43] S. Evan Medeiros & Bates Gill, Chinese Arms Exports: Policy, Players, and Process, Strategic Studies Institute, August 2000, p. 1.

[44] Nuclear Threat Initiative (NTI). www.nti.org/db/China/mmepos.htm.

[45] Chris Zambelis, Geopolitics of Sino–Syrian Relations, China Brief, The Jamestown Foundation, Vol. 8, Issue: 20, 24.10.2008, p. 1. http://www.frankhaugwitz.info/doks/security/2008_10_27_China_Energy_Syria_Jamestown.PDF.

[46] Michael R. Gordon, Syria is Studying New Missile Deal, The New York Times, 22.06.1988. http://www.nytimes.com/1988/06/22/world/syria–is–studying–new–missile–deal.html; China to Sell Syria Missiles, The Independent, 1.04.1989, p. 8.

մար Կադդաֆին հրթիռներից 80–ը Լիբիային տրամադրելու պայմանով[47]: Սակայն ԱՄՆ–ի ճնշման տակ 1989 թ. վերջին Պեկինը հրաժարվեց հրթիռների վաճառքի վերաբերյալ 1988 թ. Սիրիայի հետ ձեռք բերված պայմանավորվածությունից[48]: Արդյունքում Սիրիան 1989–1990 թթ. մեկ այլ՝ «Scud–B» դասի հրթիռների ձեռքբերման նպատակով դիմեց Հյուսիսային Կորեային[49]:

Այնուհանդերձ, ԱՄՆ–ի հետախուզական ծառայությունների պնդմամբ 1991 թ. ապրիլին Չինաստանը Սիրիային բալիստիկ հրթիռներ էր վաճառել, ուստի Վաշինգտոնը պատրաստվում էր Պեկինի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառել[50]: 1991 թ. նոյեմբերին ԱՄՆ–ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերի ՉԺՀ կատարած այցի ընթացքում պաշտոնական Պեկինը կրկին խոստացավ չեղյալ հայտարարել Դամասկոսի հետ ստորագրված «Մ–9» դասի հրթիռային գործարքը[51]:

Հակառակ դրան՝ 1992 թ. Հալեպի և Համայի սիրիական հրթիռային կայաններ չին գիտնականների այցի ժամանակ Չինաստանը տեխնոլոգիական աջակցություն ցուցաբերեց Սիրիայի հրթիռային արտադրությանը[52]: ԿՀՎ–ի տվյալների համաձայն՝ 1992 թ. Չինաստանը 250 մլն ԱՄՆ դոլարի միջուկային և հրթիռային տեխնոլոգիա է վաճառել արաբական մի շարք երկրների, այդ թվում՝ Սիրիային[53]: 1992 թ. սեպտեմբերին Իսրայելի արտգործնախարար Դավիթ Լևին՝ ՉԺՀ կատարած այցի ընթացքում Չինաստանի ղեկավարությունից ՄԱ–ի երկրներ չինական զենքի վաճառքի դադարեցման, ինչպես նաև Դամասկոսի հետ

[47] Kenneth Timmerman, Weapons of Mass Destruction: The Cases of Iran, Syria, and Libya, Simon Wiesenthal Center, Los Angeles, 1992, p. 70; http://www.nti.org/media/pdfs/syria_missile.pdf?_=1316466791.

[48] Bush Welcomes China's Promise on Missile Exports, The Financial Times, London, 12.12.1989, p. 3.

[49] Barry Rubin, North Korea's Threat to the Middle East and the Middle East's Threat to Asia, Middle East Review of International Affairs. http://meria.idc.ac.il/books/brkorea.html. 1991 թ. սիրիական «Ալ–Յարմուկ» (Al–Yarmouk) նավը Սիրիա տեղափոխեց 500 կմ գործողության շառավղով բարելավված 24 միավոր «Scud–B» դասի հրթիռ և մոտ 20 հրթիռակիր: Այդ հրթիռները սիրիական արտադրության քիմիական մարտագլխիկներով էին ապահովված և Սիրիայի կողմից Իսրայելում ցանկացած թիրախի ավելի մեծ ճշգրտությամբ հարվածելու հնարավորությամբ էին օժտված:

[50] R. Jeffrey Smith, China Aid on Algerian Reactor May Violate Pledges, The Washington Post, 20.04.1991, p. A17.

[51] Evan S. Medeiros & Bates Gill, Chinese Arms Exports: Policy, Players, and Process, Strategic Studies Institute, August 2000, p. 8.

[52] The New York Times, 5.04.1992, p. A 27.

[53] George D. Moffett III, Bush, Congress Clash on China, Christian Science Monitor, 27.02.1992, p. 1.

ստորագրված «Մ–9» դասի հրթիռային գործարքը չեղյալ հայտարարելու վերաբերյալ խոստում կորզեց[54]:

Այսպիսով՝ 1993 թ. ԱՄՆ–ի նախագահ Բիլ Քլինթոնի վարչակազմի և Իսրայելի ճնշման ներքո Պեկինը 1990–ականների վերջերին նվազեցրեց Սիրիա իրականացվող ռազմական առաքումները՝ հրաժարվելով ոչ սովարական սպառազինության (non–conventional weapons) և հրթիռային համակարգերի վաճառքից[55]: Սակայն 1994 թ., հակառակ ԱՄՆ–ին տրված իր հավաստիացումներին, Պեկինը շարունակեց իր անուղղակի աջակցությունը ՍԱՀ–ի հակահրթիռային զարգացման ծրագրին[56]: ԱՄՆ–ի ԿՀՎ–ի տվյալների համաձայն՝ 1996 թ. Չինաստանի բարձր ճշգրտությամբ սարքավորումների ներմուծման–արտահանման կորպորացիան (China Precision Machinery Import–Export Corporation–CPMIEC) հրթիռներին առնչվող բաղադրիչներ է տրամադրել Սիրիայի հրթիռային արտադրական կարողությունների զարգացմամբ զբաղվող հետազոտական ինստիտուտին[57]: Իսկ 1997 թ. ուղղակի չեղյալ է հայտարարվել Չինաստանից առաջադեմ «Մ–9» դասի միջին հեռավորության բալիստիկ հրթիռների ձեռքբերման վերաբերյալ Սիրիայի հետ կնքված գործարքը: 1990–ականների վերջերին հեղուկ վառելանյութով լիցքավորվող հրթիռային շարժիչների, դրանց արտադրական կարողությունների զարգացման գործում աջակցությունը Սիրիան ստանում էր հիմնականում Հյուսիսային Կորեայից, ինչպես նաև չինական ու ռուսական ընկերություններից: ՍԱՀ–ն չինական պինդ վառելիքային շարժիչների համար տեխնոլոգիաներ, ինչպես նաև ուղղորդող համակարգեր ձեռք էր բերում հիմնականում Իրանի և երրորդ կողմի միջոցով: 1999 թ. Սիրիան պինդ վառելիքային հրթիռների համար հիմնական բաղադրիչ համարվող չինական ծագման 10 տ ալյումինի փոշի է ներկրել Հյուսիսային Կորեայից[58]: Այն տրամադրվել է Սիրիայում հրթիռային և քիմիական զենքերի ծրագրերով զբաղվող Գիտական ուսումնասիրությունների և հե-

[54] China to Show 'Restraint' in Arms Sales to Middle East, The Jerusalem Post, 23.05.1993; Dan Izenberg, Chinese FM Promises 'No Arms Sales to Mideast', The Jerusalem Post, 18.09.1992.

[55] Syria Seeks to Bolster Military Ties with China, Al Bawaba, 27.09.2000. http://www.albawaba.com/news/syria–seeks–bolster–military–ties–china.

[56] MR. John W. Ballard, նշվ. աշխ., էջ 23:

[57] Merchant of Weapons of Mass Destruction to the Axis of Evil, նշվ. աշխ., էջ 24–25: Չինական ընկերությունը «Մ–11» դասի հրթիռների խոշոր արտադրող և գնող է հրթիռային բիզնեսում:

[58] Bill Gertz, Washington Times, 28.10.1999, p. A1.

տազոտությունների կենտրոնին (Scientific Studies and Research Center–Centre des Etudes et de Recherche Scientifique)[59]:

1999 թ. Իրանի, Պակիստանի և Հյուսիսային Կորեայի միջոցով Սիրիան փորձել է ձեռք բերել միջին հեռավորության, շարժական–մեկնարկով հրթիռային չինական տեխնոլոգիաներ[60]:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ 2000 թ. հունիսին Չինաստանն աջակցել է Սիրիայի «երկիր–երկիր» (surface–to–surface) դասի բալիստիկ հրթիռային ծրագրին՝ վերջինիս արտադրության համար տրամադրելով ուղղորդող համակարգեր, հրթիռային շարժիչներ և պինդ վառելիք[61]: Հիշեցնենք, որ զրկվելով ՉԺՀ–ից ուղղակիորեն հրթիռներ ձեռք բերելու հնարավորությունից՝ Սիրիան ստիպված էր նման խնդրանքով դիմել Իրանին, Պակիստանին և Հյուսիսային Կորեային[62]:

2004 թ. մայիսին Պեկինը տեխնիկական մասնագետներ գործուղեց Դամասկոս գործողության միջին շառավղով «Scud» դասի հրթիռային ծրագրի ընդլայնման գործում Սիրիային աջակցելու նպատակով[63], որն ըստ էության՝ Սիրիայի հրթիռային ծրագրերի գլխավոր մատակարար Հյուսիսային Կորեային փոխարինելու նպատակ էր հետապնդում[64]: Արդեն իսկ 2007 թ. հունվարին Իսրայելի «Arrow Missile Defense System»–ը հաղորդեց սիրիական «Scud–D» դասի գործողության կարճ շառավղով բալիստիկ հրթիռի մեկնարկի մասին[65]: Որոշ տեղեկությունների համաձայն՝ 2007 թ. վերջին Պեկինը պատրաստվում էր Իրանին ու Սիրիային «J–10» կործանիչներ վաճառել, որի պատրաստման տեխնոլոգիան օգտագործվել էր իսրայելական «Լավի» (Lavi) կործանիչների նախատիպի զարգացման գործում: Ուշագրավն այն է, որ

[59] Joseph S. Bermudez, Jr., A History of Ballistic Missile Development in the DPRK, Occasional Paper No. 2, Center for Nonproliferation Studies, November 1999, p. 19.

[60] Merchant of Weapons of Mass Destruction to the Axis of Evil, նշվ. աշխ., էջ 23–24:

[61] Syria Missile Chronology, NTI by the James Martin Center for Nonproliferation Studies at the Monterey Institute of International Studies, Monterey, USA, 2011, p. 23. http://www.nti.org/media/pdfs/syria_missile.pdf?_=1316466791; Ross Dunn, Beijing, Helping Syria with Missiles, the Times, London, 5.06.2000.

[62] MR. John W. Ballard, նշվ. աշխ., էջ 21: Փխենյանը 2003 թ. երկրորդ կեսին օգնեց Սիրիային զարգացնելու «Scud C» և «Scud D» դասի հրթիռային ծրագրերը:

[63] Massoud Daher, նշվ. աշխ., էջ 22; China Increases Aid to Syrian Missiles, Middle East Newsline, 13.05.2004. http://menewsline.com/stories/2004/may/05_13_1.html.

[64] http://nucnews.net/nucnews/2004nn/0405nn/040512nn.htm#345. Փխենյանն ապահովում ու աջակցում էր «Scud C» և «Scud D» դասի հրթիռային ծրագրերի զարգացմանը:

[65] MR. John W. Ballard, նշվ. աշխ., էջ 24:

իսրայելական որոշ փորձագետների կարծիքով՝ ՄԱ–ի երկրներ արտահանված չինական զինատեսակների մի զգալի մասն ընդօրինակվել է իսրայելական զենքի համակարգերից[66]:

Տեղեկություններ կան նաև, որ Պեկինը Դամասկոսին սիրիական հակահրթիռային և զանգվածային ոչնչացման զենքի ծրագրերին առնչվող ռազմական տեխնիկա, ինչպես նաև քիմիական զենք է մատակարարել: Ըստ այդ աղբյուրների՝ 1991 թ. նոյեմբերին ՉԺՀ–ն համաձայնել է ՍԱՀ–ին վաճառել 30 կՎտ նեյտրոնային աղբյուրով հետազոտական ռեակտոր: Թեև Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունն (ԱԷՄԳ) այս տեղեկատվությունը հաստատել է միայն 1992 թ. մարտին, այնուհանդերձ սարքավորման ու նրա հետագա կարգավիճակի վերաբերյալ մանրամասները հայտնի չեն: Տեղեկություն կա նաև Դամասկոսի մոտակայքում չինական օժանդակությամբ քիմիական և կենսաբանական զենքի հնարավոր արտադրության համար ստորգետնյա հաստատություն կառուցելու վերաբերյալ: 1992 թ. ԿՀՎ–ի տնօրեն Ռոբերտ Գեյթսը հայտարարել էր, որ Սիրիան Պեկինի օգնությանն է դիմել քիմիական և կենսաբանական մարտագլխիկների զարգացման գործում: Ըստ ՀՏՎՌ–ի 1997 թ. հաղորդագրության՝ «Չինաստանի Մեծ պատ» արդյունաբերական կորպորացիան (China Great Wall Industry Corporation–CGWIC) հրթիռային փորձարկման կարևոր տեխնոլոգիա է մատակարարել Իրանին: Նույն աղբյուրի համաձայն՝ իրանական ու սիրիական ընկերությունները համագործակցել են ՉԺՀ–ից գնված տեխնոլոգիաները «Scud C» դասի հրթիռների արդիականացման նպատակով օգտագործելու ուղղությամբ[67]:

Նախքան 1997 թ. հոկտեմբերի ՀՏՎՌ–ի վաշինգտոնյան գագաթնաժողովը ԱՄՆ–ի նախագահ Բիլ Քլինթոնի վարչակազմը Չինաստանի նկատմամբ կրկին ճնշում գործադրեց՝ արտահանման վերահսկումն իրականացնելու և միջուկային ու հրթիռային համագործակցությունն Իրանի հետ դադարեցնելու

[66] The Jerusalem Post, 25.10.2007. «J–10» կործանիչների պատրաստման տեխնոլոգիան Չինաստանին վաճառվել էր օդանավի հետ կապված աշխատանքները Իսրայելի կողմից դադարեցվելուց հետո, ինչը կապված էր հարցի ֆինանսական կողմի հետ:

[67] Gerald M. Steinberg, Chinese Policies on Arms Control and Proliferation in the Middle East. China Report, China And The Middle East, No. 3–4, 1998, pp. 381–400. http://faculty.biu.ac.il/~steing/arms/china.html. China Great Wall Industry Corporation (CGWIC) 1980 թ. հիմնադրված և ՉԺՀ–ի կառավարության կողմից լիազորված կոմերցիոն կազմակերպություն է: Այս մասին տես http://www.cgwic.com/about/.

նպատակով: Ամիսներ անց ԱՄՆ–ի պաշտպանության նախարար Վիլյամ Կոհենը Պեկինում նշյալ խնդիրների քննարումից հետո ստացավ չինական բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ նախագահ Ձիան Ձեմինի համաձայնությունը՝ հականավային թևավոր հրթիռների և հարակից այլ հակահրթիռային տեխնոլոգիաների առաքումը դադարեցնելու վերաբերյալ[68]: ԱՄՆ–ի կառավարությունը հրապարակեց նաև ՉԺՀ–ի ավելի վաղ որոշումը՝ Սիրիային մեկ փուլով պինդ վառելանյութով լիցքավորվող «Մ–9» հրթիռներ տրամադրելու գործարքից հրաժարվելու մասին[69]: Այնուհանդերձ, ԿՀՎ–ի հաշվետվությունները վկայակոչում էին Սիրիային չինական «Մ–11» դասի հրթիռներին առնչվող ուղղորդող սարքավորումների վաճառքի հնարավորությունը[70]:

Փորձագետները գտնում են, որ Սիրիան, հակառակ միջուկային տեխնոլոգիաների հանդեպ հետաքրքրության ցուցաբերմանը և ԱԷՄԳ–ի երաշխիքների ներքո ՉԺՀ–ի տրամադրած հետազոտական փոքր ռեակտորի առկայությանը, երբևէ հետամուտ չի եղել միջուկային զենքի զարգացման գործին[71]: Չինաստանի կողմից Սիրիային և տարածաշրջանի այլ երկրներին ռազմական տեխնոլոգիաների վաճառքն իրականում չի փոխել և մոտ ապագայում չէր էլ կարող փոխել տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը:

Կարծում ենք՝ Վաշինգտոնի խիստ հակազդեցությունը Պեկինի կողմից Դամասկոսին ցուցաբերվող ռազմական աջակցությանը և Սիրիայում Չինաստանի ներկայության ընդլայնմանը այլ դրդապատճառներով էր պայմանավորված, եթե հաշվի առնենք, որ ԽՍՀՄ–ի փլուզումից հետո նոր աշխարհակարգում ԱՄՆ–ի հետ իբրև պոտենցիալ մրցակից պետություն կարող էր հանդես գալ միայն ՉԺՀ–ն: ԱՄՆ–ի արտաքին ակտիվության ամենամակերեսային վերլուծություններն անգամ ցույց են տալիս, որ վերջին տարիներին Վաշինգտոնի հիմնական մտահոգությունը և միջազգային թատերաբեմում նրա գործողությունների հիմնական շարժառիթը Չինաստանն է: Միջազգային վերլուծաբանների մեծ մասն այն կարծիքին է, որ «ԱՄՆ–ի դարաշրջանն ավարտվում է», և շատ մոտ ապագայում Չինաստանի տնտեսությունը կգերազանցի ԱՄՆ–ին՝ վերջինիս մղելով երկրորդ տեղը: Այստեղից էլ

[68] Steven Erlanger, US Says China Vows to Stop Sending Iran Anti–Ship Cruise Missiles, New York Times, 18.10 1997.
[69] Merchant of Weapons of Mass Destruction to the Axis of Evil, նշվ. աշխ., էջ 24:
[70] US Say China Cancelled Syria Missile Deal, Reuters, 16.10.1997.
[71] Merchant of Weapons of Mass Destruction to the Axis of Evil, նշվ. աշխ., էջ 23:

ԱՄՆ–ի ձգտումը՝ կասեցնելու ՉԺՀ–ի տնտեսության աճը՝ վերջինիս մուտքն արգելափակելով ինչպես էներգետիկ և բնական այլ պաշարներով հարուստ, այնպես էլ ռազմավարական կարևորություն ներկայացնող երկրներում ու տարածաշրջաններում: ՄԱ–ն Չինաստանի համար ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածաշրջան է, որտեղ շոշափվում են Պեկինի ներդրումային ու էներգետիկ անվտանգությանն առնչվող շահերը: Սիրիան ՄԱ–ի առանցքային երկրներից է, ուստի ՉԺՀ–ի ներկայության ընդլայնումը Վաշինգտոնում հաճախ գնահատվում էր որպես ՄԱ–ում ԱՄՆ–ի ազդեցությունը Պեկինի կողմից փորձարկելուն ուղղված քայլ: ՄԱ–ում չինական զենքի առաքումները Վաշինգտոնում նաև իբրև հակաքայլ էր գնահատվում՝ ուղղված Թայվանին և Չինաստանի հարևան երկրներին ամերիկյան առաջադեմ սպառազինությունների համակարգերի շարունակվող համալրումներին: Սիրիան էլ փորձում էր ՉԺՀ–ի հետ խորացող համագործակցությունն իբրև լծակ օգտագործել թե՛ ԱՄՆ–ի հետ հարաբերությունների բարելավման և թե՛ Մոսկվայի հետ բարեկամական հարաբերությունների խորացման նպատակով:

Վերջին շրջանում ՄԱ–ում և Հյուսիսային Աֆրիկայում տեղի ունեցող իրադարձությունները, այդ թվում՝ սիրիական զարգացումները, միջազգային հանրության համար նոր և միանգամայն լուրջ մարտահրավերներ են: Պեկինը սկզբից ևեթ արտահայտվել է այդ երկրների ներքին գործերին չմիջամտելու և նրանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը պահպանելու օգտին՝ բացառելով ուժի կիրառման և բռնի իշխանափոխության հնարավորությունը: Ըստ պաշտոնական Պեկինի՝ սիրիական ներկայիս կառավարության բռնի իշխանափոխությունը կհանգեցնի տարածաշրջանային աղետի, ուստի անհրաժեշտ է սիրիական ճգնաժամի լուծման համար քաղաքական վերափոխման նոր մոդել փնտրել: Պեկինում կարծում են, որ Արևմուտքի կողմից պատժամիջոցների և տնտեսական այլ միջոցառումների կիրառումն այդ երկրներում Արևմուտքի հանդեպ բարեկամաբար տրամադրված վարչախմբերի իշխանության բերելու նպատակ է հետապնդում: Համաձայն Պեկինի՝ Վաշինգտոնը ոչ միանշանակ վերաբերմունք է դրսևորում տարածաշրջանի երկրների նկատմամբ՝ իր շահերից թելադրվող երկակի ստանդարտների քաղաքականություն վարելով: Մինչդեռ Չինաստանը, ի տարբերություն ԱՄՆ–ի, բավականաչափ զուսպ կեցվածք է դրսևորում տարածաշրջանային զարգացումների նկատմամբ՝ խուսափելով

ուղղակի միջամտությունից և հնարավոր բախումներից: Պեկինը համոզված է, որ իր գլխավոր ռեսուրսը ժամանակն է, որն աշխատում է իր բուռն աճող տնտեսության օգտին, մինչդեռ ԱՄՆ–ն՝ ապավինելով իր ներկայիս հզորությանն ու ազդեցությանը, առայժմ ավելի ակտիվ և համարձակ է խաղում:

Պեկինում զղջում են, որ ՄԱԿ–ի ԱԽ–ի կողմից Լիբիայի քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ ընդունված բանաձևը, որին Չինաստանը Ռուսաստանի հետ միասին ձեռնպահ քվեարկեց, իրականում Լիբիայի կառավարության դեմ ռազմական գործողությունների իրականացման լիազորագիր դարձավ: Ուստի Մոսկվան և Պեկինը այդուհետ մտադիր են կանխել ինչպես ՄԱ–ում, այնպես էլ այլ տարածաշրջաններում նման սցենարի կրկնումը: Երկու երկրները շարունակ վետո են դնում Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ–ի ԱԽ–ի բանաձևերի վրա՝ համոզված լինելով, որ ՆԱՏՕ–ն մանիպուլյացիայի է ենթարկում ԱԽ–ն՝ Սիրիայի նկատմամբ ռազմական միջամտությունը վավերացնող բանաձև կորզելու նպատակով:

Որոշ փորձագետներ էլ գտնում են, որ իրականում ՉԺՀ–ի շահերը մեծ չեն Սիրիայում, պարզապես Պեկինը՝ որպես Ռուսաստանի հավատարիմ դաշնակից, փորձում է Սիրիայի հարցում Ռուսաստանին սատարելու դիմաց վերջինիս աջակցությունն ապահովել Հյուսիսային Կորեայի հետ կապված խնդրում՝ վերջինիս միջուկային հավակնությունները զսպելու ուղղությամբ ավելի մեծ վճռականություն ցուցաբերելու ճնշման տակ գտնվելու պատճառով: Բացի այդ՝ Չինաստանը մտավախություն ունի, որ արաբական վարչախմբերի անկումը «Երկնատակի» ներսում քաղաքացիական ընդվզումների ոգեշնչման աղբյուր կարող է ծառայել: Ուստի չի բացառվում, որ Պեկինը կարող է հարաբերություններ հաստատել Սիրիայի ընդդիմության հետ և երկրի ներկայիս կառավարության համար շատ ավելի «անելանելի իրավիճակի ստեղծման պարագայում» սիրիական ընդդիմությունը ճանաչվի իբրև երկրում միակ «օրինական իշխանության», ինչն արվեց Լիբիայի, Եգիպտոսի և հյուսիսաֆրիկյան այլ երկրների դեպքում: Նշենք, որ Պեկինը Մոսկվայի հետ Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ–ի ԱԽ–ի բանաձևի ընդունման արգելափակումից օրեր անց՝ 2012 թ. փետրվարի սկզբին, ի դեմս ՉԺՀ–ի փոխարտգործնախարար Ճայ Ծյունի (Zhai Jun), արդեն հանդիպել է սիրիական ընդդիմության պատվիրակության հետ:

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

**Լիլիթ Հարությունյան, պ. գ. թ., դոցենտ**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է Լիբանանի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներով, արաբ–իսրայելյան հակամարտության, ինչպես նաև արաբական երկրների էթնոդավանական իրավիճակի ուսումնասիրությամբ:

**Գոռ Գևորգյան, պ. գ. թ., դոցենտ**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես գիտաշխատող: Զբաղվում է Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներով, արաբ–իսրայելական հակամարտության, ինչպես նաև միջարաբական հարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

**Արաքս Փաշայան, պ. գ. թ., դոցենտ**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է արաբական երկրների ներքին և արտաքին հիմնախնդիրների, «Իսլամական համագործակցություն» կազմակերպության, ինչպես նաև «քաղաքական իսլամի» ուսումնասիրությամբ:

**Աղավնի Հարությունյան**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է Մերձավոր Արևելքի և Ասիական–խաղաղօվկիանոսյան երկրներում ՉԺՀ–ի (Չինաստանի Ժողովրդական հանրապետություն) քաղաքականության, ինչպես նաև ՉԺՀ–ի նոր և նորագույն պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

## AUTHORS

**Lilit Harutyunyan, PhD**

is an Associate Professor and a Senior Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies NAS RA. Her research interests include domestic and foreign political issues of Lebanon, Arab–Israeli conflict, as well as confessional situation of Arab countries.

**Gor Gevorgyan, PhD**

is an Associate Professor and a Senior Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of his research include domestic and foreign political issues of Egypt, Arab–Israeli conflict and relations between the Arab countries.

**Araks Pashayan, PhD**

is an Associate Professor and a Senior Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include domestic and foreign political issues of Arab Countries, Organisation of Islamic Cooperation, as well as "political Islam".

**Aghavni Harutyunyan, PhD**

is a Senior Researcher Fellow at the Department of Eastern Asia Countries at Institute of Oriental Studies NAS RA. Main topics of her research are Cina policy in the countries of the Middle East and Asia–Pacific, as well as the New and Contemporary History of Cina.

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱԾԽԱՐՀ

## ՀԱՏՈՐ I (2)

Խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 10 տպ. մամուլ:

•

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am